



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

1907 № 96.

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ԴԱՍԱԳԻՐՔ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ

ՉՈՐՐՈՐԴ ԳԻՐՔ



Զույգով աշբակ ուսուցման թիւքը նայոց լեզուի դասաւանդուրեան ժամանակ

ՏԱՄՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏՊԱԴՐՈՒԹԻՒՆ

Նախընթաց սպազրութիւնը Ենթակայուցած և բայացրուած է Կովկասան մւսումնարանական Եղանի Հոգարածական Խորհրդի կողմից ուղևո ձեռնարկ Հայերէն լեզուն դասաւանդելու ժամանակ:

ԱՇԽԱՏԱՍԻՐԵՑ

Ն. ՏԵՐ-ՂԵՒՐԻՆԴԵԱՆ



Գին է 55 ԿՈՎԻ

Թ Բ Ֆ Լ Ի Ս

ՈՐԱԳՈՑԻԳ ՄՆ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ, ՊՈՒԺԿ. ՓՈՂ. № 12

1906.

491.99-8

Ա-45

431-23-8
3642
S-45

0 - 9P
18 MAY 2010

ՊԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ԴԱՍԱԳԻՐՔ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ

ԶՈՐՈՈՐԴ ԳԻՐՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԻՆՍՏԻՏՈՒ
ՎՈՏՈՎԵԴԵՆԻ
Ակադեմիա Խան
СССР

որդ տարուայ ուսուցիան նիւքը հայոց լեզուի դասաւանդութեան ժամանակ

ՏԱՐԱԿՈՒՅՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՃԱԱՍԱԱԻՐԵՑ

Ն. ՏԵՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆ

ԹԻՖԼԻՍ
ԱՐԱԴԱՏԻՎ ՄՆ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ, ՊՈՒԶԿ. ՓՈՂ. № 12
1906.

20 AUG 2013

5843

ԱՊՀԱԼ ՎՈՐԱՆԻ

ՏԱՐԱ
ՀԱՅԱՍՏԱՆ
1906

ԴԱՐ ՔՈՂԳՈՉ

Дозволено цензурою. Тифлисъ, 21 января, 1906 г.



60461-67

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ՁԱՐ ՔՈՂՈՉ ՔԱՐՔ

ՀԱՏՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

Պատմողական յօդուածներ եւ նրանց համապատասխան չափաբերական գրութիւններ

1. ԵՐԿՈՒ ԽՈՓ

Միևնոյն երկաթի կտորից և միևնոյն արհեստանոցում շինուած էին երկու խոփ, Դոցանից մինը զնեց մի երկրագործ և սկսեց գործ ածել. իսկ միւսը երկար ժամանակ անօգուտ ընկած էր մնացել վաճառականի խանութում։ Պատահեցաւ որ, միքանի ժամանակից յետոյ, երկու ընկերները դարձեալ տեսան իրար։ Երկրագործի մօտ եղած խոփը արծաթի պէս պսպղում էր և մինչև անգամ աւելի լաւ էր, քան թէ նոր շինած ժամանակը, իսկ խանութում անգործ ընկած խոփը սկսացել էր ու ժանգոտել։ «Ասա, խնդրեմ, ինչու դու այդպէս փայլում ես», հարցրեց ժանգոտած խոփը իւր բարեկամին։ — «Աշխատելուց, սիրելիս, պատասխանեց միւսը. իսկ եթէ դու ժանգոտել ես և առաջուանից աւելի վատացել, այդ էլ նորանից է, որ այսքան ժամանակ, կողքիդ ընկած, ոչինչ չես արել»։

- ա. Միւնոյն, ամենմի, ոչմի, ոչինչ, ոքմին, իքմին, միմեանց,
մէկմէկու...
- բ. Այսչափ, այդչափ, այնչափ. այնքան, այսքան, այդքան. ո՞րքան,
ի՞նչքան. որքան, ինչքան, որչափ...
- գ. Որևէ, որևիցէ, ինչևիցէ, ուրևիցէ, որպիսիւիցէ, որքանուիցէ...
- Վերոյիշեալ բարդութիւնները, եթէ վերլուծութեան ժամա-
նակ մի բառ են համարւում, գրւում են անբաժան, իսկ եթէ նրանց
բաղադրիչ մասերից իւրաքանչիւրը առանձին դեր է կատարում
նախադասութեան մէջ, պէտք է գրուին առանձին, օրինակ՝
ո՞րչափ լաց եղաք: — Որ չափով չափէք, նոյն չափով պիտի չափուիք:
— Որտեղ (ուր) հաց, այստեղ կաց: — Ո՞ր տեղը ջոկեցիք բնակու-
թեան համար:

Հ. ԵՐԿՐԱԳՈՐԾԻ ՅՈՅՍԵՐԸ

Քըրտնավաստակ երկրագործի
Աշխատանքով ցանած արտը
Ահա հասնում է, և հընձի
Պատրաստում է չարքաշ մարդը:

Արդէն լցուել են հասկերը,
Լըցուել են և ոսկեզօծուել.
Ծանրացել են հատիկները.
Հողմից դաշտն է ալէկոծուել:
— «Այ կին, կանչում է գիւղացին,
Մի լաւ նայիր դու մեր հացին.
Տես, ծըփում է արտն ինչպէս ծով.
Առատ կըլինի հունձն Աստուծով:

Շատ-շատ երկու կամ երեք օր
երկինքն էլլի թէ ինայէ,
եւ թէ, ինչպէս մինչև այսօր,
Նա ողորմած աչքով նայէ,

Ուրախ սրտով, երգ ու պարով
Մինչ երեկոյ կ'աշխատեմ ես.
Հունձըս կ'անեմ սուր մանգաղով՝
Փայլուն լուսնի եղջիւրի պէս:

Մշակի կեանքն է բարեբաստիկ,
Երբ ցորենով ոսկենատիկ
Լիքն է նորա շտեմարանը,
Անուշ գինով էլ մառանը:

Աստ' ծով երկուսն էլ կըլինի.
Արտըս կըտայ ինձ ցորեն շատ,
Կ'ունենամ և առատ գինի
Ես իմ այգուցը ցանկապատ,

Ուր խաղողի ողկոյզներով
Ծանրաբեռնած են որթերը,
Որոնց, կարծես, յակինթներով
Զարդարել է Ստեղծող Տէրը:

Ուրախ եղիր, սիրելի կին,
Ինչպէս ուրախ է իմ հոգին.
Իմ ցանածը հատիկ-հատիկ
Կըժողովեմ հարիւր պատիկ»:

ա. Շատ-շատ=ամենաշատը. քիչ-քիչ=ամենաքիչը: — Շատ-շատ
տներ=ամենմէկին շատ տներ. քիչ-քիչ վերցրէք=ամեն մէկդ
քիչ վերցրէք...

բ. Հատիկ-հատիկ, ընտիր-ընտիր, ջոկ-ջոկ, մէկ-մէկ, երկ-երկու,
երկու-երկու, երեք-երեք, չորս-հինգ մարդ, վեց-եօթը հոգի...
և սոցա նման բարդութիւնները կցւում են գծիկով:

գ. Այսօր, այնօր, կէսօր, կէսպիշեր... գրւում են միասին, եթէ
մակրայ են, իսկ եթէ այդ բառերի մի մասը գոյական անուն

է, իսկ միւսը նրան որոշող, պէտք է ջոկ-ջոկ զբուխն, օրինակ՝ այս օրը սկ լուսացաւ մեղ համար...

3. ԵՐԻՏԱՍԱՍՐԴԻԸ ԵՒ ԻՒՐ ՍՏՈՒԵՐԸ

Մի տղայամիտ երիտասարդ կամեցաւ իւր ստուերը բռնել. բայց քանի որ նա ոտն առաջ էր գնում, շուքն էլ մի քայլ առաջ էր փախչում. էլի ոտը փոխում էր, շուքն էլ նոյն բանն էր անում. յետոյ երիտասարդն սկսեց վազել, բայց զարմացած տեսաւ, որ ստուերն էլ վագում է առաջից: Երիտասարդը զօր տուեց ոտներին. շուքն էլ սկսեց աւելի ու աւելի շուտ փախչիլ: Ճարը կտրուած, մեր թեթևամիտ երիտասարդը երեսը շուռ տուեց և սկսեց յետ փախչիլ: Մէկ-էլ աչքի տակովը նայի ու ինչ տեսնի՝ շուքը կընկակոխ վազում էր նրա յետկից.

Աշխարհումա բաղդ ասածդ էլ շուքի պէս բան է. շատերը նորա յետկից են ընկնում, ոչինչ ջանք չեն խնայում, բայց չեն կարողանում ձեռք գցել. ուրիշները, կարծես, փախչում են բաղդից, բայց նա նորանցից պոկ չի գալիս, չի հեռանում:

Մի տղայամիտ երիտասարդ... շուքն էլ մի քայլ առաջ էր փախչում... շուքն էլ նոյն բանն էր անում...

- ա. յ բառի սկզբում կարգացւում է որպէս հ. օրինակներ...
- բ. Բառի մէջը հ հնչինը երբէք յ-ով չի գրուիլ... ինչո՞ւ...
- գ. Բառի սկզբում բաղաձայն տառի հետ յ չի գրուիլ՝ բացի հետեւալ բառերից՝ յղկել (կոկել), յղել (ուղեղորել), յղի (եղկու հոգիս), յղփանալ (ուտել-խմելով չափազանցօրէն կշտանալ), յստակ (իստակ):
- դ. Բանի որ=բանի անգամ որ. քանի-որ=մինչե-որ, երբ-որ. քանի որ նա ոտն առաջ էր գնում=քանի անգամ որ... քանի-որ ծեծը կուտէր=երբ-որ...

- է. Մէկ-էլ ինչ տեսնի=յանկարծ ինչ տեսնի... մէկ էլ ասամ=մի անգամ էլ ասամ...
- գ. Կըընկակոխ և ոչ կընկակոխ. չանգըռտել և ոչ չանգըռտել. կանչըռտել և ոչ կանչըռտել...

4. ՀՈՎԻԻ ԵՒ ՄՈԾԱԿ

Մի հովիւ կար, յոյսը դրած շներուն,
Շուքի մէջը հանգիստ, անուշ քուն եղաւ.
Մի օձ պառկած էր թըփի տակ գալարուն,
Տեսաւ հեռուանց, ծածուկ սողաց, մօտ եկաւ.
Թոյնը բերանն էր լցրել,
Քիչ մնաց որ խայթէր, խայծէր, մեռցընէր:
Մոծակը այս որ տեսաւ,
Խըդաց վըրան, թըռաւ-հասաւ,
Բոլոր ուժովը կըծեց,
Հովուին քնից զարթեցրեց:
Հովիւն ելաւ, օճն սպանեց.
Բայց դորանից առաջ՝ կէս-քուն
կէս-արթուն,
Խեղճ մոծակին էլ զարկեց-ալբորեց:

Բառեր՝ շներուն=շների վերայ. կէս-քուն կէս-արթուն=քնաթաթախ, կիսով չափ արթնացած. պառկած էր գալարուն=գալարուած-պառկած էր. թռաւ=հասաւ, զարկեց-արորեց՝ նոյնանշան բառեր են, որոնք կցուած են գծիկով:

5. ՀԱՐՍՈՒԻԹԻՒՆ

Մի չքաւոր երիտասարդ հանդիպեց իւր նախկին ուռուցին և սկսեց շատ գանգատուիլ իւր գառն վիճակի

ու անյաջողութիւնների լրայ: Մի ժամանակ նա եղած
էր ուսումնարանի ամենալաւ աշակերտը և իրանից աւելի
վատ ուսանողներն այժմ լաւ անուան ու հարստութեան
տէր էին, այնինչ ինքն անց էր կացնում թշուառ կեանք:
— «Միթէ յիրաւի ասածիդ չափ աղքատ ես դու, ասաց
նորան ուսուցիչը. դու, ինչպէս տեսնում եմ, առողջ ես.
այդ ձեռքը, շարունակեց ուսուցիչը՝ բոնելով իւր աշա-
կերտի աջը, ուժեղ է և կարող է գործել թոյլ կըտայի՞ր
արդեօք, որ կարեն դորան հազար մանէթով»: — Աստուած
հեռու տանէ, և ոչ տասը հազարով: — «Իսկ որքանով կը-
տայիր քո սրատես աչքերը, որ տեսնում են լոյս աշխար-
հը, — քո սուր ականջները, քո արագաշարժ ոտները. կար-
ծեմ դու չէիր փոխիլ դոցա մի ամբողջ թագաւորութեան
հետ»: — Իհարկէ ոչ, ալատասխանեց երիտասարդը: — «Ու-
րեմն ինչպէս ես գանգատում քո աղքատութեան վրայ,
երբ-որ ունիս այդպիսի մեծ հարստութիւն», նկատեց ու-
սուցիչը:

Այնինչ և ոչ այն ինչ. իհարկէ և ոչ ի հարկէ, երբ-որ և ոչ
երբոր (ինչու). ոչ-ոք և ոչ ոչոք (եթէ միասին գրենք, կըկարդա-
ցուի երբօր, ոչօք, որովհետեւ ո ձայնաւորը բառի մէջը կարգաց-
ւում է օ):

6. Բ Ա Ժ Ի Ն Ք

Քանի մի վարպետ վաճառականներ,
Սիրով միմեանց հետ դործ էին բոնել.
Լաւ աշխատեցան, քրտինք թափեցին,
Լաւ էլ շահուեցան, մեծ փող դիզեցին:
Ժամը հասաւ. պէտք է հաշիւ տեսնէին,
Եղած վաստակն իրանց մէջը բաժնէին.

Բայց ուր գանեմ ես ընկերներ այնպիսի,
Որ բաժանուին առանց կոռուի, վիճմունքի.
Այն պարոններն էլ մեծ վէճ յարուցին,
Որ ծայր-վերջ չունէր, կանչն էր ահագին:
Եւ ահա գրսէն Զայներ կըլսեն.
«Կըրակ կայ, կըրակ.
Մարդիկ, դուրս եկէք.
Շնուտ արէք, փախէք,
Թէ չէ՝ կորած էք»:

Ընկերներից մէկը կանչեց.
«Դուրս գանք, տեսնենք ինչ պատահեց»:
Միւսն այն կողմից աղաղակեց.
«Հազար ոսկիս — առաջ ալարտքս տըւեցէք»:
— Երկու հազարէ առնելիքս, միւսն ասեց.
Մինչև փողս ես լիուլի չստանամ,
Այստեղից ուր պիտ' զընամ:
Միւս կողմ երրորդն էր գորգոռում.
«Հաշիւն այդպէս չէ, ինչ կ'ասես, եղբայր»:
Չորրորդը դարձեալ իւր պահանջն անում,
Թէ իրան բաժին պիտ' տան հաւասար:
Խեղճ մարդիկը մոռացել էին,
Որ բոցերի մէջ բըսնըւել էին:
Այնպէս իրանց կոռուին էին զբաղուած,
Որ մուխն եկաւ, խեղդեց ամենքը յանկարծ:

Այս առակը դու չկարդաս առանց խրատ առնելու.
Շատ մեծամեծ գործերի մէջ վսամն ինչիցն է գոյանում՝
երբ փոխանակ հասարակաց փորձանքին դէմ դընելու,
Ամեն մարդ իւր օգտի համար իին ու նոր վէճն է բանում:

- ա. Ծայր-վերջ չունէր=ծայր ու վերջ չունէր (դուրս ձգուած շաղ-
կապի փոխարէն պէտք է զնել գիծ):
- բ. Կըլսեն, կըտեսնեն, կ'ասեն և ոչ կը լսեն, կը տեսնեն... չստա-
նամ, չզնամ, չանեմ և ոչ չըստանամ, չըգնամ, չ'անեմ...
- գ. Բոնուել էին—բըսնըւել էին: Ոտանաւորների մէջ, երբ ուն
իւր հարեան ձայնաւորի հետ չպիտի կցուի մի վանկ կազ-
մելու համար, այլ ինքը պիտի առանձին վանկ կազմի,
սղում ու ածանցւում է ըւ-ի:

7. ԱՐԴԱՐ ԴԱՏԱՍՏԱՆ

«Ողորմութիւն արէք», աղաղակեցին ողբալի ձայնով
երկու պանդուխտ մուրացկաններ մի տաճիկ դատաւորի
տան պատուհանի տակից:

Տանտէրն այդ միջոցին նստած էր մի փառաւոր բազ-
մոցի վրայ և գիրք էր կարդում:

—Մեծ մարգարէն տայ, ասաց դատաւորը, կըոթնե-
լով լուսամուտին:

«Ողորմեցէք ի սէր մարգարէի», նորից կրկնեցին օտա-
րականները:

—Կորէք այստեղից, անպիտաններ, աղաղակեց դա-
տաւորը զայրանալով, և բարկութիւնից գիրքը վայր ձգեց
յատակի վրայ:

«Ո՛, խղճացէք մեզ և ողորմութիւն արէք, թէկուզ
ի սէր Աստուծոյ», արտասուքն աչքերին կրկնեցին օտա-
րականները:

Այն ժամանակ դատաւորը վեր ցատքեց բազմոցից և
գոչեց զարհուրելի ձայնով. «Է՛յ, Մահմուդ, Ա՛զամէդ, կա-
պեցէք այս թափառականներին և բանտը ձգեցէք»:

Բայց օտարականներն արդէն անյայտացել էին:

Անց կացաւ սրանից երեք օր. դատաւորը մեծ հրա-

ւէրք ունէր. նա, կըոթնելով լուսամուտին, կանգնած մեծ
մուֆթիի հետ, դիտում էր Բաղդադի շրջակայքը, երբ պա-
տուհանին մօտեցան նոյն օտարականները:

«Իու մեծ ուրախութեան մէջ ես, մեծ դատաւոր,
ասացին օտարականները ցաւալի ձայնով. մի քիչ էլ մեզ
մաս հանիր այդ ուրախութիւնից»:

—Մեծ մուֆթի, ասաց դատաւորը. ահա արդէն երկ-
րորդ անգամն է, որ գալիս են այս թափառականներն ինձ
նեղացնելու: Ի՞նչ է շինում մեր խելօք խալիֆան: Նա
քնած է և չէ հրամայում, որ տանեն-բանտարկեն այս դա-
տարկաշրջիկներին: Բայց ես կըհրամայեմ շղթայակապ աներ,
որ էլ չկարողանան շրջել Բաղդադի փողոցներովք: Է՛յ,
ձայն տուեց նա իւր ստրուկներին. եկէք, կապեցէք այս
թափառականներին:

Այդ ժամանակ օտարականները ներս մտան դահլիճ և
նորանցից մէկը, դէն ձգելով իւր վրայից պատառոտուած
վերարկուն, ասաց սպառնալի ձայնով.

—Դատաւոր, այդպէս կարեկից և արդարադատ ես
դու գէպի խեղճերը: Ես կարծում էի, թէ զու իմ ժողո-
վորդի գթասիրտ և արդարասէր դատաւորն ես. բայց սաս-
տիկ սխալուած եմ եղել: Զաֆար, վեր առ այս չնչին
որդը և դատիր մեր իմաստուն օրէնքով: Թո՞ղ գիտենան
ամենքը, որ թագաւորին չէ կարելի խարել և որ՝ վաղ թէ
ուշ, վատ գործերը կըյայսնուին ու կըպատճուին:

Բոլոր հիւրերը զարմանքից ու երկիւղից քարացան,
տեսնելով որ օտարականի հագուստով խօսող մարդը իրանց
թագաւոր Հարուն-Ալ-Մաշիդն է, իսկ նորա ընկերը՝ մեծ
վէզիր Զաֆարը:

ա. Ի սէր Աստուծոյ, ի սէր մարգարէի, ի յիշատակ, ի յարգանս,
ի պատիւ... գրաբարից մնացած ոճեր են, ուր ի նախդիրը,
գրաբարի հետևողութեամբ, գրւում է առանձին:

բ. Այսպէս են գրում նաև՝

Հստ պատշաճին, ըստ երևութին, ըստ ամենայնի... առ Աստուած, առ ընկերն, առ ազգն Հայոց... (նախաղրութիւններ):

գ. Բայց՝ առառաւելն, առնուազն... կից են գրում, որովհետև
մակրայ են:

8. ԳԹԱՄԻՒՏ ԲՈՒՆ

Կորակըտուց, արիւնարբու,
 Զարագուշակ խոշոր մի բու
 Կիսախարխուլ ու անբնակ
 Մի տան վըրայ կ'ապրէր մենակ:
 Եւ ամեն օր, երբ-որ արև
 Կըտար երկրին վերջին բարե
 Եւ բընութեան վըրայ գիշեր
 Մութ վարագոյրը կըքաշէր,
 Մեր մենակեացն արագաթե
 Կըթողնէր իւր բունըն ու թեթե
 Կըսլանար մինչև անտառ
 Իւր ճանկերով պատառ-պատառ
 Գիշատելու շատ մի անմեղ
 Խեղճ թռչնիկներ սիրագեղեղ,
 Որք՝ երգելուց բազմավաստակ,
 Կընընջէին խիտ ոստոց տակ:
 Սակայն, բարձած հարուստ աւար,
 Երբ-որ դառնար իւր բոյնն խաւար,
 Դիտմամբ գետին նա կըձգէր,
 Մի քանի հատ թըռչնի ճագեր,
 Որպէս զի շուն, մուկ կամ կատու,
 Իւր դրացիքն ամեն առառ,

Տան առջեկից անցած ատեն

Նոցա հոտըն առնեն, ուտեն

Եւ հոչակեն մեծաբարբառ՝

Թէ բուի չափ առաքինի,

Պատուի, գովինստի արժանի

Հողի մի տեղ չկայ իսպառ:

Եւ արդարե, էլ գունդ-իգունդ

Շըներ, կատուներ սրտաթունդ,

Կուշտ որովայն, ցերեկն-իբուն

Կըկոչէին եռանդագին.

«Երկինք օրել շնորհեն անզին,

Յաւէտ անփորձ պահեն մեր բուն,

Զի այսքան սուրբ, ազնիւ, արդար,

Բազումողորմ, կենդանասէր,

Աղքատին նեցուկ, մըխիթար

Բու՝ մինչև ցարդ մենք չենք տեսել»:

Զոկեցէք բարդ բառերը և գարձրէք իրանց բաղադրիչ մասերին
ա. Կորակտուց, արիւնարբու, կիսախարխուլ, միայնակեաց, արա-
գաթե ևայն:

բ. Գունդ ի գունդ, գիշերն ի բուն, բարդ մակրայեր են, որ
գրում են գրաբարի ձևով, բայց պէտք է գրել՝ գունդ-
իգունդ, թունդ-իթունդ. գիշերն-իբուն, ցերեկն-իբուն. փոքր-
եշտէ, վերջ-իվերջոյ, կարճ-իկարճոյ...

9. Ս Ո Խ Ա Կ

Գարնան գեղեցիկ երեկոյին մէկ փոքրիկ տղայ իւր
վարպետի հետ պատում էր անտառի շուրջը: Խիտ ծառե-
րի միջից լսում էր սոխակի հրապուրիչ ձայնը: «Ի՞նչ
գեղեցիկ ներդաշնակութիւն, ասաց տղան, երկար ժամանակ
հիացած ականջ դնելուց յետոյ. սաստիկ ցանկանում եմ

այդ գեղեցիկ երգը մօտից լսել. մի քիչ առաջ զնանք,
վարպետ, որտեղից ձայնն է գալիս»:

— Զգոյշ կաց, ասաց վարպետը. սոխակը վայրենի
թոշուն է և անչափ կասկածոտ. եթէ փոքրինչ մօտենանք,
կըխրանի և կըդադարի երգելուց:

«Բայց ինչի՞ համար, ասաց տղան, ինչի՞ այդ թոշու-
նը, որ իւր երդի ճոխութեամբ ուրիշներինը խափանում
է, վայրենի միայնութիւն է սիրում. ինչի՞ իւր քաղցր
ձայնը մարդկային բնակութիւնից հեռու է հնչեցնում,
մինչդեռ մեր պարտիզի փոքրիկ ծառերն անգամ մանրիկ
թոշունների ձանձրացուցիչ ճրուողիւններով լին են»:

— Ստոյգ արժանաւորութիւնը, պատախանեց վար-
պետը, համեստ է լինում և սիրում է առանձնութիւն.
Նրան պէտք է մեծ յարգանքով մօտենանք և, եթէ չի կա-
րելի ձեռք ձգել, պէտք է բաւականանանք հեռուից նորա-
արդիւնքը վայելելով:

ա. Զգոյշ, զգաւ, զգօն, զրազմունք, զրօսանք:

բ. Սկին, սկունդ (շնիկ), սկիզբ, սպիտակ, սպունգ, սպասել, սպե-
ղանի, ստուէր, ստուար, ստակ, սփոփել, սքողել, սքանչելի,
սթափուիլ:

գ. Շտապել, շտեմարան...

Զ, ս, շ տառերը, ցուցակագրած բաղաձայների հետ, բառի
սկզբումը առնում են ը հնչելու, որ լսում է, բայց, տարարախ-
տաբար, չի գրում և սրանով շատ է դժուարացնում այդ բառերի
կանոնաւոր ընթերցումը մանաւանդ օտարների համար:

10. Գ Ա Ր Ո Ւ Ի Ն

Քեզ ըսպասող չըմնաց,

Ո՞ւր ես գալի, այ գարուն.

Գովքը ասող չըմնաց,

Զուր ես գալի, այ գարուն:

Սկ-մութ պատեց աշխարհին,

Սար ու ձոր դառաւ արիւն.

Մեզ վայ բերեց էս տարին,

Ո՞ւր ես գալի, այ գարուն:

Բըլբուլն եկաւ, վարդ չունի,

Ծաղկոցը կայ՝ զարդ չունի.

Էլ ո՞վ է որ գարդ չունի,—

Ո՞ւր ես գալի, այ գարուն:

Ը տառի գործածութիւնը ոտանաւորների մէջ:

11. ՀԱՅՐ ԵՒ ԵՐԵՔ ՈՐԴԻ

Շատ տարի առաջ արևելքում ապրում էր մի մարդ,
որ մի թանկագին մատանի ունէր: Քարը գոհար էր, որ
բիւրաւոր գոյներով փայլում էր ու շողջողում: Բայց այս
մատանին մի առաւելութիւն ես ունէր. այն անձը, որ
կրում էր այս մատանին, թէ Աստուծուն էր հաճելի և
թէ մարդկանց սիրելի: Զարմանալի չէ, որ արևելաբնակ
մարդը երբէք մատից չէր հանում այդ մատանին: Մեռնե-
լիս՝ նա մատանին տուեց իւր ամենասիրելի որդուն և
կտակ արաւ, որ նա էլ նոյնպէս յանձնի այն որդուն, որ
ամենից սիրելին կըլինի: Եւ ով որ մատանին ստանում
էր, տունց տարիքին նայելու, միմիայն մատանու զօրու-
թեամբ լինում էր տան մեծն ու ժառանգը:

Եւ այսպէս որդուց որդի անցնելով՝ վերջապէս մա-
տանին հասաւ մի հօր, որ երեք որդի ունէր: Երեքն էլ
հաւասարապէս հնազանդ էին նորան և նա երեքին էլ հա-
ւասար սիրում էր: Հայրը չէր կարողանում վճռել, թէ
որդիներից նրը պիտի ժառանգի մատանու արտօնութիւնը:

Երբ մեռնելու ժամանակը մօտեցաւ, բարի մարդը
ծածուկ կանչեց իւր մօտ մի վարպետ, յանձնեց նորան:

իւր մատանին և պատուիրեց, որ այդ մատանու պէս երկուսն էլ շինի։ Երբ վարպետը բերեց պատուիրած մատանիները, ինքը տէրն անգամ չկարողացաւ որսշել, թէ որն է իսկականը և որը կեղծը։ Ուրախ կանչեց նա իւր զաւակներին առանձին-առանձին, ամեն մէկին տուեց մի մատանի, օրհնեց ու ճանապարհ զցեց։

Հազիւ թէ հայրը հոգին աւանդել էր, որդիներից
ամեն մէկը եկաւ և իւր մատանու զօրութեամբ կամեցաւ
տան մեծը լինել: Սկսեցին քննել, վիճել, գանգատուիլ,
բայց ոչ մէկը չկարողացաւ ապացուցանել, թէ իւր մա-
տանին է իսկականը:

Գնացին դատաւորի մօտ: Եղբայրներից ամեն մինչ
երդմամբ հաւատացնում էր դատաւորին, թէ անսմիջապէս
հօրիցն է ստացել իւր մատանին, ուրեմն և իրաւունք ու-
նի վայելել գորա արտօնութիւնը:

Դատաւորն ասում է. «Դուք հաւատացնում եք, որ ձեր հօրից մնացած մատանին այնպիսի հրաշալի զօրութիւն ունի, որ ում մատին լինի, նորան թէ Աստուած պիտի նիրէ և թէ մարդիկ։ Դէհ, ասացէք տեսնեմ, երեքիցդ ո՞րն է սիրելի մնացած երկուսին։ Դուք լռում եք... Զեղանից ամեն մէկը, ինչպէս տեսնում եմ, միայն իւր անձն է սիրում։ Նշանակում է երեքդ էլ խաբուած էք և ձեր երեքի մատանիներն էլ խակականը չեն, կեղծ են։ Անշուշտ խական մատանին կորած է և այդ կորուստը ծածկելու համար նորա փոխարէն ձեր հայրը շինել է տուել ուրիշ երեքը»։

«Ուրեմն, շարունակեց դատաւորը, վճռիս փոխանակ լսեցէք իմ խորհուրդը. ամեն մէկդ բաւականացէք ձեր ունեցածով և թողարկեն մէկը ձեզանից հաւատայ, թէ իւր մատանին է խսկականը։ Գուցէ ձեր հայրն ուզում էր այն մատանու բռնութիւնը իւր տանից վերացնել։ Ան»

Հուշակը սիրում էր նա երեքիդ էլ հաւասար և չէր կամենում թոյլ տալ, որ մէկը ճնշէ երկուսին: Ուրեմն ձեզ անհից թող ամեն մէկն աշխատի սիրել անկեղծ և առանց նախաղարման մնացած երկուսին: Թող ամեն մէկը ձեզանից ձգտի, որ իւր մատանու քարի զօրութիւնը երևան հանէ, և այդ զօրութեան օգնական լինի նա իւր հեղութեամբ, անկեղծ, ջերմեռանդ անձնուիրութեամբ գէպի Աստուած և դէպի մարդիկ»:

Ուր, իւր. թուր, թիւր. դուր, դիւր. բուր, բիւր. բուրել,
բիւրաւոր, բիւրեղ...
ա. ո բարդ ձայնաւորը, կցուելով և բաղաձայնի հետ, կազմում է
ու պարզ ձայնաւորը:
ք. ի պարզ ձայնաւորը, կցուելով և բաղաձայնի հետ, կազմում է
իւ բարդ ձայնաւորը:—ու ամենայն տեղ և ամենայն ժամա-
նակ ձայնաւոր է, մինչդեռ իւ երբեմն ձայնաւոր է, իսկ եր-
բեմն պարզ վանկ (օրինակներով բացատրել):

12. *U h ξ u h u s y f*

Զըհաւատաս դու, եթէ քեզ ասեն՝
Հանգիստ դու նստիր և յուսանվ եղիր.
Օրեր, տարիներ ամսոգ թող անցնեն,
Քեզ համար դործը կըպայ ինքն իրեն։

Դու մի՛ հաւատար, թէ որ քեզ ասեն՝
Զեռքդ մի՛ շարժիր, նստիր ինչպէս կուտ.
Արծիւն ու առիւծ ոսկի կըբերեն,
Քեզ համար օտարք անդուլ կըգործեն։

Դու մի՛ հաւատար այլոց խօսքերին,
Աչքդ մի՛ ձգիր այլոց ձեռքերին.
Միայն հաւատամ քո իսկ ոյժերին
Եւ քո խելացի առողջ մրաքերին։



ա. անդուլ—առանց դադարելու, իսկ—բայց, իսկ—հէսց. այլ—իսկ.
այլ—ուրիշ. այլոց խօսքերին—ուրիշների խօսքերին:
բ. պէս մարդու պէս. այսպէս, այդպէս, այնպէս, ինչպէս, որպէս...
քան՝ սա մեծ էր քան նա. փիղը ուժեղ է, քան ձին...
այսքան, այդքան, այնքան, որքան, որքան, ինչքան...
չափ մարդու չափ. այսչափ, այդչափ, այնչափ, որչափ...

13. Ա. Բ Յ Ո Ւ Ն Ք

I

Շատ ու շատ գարեր սրանից առաջ առվրում էր մի թագաւոր: Նա այնքան բարի էր ու այնքան ողորմած, որ ժողովուրդը նրան հօր պէս սիրում էր և ամեն ըստէ պատրաստ էր նրա համար իր կեանքը զոհել: Թագաւորն էլ ժողովուրդին էր իր որդու պէս սիրում և գիշեր ցերեկ նրա մասին: Էր խորհում ու հոգում... Եւ ահա մի օր նա ուղեցաւ այնպէս անել, որ իր հալատակներից ոչ մինչ իրան գիրական չհամարի և հաստատապէս վճռեց վերջ տալ իր տէրութեան մէջ գտնուող բոլոր գատապարտեալների արցունքներին: Նա պատուիրեց իր զիստոր գեսպանին շրջել և տէրութեան մէջ գտնուող արցունքները ժողովել մի ոսկէ սափորի մէջ:

Թագաւորական պաշտօնեան, առանց մի բոպէ դանդաղելու, ճանապարհ ընկաւ, իր պետի հրամանը կատարելու:

Նա երկար, շատ երկար թափառեց դէս ու դէն և սասափիկ յօգնեց. նա մի քանի անգամ վերադառնում էր այս կամ այն երկիրը, նորից ու նորից ուշիուշով որոնում էր տարաբախաներին, երկիւղ կը երկով՝ որ մի գուցէ մոռացութեան տուած կամ աչքից թողած լինի մի որկիցէ

անկիւն, ուր կարող էր ծածկուած լինել մի մարդ, որ առապում էր վշտից ու հոգսերից:

Նա շրջում էր սարերի ու ճանապարհների վրայ, մութ-մութ ձորերում ու ճահճներում, անցնում էր նեղ ու խուլ շաւիղներով, մինչև անգամ մտնում էր ամայի, չոր ու ցամաք անապատները, սակայն այնտեղ էլ յայտըն-ում էին անբախտ, արտասուք թափող մարդիկ: Թա-գաւորի գեսպանը միսիթարում, սիրտ էր տալիս նրանց բարւոք և երջանիկ ապագայի յուսով և, նրանց արցունք-ները ժողովելով ոսկէ սափորի մէջ, առաջ էր զնում: Սա-կայն ուր էլ որ զնում էր - ամեն տեղ, ամեն անկիւնում, տարաբախաբար, առատութեամբ էր գտնում այն, ինչ-որ ինքը որոնում էր:

Մէկ տեղ մայրն էր ողբում իր սիրասուն որդոց մա-նը, միւս տեղ թոյլ ու սրտամաշ ձայնով որդիքն էին աղա-չում, պազատում հօրը, որ նա մի կտոր հաց տայ իրանց ուտելու, իսկ խեղճ հայրը վշտակոծ և աղիողորմ լալիս էր, որովհետեւ հաց չըկար, ինքը հիւանդ էր, գործելու ոյժ չունէր: Մի այլ տեղ մանկահասակ և շնորհագեղ կոյսը, կանգնած մեծ ճանապարհի վրայ, որտեղով պէտք է պա-տերազմից վերադառնար նրա անգին և կարօտեալ եղբայ-րը, անհամբեր և սրտատրոփ սպասում էր իր հոգու հա-տորին և արտասուալից աչքով նայում էր հեռուն: Այս-տեղ որդին էր ողբում իր հօր մահը, այնտեղ մայրն էր հեծկըլտում, աղի արցունք թափում իր գտտեր գերեզմա-նի վրայ... Մի խօսքով՝ ուր էլ որ զնում էր թագաւորա-կան պաշտօնեան, ամեն տեղ լաց ու արտասուք էր տես-նում, ամեն տեղ ախ ու վախ լսում...

II

Բայց ահա յսնկարծ մի տեղ բոլորովին նոր տեսարան բացուեց նրա աչքի առջև:

Անշուք, բայց մաքուր խրճիթի խորքում, մահուան անկողնի մէջ պառկած էր մի պատկառելի ծերունի և հանգիստ ու անխոռվ վերջին հրաժարականն էր տալիս իր երկրաւոր կեանքին: Մթագունած աչքերով նայում էր նա իր կնոջն ու զաւակներին, որոնք նրա ոտների մօտ կանգնած՝ դառն արցունք էին թափում: Բայց ահա նա իր երեսը շրջեց դէպի պատր, որի վրայ կախած էին նրա սուրն ու նիզակը: Նա մի խորը հայեացք ձգեց այդ գէնքերի վրայ, որոնք այնքան յաղթութիւններ էին տարել, և մի ակնթարթում նրա աչքերը պայծառացան, դէմքը վառուեց որպէս ճաճանչափայլ արև: Ծերունին հաւաքելով իր վերջին ոյժը, զլուխը մի փոքր վեր բարձրացրեց և մեզմ ձայնով արտասանեց.

Ես մեռնում եմ հանգիստ և խաղաղ սրտով, որով հետեւ պատուաւոր կերպով ապրեցի: Ինձ հետ գաղաղ դրէք և իմ գէնքերը, որովհետեւ ես չունիմ ոչ ոք, որին կարողանամ կտակել իմ այդ փառքն ու պատիւը: Անարդ որդիս յաւիտեանս արտատորեց իմ անունը: Նա արժանի չէ այդ գէնքերը կրելու:

Այս ասելիս, աղի արցունքները հեղեղի նման թափուեցին ծերունու աչքերից և թրջեցին նրա ձիւնի պէս սպիտակ մօրուքը: Անշուք խրճիթում մեռելային լոռութիւն տիրեց և ծերունու կրծքից դուրս թռաւ մի խորին հառաչանք...

Նրա մաքուր հոգին վերացաւ աւելի գեղեցիկ, աւելի չքննալ աշխարհ...

Թագաւորական դեսպանը մէծ հոգատարութեամբ ժողո-

վեց վշտահար ծերունու արցունքները և խրճիթից դուրս գալով՝ շարունակեց առաջ գնալ:

Նրա սափորը հետզհետէ լցւում էր:

Նրա մէջ կային և վշտի, և տառապանքի, և ուրախութեան, և անհուն զգացման արցունքներ: Ուկէ սափորը փակ էր միայն ատելութեան և վրէժխընդրութեան արցունքների համար:

Մի քանի տարի անցնելուց յետոյ, թագաւորական դեսպանը վերագարձաւ իր պետի մօտ, արցունքներով լի սափորը դրաւ նրա առջև և սկսեց պատմել իր տեսածն ու լսածը: Թագաւորը խորին կարեկցութեամբ լսում էր դեսպանի պատմածները. բայց երբ դեսպանը վերջացրեց իր պատմութիւնը, թագաւորը տիսուր ու արտում նայեց իր առջև դրած սափորին և ապշած մնաց. դժբախանների ամեն մի կաթիլ արցունքը ամենայստակ և զուտ մարդարտի էր փոխուել, միմիայն անարդ որդու վրայ թափած ապաբախտ հօր արցունքները մի ահազին և ծանր քար էին դարձել:

— Այժմ պարզ տեսնում եմ, ասաց թագաւորը, որ ես կարող եմ լիովին վարձատրել բալոր տառապեալներին նրանց կրած կորուստների և թափած արցունքների համար. միայն հայրական արցունքներն են, որոնց հսար չըկայ ոչ վարձատրելու և ոչ էլ աշխարհիս անհուն գանձով ու հարստութեամբ որևէ հատուցում տալու:

— Այն, այն, շարունակեց թագաւորը, անպատուած ծնողների արցունքները, ծանր քար դարձած, ճնշում են, իրանց տակ անարդ զաւակներին և յաւիտեան պատասխանատու են դարձնում նրանց թէ մարդկանց և թէ Աստուծոյ առջև...

Զանազանեցէք՝

ա. Խորհել, մասձել, զատապարտել, մեղաղբել, արցունք, արտա-

սուք. շաւիդ, ուղի. շնորհագեղ, գեղաշնորհ, անհուն, անվերջ. անսահման, անկղը. հեռու, հեռուն...

բ. Մարիամ, սենեակ, արգեօք, կեանք, եօթն...

Ամեն մի ձայնաւոր տառ իւր բացարձակ հնչիւնն ունի և բառի մէջ մի վանկ է կազմում... (օրինակներ). բայց երբ երկու ձայնաւոր գալիս են քովէ-քով, որ մի վանկ կազմեն, այդ գէպ-քում վանկի առաջին ձայնաւորը կցում է իւր հարևանին և ինքը, արտասանուելով սովորականից աւելի կարճ ու ամփոփ, նրա հետ միասին մի վանկ է կազմում. կեանք և ոչ կե-անք. Մարիամ և ոչ Մարի-ամ...

14. ԿԵԱՆՔԻ ԽՈՐՀՈՒՐԴԻ

Դուրսը փչում է բքաշունչ քամին,
Զմեռուայ մի ցուրտ գիշեր է խաւար.
Նստած եմ մենակ սենեակում մըթին,
Տալիս եմ կեանքիս հարցեր անհամար:

Վառարանիս մէջ այրուող կրակը
Կարծես ասում է իր վառվրոցով.—
«Ի՞նչ ես մտածում. ինչպէս ծուխ ու բոց՝
Քո կեանքն էլ կանցնի, կըմարի շուտով»:

«Երեի, ուրեմն, կեանքը տըւած է
Մեզ իբրև պատիժ, որ միայն վիշտ, ցաւ
Կրելով, տանջուինք մեռնելու համար...»
Հէնց էն էր՝ մտքովս այս բանը անցաւ,

Յանկարծ բացուեցաւ սենեակիս դուռը.
Փոքրիկ Հրածինա, տիկնիկը գրկած,
Վաղեց, ինձ փարուեց, և հրեշտակային
Անմեղ ժամփով՝ «Հայրիկ ջան», ասաց.—

«Տես, ինչ գեղեցիկ շապիկ եմ կարել ամառան զնաց
Տիկնիկիս համար. երբ լինիմ այլչափ»,
Չեռքը բարձրացրեց, «Քեզ էլ կըկարեմ.
Քեզ շատ եմ սիրում, շատ-շատ, ամպի՛ չափ...»

Մոայլ մտքերս ցրուեցան իսկոյն.

Ես ինձ զգացի զըւարթ ու թեթև.

Կեանքի խորհուրդը պարզուեց ինձ համար.

Նա մեզ պատիժ չէ, այլ անգին պարգև:

Սս-տուած, Սս-տուած. բացուեցաւ, բացվեցաւ, բացւեցաւ:
Հայոց լեզուի մէջ հիմնական կանոն է, որ բաղաձայն տառաերս իրանցից յետոյ և տառը չեն հանդուրժում. բացառութիւնն կազմում են գրաբար լեզուի մէջ ի վերջացած գոյականների սեռական հոլովը: Այս հիման վերայ գրւում են՝ պատուէր, նուէր, ստուէր, աղուէս, արուեստ... Բայց նորհայերէնի մէջ ներկայումս այս կանոնի վերաբերութեամբ խանաշփոթութիւն է տիրում. գրում են նւեր, պատուէր կամ պատվէր... Ո՞րն է ուղիղը: Նախնի ուղղագրութեան հիմքը աս է, որ երբ ու հնչիւնը մի ուրիշ ձայնաւորի հետ գալիս է մի վանկ կազմելու, նա, բնդհանուր օրէնքին համաձայն, կարձանում ու կցւում է այդ ձայնաւորին, պահելով իւր փափկութիւնը, բայց կոշտ վ կամ և չի դառնում. միայն երբ երկու ու գալիս են իրար մօտ, նրանցից մինը ածանցում է ւ-ի (ան հետեւել յօդուածների ծանօթութիւնը և մեր քերականութեան յառաջարանը):

15. ՀԱԻՍԱՐԻՄ ՇՈՒՆՔ

Մի վաճառական ձիով ճանապարհորդելու դուրս եկաւ: Նորա հետեւից վաղում էր իւր հաւատարիմ շունը: Վաճառականը գնում էր մի մեծ գումար ստանալու: Փողերն ստացաւ, լիքը քսակը կապեց թամբի յետեր և վերաբարձաւ դէպի տուն: Ճանապարհին քսակը կտրուեցաւ, վայր ընկաւ, իսկ վաճառականն այդ չնկատեց: Մըտես

շունը աեսաւ այդ բանը և փորձեց վեր առնել նորան
ատամիերով, բայց երբ զգաց, որ իւր ուժից վեր է, թո-
ղեց պարկը, վագեց հասաւ իւր տիրոջը և, կամենալով
նորան մի կերպ իմացնել, սկսեց ձիու առաջը կտրել,
յարձակուիլ նորա վրայ և յամառութեամբ ու կատաղու-
թեամբ հաջելով՝ աշխատում էր նորան կանգնեցնել: Զի-
մանալով պատճառը՝ վաճառականը բարկանում էր շան
վրայ, նախատում էր նորան, խփում էր մտրակով, բայց
ոչինչ չէր օգնում: Հաւատարիմ կենդանին շարունակում
էր ձիու վրայ յարձակուիլ այնպիսի կատաղութեամբ, որ
կարծես կամենում էր իւր տիրոջը վայր քաշել: Տեսնելով
որ ոչինչ չի օգնում և որ վաճառականն աւելի ու աւելի
հեռանում է, շունն սկսեց կծոտել ձիու ոաները, որ գոնէ
այդպիսով կանգնացնէ և յետ դարձնէ իւր տիրոջը: Վա-
ճառականը վախեցաւ. նա մտածեց՝ մի՛ գուցէ շունը կա-
տաղել է, և գիտենալով՝ թէ որքան վտանգաւոր են կա-
տաղած շները, վճռեց սպանել իւր հաւատարիմ ծառային: Մա-
կայն դեռ երկար ժամանակ աշխատում էր նա հեռացնել
շանը մերթ փայփայանքներով, մերթ սպանալիքներով և
մերթ մտրակի հարուածներով: Վերջապէս, տեսնելով որ
ոչինչ չի օգնում, հանեց ատրճանակը և սրտամորմոք ար-
ձակեց հաւատարիմ կենդանու վրայ: Շունը վայր ընկաւ,
բայց մի բոպէից յետոյ դարձեալ վեր կացաւ և ցաւալի
ճշիւնով ու արիւնաթաթախ սկսեց հետեւ իւր տիրոջը:
Վաճառականը շատ էր սիրում իւր շանը, ծանը էր իրան
համար տեսնել նրա չարչարանքը, այդ պատճառով շարժեց
ասպանդակիները և առաջ շարժուեց: Մի փոքր հեռանա-
լով՝ նա կամեցաւ տեսնել, թէ ինչ եղաւ խեղճ կենդա-
նին և այստեղ ահա, յետ նայելիս, նկատեց, որ փողի
քսակը չկայ: Այն ժամանակ միայն հասկացաւ վաճառա-
կանը իւր շան արարքը, և նա շան վրայ աւելի ցաւեցաւ,

քան կորցրած վողի վրայ: Ճանապարհորդն իսկոյն ձիու
բերանը յետ դարձրեց, բայց շանը նոյն տեղը չգտաւ, ուր
թողել էր: Արիւնի հետքը ցոյց էր տալիս, որ կենդանին
յետ է դարձել: Որքան ցաւեցաւ բարի վաճառականը, երբ
արիւնը բռնած գնալով՝ նա գտաւ հաւատարիմ կենդանուն
վայր ընկած փողի քսակի մօտ: Գիտակցաբար նայեց շունը
իւր տիրոջը և սկսեց վաղաքանքով լիզել նրա ձեռները...
խեղճ կենդանին յայտնապէս գոհ էր, որ իւր տէրը վերա-
դարձաւ և գտաւ կորուստը: Մի քանի բոպէից յետոյ շու-
նը սատկեց: իսկ վաճառականը տխուր ու տրտում վերա-
դարձաւ տուն:

ա. Խոնարհեցէք ներգործական բայերը՝ կտրել, արձակել, շարժել...
բ. Խոնարհեցէք նոյն բայերի կրաւորականը՝ կարուիլ, արձա-
կուիլ, շարժուիլ...

Հայոց լեզուի հոգուն հակառակ է, որ միևնույն ձայնաւոր տառը,
քովէ-քով գալով, մի վանկ կազմի (տես 14 յօդուածի ծանօթութիւնը).
այս պատճառով բայերը խոնարհուելիս, երբ երկու ու պիտի գան
քովէ-քով, նրանցից առաջնը ածանցւում է ւ-ի՝ կտրում եմ,
արձակում եմ, շարժում եմ... Այն անձինք, որոնք կրաւորա-
կերտ մասնիկ համարում են ոչ թէ ու-ն, այլ ւ կամ վ, բայի
բոլոր ձեերում ու-ի տեղ գրում են ւ կամ վ:

16. ՇԱՆ ԳԱՆԳԱԾԲ

Դունչը ցից արաւ պարոնի Շունը,
Որ պահպանել էր իւր տիրոջ տունը,
Որ մարդ չէր թողել նըրան մօտենայ,
Ոչ տընանկը գայ, մի բան ըստանայ,—
Դունչը ցից արաւ, օռնաց, կաղկանձեց
եւ դէպի երկինք բողոք արձակեց՝

Թէ տէրն ապերախտ նըրան չի նայում,
Ծերութեան օրին քաղցած է պահում:
Հէնց այդ ըռպէին մի մարդ անց կացաւ,
Զառամած շանը կամաց մօտեցաւ,
Նըրա գանգատը նոր-մէկից լըսեց,
Ապա մեղմօրէն ականջումն ասեց.
«Խաչ-որ, այ Շնիկ, զուր ես արբարնջում,
Զուր աղայիդ դէմ հաջում, կաղկանձում.
Զէ դու ես եղել միակ պատճառը,
Որ նըրա ձեռքից մերկն ու անձարը
Երբէք օգնութեան չեն արժանացել.
Զէ որ ամենքին դու ես հալածել.
Հիմա էլ քեզ է, հարկաւ, մոռացել...
Մարդկանց առածը միշտ միտըդ պահիր՝
«Ինչ-որ բըրդել ես, նոյնը վայելիր»:

17. ԱՐԾԻՒՆ ՈՒ ՀԱԻԼ

Մի անգամ գիշատիչ կենդանին ընկել էր երկաթեայ
վանդակի մէջ: Տիսուր ու մունջ էր նա և կատաղաբար
չորս կողմը նայելով՝ չէր մօտենում առաջն ածած մաի
կտորներին: Վանդակը դրած էր դուրսը և նորա մօտով
ման էին գալիս հաւերը: Դոքա սկզբում բաւականին հե-
ռու էին շրջում արծուից՝ դողիդող մտիկ տալով ահարկու
թուշունին, բայց յետոյ, հասկանալով որ նա չի կարող
մաս տալ վանդակի միջից, փոքր-առփոքր սիրտ առան,
սկսեցին պարտիլ վանդակին շատ մօտ. վերջապէս մինչե
անգամ սկսեցին խօսել արծուի հետ:

«Ինչու չես ուտում, ասաց նորան մի բարեսիրտ հաւ,
միթէ չես տեսնում առջևիդ թափած քո սիրելի կերակուրը»

Տես՝ ինչպէս ախորժակով ուտում ենք մենք գարու հա-
տիկները: Կեր, մեր տէրն էլի կըտայ քեզ: Որ չուտես,
կըմեռնիս: Հոգս մի՛ անիր, անազատ կեանքն այնքան վատ
չէ, ինչպէս դու կարծում ես. վանդակդ էլ բաւականին
ընդարձակ է»:

— Սյո, այդպէս է, միայն հաւերի և ոչ արծիւների
համար, — ձայն տուեց վերջապէս տիսուր կալանաւորը, հա-
ւի բոլոր գատարկախօսութիւնը զգուանքով լսելուց յե-
տոյ: — Վաղը, աւելացրեց նա, ձեզ շամփրի կանցկացնեն
կամ կըձգեն կերակրի մէջ. իսկ դուք այնքան տիսմար էք,
որ չէք հասկանում ձեր թշշուառ գրութիւնը, և այնչափ
կուրացած ստըրկութեամբ, որ չէք կարողանում սիրել ա-
զատութիւնը, ինչպէս ես եմ սիրում նորան, դուք փոխել
էք նորան չնչին հատիկների հետ, որ ձրի թափուած են
դաշտերում. իսկ ինձ համար՝ անազատ կեանքը «չինչ գին
չունի»:

Ար-ծիւ, պա-տիւ, կը-ռիւ, թիւ...

Ար-ծուի, պա-տուի, կը-ռուի, թուի...

Ար-ծւի, պա-տւի, կը-ռւի, թւի...

Հետեւով այն հիմնական կանոնին, որ բաղաձայն տառերը
իրանցից յետոյ կոշտ և չեն հանգուրժում, նաև աչքի առաջ ունե-
նալով տրոհման ընդհանուր օրէնքները, իւ վերջացած գոյական
անունները, հողովուելիս, իւ վանկը ածանցում են ու-ի: Միւս
կողմից ինկատի առնելով, որ այստեղ գործում է կորուսման կա-
նոնը, այսինքն՝ որ բառը կորցնում է իւ վանկի ձայնաւորը միայն,
ինչպէս այդ լինում է գրաբար լիզուի մէջ ի ձայնաւորի հետ,
կարելի էր բանաւոր համարել նաև այն մարդոց կարծիքը, որոնք
գլուխ են՝ արծ-ւի, աղն-ւի, պա-տւի, կը-ռւի, եթէ միայն դա
հակառակ չիններ հնչիւնաբանական ճշտութեան և չստիպէր մեզ
բառերը հեգել հակառակ կանոնի, աւելորդ վանկեր աւելացնելով
նոցա՝ աղնը-ւի, արծ-ը-ւի, արծ-ը-ւա-տես...

18. ԱՐԾԻԻՆ ՈՒ ՃԻՇՈՒՆ

Հսկայ թևերը լայն-լայն տարածած,
 Հզօր արծիւը ուղղեց իւր թռիչք
 Դէպի բարձրաբերձ լեռներ սեպացած,
 Դէպի անսահման կապուտակ երկինք:
 Երկար սաւառնեց նա խիտ ամպերում,
 Քանի ոյժ ունէր զօրեղ թևերում.
 Եւ վերջ ի վերջոյ՝ յոդնած ու զաղբած,
 Նա նստեց հսկայ մի լեռան կրծքին,
 Որի գագաթը մինչ երկինք հասած,
 Սարսափ էր ազդում վերև նայողին:
 Նստեց նա հանգիստ, անվախ, անվրդով
 Եւ, շուրջը գոռոզ հայեացք ձըգելով,
 Իւր արքայական ձայնովը ահեղ
 Որոտաց ուժգին. «Մենակ եմ այստեղ,
 Մենակ ու ազատ այս լեռան վըրայ,
 Որպէս քաջայաղթ լիազօր արքայ.
 Իմ գահը—անհուն այս երկնակամար,
 Որոտ ու ամպեր—ոտքիս պատուանդան.
 Ո՞վ կայ աշխարհում փառքիս հաւասար,
 Ո՞վ կարէ հասնել գահիս բարձրութեան»:
 — «Ե՞ս».
 Լսուեցաւ յանկարծ մի ձայն թոյլ, բարակ,
 Մեծապանծ թըռչնի հէնց ոտների տակ.
 «Ես, անձրևային ճիճուս աննըշան»:
 — «Ի՞նչպէս, գու այստեղ, իմ դէմ յանդիման»:
 Ասա ինձ շուտով, ճիճու անպատկառ,
 Ո՞րտեղից գու այս ամպերին հասար...»:

— «Այն նեխուած ճահճից, արծիւ ինքնագով,

Ուր գու ծնուած ես քո այդ վեհ փառքով.

Այն նեխուած ճահճից, որտեղ այժմ գու

Զըգւում ես անզամ հայեացք ձըգելու»:

— «Բայց ի՞նչ հնարքով գու, միջատ չնշին,

Հասար իմ անհաս ամպազարդ գահին.

Ասա, պատմիր ինձ, ի՞նչպէս, ի՞նչ կերպով...»:

— «Ի՞նչպէս.—սողալով, արծիւ, սողալով»:

Գրեցէք հետեւալ բառերի նշանակութիւնները՝ հսկայ, հզօր,
 թռիչք, բարձրաբերձ, սեպացած, սաւառնեց, խիտ, գոռոզ, ար-
 քայական, քաջայաղթ, լիազօր, անպատկառ, նեխուած...

19. ԹՌՉՈՒՆԻ ԵՐԳԸ

Վենգրիայի մի մեծ քաղաքի նեղ ու ամուր բանտի
 մէջ նստած էր մի խեղճ բանտարկեալ: Բանտը խոնաւ
 էր, մութ և ցուրտ: Անկողնի փոխարէն նորա տակը խո-
 նաւ դարման էր ածած: Նորա համար օրական մի կտոր
 հաց և մի աման ջուր էին բերում: Նա նստած էր այն-
 տեղ շատ տարիններ՝ գժգոյն, հիւանդ, տիրապէմ: Արե-
 գակը հազիւ էր լուսաւորում բանտի նեղ լուսամուտից.
 թարմ օդ չէր ներս մտնում նորա մէջ: Կշտամաշ կերպով
 նա մտածում էր իւր սիրելի ազգականների, իւր ընտա-
 նիքի, իւր փոքրիկ զաւակների վրայ. մտածում էր, որ
 գուցէ վաղուց ամենքը մոռացել են իրան, համարելով՝
 թէ մեռած է. «Ա՞խ, ասում էր, արդեօք ի՞նչ է կատար-
 ւում մեր աշխարհում, ի՞նչ է պատահում իմ ցանկալի
 հայրենիքում»:

Բանտարկեալը մօտեցաւ լուսամուտին: Ամարային

սքանչելի երեկոյ էր։ Արեգակը մայր էր մտնում անտառի յետեր, լուսաւորելով ծառերի կատարները իւր ոսկեճածնչ ճառագայթներով։ իսկ մարդիկ անց ու դարձ էին անում փողոցներում։ Բանտը բարձր էր, ուստի մարդիք ցածրում մանր էին երեւում։ Նա ձայն տուեց, բայց նորան ոչ ոք չլսեց։ Կապոյտ երկնքի վրայ թռչուններ էին թրոշում։ Լուսամուտի առաջից հանդարտ անցնում էր արծիւր։ «Արծիւ, այ արծիւ, բացականչեց բանտարկեալլ։ նստիր իմ լուսամուտի առաջ, պատմիր, խնդրեմ, ինչ է լինում աշխարհում։ Երգիր ինձ համար»։ — Ո՛չ, պատասխանում է արծիւր. քո լուսամուտը շատ փոքր է։ ինձ տեղ չի լինիլ նստելու։ Ես չեմ պատմիլ քեզ, ինչ որ լինում է երկրի վրայ, որովհետև հազիւ եմ իջնում այնտեղ։ Ես հիւսում եմ իմ բունս ամենաբարձր ժայռերի և հազարամեայ կաղնիների վրայ, չար մարդկանցից հեռու, որ նոքա չքանդեն նորան։ Ես քեզ համար երգ չեմ երգիլ, որովհետև երբէք չեմ երգում երկրի վրայ։ Ես սլանում եմ բարձր, շատ բարձր և իմ երգս լսում է միայն յալիտենական արեր։ Եւ իւր լայն թիերը ուժգին շարժելով՝ արծիւը հպարտ բարձրացաւ դէպի երկինք և ծածկուեցաւ նորա աչքից։ «Կարապ, այ կարապ, պատմիր թէ ինչ է լինում աշխարհում։ մի երգ երգիր ինձ համար»։ — Ո՛չ, պատասխանում է կարապը։ Ես չեմ պատմիլ քեզ, ինչ որ գործում է երկրի վրայ։ Ես միշտ լողում եմ ջրի, մաքուր, սառը ջրի երեսին, կանաչ եղէզների միջով։ Երբ որ ջուրը, առաւօտեան արշալուսին, վարդի գոյն է ստանում, ես բարձրածայն կոչում եմ՝ ողջնին քեզ, կենսաբեր արշալոյս։ Ես չեմ երգիլ քեզ համար, որովհետև միայն մեռնելիս եմ երգում։ Եւ կարապը լողաց օդի մէջ, շարժելով իւր սպիտակ թիերը։ «Ճնճղուկներ, փոքրիկ ճղնաղուկներ, նստեցէք իմ լուսամուտի առաջ, պատմեցէք մի

բան իմ կարօտեալ հայրենիքից։ Երգեցէք, սխիթարեցէք ինձ»։ — Զէ, չէ, մենք ժամանակ չունինք. մենք դեռ պէտք է գնանք, ժողովենք այն հատիկները, որ ջաղացպանը յանկարծակի շաղ տուեց։

Բայց այդ ըովէին մօտ թռաւ մի զորշագոյն թռչնակ, պտոյտ-պտոյտ արեց լուսամուտի առաջ և նստեց երկաթէ վանդակի վրայ։ «Բարով քեզ, սոխակ, չնորհակալ եմ, քնքուշ թռչնակ, որ այց եկար ինձ. պատմիր, աղաչում եմ, ինչ է լինում աշխարհում, իմ կարօտեալ հայրենիքում»։

— Ես կըպատմեմ քեզ, ինչ որ լինում է երկրի վրայ։ Ես երգ կըյօրինեմ քեզ համար քո ցանկալի աշխարհից, քո կարօտած հայրենիքից։ Եւ սոխակը յորդեց այնպիսի ձայնով, որ խեղճ բանտարկեալը արտասուեց ուրախութիւնից։ Նա վայր ընկաւ դարմանի վրայ և շարունակ հեկում էր ու լսում։

«Երէկ առաւօտ, լուսաբացին, օդը չափազանց թարմ էր և զով։ Ես մօտ գնացի քո տնակին, նստեցի կոկոնաշատ վարդենու վրայ, բաց լուսամուտի առաջ, և շարունակ երգեցի ու երգեցի։ Մանկիկդ պառկած էր անկողնում։ Նա բաց արաւ իւր մեծ, փայլուն աչերը և հարցրեց։ «Ո՞ւր է հայրիկս»։ յետոյ սկսեց լսել իմ երգը։ Քո ազգականներն արտասուում են քեզ մտաբերելով։ նոքա սիրում են քեզ, շատ են սիրում և կամենում են քեզ տեսներ։ Մի վհատուիր. Աստուած տեսնում է, թէ ինչպէս անմեղ ես դու. չար մարդիկ կ'արձակեն քեզ և դու նորից կ'աղատուիս, լոյս աշխարհ դուրս կըգաս, մաքուր օդ կըծծես։ Քո որդիքը քեզ կըգգուեն և կըհամբուրեն։ Ամարային հանդարտ երեկոները, երբ ծառերի երկար ստուերները կըծգուին, երբ արեգակի վերջին ճառագայթների տակ կըփայլեն լուսամուտի ապակիները, դու, պատշգամբի վըրայ նստած, կըպատմես քո դաւակներին, թէ նրքան նե-

դութիւններ ես կրել: Դու կ'ուսուցանես նոցա, որ երբ
մեծանան, չաը մարդկանց տեղիք չտան չարութիւն անե-
լու, աղօթեն Աստուծուն, որ ամենքը սիրեն միմեանց
ինչպէս եղբայրը իւր եղբօրը...: Եւ որդիքդ կը լսեն քեզ
երբ նոքա կը մեծանան, դու կը տեսնես, որ նոքա բա-
րի և ազնիւ մարդիկ են դարձել. դու կը տեսնես, թէ
ինչպէս կ'օգնեն նոքա խեղճերին: Դու կ'ապրես երկար,
շատ երկար: Քո մազերը կը ճերմակին, բայց սիրադ ու-
րախ կը զարկի: Եւ երբ դու կը մեռնես, ամենքը կ'ար-
տառուեն և կ'աղօթեն քեզ համար ու կը տանեն քեզ կա-
նաչապատ հանդստարան: Քո գերեզմանի վրայ վարդի
թփեր կըտնկեն և ես մայիսեան պայծառ ու գեղեցիկ
առաւոտները, լուսաբացին, նոցա վրայ նստած՝ քաղցրիկ
երգեր կ'երգեմ»:

20. Ե Բ Գ

Ի՞նչ եղաւ մարին: — Մեռած է վաղուց:
Իսկ նրա նրձը: — Կատուն թըոցըրուց,
Միսն ու ոսկորը լափեց, կըլանեց
Եւ փետուրները հողմերին տըւեց.
Անտէր բնի մէջ նվ է դողդողում,
Ո՞վ է տիրածայն այդպէս հառաչում.
Ո՞վ կըխնամէ ձեզ, խղճնեկ որբեր:
Ոչ ոք: — Ո՛, թշուառ, փոքրիկ թռչնիկներ:

Ծոյլ ու խաբերայ հովիւն բացակայ,
Մեռած է շունը, էլ հրսկող չըկայ:
Գայլն է թափառում խուլ մըռնչիւնով,
Իւր սև ցանցերը լարում է փութով:

Ահ ու սարսափ է տիրում վարախում.
Դող ու տենդով են սրաեր բաբախում:
Ո՞վ կըզարթեցնէ քընած ոչխարին,
Կըպատերազմէ ընդդէմ այդ չարին:

Աքսորանքի մէջ, հեռու տարագիր,
Կըրում է հայրը վիշտ տաժանակիր.
Մայրը տառապեալ, հալ ու մաշ եղած,
Հիւանդանոցում—այնտեղ վայր ընկած:
Փչում է քամին իւր թափով ուժդին.
Դողում է տնակը, մօտ է կործանման,
Եւ նըրա միջում անտէր, անպաշտապան
Ճօնում է օրրոցն որբացած մանկան:
Ո՞վ մընաց այնտեղ: — Ո՛չ հայր, ոչ մայրիկ.
Դու միայն մնացիր, դու, խղճնեկ մանկիկ:

ա. կատու, լեզու, բագու. կատուի, լեզուի, բագուի...

բ. կատուում-կատում, լեզում, բագում...

գ. կատուի մէջ, լեզուի մէջ, բագուի մէջ...

ու վերջաւորութեամբ գոյական անունները ըոլոր հոլովնե-
րում ուն պահում են, միայն ներգոյական հոլովում, որպէս զի
երկու ու միմեանց չհանդիպեն, նոցանից առաջինը ածանցուում է
ւի: Բայց այդպիսի դեպքերում ներգոյական հոլովի փոխանակ
առաւել յարգի է գործածել նախադրութեամբ սեռական հոլոր
լեզուի մէջ, բագուի մէջ...

21. Ճ Ն Ճ Ղ Ո Ւ Կ

Որսորդութիւնից վերագառնալիս՝ ես անցնում էի
պարտէզների միջով: Շունս վազում էր իմ առաջից: Յան-
կարծ նա իւր քայլերը փոքրացրեց և կամաց ու զգուշու-
թեամբ սկսեց առաջ գնալ. կարծես թէ որսի հոտ էր առել:

Ես նայեցի վորքը ինչ հեռուն, ճանապարհի վրայ, և
տեսայ մի փոքրիկ ճնճղուկ, որի կտուցի շուրջը դեռ զե-
ղին էր, իսկ գլուխը աղուամազով ծածկուած։ Նա ցած
էր ընկել բնից (քամին սաստիկ շարժում էր ճանապարհի
երկու կողմի ծառերը) և անշարժ պառկել էր միայնակ և
անօդնական, փուած ունենալով դեռ հաղիւ դուրս եկած
փոքրիկ թևերը։

Երբ իմ շունը ծանրաքայլ մօտենում էր նորան, յան-
կարծ մօտակայ ծառի վրայից մի պառաւ սև կրծքով
ճնճղուկ, քարի պէս նետուելով, ընկաւ ուղղակի նորա
առաջը և յուսահատ ու սաստիկ ճշճրվոցով մի երկու ան-
գամ թուաւ ուղղակի դէպի շան դունչը։ Նա յարձակուե-
ցաւ, որ փրկէ, պահպանէ իւր ձագը։ Բայց նորա փոքրիկ
մարմինը դողում էր երկիւղից։ Նրա ձայնը կատաղի էր.
Նա ուժից ընկնում էր. նա զոհւում էր։ Ի՞նչպիսի ահազին
հրէշ պիտի երևար նրան շունը. բայց այնու ամենայնիւ
նա չկարողացաւ հանգիստ նստել բարձր ու անվտանգ
ճիւղի վրայ. նրա ոյժն աւելի թոյլ լինելով քան իւր կամ-
քը, վայր ձգեց իրան այնտեղից։

Շունը կանգ առաւ, յետ քաշուեց...։ Երկի նա էլ
ճանաչեց այդ ոյժը։

Ես շտապեցի շփոթուած շանս յետ կանչել և հեռա-
ցայ՝ զգալով իմ մէջ յարգանք դէպի այդ փոքրիկ թռչունը։

Այն, մի՛ ծիծաղէք, ես յարգում էի այն փոքրիկ ճե-
րսու թռչունը, նրա սիրոյ ուժգնութիւնը։— Մէրը, մտա-
ծում էի ես, մահից ու մահուան երկիւղից աւելի զօրեղ
է. միայն սիրով է պահպանում ու շարժում կեանքը։

22. ԱՐՏՈՒՀ (Աւանդութիւն)

Սրտուամիկ, ինչու թռչում ես վերվեր,
Երկընքէն ասում ես տըխուր տաղեր,
Պարտէզ ու այգի ինչու չես գընում,
Քընքոյշ ձագերըդ որտեղ ես հանում։
— Ա՛յս, շատ են, շատ են իմ կըսկիծն ու ցաւ.
Իմ մըտերիմը գընաց հեռացաւ.

Հայ հողագործը—իմ սերտ բարեկամ,
Թըշնամու ահէն գընաց գաղթական։—
Այն օրից Հայոց դաշտք ամայացան,
Բերրի արտերը վլշով լըցուեցան...
Տափի վրայ չունիմ ես հանգըստութիւն,
Ու այդոր համար երկինք եմ թռչում։
Երկինք եմ թռչում ցերեկ, իրիկուն,
Երդով աղերսում եմ միշտ Աստրծուն,
Որ մեզ ողորմի իր աջով գըթած,
Հայ հողագործին անէ գերեղարձ,
Հայաստան բերէ իւեղան Հայ գեղջուկին։—
Ա՛յս է խորհուրդը իմ տըխուր երգին։

23. Ա Դ Ա Ի Ն Ի Ե Ր

Ես կանգնած էի սեպացած բլուրի գագաթի վրայ,
իսկ իմ առաջ սփուռած էր հաճարի հասունացած արտը.
Նա երեմն ծածանում էր ոսկէ գոյնով, երբեմն տարած-
ում էր արծաթեայ ծովի նման և պսպղին էր տալիս։
Բայց ալիքները բնաւ չէին օրօրւում այդ ծովի վրայ. խեղ-
դող օդի անշարժութիւնը գուշակում էր մի մեծ փոթորիկ։
Իմ շուրջը արեգակը դեռ ևս լուսաւորուում էր իւր

ջերմ և աղօտ լուսով. իսկ այնտեղ, հաճարի արտի միւս կողմում, ոչ այնքան հեռու, մուգ-կապտագոյն մառախուղը ահազին կուտակութեամբ բռնել էր երկնակամարի ամբողջ կեսը: — Ամեն ինչ լուսութեան մէջ էր... ամեն ինչ հառաջում էր արեգակի վերջին ճառագայթների փայլման ներքոյ: Զէր լուսում ոչ մի ձայն, չէր երկում ոչ մի թրոչուն, թագնուած էին մինչև անգամ ճնճղուկները: Միայն մի ինչ որ տեղ, մերձակայքում, մենաւոր ջրածաղկի խոշոր տերեւները յամառ կերպով շշնչում էին և թափահարում:

Ի՞նչպէս սաստիկ բուրում էին դաշտերի խոտաբոյսերը: Ես նայում էի կապտագոյն ամպակոյտի վրայ... մուայլը տիրում էր իմ սրտում: Դէ շուտով, շուտով, մտածում էի ես. փայլատակիր, ոսկեղէն օձ, դղրդա, որոտ, շարժուիր, հեղուիր, ով չար մառախուղ, վերջ տուր այս տխուր հեծութեանը:

Բայց մառախուղն անշարժ էր. նա առաջուայ նման ճնշում էր անմռունչ երկիրը... միայն կարծես աւելի ուռչում էր և մթնանում:

Եւ ահա նրա միագոյն կապուտակութեան վրայ նըշմարուեցաւ մի ինչ որ բան, որ սլանում էր հարթ-հաւասար կերպով. կարծես թէ իսկ և իսկ մի սպիտակ թաշկինակ լինէր կամ ձիւնի պատառ: Դա մի սպիտակ աղաւնի էր, որ թռչում էր գիւղի կողմից. թռաւ, թռաւ միշտ միենոյն ուղիղ գծով... և խորասուղուեցաւ անտառի յետեր:

Անցաւ մի քանի փայրկեան. դեռ տիրում էր միենոյն խիստ լուսութիւնը: Բայց նայիր. այժմ նշմարում են երկու թաշկինակներ, ձիւնի երկու պատառներ. ետ են սլանում: Դոքա երկու սպիտակ աղաւնիներ են, որ թռչում են գէպի տուն հաւասար թռիչքով: Եւ ահա վերջապէս պայթեց փոթորիկը և սկսուեց բնութեան կատաղի խաղը:

Ես հազիւ կարողացայ փախչել մինչև տուն. Քամին մոնչում էր, սոսկալի կերպով պարաւում: Պատառ-պատառ եղած շիկագոյն ամպերը ներքեից առաջ էին մղւում: Ամեն ինչ տակն ու վրայ էր լինում, խառնաշվութութեան մէջ էր, դղրդում էր: Անձրկի սարսափելի տարափը, ջրային սիւների նման, ցած էր թափւում: Կայծակների հրեղէն կանաչագոյն փայլատակումն աչք էր կուրացնում: Որոտի ընդհատուող բամբիւնը կարծես թէ թնդանօթներիցն էր արձակում: Փչում էր ծծմբային հոտ:

Բայց կտուրի ծածկի տակ, երդիկի կողքին, միմեանց մօտ նստած են երկու սպիտակ աղաւնի՝ այն, որ թռչում էր իւր վարուժանի յետեից և այն, որին բերեց նա և, կարելի է, աղատեց նրան:

Երկուսն էլ գուրզուրում էին միմեանց և իւրաքանչիւրը իւր թերկով շօշափում էր դրացու թերը: Երջանիկ էին նրանք: Եւ ես ինձ երջանիկ էի զգում նրանց վրայ նայելով....

24. ԲԱՐՁԵՆ ՈՒ ԱԴԱՀԻՆԻՆ

Գիշատիչ բազէն իւր սուր ճանկերում բննած աղաւնուն պատառուում էր.

«Հըմ, ճանկս ընկար, զուր ես աշխատում Պրծնիլ իմ ձեռքից, զուր այդ հնարքներ:

Խարեւայք, ես ձեզ լաւ եմ ճանաչում.

Այ հայհոյիչներ, խորամանկ օձեր,

Չեր ցեղը միշտ մեր արիւնն է խմում.

Դուք էք մշտական մեր թշնամիներ.

Բայց կան աստուածներ վրէժինութեան,

Նոքա ամենքին կ'անեն դատաստան»:

— Ախ, ուր է, եթէ ճիշդ այդպէս լինի,

Սյդ ցանկութիւնն իմ ճնշուած սրտի.

Հազիւ հառաչեց աղաւնին մարած՝
Սուր-սուր ճանկերում սաստիլ չարչարուած:
«Ինչպէս, ո՞հ, ինչպէս, այդ ի՞նչ ասացիր,
Այդու ուրացող. մի մէկ էլ կըկնիր:
Դու չես հաւատում, համ, աստուածներին,
Նախախնամութեան այն հզօր ուժին.
Է՛ն, ուղում էի աղատել ես քեզ,
Բայց չէ, տեսնում եմ, որ դորան չարժես.
Բաս մեռիր, զուր է, զուր քո փրկութիւն.
Անաստուածներին չկայ թողութիւն»:

25. Իիր ՎիճԱԿԻՑ ԳՈՀ ՄԱՆՈՒԿԸ

Մկրտիչ անունով մի փոքրիկ հովիւ քշում էր դէպի
անտառ իւր հօտը: Խիտ անտառի անցքերում մի անդամ,
իւր այծերից մինին որոնելիս, մի մարդ տեսաւ, որ պառ-
կած էր թփի տակ: Այս մարդը շատ յոգնած էր երևում
և հազիւ էր շունչ քաշում:

—Մանուկ հովիւ, ասաց մարդը. ես քաղցից ու ծա-
րաւից մեռնում եմ: Այստեղ երէկ եկայ որս անելու, ճա-
նապարհ կորցրի և ողջ գիշերը այս վայրի անտառում
անցկացըի:

Մկրտիչը հանեց գրպանից թաժայ հաց ու պանիր և
տուեց նրան:

—Կերէք, ասաց նա, և հետեւցէք ինձ. ես ձեզ կը-
տանեմ մի հին կաղնու մօտ, որի կոճղի տակից լաւ աղ-
բիւր է դուրս գալիս:

Որսորդը կերաւ. յետոյ նրան հետեւելով՝ ասած տե-
ղից էլ հիանալի ջուր խմեց: Ապա Մկրտիչը նրան դուրս
տարաւ անտառից: Այն ժամանակ որսորդը հովուին ասաց.

—Միրելի մանուկ, դու փրկեցիր իմ կեանքը: Եթէ

ես մի ժամ աւելի մնայի նոյն դրութեան մէջ, հիմա մե-
ռած կըլինէի: Ես կամենում եմ քեզ ցոյց տալ իմ երախ-
տագիտութիւնը: Արի ինձ հետ քաղաք. ես հարուստ եմ
և քեզ որդուս պէս կը պահեմ:

—Ո՞չ, պատասխանեց մանուկը, ես չեմ գալ քաղաք.
այստեղ ես խեղճ հայր ու մայր ունիմ, որոնց շատ եմ
սիրում: Եթէ դուք թագաւոր անգամ լինէիք, ես ձեզ հա-
մար չէի կամենալ թողնել իմ ծնողներին:

—Բայց, ասաց որսորդը. դու կենում ես այստեղ
յարդով ծածկուած աղքատիկ խրճիթի մէջ, իսկ ես ընակ-
ւում եմ փառաւոր սիւներով շրջապատած ու մարմա-
րիօնով զարդարած ապարանքում: Ինձ մօտ դու կըխմես
վանակնեայ (կրիստալ) բաժակներով և կ'ուտես արծա-
թեայ պնակներով համեղ կերակուրներ:

Մանուկը պատասխանեց.

—Մեր փոքրիկ տունն այնքան էլ աղքատիկ չէ, որ-
քան դուք կարծում էք: Թէկ նա զարդարուած չէ սիւնե-
րով, բայց պտղատու ծառերով ու ողկոյզներով ծանրա-
բեռնուած հովանոցներ կան նրա չորս կողմը: Մենք խմում
ենք պարզ ջուր մօւակայ աղբիւրից և մեր աշխատանքով
ձեռք բերած ապրուստով գոհանում ենք. թէպէտ մեր
տանը չկայ ոչ արծաթ, ոչ կրիստալ, ոչ էլ մարմարիօն,
բայց մեզ ծաղիկներ պակաս չեն:

—Արի հետո, մանուկ, մենք քաղաքում ծառեր էլ
ունինք, ծաղիկներ էլ: Ես մի հիանալի պարտէզ ունիմ
ուղղաձիգ ու խիտ ծառուղիներով, ունիմ և ամենասիրուն
ծաղիկներով ու թանկագին բոյսերով զարդարուած մի
ծաղկոց. այդ պարտէզի մէջ հիանալի ջրբուխ կայ. դու
երբէք նրա պէս բան չես տեսել. ջուրը ցայտումներով վեր
է բարձրանում և կրկն փրփրալից թափւում է սպիտակ
մարմարիօնէ աւագանի մէջ:

—Մենք երջանիկ ենք մեր անտառներում, ասաց մանուկը: Մեր հովաշատ անտառները գոնէ նոյնքան զովար են, որքան և ձեր փառահեղ զբօսատեղիները: Մեր կանաչ դաշտերը պահուած են հազար ու մի ծաղիկներով: Մեր տնակի շուրջն էլ կան նոյնպէս ծաղիկներ՝ վարդ, մանուշակ, շուշան, մեխակ: Կարծում էք՝ մեր աղբիւրները պակաս գեղեցիկ են ձեր ջրբուխներից: Ո՞հ, ինչպէս ես սիրում եմ նայել մեր աղբիւրներին, որոնք ժայռերի խոռոչներից փրփրալով դուրս են գալիս և բլուրների բարձրութիւնից վայր թափուելով ու կանաչազարդ մարգագետինների վրայ կեռման տալով անցնում են:

—Դու չգիտես, ով մանուկ, թէ ինչ ես մերժում, ասաց որսորդը: Քաղաքում կան հոյակապ ուսումնարաններ, ուր քեզ կըսովորեցնեն ամեն տեսակ գիտութիւնը կան թատրոններ, ուր յայտնի նուագածուներ կըզբաւեն ականջներդ իրանց ներդաշնակ հնչիւններով: Կան շքեղ սրահներ, ուր դու ներկայ կըլինիս փառաւոր հանդէսների:

—Ո՞չ, պատասխանեց մանուկը. Ես չեմ գալ քաղաք: Ես գիւղի դպրոցում ուսանում եմ այն, ինչ որ ինձ հարկաւոր է: Ձեր նուագածուներն աւելի լաւ չեն երգում քան սոխակը: Ի՞նչպէս մենք երջանիկ ենք, երբ կիւրակի օրերը, ընտանիքով խմբուած, նստած ենք լինում մի ծառի ստուերի տակ, կարկաչանոս առուակի ափին. քոյրս երգում է. իսկ ես նրան ընկերակցում եմ իմ սրնդի ձայնով. մեր երգերը թնդում են հեռուում, արձագանքը նրանց կրկնում է մեզանից յետոյ, և մեր երջանիկ հայր ու մայրը մեզ քաղցր ժպիտով են նայում: Ո՞հ, ոչ, ես ձեզ հետ չեմ գալ քաղաք:

Որսորդը տեսաւ, որ պէտք է հրաժարուէր նրան իւր հետ տանելու մտադրութիւնից:

—Ուրեմն ինչ տամ քեզ, իմ երախտագիտութիւնու

ցոյց տալու համար, ասաց նա: Վերցրնւ այս ոսկով ու արծաթով լիքսակը:

—Ինչի՞ս է պէտք այդ փողը: Մենք խեղճ ենք, բայց ոչինչ կարօտութիւն չունինք. եթէ ես ընդունէի այդ փողը, ուրեմն ես ձեզ վրայ ծախած կըլինէի իմ ձեզ մատուցած փոքրիկ ծառայութիւնը: Սյդ լաւ չէր լինիլ. իմ մայրն ինձ կըյանդիմանէր այդպիսի վարմունքի համար. նա ինձ միշտ ասել է, որ մենք պէտք է օգնենք նրանց, որոնք նեղութեան մէջ են գտընտում և այդ պէտք է անենք առանց որևէ ակընկալութեան:

—Ուրեմն ինչ տամ քեզ, քաղցրիկ մանուկ. պէտք է մի բան ընդունես, եթէ ոչ ինձ կըվշտացնես:

—Լաւ, որ այդպէս է՝ տուէք այդ փոքրիկ շիշը, որ ձեր կողքից կախած է: Կարծեմ նրա վրայ շներ են նկարուած, որոնք մի այծեամի ետեկից են ընկած:

Որսորդը տուեց նրան շիշը, և մանուկ հովիւր՝ ուրախութիւնից ոստոստող գառան նման, թռչուածալով հեռացաւ գնաց:

Միքաէլ—Միքաւ-յ-էլ. Արբասամ—Արբաւհամ. Սառւղ—Սառուղ...

ա. բառի մէջ երբ երկու ձայնաւոր միմեանց հանդիպում են, նրանցից մինը, կարճանալով, մօտի ձայնաւորի հետ մի վանկ է կազմում (տես 13, 14, 15 յօդուածների ծանօթութիւնները):

բ. բայց ուր որ այդ ձայնաւորները չպիտի կցուին, այլ իւրաքանչիւրը պիտի պահի իւր հնչիւնը, այնտեղ դոցա մէջ մտնում է մի բաղաձայն տառ, որ կոչւում է ձայնակապ:

գ. այս կանսնից շեղւում է է ձայնաւորը, որ գործ է ածւում առանց ձայնակապի—զբւումէ Սիմէօն, կարդացւումէ Սիմէյօն, մարգարէութիւն—մարգարէյութիւն. հրէայ—հրէյայ. Սէուլ—Սէյուլ... Բայերի մէջ՝ կըգրէիր-կըգրէյիր...

26. Կ Ա Ր Դ Ա

Կարդա, այ իմ խելօք մանուկ,

Կարդա, գըրիր տարին բոլոր.

Կարդացողի խելքն է կտրուկ,

Միտքը պայծառ ու լուսաւոր:

Գիր կարդալով, դու դրքերում

Շատ նորանոր բան կիմանաս.

Շատ շատերից, շատ բաներում

Մըտքով հեռն կըսըլանաս:

Գիր կարդալով, դու աշխարհիս

Կըճանաչես չարն ու բարին.

Ո՞վ է խընդում, ո՞վ է լալիս,

Ո՞վ է զըկում խեղճ թշուափն:

Գիր կարդալով, դու քո սրտում

Առատ, անբաւ գանձ կըդիզես.

Այնպիսի գանձ, որ աշխարհում

Ամեն հարուստ դըլուխ տայ քեզ:

Կեանքում ծածուկ էլ քեզ համար

Բան չի մնալ, որ չիմանաս.

Քո մէջ կապրի արար—աշխարհ,

Հոգով այնքան կըզօրանաս:

Դու կիմանաս՝ ինչն մարդիկ

Պէտք է ապրեն իրար համար.

Ի՞նչ է մարդկանց ցաւն ու կարիք,

Ի՞նչ է լոյսը, ի՞նչ է խաւար:

Կարդա, որդիս, որ հօրըդ պէս

Դու էլ անուս, խեղճ չըմնաս,

Որ ամենքին վիզ չըծուես,

Եւ միշտ ազատ առաջ գընաս...

Կարդա, այ իմ խելօք մանուկ,

Կարդա, գըրիր տարին բոլոր.

Կարդացողի խելքն է կտրուկ,

Միտքը պայծառ ու լուսաւոր:

27. ՈՒՍՈՒՄՆԱԾԱՐԱԿ ՄԱՆՈՒԿԸ

Մեր գիւղումն ուսումնարան չըկար. ով որ ուսում
առնել էր ուզում, պէտք է զնար Ախալքալաք, որ մեր
գիւղիցը հեռու չէ: Ես շատ նախանձում էի մեր քահա-
նայի որդուն, Սարգսին, երբ նա շաբաթ երեկոներին
«Լոյս զուարթ» էր երգում: Նա շատ յաջողակ ձայն ու-
նէր, և երբ եկեղեցում մկում էր «Լոյս զուարթը», բոլոր
ժամաւորները զարմացած նրան էին մտիկ տալիս: Եկե-
ղեցուց դուրս զալուց յետոյ զաւթում խումբ-խումբ հա-
ւաքում էին գիւղացիք և չէին զադարում նրան զանազան
գովեստներ տալուց: Նրան գիւղացիների կողմից տուած
անվերջ գովեստներն ինձ տեղիք էին տալիս անդադար
խնդրել իմ մօրից, որ միշնորդէր իմ հօրս՝ ինձ Ախալքա-
լաք ուղարկել կարդալու համար. բայց իգուր. խնդիրներս
միշտ անկատար էին մնում և ես շարունակում էի հօտա-
գութիւնս:

Մի անգամ, ծննդեան տօնի ճրագալոյցի երեկոյին,
եկեղեցում ասեղ զցելու տեղ չըկար: Երբ սովորական
աղօթքները ասում էին ու տիրացուները շատ գրքեր էին
կարդում, յանկարծ տեսնեմ, սեղանի վարագուրի մի կող-

մը բացուեց և Սարգիսը, դեղին մետաքսէ շապիկ հագած, երկու փոքր տղաների հետ, որոնք ձեռներին վառած մումել ունէին բռնած, սեղանից դուրս եկաւ և վարագուրի այս կողմում կանգնելով՝ սկսեց Դանիէլի զիրքն անզիլ կարդալ: Նրա կարգացած ժամանակ աղօթողների գովա սանքի ձայներն արդէն հասնում էին ականջիս և ես դա սից շատ լաւ տեսնում էի, թէ ի՞նչպէս ետեկից կանայք իրանց զլուխները վեր էին բարձրացնում, տիրացու Սար գըսին տեսնելու: Եւ այդ բաները նկատելով, իմ նախան ձը հետզհետէ զրգըռուում էր և ես ուզում էի անպատճառ Ախալքալաք գնալ և այնտեղի ուսումնարանում սովորել և Սարգսի նման «Լոյս զուարթ» երգել և Դանիէլի զիրքը կարդալ: Իմ մէջ այդ ցանկութիւնը առաւել շատացաւ հէնց միւնոյն ճրագալոյցի երեկոյին, երբ, մի քանի զրացի մանուկների հետ տներումը «Աւետիս» ման եկած ժամանակ, տեսնում էի, որ այդ երեկոյեան ամեն մինի խօսակցութեան նիւթը տիրացու Սարգիսն էր: Այդ բաները լսելուց և աւելի ու աւելի բորբոքուելուց յետոյ՝ ես որոշեցի—ծննդեան կիւրակէն անցնելուց յետոյ—ծնողներից ծածուկ գնալ Ախալքալաք և այնտեղի ուսումնարանումը սովորել: Վերջապէս մի երեկոյ տրեխներս թրջեցի, խոտեցի և պատրաստուեցի: Ոչ մի երեկոյ այնպէս շերմեռանդութեամբ Աստուծուն աղօթք չէի արել անկողին մտած ժամանակս, ինչպէս այդ երեկոյին: Երեք անգամ կրկնեցի իմ սովորական երեկոյեան աղօթքը, որ մի ընդհանուր աղօթք էր՝ ինչպէս մեր ընտանիքի, նոյնպէս և բոլոր գիւղցիների համար: Տիրացու Սարգսի «Լոյս զուարթով», նրա դեղին «ժամանապիկով» յափշտակուած և Ախալքալաքի ուսումնարանով ոգերուած, ես անկողնիս մէջ անդադար երեսս խաչակընքում էի և լուռ ու մունջ աղօթում:

Առաւոտեան, արշալուսի ծէզը բացուելուն պէս, մայրըս, իւր սովորութեան պէս, ինձ ձայն տուաւ վեր կենաւու և հորթերը ջուրը տանելու: Առաւոտեան աղօթքս անելուց յետոյ, հորթերը քշեցի առաջս, քայլերս գէպի ձորի ճանապարհը ուղղելով. բայց հազիւ ձորի գլխին էի հասել և մօրս տեսութիւնից ծածկուել, թողի իսկոյն հորթերը ձորի գլխին, ճանապարհի վրայ, և գիւղի ետևի կողմով ընկայ Ախալքալաքի ճանապարհը:

Շարունակ վազ տալով և ամսգագար ձիւնի մէջ խրուելով, վերջապէս ընկայ ուղիղ ճանապարհը. տեսայ Սարգիսն էլ է գալիս ձիով Ախալքալաքի ճանապարհով:

— Սաքօ, ի՞նչ գլի ինձի գաւակըրդ առնես, այս եղաւ իմ առաջին խօսքը Սարգսին: — «Ճօ, Ովակ, ուր»: — Ախալքէլէկ, կարդու: — «Հարդդ ու մարըդ գիտէն»: — Զէ. Սաքօ ջան. Սաքօ, ի՞նչ գլի ինձի գաւակըրդ առնես: — «Իմ ձիս խրտան է»: — Տէ քիչմ կամաց զընը, ես հետդ կուգամ, ճամբան մենակ չիտեմ: — «Ծօ, գու ձիուն հետ չես կրնայ գայ, աշէ ճամբան կըմնաս, գալիրը կուգան, քեզի կուտեն»:

— Սաքօ ջան, Սաքօ... Դեռ չէի վերջացրած իմ խօսքերը, երբ տեսայ, որ Սարգիսը իր ձիու զլուխը դարձեց գէպի գիւղ և, մի քանի մտրակ խփելով, թռաւ: Ես հասկցայ, որ նա զնում էր հօրըս իմ փախուստն իմաց անելու, ուստի, ուղիղ Ախալքալաքի ճանապարհը բռնելով, ոյժ տուի իմ ոտքերին և սկսեցի վագել:

Բայց ահա տեսնում եմ ետևիցս ձիերով գալիս են հայրս և Սարգիսը: Նրանք շուտով հասան ինձ: Հայրս վրաս յարձակուեց. ես ճանապարհից շեղուեցի, ընկայ ձիւների մէջ, բայց իմ զլիխին և կողքերին եղած հարուածներից հազիւ ազատեց ինձ մայրս, որ գիւղի ծայրում ինձ գայր իշեցրեց հօրս գաւակից և գուրգուրալով, ձեռքերիցս

բռնած, տուն տարաւ։ Այսպիսով իմ Ախալքալաք գնալու
չըյշջողուեց։

Աշխարհաբար լեզուի մէջ մենք ունինք բազմաթիւ մակեայշ-
ներ, որոնք շինուում են հին լեզուի նախադրութիւններից՝ չնայե-
լով որ այդ նախադրութիւնները նոր լեզուի մէջ զործածական չեն։

Նախադրութիւններ։

Սակայն՝

Ի սէր Աստուծոյ

իսկզբանէ, իսպաշտօնէ, իհարկէ, իսրտէ,
իվերջոյ, իտես, իդէպ, իզուր, իրաց,
ինկատի, իծնէ, իբնէ...

առ Աստուծ

առայժմ, առհասարակ, առժամանակ, առ-
առաւելն...

ընդ աստեղօք

ընդմիշտ, ընդամենը, ընդառաջ, ընդ-
հակառակն...

ըստ բանի

ըստիս, ըստորում, ըստինքեան, ինքն-
ըստինքեան

մինչ յերկինս

մինչդեռ, մինչեւ-որ, մինչ-այս, մինչ-այն...

առ նախադրութիւնով շինուած բարդ մակրայերը կարելի է
զրել երկու ձեռով նախապատութիւնը տալով երկրորդ ձեին։

Փոքը առ փոքը—փոքը-առփոքը
Ճակատ առ ճակատ—ճակատ—առճակատ։

Բառ առ բառ—բառ-առբառ։

Նմանապէս՝ փոքը-իշատէ, վերջ-իվերջոյ, կարձ-իկարձոյ,
վայր-իվերոյ...

28. ԲՈԼՈՐ ՄԱՐԴԻԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ ԵՆ

Որքան ուրախ և երջանիկ մեզ կըժպտար այս աշխարհ,
թէ որ բոլոր մարդիկ անկեղծ սէր տածէին դէպ իրար.
թէ հարևանն հարևանին ձեռք մեկնելով օգնութեան
Ասէր. «Զէ որ մենք եղբայր ենք, տուր ինձ ձեռքդ, եղբայր ջան»։

Եւ ինչու մենք չենք հալածում քէնն ու ոխը մեր սրտից
Եւ չենք կազմում մի գերդաստան՝ օրհնաբանուած Արարչից.
Ինչու մեղնից ամեն մէկը քաղցր ժպտով ընկերին
Զի ասում. «Եկ, մենք եղբայր ենք, եկ դու ինձ մօտ, իմ անգին։

«Դու հարուստ ես և միշտ զուքուած—կեանք ես վարում երջանիկ,
իսկ ես աղքատ և միշտ քաղցած—անզամ չունիմ հագնելիք.
Բայց երկուսիս կրծքի մէջ էլ անկեղծ սիրտ է բարախում,
Ուրեմն մենք եղբայրներ ենք. էլ-ուր ես ինձ անարգում։

«Դու չես սիրում խարդախութիւն, սուսն ատում ես չարաչար,
Եւ վեհ խօսքը ծշմաբութեան սուրբ քարոզ է քեզ համար.
Ես էլ նոյնպէս՝ ողջ հոգովս նըւիրուած եմ բարութեան.
Տնոր ինձ ձեռքդ, ուրեմն մենք եղբայրներ ենք անբաժան։

«Դու չես խարում ոչ ուժեղին, ոչ տկարին կեղեքում,
Ես էլ նոյնպէս, ինչպէս և դու, սուրբ եմ պահում իմ խոստում.
Երկուսիս էլ մի աչքով ենք նայում բախտին մարդկութեան.
Այն, այն, եղբայրներ ենք, տուր ինձ ձեռքդ, եղբայր ջան,

«Քեզ սիրում էր քո մայրիկը, սիրում հոգով ու սրտով,
Իսկ իմ մայրը ինձ պաշտում էր, երդում միշտ իմ արեով.
Ի՞նչ փոյթ, թէ դու մեծ իշխան ես, ես մի տկար շինական.
Զէ որ իրար մենք եղբայր ենք. արի բազմենք մի սեղան։

«Մենք սիրում ենք երեկոյեան վերջալոյսը արեի,
Հայրենիք վեր ենք դասում ողջ զանձերից աշխարհի.
Կեանքի իշատ երկուսիս էլ ձնշում է միշտ, անդադար.
Ուրեմն մենք եղբայրներ ենք՝ իրաւունքով հաւասար։

«Բայց ահա մեզ, եղբայր, արդէն սպառնում է մի հարուած
Խոր ծերութիւն և ապա մահ—ահա վախճան մեր կենաց.
Եւ շիրիմն է այնուհետեւ զանուում վերջին մեր կայան.
Այն, այն, բոլոր մարդիկ եղբայրներ են անբաժան...»։

29. «ՄԻ ՊԱՏԱՌ ՀՅ Յ»

Ա

Յունուարի մի ցուրտ, շատ ցուրտ օր էր. թքէիր՝ գետին չէր ընկնիլ:

Թէև արդէն առաւօտ էր, բայց քաղաքի փողոցները դատարկ էին և անկենդան. ով էր գժուել այս կատաղի ցրտին զլուխը դուրս հանել տանից. հազիւ երբեմն փողոցների այս ու այն ծայրում ստուերների պէս երևում էին մուշտակների, եափունջիների կամ վերարկուների մէջ կողլուած մարդիկ, քիթ ու պունդ փաթաթած, եղեամով ծածկուած. սրանք էլ, ով գիտէ, որպիսի անհրաժեշտ կարիքից ստիպուած էին թողել իրանց փափուկ բնակարանները, այն էլ ոչ թէ քայլում էին, այլ յակամայից փազում էին, համարեա հևալով:

Այդ ժամին փողոցի հեռաւոր ծայրում յանկարծ անսպասելի կերպով երևացին երկու փոքրիկ մանուկներ, 7 և 10 տարեկան: Խեղճերն այնքան վախտ էին, որ ասես գերեզմանից դուրս քաշած մեռեներ լինէին. դժուար էր առանց սոսկումի նայել նրանց վրայ: Երկուսն էլ զվարաց, զզգուած մազերով, որոնց վրայ առատօրէն թափուել էին եղեամների թերթիկներ. յօնքերի ու աչքերի թերթերունքների վրայ նոյնպէս նստել էին եղեամներ, տալով մանուկներին մի տարօրինակ, մի խղճալի տեսք: Նրանց մարմինների մերկութիւնը հազիւ հաղ ծածկուել էր ինչ-որ կախկըխուած ծուէններով. անհնարին էր նոյն իսկ որոշել, թէ ինչ է նրանց հագինը, կամ որն է վարտիքը, շապիկը կամ արխալուխը: Տեղացի չէին նրանք, այլ գաղթականներ հեռու երկրից՝ անհայր, անմայր, անտէր... կատարեալ որբիկներ...

Խեղճերը գիշերները քնում էին մի աստուածասիրի գոմում. այնտեղ շատ անասուններ կային, տաք էր...

Կաւ էր գոմը նրանց համար, շատ լաւ էր... Առաւուները վաղ զարթնում էին և իրանց վայելած հիւրընկալութեան փոխարէն նախ աւելում, մաքրում, չորացնում էին հորթուկների տակը, գուրգուրում էին նրանց, ապա կըրում թափում էին մնացած անասունների աղբը և յետոյ դուրս էին վազում փողոցներում թափառելու... հաց հաւաքելու... Այսպէս էին ապրում նրանք, և գոհ էին —«զուլում» չկար:

Սրանից առաջ էլ համարեա ամեն օր նրանք շրջում էին փողոցներում. տեղացիք տեսնում էին նրանց նոյն ցնցուիների մէջ, նոյնպէս ոտարութիկ, նոյնպէս գլխաբաց, գզզգուած, որպէս այսօր, և ոչ ոքի խիղճը չէր վրդովւում: Դէ, եղանակը տաք էր, «եթիմն էլ աներես կըլինի, հաց հաւաքելով կ'ապրէն, էլի», մտածում էին նրանք և խիղճը հանգստացնում: Բայց այսօր... Որբերը դարձեալ փողոցում են: «Այս լաւ չէ, անտանելի ցուրտ է. օձի ձուտն էլ այս ցրտին թնդ դրսում չմնայ, մեղք է, մտածում էին անցորդները... ախր այդ ինչպէս են բորիկ, գողալով վազում և ինչ կարիք կար այսօր էլ անպատճառ դուրս գալ... Ախ, աներես լակոսներ»...

Բ

Իսկ որբերը... նրանք շարունակեցին առաջ գնալ փողոցով և ամենակին չէին էլ զարմանում, որ իրանք այս անտանելի ցրտին փողոցում են, մինչդեռ իրանց հասակակից ոչ մի երեխայ չէր երևում, նրանք մի բան միայն գիտէին, որ թէև սաստիկ ցուրտ է, թէև իրանք էլ մերկ են, ոտարութիկ, գլխաբաց դողում են՝ բայց և այնպէս

պէտք է դուներն ընկնեն, որ հաց ճարեն. շատ են սոված, երէկ կէսօրից սկսած բան չեն կերել...

— Վախ, Գալո, էս ի՞նչ ցուրտ ա, ասաց փոքրիկը ձեռները իրան կապտած շրթունքներին մօտեցնելով և ուները խշխացող ձիւնի վրայ վերև ներքեւ անելով:

— Հա, Մրտօ, շատ ցուրտ ա, մրմուռը մարդու ջիգեարը կուտայ, շուտ արի:

— Ախր գոմը տաք էր, — շարունակեց փոքրիկը լացակումած. արցունքների խղճուկ կաթիւները կախուեցին արտեանունքներից, բայց, առանց ընկնելու, սառան:

— Տաք էր, ապա որ անօթի ենք, ի՞նչ անենք... Փոքրիկը լոեց, կծեց շրթունքները, փչեց մատներին — ու, ու, ու...

Ահա նրանք կանգ առան մի մեծ դարպասի առաջ, որ բացուած էր: Բակի ներսում սաստիկ ցրտից կծկուած քնած էր մի մեծ գամփո. նա չէր նկատում մանուկներին, որոնք վախվիսելով, ձեռք ձեռքի տուած, անվստահ քայլերով ներս մտան բակը և, մի՛ փոքր առաջ գնալով, տեսան ահաւոր շանը: Մեծը կանգ առաւ, չհամարձակուելով աւելի առաջ գնալ:

— Մրտօ, շունը.... կըկծի, դառնանք:

— Ախր անօթի եմ, էլ ուր երթանք, — մրմնջաց փոքրիկը. էս տունը հարուստ է, փշուր մը հաց ուզենք, էլ յետ վագենք գոմը, ցուրտ ա, փէտացանք...

Նրանք մի փոքր էլ առաջացան, յուսալով անձայն, անշշուկ անցնել շան մօտից և տանը հասնել: Բայց ձիւնի ճոճուցը զարթեցրեց շանը. նա, գլուխը բարձրացնելով, տեսաւ երկու գզգուած մանուկներին, մի կատաղի ոստիւն գործեց և վրաները յարձակուեց: Վտանզն զգալով՝ խեղ մանուկները ճշացին, իրար գրկեցին և վայրկենապէս նստեցին ձիւնի վրայ: Այսպէս են պաշտպանուում

շների յարձակումից մուրացիկ մանուկներն ու կանայքը: Ասես իրանց յաղթահարուած ցոյց տալով՝ այդ թոյլ արարածներն ուզում են գազանի սրտում գութ զարթեցնել: Եւ արդարեւ, շունը կանգ առաւ. կենդանու կատաղութիւնը զսպուեց որբերի անպաշտպանութեան առաջ. նա մի փոքր հեռու պառկեց, գլուխը թաթերի վրայ դրած, ասես հսկելով երկու թշուառների վրայ, որ չլինի թէ վեր կենան, փախչեն: Մրտաճմիկ, արտասուելի տեսարան էր. երկու ոտարբորիկ, գլխաբաց, ցնցոտիների մէջ դողդողացող մանուկներ, կապտած շրթունքներով, ուռած ձեռներով, իրար կպած, կծկուել նստել էին ձիւնի վրայ և լալիս էին. եղեամի թերթիկները խաղում էին ցուրտ օղի մէջ և պտտուելով թափուում էին նրանց գզգուած մազերի վրայ: Կատաղած շունը շընթըրկել (նստել) էր նրանց կողքին մոմուալով, կարծես սպասում էր, որ թշուառները վեր կենան թէ չէ՝ վրայ պրծնի, կտոր-կտոր անէ: Բակում ոչ չկար: Մանուկները շարունակում էին յուսահատ լալ ու ճչալ. սարսափած աչքերով նրանք նայում էին մէկ շանը, մէկ էլ տան դռանը, այնտեղից օգնութիւն սպասելով: Ահա վերջապէս տան դուռը ճոռալով բացուեց և շէմքի վրայ երկաց մի կին:

«Փշուր մը հաց», — պոռացին մանուկները միասին դողդոջուն ձայնով:

— Աներես լակուտներ, ասում էի՝ սրանք կըկինին, մըրթ-մըրթաց նա և ներս մտնելով, բերեց մի կտոր հաց, տուեց սարսափած մանուկներին, իսկ ինքը յետ դարձաւ:

Մանուկները խեցին հացի պատառը և մինչ պատրաստում էին շտապով դուրս թոշել դոնից՝ շունը վեր թուաւ նրանց յետելց, վրայ պրծնի, փոքրիկ որբի ոտքից բռնեց, քաշեց կատաղի հոփոցով: Սարսափած մանուկը ճշաց և երեսի վրայ ընկաւ հացը ձեռքին, մինչդեռ մէծը

ըշշկուած, չգիտենալով օգնութեան վագել, թէ վախչել,
կանգնած մնաց ու լաց էր լինում: Տանտիկինը վաղեց,
հալածեց կատաղած շանը և երբ ձեռքից բռնելով վեր
կացրեց որբիկին՝ երեխան ծանր տնքաց: Գազանի սուր
ժամիկները պատռել էին նրա փոքրիկ ոտքը. կաթ-կաթ
արիւնը ծորում էր վէրքից և թափում ձիւնի վրայ: Երե-
խան ձեռք տուեց ոտքին, ձեռքը ներկուեց արիւնով. նա
զարհուրած յետ քաշեց ձեռքը, նայեց ափին, նայեց վի-
րաւոր ոտքին և էլ աւելի բարձր ձայնով լաց եղաւ: Այսու-
ամենայնիւ նա կռացաւ, վերցրեց հացի պատառը և կա-
դալով ու տնքալով հետեւեց իր եղբօրը: Արիւնը շարունա-
կում էր կաթել նրա ոտքից, և երկուսով էլ լալիս էին,
տեսնելով կարմիր կաթիները...

Բայց և այնպէս՝ քաղցած, դողդողացող մանուկները
կիսեցին հացի արիւնոտ պատառը և մի-մի կտոր կըծելով՝
առաջ գնացին:

Դեռ երբէք հացի մի պատառը այնքան թանգ չէր
գնուել...

30. ՈՂՈՐՄԱՌ ԵՂԵՔ

Երբ ձեր հոյակապ, շքեղ տներում,

Անթիւ զարդարանք ձեզ Մըջապատած՝

Գոհար, աղամանդ, դիպակ, արքեշում,

Գուրք ծիծաղում էք՝ կեանքից լիացած,

Եւ այդքան գանձերն առատ ու անբաւ

Չեն էլ շլացնում ձեր աչքը բընաւ.

Երբ դուք բախտաւոր, «կենաց բաժակներ»

Ուրախ պարպում էք փարթամ ինջոյքում,

Ասացէք դուք ինձ, ով մեծատուներ,

Այդ դուարթ ժամին դուրսը փողոցում,

Դուք նկատում էք անճար աղքատին,
Լալով նայելիս ձեր լուսամուտին:

Խղճուկը քաշուած փողոցի անկիւն,
Քաղցած նայում է նա ձեր խնջոյքին
Եւ խուլ մրմնջում. «Ահա լիութիւն,
Առատ բարիկներ, ահա խնդագին
Եւ պայծառ օրեր, և վիճակ խաղաղ.
Ահա ամեն ինչ՝ կեանք, վայելք, ծիծաղ...

«Իսկ ես... ես թշուառ, ես մերկ, անօթի,
իմ օթեանը խարխուլ ու մըթին.
Վայ ինձ... ես մի այլ դառն վիճակի
Դատապարտուած եմ երկրիս երեսին.
Կիսս թոքախտում, տանս հոգս ու ցաւ,
ինդա զաւակներս քաղցած ու ծարաւ...

Օ՞հ, նա, միայն նա կարող է ըզգալ,

Թէ ի՞նչ ասել են այս դաժան խօսքեր,

Ով ինքն է եղել թշուառ, տառապեալ...

Բայց դնէք, դուք բախտի հարուստ ընտրեալներ,

Չեզ ի՞նչ փոյթ... Չեր կեանքն առատ է, լեցուն.

Ողորմած եղեք, Աստուծոյ սիրուն:

կերակուր են խնդրում իրանց մօրից. ի՞նչ քաղցր ձռուուզիւն են բարձրացրել նորա:

Սակայն այնպէս չէ կարգադրել բնութեան ամենագէտ Արարիչը. թաղ ինչքան ուզում են սիրում ճուտիկները միմեանց առաջը կտրեն. մայրը իր կարգը լաւ գիտէ. նա հերթը չէ կորցնում, իւր հաշուի մէջ չէ սխալում. նա լաւ գիտէ, թէ առաջ կերակուրը որի բերանն է դրել. նա դեռ այն էլ է հասկանում, թէ իւր ընկեր արուն որին է կերակրել: Նա ուրախանում է իւր նախշունիկների վը-քայ. մի երկու բողէ էլ կանգ է առնում բնի մօտ, քրքրում է իւր կտուցիկով ձագերի գեղին, փափուկ բուրդը, փափ-կացնում է նոցա անկողինն ու թռչում կրկին դէպի դաշտ:

Բ

Ի՞նչ ախորժալուր է հովուական սրբնգի ձայնը մայիս ամսին, երբ նա, մի քարի վրայ նստած, կամ լեռան գըլ-խին թեկնած, սուլում է ինքնազոն: Դուք չկարծէք, թէ նա միայն իւր սրտի ուրախութեան համար է ածում. ոչ, նա դորանով հասկացնում է իւր սիրելի հօտին, թէ ժա-մանակ է ժողովուել իւր չորս կողմը և գնացքն ուղղել դէպի փարախը, ուր սիրունիկ գառներն սպասում են լսելու իրանց մայրիկների մայիսնը:

Ո՞հ, ի՞նչ հրաշալի տեսարան է, ի՞նչ քաղցր բողէ: Գառները լսում են հեռուից մօր ձայնը և անհամբերութիւնից ուզում են կոտրատել զվուլի^{*)}) դուռը, դուրս թափուել՝ դիմաւորելու ամենաթանկագին մօրը, որ իրանց համար, կուրծը լի, ախորժահամ կաթն է բերում: Մինչև

^{*)} Փարախ՝ ցանկով պատած,

ՀԱՏՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

Նկարագրական յօրուածներ եւ նրանց համապատասխան չսփաթերական գրութիւններ

31. ԲՆՈՒԹԵԱՆ ԿԵՆԴԱՆԱՆԱԼԸ

Ա

Մայիս ամիսն է. գարունը իւր բոլոր փառաւորութիւնով ամեն շնչաւորների վրայ իւր հրաշալի տպաւորութիւնն է ներշնչել: Վարդահոտը, բարակ զեփիւուի շնորհիւ, ամեն կողմը հետդ ման է գալիս. լեռ ու դաշտ կանաչներով, սէզերով և սիրի-սիրի համեստ երեքտերեեան խոտերով զարդարուել են. հազարաւոր գոյնզգոյն ծաղիկները երեսիդ ծիծաղում, խնդում են և առհասարակ մի բուռը հող եղած տեղը բուսական թագաւորութիւնը իւր զան է դրել:

Քարափների ծերպերիցն էլ կեանք է արտադրւում. մի կտոր կոշտ ընկած տեղն էլ կանաչի գլուխ է դուրս ցցուել. էլ ապառաժ ու մերկ գետին չէ մնացել: Սքանչելի է մայիսը, թուչուններն իրանց աղուամազ ձադերի համար կերակուրներ են տանում: Ուր է վազվզում օղի մէջ ծըւծըւան ծիծեռնակը: Նայիր այն ճնճղուկի կամ փայտփորի բներին. ի՞նչպէս քնքուշիկ ձագուկները՝ գեղին երիզը կտուցի չորս կողմը, բաց են անում իրանց բերանները և, լեզուիկները հանած, միչ ու ծվլոց բարձրացրած,

որ հովիւը բաց կ'անէ գվուկի դուռը, ուլերը, այդ ձարպիկ պստիկ սատանաները, քիչ է մնում որ բարձրանան նորա ուսերը:

Նախանձելի է հովուի դրութիւնը հօտի վերադառնաւլու ժամանակ... Գառն ու ոչխարը իրար են խառնւում և նոցանից իւրաքանչիւրն աշխատում է զտնել իւր մօրը կամ ձագին: Բաւական է, որ մաքին մի փոքր հոտոտէ, իսկոյն յետ է խփում իրան մօտեցող օտար գառանը և հոտոտելիքը դէպի վեր բռնած, ցատկում է դէպի այն կողմը, ուր որ իւր սիրելի հարազատն է: Մօր անոյշ մայիւնը և խանդադատական ակնարկը թափանցում է անմեղ դառնուկի սիրտը և վստահութիւն է տալիս նորան վագելու դէպի ինքն եկող ոչխարի կուրծը. իսկ վերջինս իսկոյն ոտքերը յետ է բաց անում և թոյլ է տալիս իւր ամենասիրելի զաւակին փշփշալով ծծել իւր պտուկները: Եւ իւր սրտի չուրախութիւնն ու մայրական քաղցր գգուանքն աւելացնելու համար՝ նա անդադար լիզում է փոքրիկ գառնուկի թաւշանման մորթը:

Ուշադրութեան արժանի է նաև կթողների իրարանցումը, Գալիս են մանկահասակ հարսները և մատադահաւաղիկները. նոքա լաւ գիտեն ճաշուայ կթի ժամանակը: Գիւղական փարախներն առհասարակ շնուռած են լինում զիւղից ոչ հեռու, մի ձորամիջում կամ բլրի ստորոտում, քամուց և տօթակէզ արեգակից ապահով: Եւ ահա մեր ամօթխածներն ուսում են կամ շալակում կովկիթն ու կճուճը, գլուխներին են դնում կաթ-քամիչն ու մաղլ և զիւղից միասին գուրս զալիս՝ երեք-երեք, չորս-չորս, խումբ-խումբ բաժանուած, խնդալով, կատակներ անելով զալիս են փարախը և սպասում են հօտի վերադառնալուն արօտից:

Երեք ժիր մըշակ իշխանի արառում
Հասուն հասկերից դէզ էին բարդում,
Մէկ քոսոտ շուն էլ, բան ու գործ թողած,
Սնցորդների վրայ հաջում էր կատղած:
Իշխանը եկաւ, արտերը դիտեց
Ու մըշակներին առատ վարձատրեց:
Անասելի էր խեղճ շան զարմանքը,
Երբ անվարձ տեսաւ իր աշխատանքը.
«Եյսուհետ, ասաց, չարժէ աշխատել,
«Երբ մարդիկ չզիտեն գործ գընահատել»:
Տէրն ասաց, «ինչ գործ գործել ես դու, Շնուն»:
Շունն ասաց. «ողջ օրն բառ ով էր հաջում»:

33. Ա Ռ Ա Խ Օ Տ

Առաւօտ է: Ամենքը շարժողութեան մէջ են: Գիւղիներն արդեն զարթել են այն փոքրիկ թըռչնիկի ձայնից, որ զալիս նստում է երդիկների վրայ ու կանչում. «Լծէ, լծէ»: Նրանք արդէն լծել են իրանց եզներն ու գոմէշները և բաւական վարել են գետինը: Ցների մէջ մատակներն ու կովերը կթել են, Ոչխարների հօտն էլ զաշտումը մատղաշ արօաներից արդէն մի քաղցր նախաճաշ է արել: Տանտիկինն էլ կովերն ու հորթուկներն է դուրս հանում:

Գիւղի աղջկերքը խումբ-խումբ գնում են դէպի կանաչ մարգագետինը, ծաղիկները կոխելով, ծաղիկներ քաղելով և իրար վրայ ածելով, ծիծաղելով, խայտալով: Նրանք հանդիպում են կաքաւների երամին, լորին, ար-

տուտիկին, որոնք խոտերի տակից թոշկոտում են թփից թուփի, ուգենալով իրար նմանուիլ. դու ասա՝ աղջկերքը թևառը թոշուններին, թէ թոշունները ունաթուիկ աղջրկանց։ Նրանք անցնում գնում են տուաջ՝ բանջարներ ժողովելու և կանչելու, աղջկերքը՝ «քա, քա», կաքաւները՝ «գա, գա»։

Կոռնկը երամով կարաւան է կազմել սլաքաձև, օդի քարձը տեղերովն անցնելով՝ «կոռւ, կոռւ» է կանչում։ Ծառայ եմ ձայնին։

Երկարասրունք արագիլը, կտուցը սրած, բոյնից դուրս է եկել, «հծդ, հծդ» ձայներով դէպի դաշտն է վազում։ Ջրի ու ցամաքի օձերը բոնելու և սպանելու։

Կոյր բուն այս ժամանակ իր համար մի բոյն է որոնում, որ ծածկուի այնտեղ, վերջացնելով իր «վայ, վայ-ն», որով սգում էր գիշերը, մի չորացած ծառի կամ գերեզմանաքարի վրայ նստած։

Զկնկուլը գետերի ափերն է վազում ու «ձըկ, ձըկ» կանչելով՝ ձուկ-մուկ է որոնում, կուլ տալիս։

Բաղն ու սագը, ջրերի վրայ նստած, կայտառ նաւաշարների պէս թովում են ու երգում։

Սանրակատար յոպովը անհանգիստ ոստոստում է և անդադար աղաղակում՝ «յոպ-յոպ»։

Դեղնապորտիկը, վափուկ ու մաքուր, ճերմակ ու դեղին շորեր հագած, փոքրիկ մացառների ու թանձր խոտերի միջից գլխիկը ցոյց տալով ու թագյնելով, իր ձայնն է լսեցնում։

Սոխակի ձայնն էլ լսում է բոլոր երգողների ձայների հետ և ամեն լսողի ուշքը ու միտքը վերացնում։

Բարբարոս բարձէն որոտացող ձայնով վեր ու վայր է սլանում, մի անմեղ ու անզգոյշ աղաւանի կամ տատրակ պատառոտելու։

Անգղները, ձրի ապրող քիւրդերի պէս, մի սպանուածի հոտ առել, գնում են նրա դիակի մսերը կողովտելու։ Ահա արծիւն էլ երեսում է. նրա հզօր թների բաղիումից օդր շառաչելով պատառում է. բոլոր թոշունները միանգամից լուռմ են, մինչև անցնի հեռանայ այդ ահեղու փառահեղ թագաւորը։

34. Լ Ո Ւ Ա Դ Ր է Մ Ի Ն

Աղատ ծովը կաշկանդել էր մառախուղ.

Քամին փրչեց—և նա ցըրուեց, որպէս ծուխ.

Քամին ճամպին ասաց անշարժ նաւերին.

«Լուսադէմ է, առազաստներդ թող բացուին»։

Եւ համելով ծովի եզերը, նա ուժգին՝

«Ելէք, ելէք»—գործի կոչեց ամենքին։

Անտառի խորք սըլանալով՝ շըլընջաց.

«Զարթիր, անտառ, կանաչ կուրծքըդ շուտով բաց».

Թըռչնիկների աչքից խըլեց անուշ քուն.

«Երգէք»—հընչեց նորա շունչը հովասուն.

Թըռաւ նա գիւղ, գոչեց. «Վեր կաց, գիւղի մարդ,

Լոյսը բացուել, քեզ են մընում դաշտ ու արտ»։

Հասկին ասաց, սըլանալով արտի մօտ.

«Լըցուիր, լըցուիր, քեզ ժըպտում է առաւօտ»։

Զանգակատան նա համելով՝ քաղցրալուր

Սուլեց. «Ժամկոչ, առաւօտեան զանգը տուր»։

Բայց երբ մըտաւ գերեզմաննոցն անբարբառ՝

Խուլ հառաչեց ու ասաց.

«Քընէք հանգիստ, մեռեալ մարդիկ, քար աշխարհ».

Զեր ժամը դեռ չէ հասած»...

35. ԳԱՐՆԱՆ ՄԵԾ ՏՕՆԵՐԸ

Ծաղկագարդը մի շատ ուրախ կիւրակի է, մանաւանդ երեխաների համար: Նրանով է սկսում գարնանային մեծ տօների մի շարք. նա բերում է փոքրիկներիս համար շատ թանկագին զուարձութիւններ: Դեռ շաբաթ երեկոյ եան ես անհամբեր սպասում էի հօրս տուն գալուն: Նա պիտի բերէր ինձ համար նոր կօշիկներ՝ վաղ-առաւոտեան եկեղեցի գնալու համար, և բացի գրանից մի բան, որ ամենից շատ էր հետաքրքրում ինձ: Ամբողջ օրը ես նախանձելով տեսել էի, թէ ինչպէս իմ ընկերներն ուրախ ուրախ վազգելով ճռճացնում էին փոքրիկ ճռռանները: Կարծես նրանք խօսք էին տուել, որ այդ օրը ինձ լաւ տանջեն: Հէնց որ մօտենում էի մէկին, ինդրելով ցոյց տալ ճռռանը, որպէսզի զոնէ տեսնեմ նրա բարակ լեզուակը, ատամնաւոր թօփը, նա քթիս առաջ պտոյտ եր տալիս այդ աղմկաշատ գործիքը և խակոյն յետ փախչում, հեռու կանգնում և ուշադրութիւնով սկսում էր զննել ճռռանի բոլոր մասերը: Ես մնում էի գլխակոր կանգնած, քիչ էր մնում որ լաց լինէի: Մտնում էի տուն, բայց չէի կարողանում մի ժամ հանգիստ նստել: Հէնց որ ականջիս էր համուռմ խմբովին ճռռոցը, մոռանում էի ամեն ինչ: Դուրս էի վազում և էլի նոյն կերպով հեռուից մտիկ էի տալիս ընկերներիս:

Մի կերպ այդ օրը մթնացըի: Հօրս գալու ժամանակն էր. նրան սպասում էի մեր տան դռների մօտ: Վերջապէս լսեցի նրա քայլերի ձայնը, վազեցի, գնացի առաջը և սկսեցի հետաքրքրութիւնով տնտղել, թէ ինչ ունի ձեռքին: Բայց նա ոչինչ չէր առում, նայում էր ինձ և ժպտում: Որպան սառնասիրտ էր հայրս, միթէ չգիտէր, թէ ինպէս

էի օրը մթնացըրել: Նա էլ, կարծես, ուզում է ինձ պատժել: Հարցնում եմ, թէ բերել ես ճռռանս. հարցնում եմ երկու անգամ, երեք անգամ, բայց նա շարունակ ժպտում է: Պնդամիրտ հայրիկ: Նա մտնում է տուն, նստում է օթեակի վրայ. ոչինչ չի բերել... կատարեալ յուսահատութիւն: Ես կանգնած եմ մի անկիւնում և յօնքերս կիտած՝ աչքիս տակով շարունակ նայում եմ նրան. սիրտս եռ է գալիս. ես վճռել եմ երկար լաց լինել, եթէ նրա բերանից «չէ» դուրս գայ: Տէր Աստուած, Երբ պիտի խօսէ...

Մայրս, որ ամբողջ օրը յուսագրել էր ինձ, հասկանում էր ցաւս. նա յայտնեց հօրս, որ այլես ինձ չնեղացնէ, եթէ մի բան բերել է, դուրս հանէ: Թոնդ սովորի համբերող լինել, ասաց նա վերջապէս և ձեռքը տարաւ դէպի գրպանը: Սիրելի հայրիկս. նա դուրս հանեց ճռռանը և ծիծաղելով մեկնեց գեպի ինձ: Մի ակնթարթում դուրս թռայ մթին անկիւնից, խլեցի սիրածս առարկան:

Ծաղկազարդի շաբաթ օրը կարծես նոր լուսացաւ ինձ համար: Չեռս առայ կոթը և որքան ուժումս կար, սկսեցի պատացնել: Չայնը լաւ էր, շատ լաւ. ախ, եթէ այդ բոպէին դուրս գային ընկերներս... Բայց հայրս հրամայեց լոել. նոյնը կրկնեց և մայլս, աւելացնելով՝ թէ բունի մէջ հանգստացող հաւերը լսում են ձայնը, այլես ձու չեն ածիլ: Ես կատարեցի նրանց հրամանը. սկսեցի լուռ անսպղել ճռռանիս ամեն կողմերը. ճարտարարուեստ շինուածք չէր, բայց որքան բարձր ձայն էր հանում: Այնքան գերել էր ինձ այդ խաղալիքը, որ մինչև անգամ չէի նկատել, թէ ինչ էր անում հայրս. իսկ նա վազուց հանել էր ոչ միայն նոր կօշիկներս, այլև իմ նոր արխալուխացուն, որ մի խայտաբղէտ չիթ էր: Երբ տեսայ և այդ իրերը, էլ ոչինչ ցանկութիւն չմնաց իմ մէջ, միայն թռչել

այդ ըսպէլին ընկերներիս մօտ, ցոյց տալ իմ իրերը և տեսնել նրանցը:

Վերջապէս մենք քնեցինք, պէտք էր առաւօտը շուտ
վեր կենալ՝ եկեղեցի գնալու համար։ Բայց ինչպէս բա-
ժանուեմ ճռուանից։ Ես նրան դրի ծոցումս։ Երազումս էլ
տեսայ նրան և բաւական ժամանակ ճռուացը։ Այդ քաղցր
երազը դեռ չէր վերջացել, երբ մայրս զարթեցրեց ինձ,
ասելով՝ թէ օրը բացուել է։

Եկեղեցու մէջ այրւում էին հարիւրաւոր ճրագներ. Ես զօրով ճանապարհ բաց արի մարդկանց միջով և մի ան- կիւնում կուչ եկայ. Ճեռքս շարունակ գրպանումս էր՝ ճռառանիս լեզուակի վրայ. Երբ «Փառք ի բարձունս» սկսե- ցին, իսկոյն դուրս հանեցինք և սկսեցինք ճռացնել. Ես լաւ գիտէի, որ իմն ամենից լաւ էր ճայն հանում...»

Երկու օրից յետոյ չորեքշաբթի էր։ Մայրս լողացրեց
ինձ, գլուխս սանրեց, հազըրեց նոր արխալուխս։ Ճռա-
նի ժամանակը անցել էր, այլևս դիւր չէր գալիս մեզ.
Նրա փոխարէն կար մի ուրիշ ուրախութիւն. մենք պիտի
գնայինք մի սուրբի տակ, որ գտընուում է Շուշի քաղաքի
մի ծալրում ու կոչւում է Քամու-խաչ։

Մի մեծ բազմութիւն կար այնտեղ։ Մարդ ու տղայ,
կնիկ ու աղջիկ խառնուած էին միմեանց հետ, միմեանց
հրում էին, ամեն մէկն աշխատում էր առաջ անցնել և
ամենից շուտ վառել իւր մոմը և կպցնել սպիտակ քա-
րին։ Ես էլ մօտեցայ մօրս հետ։ Սպիտակ քարի վրայ մէ-
կը զրել էր թարմ կապուտաչեայ մանուշակների մի փոք-
րիկ փունջ։ Գարնան փութահասիկ կարապետները, այդ
համեստ ծաղիկները, կարծես ասում էին, թէ իրանք էլ
շատ ուրախ են, որ կարողանում են մարդկանց ժպիտը

զբգուել։ Իսկ վերեկից լուսաւորում էր ապրիլի հեղիկ արեգակը։ Նա էլ, կարծես, ժպտում էր. ուզում էր ցոյց տալ, որ թէև հինգ ամսուայ միջոցում յաղթուած էր սպիտակազգեստ ծերուկից, բայց մի քանի օրուայ մէջ իրանն արա՝ թաց գետինը չորացրեց, մարդկանց տաքացրեց, թռչուններին հանեց ծառերի կատարները, որ այնտեղ գժուածի պէս ճռվրռան։

Ուխտի ժամանակ հանդիպեց հօրաքոյրս, որ բերել էր
և իւր փոքրիկ աղջիկը: Բաւական չէ, որ երեսիցս մի քա-
նի անգամ պինդ համբուրեց, նա վեր առաւ ինձ և տա-
րաւ իրանց տուն, ուր մնացի մինչև միւս օրուայ իրիկ-
նապահը. յետոյ զնացինք եկեղեցի և մի-մի փոքրիկ փա-
թեթ կարագ-իւղ ստացանք: Ես վազեցի տուն, զըկեցի
մօրս և իւղը դրի նըա ձեռքում. նա նախ իւր աչերն
օծեց, ապա իմ ամբողջ երեսն ու մասերո:

—Օրհնած իւղ է, զօրաւոր է, ասագ նա:

Նոյն երեկոյին հայրս ու մայրս գնացին եկեղեցի. ինձ
մօտ մնաց մեր հարևանի աղջիկ Մարթան, որ ինձանից
չըրս տարով մեծ էր, Երկար խօսեցինք, ծիծաղեցինք և
յետոյ վերցրինք այն մեծ ու խոր գաւաթը, որի մէջ մայրս
պահում էր մեր հաւերի ձուաները. Համբեցինք երկու
անդամ: Հինգ անդամ տառը և վեց հատ ձու էին ածել
մեր հաւերը: Մի օրից յետոյ դրանք բոլորը պէտք է կար-
մըրեն: Ե՛րբ պէտք է լուսանայ ալդ օրը:

Առաւտօնեան մայրս Տիգրան առաջին պահուեմ:

—Այսօր ոչ սանրի ձեռք կը տան, ոչ սապօնի, ոչ
ասդի, ասաց նա, այսօր չարչարուել է մեր Քրիստոսը,
անիծուած օր է:

Խըսւ ուրբաթ օրը ոչ ոք էլո բանում, միայն մեր

հարևան դարբինը, կէս օրին մօտ, մի քանի անգամ զարեց մուրճով իւր մեծ սալին, թաշից յետոյ մայրս մի փոքրիկ պողպատէ մատանի դրեց մատս և ասաց, որ այդ օրը շինած պողպատէ մատանին չարից կըպահպանէ։ Մի այդ տեսակ մատանի էլ նա ունէր իւր մատի վրայ։

Երեկոյին էլի գնացինք եկեղեցի։ Ո՞րքան տխուը էր այդտեղ։ Սև վարագոյր, մի քանի հատ մոմ, մի սև սեղան, որ դըած էր բեմի առաջ, ծածկած սև թափշով, և նրա վրայ սև շրջանակաների մէջ դրած մի մեծ պատկեր. ամեն ինչ սև էր. քահանաների շուրջառներն էլ սև էին։ Ոչ ոք ձայն ու ծպուտ չէր հանում։ Մայրս հասկացրեց, որ այսօր սպի օր է, պէտք է խելօք մնալ։ Ժամից յետոյ նա տարաւ ինձ մեծ սև պատկերի առաջ։ Ես համբուրեցի մեծ խաչը և յետ դարձայ։

Դեռ մինչև եկեղեցի գնալլ՝ երկինքը սկսել էր պըղտորուիլ. ճրագվառոցին ամպերը բոլորովին ծածկեցին կապոյտ երկնակամարը. մինչև անգամ մի քանի կաթիլ անձրեւ էլ եկաւ։

«Դէս, վերջացաւ», ասացին ամենքը գժգոհութեամբ։ Եօթը երկար շաբաթներ սպասել էինք, որ այս մի երկու օրն ուրախանանք։ Մենք էլի ուրախ կըլինէինք, բայց անձրեւ և մանաւանդ ցեխը պիտի արգելեն տանից դուրս գնալ. իսկ չորս-հինգ ամիս շարունակ մենք փորձել էինք թէ ինչ տխուը բան է տանը նստելը։ Ես անհամբեր ականջ էի գնում, թէ երբ կընդհատուի անձրեւ մեղմ խշոցը, բայց երկար չկարողացայ, այնքան այդ մի քանի օրերը վազգվել էի, որ նստած տեղս քնեցի. չեմ յիշում, թէ ինչպէս էին դրել ինձ անկողնի մէջ։ Առաւտեան, զարթնելուն պէս, նայեցի պատուհա-

նին. Երկինքը բոլորովին պարզ էր. հեղասահ արեգակը բաւական բարձրացել էր։ Ուրախ-ուրախ վեր կացայ, հագնուեցի, որ գուրս գնամ։ Խոհանոցում մայրս սաստիկ զբաղուած էր. երբ մտայ այնտեղ, երկար տախտակի վրայ շարուած էին կարմիր ձուերը։

«Կարմիր ձու, կարմիր ձու», գոչեցի ես՝ համարեա պարելով։ Մայրս երկու հատ տուեց ինձ՝ պատուիրելով, որ պահեմ մինչև երեկոյ։

Ես վազեցի մեր տան մօտ գտնուող փողոցը։ Զարմանքից ձեռքերս տարածեցի և մի քանի ըոպէ մնացի սառած։ Աշխարհը, կարծես, ուրիշ տեսակ էր դառել. փողոցը բոլորովին սևացել էր. մարդկանց խմբեր յետ ու տառաջ էին գնում, խօսում էին բարձրաձայն, ծիծաղում էին. որը ձուկն էր տանում, որը իւղ, որը թաշկինակի մէջ բրինձ կամ միրգ։ Երբեմ-երբեմն երեւում էին փոքրիկ գիսակաւոր, խարտեաշ, կապուտակ դառնուեկներ. որքան փոքր էին. նրանք մայում էին անուշ մանկական ձայնով։ «Զան, ջան», ասում էինք ամենքս և վաղում, ձեռքներս գնում էինք նրանց փափուկ մէջքներին կամ բռնում էինք փոքրիկ գնչիկներից. իսկ նրանք «մա-մա» մանելով վազում էին իրանց տէրերի առջևից։ Եւ մարդկանց ձայները, և գառների մայիւնը, երեխաների խաղերը, օդը, արեր, այդ ամենը ցոյց էր տալիս, որ մի ուրախութիւն կայ, մի մեծ տօն, որին երկար սպասել են ամենքը։

Կէս օրից յետոյ մեր հարևան Ծաղիկ տատը կանչեց ինձ ու միքանի ընկերներիս և ցոյց տուեց իրանց համար գիւղից եկած թուխ գառը. յետոյ իւր թոռ Մարգարին էլ մեղ հետ դրեց և պատուիրեց որ գառը զգուշութիւնով

տանենք, արածացնենք։ Մեզանից հեռու չէր կանաչաղարդ
դաշտը. շուտով հասանք այնտեղ ոստոստալով, թռչկոտելով։
Մենք գտանք այնտեղ ուրիշ շատ գառնուկներ և երեխա-
ներ։ Կանաչ խոտի վրայ խաղ սկսեցինք. բաւական տան-
ջեցինք փոքրիկ հեղ կենդանիներին։ Այդպիսով չէինք
նկատել, որ արեգակը մայր մտնելու վրայ է։ Ես վազեցի
տուն. մայրս խակոյն եկեղեցի դրկեց. ինքը շատ զբաղուած
էր. ձուկն էր եփում, փլաւի բրինձն էր թրջում, իւդ
էր հալում...

Եկեղեցի մտնել չկարողացայ՝ տեղ չկար բոլորովին.
Ես կանգնեցի շեմքի մօտ և բերանաբաց նայում էի ներսին.
կարծես եկեղեցում արև էր ծագել, այնքան շատ մոմեր
էին վառել։ Ի՞նչպէս անոյշ ձայն էին տալիս աշակերտ-
ները, ի՞նչպէս ամենքն ուրախացան, երբ նոյցանից մինը
բարակ ձայնով «Քրիստոս յարեաւ» ասաց։ Հէնց որ մի՛
քիչ նշխարք ստացայ, վազեցի տուն։ Կէս ժամից յետոյ
սեղան նստեցինք. սկսուեց ամենից մեծ, ամենից փառա-
ւոր տօնը, սկսուեց չայոց Զատիկը։ Մութն սկսելուց
յետոյ՝ այստեղից-այնտեղից սկսեցին հրացաններ արձա-
կել։ Այդպիսի ճարճատիւն լսել էինք և բարեկենզանի
վերջին կիրակի երեկոյին. այն ժամանակ ուտիւն էին
հալածում, իսկ այժմ պասը։ «Ամեն բան իւր ժամանակին»,
կարծես ասում էին այդ հրացանները պլազուն աստղերի
տակ։ Դեռ նոր էր սկսել Զատիկը, բայց որքան ուրախ
էին մարդիկ։ Դու տես վաղը և միւս օբը, թէ ի՞նչե՞
պիտի անենք։

36. ՏԱՊԱՆԱԳԻՐ ՄԱՆԿԱՆ

Հազար երանի քեզ, մանուկ անբիծ,
Որ շուտ հեռացար դու այս աշխարհից,

Ուր վաղուց իվեր ունի բնակութիւն
Սնմեղութեան հետ մոլի չարութիւն։
Բայց այն ով զիտէ, քեզ ի՞նչ էր սպասում
Փըշոտ, տատասկոտ այս մեր աշխարհում,
Միթէ յաւիտեան պիտի մընայիր
Հանգիստ գըրկի մէջ քո մօր սիրալիր,
Կամ թէ յաւիտեան քեզ պիտի ժըպտամբ
Գարնան վարդի հետ այս օտար աշխարհ։

37. ԱՐԱԳԱԾՈՑՆԻ ԶՐՎԵԺԸ

Քրդերի վրանները վայր էին թողած հինաւուրց Արա-
գած լերան թմբանը, Զըրչը կոչուած ջրվէժի հորի
գլխին։

Փոքրիկ գետակը, որ ոռոգում է ոչ միայն մերձակայ
Ղաչափար գիւղի, աղկ Աբարանու միքանի դաշտի գիւ-
ղերի հողեր, նաև կոմաններ տալով, ձորակներ ճղելով,
դաշտերով սլանալով, պահպանում է Արագածի արևելա-
հարաւային ստորոտի մարգարնակութիւնը, այդ փոքրիկ
գետակն, ասում եմ, իւր յիշեալ ջրվէժով մի գեղահրաշ
տեսարան է ներկայացնում։

Մօտ երեք հարիւր ոտնաչափ բարձրութիւնից, քա-
րափի սրածայր և խորդուրորդ վերջաւորութիւններից
գէպի անդունդը, էլ ջուր չես տեսնում. մի ծուխ կամ գո-
լորշի բռնած ունի ձորակը և այդ մի կտոր տեղից չէ հե-
ռանում։ Այդ ծուխը, այդ ամպը ոչ այլ ինչ է, եթէ ոչ
գետակի ջուրը, որ սաստկութեամբ գահավիժուելով բարձ-
րից, ցնդւում է օդի մէջ և մանը հիւլէներով փոշիանում,
նորից մեղմօրէն ցած իջնելու, ջուր դառնալու և գետակի
փոխուելու համար։ Հազարերանդ են այդ ջրային հիւլէնե-
րը. աչքը չի կշտանալ բնութեան այդ խաղին նայելով.

արեգակի ճառագայթները ներս են թափանցում ջրի փոշիացած ամենամանը մասնիկների մէջ և ամեն մի աննշան կտորին մի նոր գոյն են տալիս, գոյն՝ որ գեռ մարդուս հանձարն անկարող է նմանը գտնել կամ անունը տալ: Ես չգիտեմ օրը քանի՞-քանի այցելուներ և տուրիստներ կը գային այդ բանաստեղծական վայրն ուխտ անելու, քանի արկածախնդիր նկարիչների վրձիններ կը գործէին, գոնէ մի մասն իւր բնական գոյնով և գեղեցկութիւնով թղթի կամ պաստառի վրայ առնելու և նրանով գեղարուեստամէր միլիօնատէրերից իրանց կեանքի ապահովութիւնը միանգամից դուրս կորզելու, բայց կը տկարանային, բայց չէին գտնիլ գործնական կեանքի մէջ այն աչք շլացնող գոյները:

38. ԶՐՎԵԺ ԵՒ ԱՌՈՒԱԿ

Կերան տակէն մի աղբիւրիկ կը վաղէր.
Բայց ջուրն այնքան նուազ էր,
Որ անցնող-գարձնողի աչքին հազիւ կ'երևար.
Միայն թէ շատ անուանի էր նրա ջուրն առողջարար:
Աղբիւրի մօտի բարձր ժայռերէն
Փրփրած կատաղի մի ջրվէժ կ'իջնէր.
Սա հըպարտ-հըլպարտ գոռմամբ ահազին
Ասաւ առուակին.
«Տես՝ ինչ կասեմ քեղ.
Դու խեղճ ջրիկ ես,
Ուրեմն ինչու այդքան
Քեզ հիւրեր կը գան.

Ինձի թէ գան, ճշմարիտ-որ զարմանը չէ.
Հիանալի տեսք մի ունիմ աննըման.
Ասա, տեսնեմ, քո յատկութիւնը ի՞նչ է
Ինչի մարդիկ միշտ գունդագունդ քեզ կը գան»:

Առուակն ասաւ իրպնելով,
Հեղիկ ու քաղցրը ձայնով.
«Գիտե՞ս ինչու՝
Բը ժկուելու»:

39. Վ Ա Բ Ա Գ

Գեղեցիկ, պայծառ առաւօտ էր, երբ ես և Ասլանը, ձի նստած, դուրս եկանք Այգեստանի ծառազարդ փողոցներից և ուղերձուեցանք դէպի վանքը: Մեր առջնն էր Վարագայ սարը իւր սքանչելի տեսարաններով: Արեր գեռնոր էր սկսել ծագել: Նա կամաց-կամաց վեր էր համբառնում Վարագայ լեռնագագաթի ճիշդ այն ամենաբարձր կետից, որ կոչւում է Գալիլիայ: Ես առաջին անգամն էի տեսնում արեի մի այնպիսի հրաշալի ծագում: Ինձ այնպէս էր թւում, որ տուլնջեան լուսատուն գիշերը հանգստացել էր Գալիլիայի գագաթի վրայ, միենոյն նուիրական այրերի մէջ, որտեղ մի ժամանակ պատսպառուած էր Հոփփոմէն իւր ընկերուհիների հետ. իսկ այժմ լուսաճանչ պայծառութեամբ դուրս էր գալիս իւր հանգըստարանից՝ լուսաւորելու հայոց աշխարհը: Նոյն այրերի մէջ ձգնում էր երանելի կոյսը, նոյն այրերից դուրս եկաւ նա և, որպէս մի պայծառ լոյս, ուղերձուեցաւ դէպի Արարատ՝ կատարելու այն մեծ բարոյական պատերազմը հեթանոս թագաւորի և հեթանոսական խաւարի հետ, որի արդիւնքն եղաւ քրիստոնէութեան մուտքը հայաստանում: Նոյն այրերի մէջ թագցրեց նա կենսատու փայտի Ս. Նշանը, որ ամփոփուած էր մի փոքրիկ խաչի մէջ և որ նրա կրծքի ու պարանոցի Աստուածային զարդն էր կազմում: Ամբողջ չորս դար հրաշալի Սուրբ-Նշանը մնաց այնտեղ անյայտութեան մէջ, մինչև Թօփիկ ճգնաւորի մշտա-

կան աղօթքով յայտնուեցաւ նա և արեգակի լուսափայլ պայծառութեամբ, Վարագայ լեռնագագաթի բարձրութիւնից թռչելով, իջաւ նրա լանջերի վրայ և, որպէս մի ժամանակ զարդարում էր Հռիփսիմէի կուրծքը, այնուհետև դարձաւ Վարագայ լեռան կրծքի երկնային զարդը: Միւնոյն տեղում հիմնուեցան տաճարներ, որ Սուրբ-Նշանի անունով կոչուեցան Սուրբ-Խաչ: Այդ տաճարներն էին, որ բոլորը միասին ներկայացնում էին Վարագայ վանքը, ուր այդ առաւօտը ես և Ասլանը գնում էինք:

Արեք բարձրացաւ: Նրա ճառագայթները հրեղէն շառաւիդների նման տարածուեցան Վանայ Մջակայքը, տարածուեցան ծովակի մանիշակագոյն մակերևոյթի վրայ և լուսաւորեցին առաւօտեան մուայլի մէջ ծածկուած հեռաւոր լեռները: Ինձ տիրում էր խորին հոգեզմայլութիւն: Արեքի ծագումը զարթեցնում էր իմ սրառում այդ նուիրական վայրերի և այդ սրբազն լեռների վաղեմի յիշատակները: Կարծես դարերը յետ-յետ էին գնում և հին աւանդութիւնը կենդանանում էր, կերպարանք էր ստանում իմաշքի առջև: Կարծես կրկին երկում էր լինձ Թօղիկ ճգնաւորի սրանչելի տեսիլքը—կենսատու և. Նշանը թաչելով է իջնում Վարագայ լեռնագագաթի բարձրութիւնից և նորանից ցոլանում են տաճներկու լուսեղէն սիւներ, որոնք հանգստանում են տաճներկու տեղերի վրայ: Հրեղէն սիւները այնքան ժամանակ մնում են այնպէս կանգնած, մինչև երկրի իշխանները և ժողովուրդը տեսնում են նրանց: Յետոյ բարեպաշտ ժողովուրդը տեսնում են խանների հետ, կառուցանում են տաճներկու տաճարներ նրանցից երկուսը իջել էին լուսեղէն սիւները, ուր իջել էին այն տեղերում, ուր շինուեցան սուրբ Գրիգորի և Կարմրաւոր վանքերը, երեքը իջել էին վերին Վարագում: Այդ եօթն տաճարներից բաղկացած

եկեղեցիների խումբը —որոնց իւրաքանչիւրը առանձին առանձին անուններ ունին —բոլորը միասին, սարի անունով, կոչուում են Վարագայ վանք:

Այն օրից, երբ յայտնուեցաւ Ս. Նշանը, Հայոց եկեղեցին նորա համար տօն սահմանեց, որ կատարւում է մինչև մեր օրերը: Այն օրից, որ յայտնուեցաւ Ս. Նշանը, Վարագը դարձաւ Հայոց լեռների Ս. Սիօնը: Նրա գագաթը, նրա կուրծքը, նրա ստորոտները ծածկուեցան վանքերով և կրօնաւորների բազմութիւնը լցրեց այդ վանքերը: Երկար տարիներ յիշեալ Ս. Նշանը պահւում էր Վարագայ վանքում և ամեն կողմից ուխտաւորների բազմութիւնը դիմում էր այդտեղ երկրպագութեան համար: Երկրի թէ հարուստը, թէ աղքատը թափում էր այնտեղ իւր արծաթն ու սոկին, նուիրում էր իր կայքն ու կալուածները Ս. Նշանի սպասաւորներին, որպէսզի Վասպուրականի այդ հոչակաւոր սրբավայրը միշտ շէն ու պայծառ մնայ: Աբեղաներն այնտեղ վայելում էին ժողովրդի բարեպաշտութեան պատրիները և աղօթում էին աշխարհի համար:

Գաղիկ Արծրունին ծախսեց իւր գանձերից ահազին գումար և շինել տուեց յիշեալ Ս. Նշանի համար մի սպակեայ տուփի և պահարման: Իսկ Աշոտ արքայորդին ծախսեց երեսուն հազար սոկի և զարդարեց նրա պահարանը մարդարիտներով և թանկազին քարերով: Երբ Արծրունիների վերջին թագաւոր Սենեքերիմը, իւր ամբողջ պետութիւնը տալով Յունաց կայսրին, տեղափոխուեցաւ Սեբաստիայ, նա իւր թագաւորութիւնից յօժարուեցաւ զրկուլ, բայց Ս. Նշանը տարաւ իւր հետ: Իսկ յետոյ դժբախտ թագաւորի մարմնի հետ կրկին փոխադրուեցաւ Վարագ: Այնուհետեւ այդ թանկազին սրբութիւնը դարձաւ զանազան բրոնակաների աղահութեան առարկայ: 1651 թուին, Խոշաբերդին տիրող քուրդ Սուլէյման-բէղը, Զոբար կոչուած բերդին տիրող քուրդ

աւազակապետի առաջնորդութեամբ, եկաւ, կողոպտեց վարագայ վանքի հարստութիւնները և Ս. Նշանը գերի տարաւ իւր բերդը: Բարեպաշտ ժողովրդի առատաձեռնութեան դարեսը արդիւնքները մի քանի օրուայ մէջ ոչնչացան: Չորս տարի Ս. Նշանը մնաց գերութեան մէջ: Իսկ վանայ հասարակութիւնը այդ չորս տարուայ ընթացքում սուգ էր կատարում: Քանիցս անգամ պատգամաւորներ ուղարկուեցան, մինչև, վերջապէս, կարողացան գերութիւնից ազատել իրանց աշխարհի սրբութիւնը...

40. ԱՌ ՎԱՆԱՀԱՅՐՆ ՎԱՐԱԳԱՅՑ *

Թող բարձրացընեն ճռինչ, ազագակ
Թութակ, կաչաղակ,
Միակ վայելուչ, միակ սրտառուչ
Երդիչն է սոխակ:
Թող վայեն բուեր, ազուաներ անթիւ,
Հազար հաւ ու ճիւ,
Ամենից մեծը, ամենից բարձրը
Է ազատն արծիւ:
Թող տան, ում կ'ուզեն, մանեակ, մատանիք,
Նըշաններ, դափնիք,
Միակ արժանին, միակ սիրելին
Կըմնայ Հայրիկ:

41. Զ Ր Ա Բ Ե Ր Դ

Ա. Մոայլ է: Առաջեկց օձի նման ոլորւում է մի հազիւնշմարուղ շաւիդ, որ տանում է անտառապատ լեռների

*) Խրիմեան Հայրիկ:

կողքերով. Իսկ վերեկից տարածւում է հսկայական ծառերի կանաչազարդ կամարը: Արեգակի ճառագայթները չեն անցնում այդ կամարի սաղարթախիտ հիւսուածքից. ճիւղերը, ոստերը, տերեները սիրալիր կերպով գրկել են միւմեանց:

Տեղ-տեղ կանաչազարդ կամարը տատանւում է և ճիւղերի ճեղքերից աեսնուում է կապտագոյն երկնքի մի փոքրիկ մասը միայն: Այդ ճեղքերից ոսկեայ ժապաւէնների նման ներս են ցոլանում արեգակի բարակ շողքերը և անտառի մէջ տիրող մուայլը փոքր ինչ պարզւում, լուսաւորւում է:

Օգը խեղգում է: Վերեկից յուլիսեան արեգակը կըակ է թափում: Բայց այդ կըակը, այդ տապը, այդ բոցը չէ թափանցում մինչև անտառի խորքը: Ոստերի, տերեների խիտ հիւսուածքը ընդդիմագրում է նրանց: Չորեկի խոնաւ գովութիւնը, մեղմացած վերեկից ներգործող ջերմութեամբ, խիստ ախորժ հրապուրանքով շփւում է ուղեսը երեսին և նա լի ախորժակով շնչում է եղենիներից բուրող բալտասանը:

Շաւիդը նեղ է: Նա անթիւ ելեէջներ ունի: Երբեմն բարձրանում է գագաթների վրայ, երբեմն իջնում է մթին ձորերի և նեղ փափարների մէջ: Մայլակի անիւները աշխարհի ոկզբից մուտք չեն գործել այդ կուսական անտառների մէջ: Մարզը միշտ սարսափել է իւր համար ճանապարհ հարթելու: Լեռնային դահավէժները սոսկալի են: Ուղեսը ձին անգամ չէ յանդգնում ոտք կոխել նրանց վրայ. մի սխալ քայլ, մի թեթև սայդաքում, և ահա նա կըզլորուի գէպի անդունդը:

Մտիպուած ես գնալ ոտով: Թո առաջնորդը, այդ ահարկու ազառամժների, այդ մթին ծմակների հարազատ որդին, կըտանէ քեզ: Նրան ծանօթ են բոլոր անցքերը,

բոլոր շաւիղները, որտեղ միայն վայրենի այծերը համարձակում են ոտք կոխել:

Բ. Տիրում է լոռութիւն: Անտառի մէջ մի տերև անգամ չէ շարժում: Միջօրէի տօթը բոլոր արարածներին հալածել է դէպի ծմակների խորքը, դէպի քարանձաւների մթութիւնը: Թռչուններ անգամ չեն երևում: Ամեն ինչ նիրնում է, ամեն ինչ հանգստանում է խորին, խաղաղական բերկութեան մէջ:

Ի՞նչ որ մի բան խշշում է. կարծես, ուզեսըի ականջներին դիպչում է թփերի մեղմ սօսափիւնը: Նայում ես քո շուրջը: Եւ անա բեղմաւոր շորենու ճիւղերից քարշէ ընկած մի էակ: Ծառերի խտութիւնը թոյլ չէ տալիս պարզ նշմարել նրան: Երևում է մի կարմիր շապիկ միայն, որ իջել է մինչև մերկ սրունքները: Հետաքրքրութիւնդ վառում է: Նայում ես, նայում ես, այժմ նկատում են կնոջ ծամերի երկայն հիւսեր, որ ծածանուում են ճիւղերի հետ: Այդ ի՞նչ է, որտեղից յայտնուեցաւ այդ անտառային ֆէան: Ի՞նչ գործ ունի նա այդ վայրենի ամայութեան մէջ, ուր գագաններն անգամ սարսափում են երկիւղից:

Դա մի շինական հայ աղջիկ է, որ հեռաւոր գիւղից եկել է անտառային պտուղներ քաղելու: Նա քաղում է կարմիր, հասունացած շլորները և խնամքով լցնում է զամբիւղի մէջ, որ քարշէ ընկած նրա թեքից: Նա մենակ է: Փոքր ինչ հեռու, գլուխը առջեկի թաթերի վրայ դրած, պառկել է նրա մտերիմ ընկերը՝ մի անգին շուն: Փորձիր մօտենալ մենաւոր աղջկան, այդ գագանը կըպատառուէ քեզ:

Աղջիկը յետ նայեց: Ուզեսը կասկածաւոր երևեցաւ նրան: Զարմանալի արագութեամբ ցած ցատկեց նա շլորնուց և մի ակնթարթում անյայտացաւ անտառի մթու-

թեան մէջ: Այլևս ինքը սատանան չէ կարող գտնել նրան: Նա չի վախենալ. նա երկիւղ չունի. նա ամեն տեղ կըգնայ: Նա ծնուել է և անուել այն մամռապատ ծառերի հետ. նրա օրօրոցը եղել են այն վայրենի ապառաժները:

Մի քանի քայլ ես, և ուղեորը նկատում է այդ անտառային կոյսերի երկրորդը, երրորդը... Դրանք չեն վախչում. դրանք ճանաչեցին, որ դու նոյնպէս հայ ես, որպէս իրանք: Նայում են քեզ վրայ և խորամանկ հեգնութեամբ ժպառում են: Ի՞նչու, ի՞նչն է շարժում այդ միամիտ շինական աղջիկների ծիծաղը:

Նրանք նկատեցին քո դողգողուն քայլերը. նրանք տեսան, թէ ինչպէս գու երկչուտ կերպով մաղցում ես ժայռերից և կրիայի նման առաջ ես սողում: Այդ բաւական է, որ հրաւիրէ երիտասարդի վրայ լեռնային աղջկայ ծիծաղը: Կարծես մարդ լսում է նրանց ուրախ հանաքները. «Այ փափկամորթ, սովորել ես կառքերի վրայ թեք ընկնել, կամ թաւշապատ դիւանների վրայ ծուլանալ. դէ, փորձիր մեր սարերի վրայ ման դալ, այն ժամանակ կ'ասենք, որ դու էլ աղամարդ ես»...

Ուղեորը թողնում է բնութեան այդ հարազատ զաւակներին և, իրաւ, կրիայի նման սկսում է առաջ շարժուիլ:

— Շուտով, շտապեցնում է քեզ առաջնորդը. եթէ այսպէս գնալու լինինք, մինչև արեի մտնելը տեղ չենք հասնիլ:

Առաջնորդի ծաղրածութեանը ևս առարկայ չդառնաւու համար, ուղեորը ստիպուած է փոքր ինչ թեթև շարժուիլ: Յոգնածութիւնը վերջապէս բոլորովին անտանելի է զառնում: Առաջնորդը նկատում է այդ և մի առանձին քաղաքավարութեամբ միջոց է տալիս հանգստանալու:

— Ծխեցէք, պարոն:

Նստում ես ծառերի հովանաւոր ստուերի ներքոյ, սկսում ես ծխել: Քրտինքը հեղեղի նման թափւում է քո ճակատից: Ամեն ինչ թաց է՝ շապիկ, ժիշտ և ամարային ժօկէտ: Անկարելի է այդ դրութեան մէջ երկար նստել: Հագուստը կորցնում է իւր ջերմութիւնը և մըսողութիւնն անխուսափելի է դառնում: Պէտք է դարձեալ շարժում դործել, պէտք է առաջ գնալ...

Դ. Գնում ես, գնում ես, միւնոյն լոռութեան, միւնոյն անշարժութեան միջով: Յանկարծ նիբինդ անտափ խորհրդաւոր հանգստութիւնը աղմկւում է և, կարծես, լոռում ես մի խուլ ստորերկրեայ որոտան ծանր դպրոց: Որքան առաջ ես գնում, շըջապատող լեռները սկսում են հետրդ-հետէ որոտալ:

Նայում ես դէպի երկինքը. տեսնում ես նոյն մանիշակագոյն կապուտակութիւնը իւր նուրբ ժպիտով, նոյն լուսաւոր արեգակը իւր պայծառ ճառադայթներով: Ամպի մի փոքրիկ պատառ անգամ չէ երկում:

Բայց որտեղից է լսում այդ խուլ, սարսափեցնող որոտի ծայնը: Մտածում ես՝ անդունդի մէջ կատարում է մի սոսկալի խոռվութիւն, կատաղի տարբերը մարտնչում են միմեանց հետ: Ժայռերը, ապառաժները մոնչում են: Խաղաղ մթնոլորաը սկսում է երկիւղածութեամբ զողողալ: Եւ ուղերի վրայ տիրում է մի սրբագան սառսուռանա խոնարհում է, ծունը է իջնում բնութեան վեհութեան առջե...

— Դա թարթար գետի ձայնն է լսում, հանգստացնում է քեզ առաջնորդը:

— Շնուտ կը հասնենք,

— Այդ սարի միւս կողմումն է:

Անցնում ես սարը, անցնում ես սարի միւս կողմը:

Քո առջև բացւում է մթին անդունդ: Նայում ես, նայում ես անդունդի խորութեան մէջ, աչքերդ սեանում են, գրլուխդ պտըտում է, ոչինչ չես տեսնում: Յետոյ երկում են քեզ ծառերի հաւասար կատարներ, որոնք կարծես մկրատով հարթած լինին: Այդ ծառերը աստիճանաբար ցած են իջնում և լցնում են կանաչապատ ձորի ամբողջ լոռութիւնը: Ուրիշ ոչինչ չէ երկում:

Ահա թարթարը, ցոյց է տալիս առաջնորդը, ձեռքը մեկնելով դէպի ձորի խորութիւնը:

Բայց թարթարը չէ երկում: Նա կտրել, անցել է ժայռերի ամրութիւնը. Նա տաշել է միապաղաղ ապառաժների զանգուածը, հազարաւոր քայլերով ցած է իջել դէպի երկրի սիրտը. Նա գարերով գործել է այստեղ, մինչև որ քարերի միջով բաց է արել իւր համար մի նեղ և անձուկ ձանապարհ: Այդ ճանապարհի մէջ խեղզուած, ճնշուած, մի հսկայ վիշապի նման գալարւում է նա, պտոյտներ է գործում, որոտում է, մոնչում է և կատաղի կերպով աղմուկ է բարձրացնում, զայրանում է, թէ ինչու չէ կարողանում աւելի լայնացնել իւր ուղին: Իսկ վիթխարի լեռները երկու կողմից աւելի և աւելի սեղմում են նրան, և նա, բարկացած, աւելի աղաղակ է բարձրացնում:

Թարթարը Հայոց մեծ գետերի ամենակրտսեր եղբայրն է: Նա փոքրիկ է, բայց ահարկու է: Բնութիւնից վիճակուած է եղել նրան կատարել մի ամենագուարին գեր: Նա չէ վագում ընդարձակ, հարթ-հաւասար և լայնատարած դաշտերի միջով, որ որքան ցանկանայ, այնքան լայնացնէ իւր ափերը և, խաղալով, խայտալով, ուրախ հոսանքով շարունակէ իւր ընթացքը: Ճակատագիրը թարթարին սեղմել է Ղարաբաղի լեռնային ձորերի մէջ. Նա հաղարաւոր տարիներով պիտի կոռէտ անգայ քարերի և անսիրտ ապառաժների հետ, —և այդ է, որ զայրացնում

է նրան, այդ է, որի դէմ բողոքում է նա իւր աղմկալի ձախով:

Այդ ճնշուած, նեղուած դրութեան մէջ ևս Թարթարը պահպանել է իւր վեհութիւնը: Բնութեան խստութիւնը չի կարողացել յուսահատեցնել նրան. նա միշտ կոռւել է և շարունակում է կոռւել իւր հոսանքին արգելք դնող խոչընդուների դէմ:

Երբեմն լեռնային գագաթից պոկլում է, ցած է զլորւմ մի ահազին քարաժայու: Նա կտրում է գետի ճանապարհը: Զերի ընթացքը կանգ է առնում: Այդ միջոցին կատաղած Թարթարը ուռչում է, ուռչում և, հետդիեալ աճելով, հաւաքում է իւր ուժերը: Մի զարկ, զարկ և... և ահա ահազին քարաժայու, որ կարել էր նորա հոսանքի առաջը, յետ է մղում, կատաղի ալիքները մի թեթև տաշեղի նման տանում են նրան և, զարկելով ափերի ապառաժներին, խորտակում են, վշրում են: Գետը դարձեալ ընդունում է իւր բնական հոսանքը:

— Դուք կամենում էք տեսնել Զբարերդը, յիշեցնում
է ինձ առաջնորդը. շատ հեռու չենք բերդից:
— Տարեք ինձ այստեղ:

Դ. Զբարերդ... Այդ անունը լսելիս, իմ սիրու բարխում է և ուրախութիւնից, և տրտմութիւնից: Ես պիտի տեսնէի այն բերդը, որ շատ անզամ պահել, պահնել էր մեր հայրերին Պարսիկների, Թաթարների, Արաբների և կովկասեան լեռնաբնակների յարձակումներից:

Մենք պիտի իջնէինք Թաթարի ձորը: Բերդը տեսնելու համար պէտք էր անցնել գետը:

Բնութիւնը, լաւ հասկանալով այդ գետի անհաշտ բը-նաւորութիւնը, գիտենալով, որ նա այնքան չար է, որ չէ կարող համբերել արհեստական կամուրջների, գտել էր

մի հնարք՝ երկու ժայռեր, երկու ահազին սիւների նման, ափերի հակառակ կողմերից մօտեցրել էր միմեանց: Նրանք այնքան մօտ են, որ մտածում ես, թէ կարող ես մէկ ժայռից թռչել միւսի վրայ: Այդ երկու ժայռերի վրայ զրած է մի շարժական կամուրջ, որի տակով անցնում է Թաթարը: Ես անցայ կամուրջը: Այժմ գտնուում էի գետածորի յատակի վրայ: Չորեք կողմից բարձրանում են անտառապատ լեռներ: Նայում ես դէպի վեր, երկնքի մի նեղ շերտն ես միայն տեսնում: Նայում ես դէպի ցած և մտածում ես, որ ահա գտնուում ես անդունդի շրթունքների մօտ, որ իւր ահազին բերանը բաց արած, պատրաստում է կլանել քեզ:

Այդ անդունդի, այդ սոսկալի խորութեան միջից, հըսկայական շաքարի զլիի նման բարձրանում է մի մերկ, սեպածե քարաժայու: Նայում ես նրա վրայ և սքանչանում ես, թէ որքան խելացի է բնութիւնը, թէ որքան նախատեսել զիտէ նա չար մարդիկների չար բնաւորութիւնը, որ կանխապէս ստեղծագործել է մի այսպիսի հրաշք, որ մարդիկ կոփւների ժամանակ պատսպարուին նրա վրայ, պաշտպանուին թշնամու բարբարոսութիւնների դէմ:

— Դա Զբարերդն է, ասում է առաջնորդը, ցոյց տալով վիթխարի քարաժայու: Նրա լայնանիստ գագաթի վրայ գտնուում են բերդի աւերակները: Իսկ ներքեցից նա սրածայր է երեսում, մի ահազին սեպի նման: Բայց ինչու է կոչում նա Զբարերդ:

Բերդը արժանի է այդ կոչմանը: Եւ իրաւ նա երեք կողմից պատած է ջրով: Մի կողմից որոտում է կատաղի Թաթարը, միւս կողմից Թըրդի գետը գալով կտրում է առաջինին և կազմում է մի սուր եռանկիւնի: Այդ եռանկիւնու միջից բարձրանում է սեպած քարաժայու,

նրա գագաթի վրայ է դրած Զըրաբերդը, որի ստորոտները ողողւում են այդ երկու գետերով:

Բերդի գլխաւոր դռան հակայ կամարներն են միայն մնացել: Այդ դռնից ներս մտնելով, մի օձապտոյտ ճանապարհ, ասլառաժների կուրծքը քերելով, գէպի վեր է բարձրանում: Ճանապարհի հին սանդուխքներն այժմ ծածկուած են փլատակների բեկորների տակ: Այդ բեկորների միջից բուռել են, աճել են ծառեր, թփեր, որոնց ճիւղերից բոնելով, պէտք է կամաց-կամաց վեր բարձրանալ: Զեռքից պոկուեցաւ ճիւղը, և գու մի քանի բոպէից յետոյ կըդանուիս Թարթարի որոտացող կոհակների մէջ, որ ներքեւում հոսում է:

Իմ առաջնորդը խորհուրդ չէր տալիս գնալ մինչև բերդի գագաթը, զգուշացնելով, թէ այսուեղ կարող էինք գագանների հանդիպել: Բայց ինչ էլ որ լինէր, ես վճռել էի տեսնել բոլոր աւերակները:

Մի քանի ամբողջ ժամեր անցան, որ քարերը, ծառերը, թփերը, մացանները բոնելով, մենք գէպի վեր էինք բարձրանում: Ամենադժուարինն այն էր, որ տեղ-տեղ այդ վայրենի բուսականութիւնն այնպէս խիտ հիւսուած էր միւսի հետ, որ անկարելի էր անցնել: Իմ առաջնորդը խէնջալով կտրատում էր ճիւղերը և ինձ համար ճանապարհ էր բաց անում: Վերջը անկարելի եղաւ շարունակել: յոզնածութիւնը մի կողմից, սաստիկ ծարաւը միւս կողմից բոլորովին թուլացը ինձ: Ես նստեցայ հանդստանալու: Իմ առաջնորդը շուտով դարման գտաւ իմ ծարաւը յագեցնելու համար. նա քաղեց հասունացած շորներ և տուեց ինձ ուտելու: Թթուաշ պտուղները բաւական զովացը իմ սիրուց: Այդ շորները բուռել էին աւերակների միջից, որոնք մի ժամանակ շէն էին, որոնց մէջ մի ժամանակ մարդիկ էին բնակւում...

Վերջապէս մենք գտնուում էինք սեպաձև ապառաժի գագաթի վրայ: Բերդի շինուածներից ամբողջ ոչինչ չէ մնացել. երեսում են կիսակործան աշտարակներ, երեսում են կիսաւեր պարիսպներ, երեսում են զանազան սրաններ, սենեակներ, որոնց բոլորի ծածկերը ցած են թափուել: Այն հզօրները, որ մի ժամանակ այդ ամրութիւններից սարսափ էին տարածում թշնամու վրայ, այժմ չկան: Նրանց փոխարէն երկշոտ բուն թագաւորում է աւերակների վրայ և կանչում է չարագուշակ ձայնով:

Տեսնում էք այդ անցքը, ցոյց տուեց իմ առաջնորդը. պաշարման ժամանակ այստեղից ջուր էին բարձրացնում բերդի մէջ:

Այդ գաղտնի անցքը ցոյց էր տալիս, թէ որ աստիճան զարգացած էր հայ մարդու արհեստը, և որ աստիճան հմուտ էր նա ռազմագիտական հնարների մէջ: Բերդի բարձրութիւնից ծակել էին ապառաժը և բաց էին արել մի անցք, որ տանում էր մինչև բերդի ստորոտը, մինչև Թարթար գետի ափը: Այդ անցքը տունելի նմանութիւն ունէր, և բազմաթիւ քարէ սանդուխքներով իջնում էր ցած: Սանդուխքները փորուած էին բնական ապառաժի վրայ: Իմ առաջնորդը բացատրում էր, թէ որպէս այդ անցքի միջով ջուր էին գողանում գետից, և այդ պատճառով էլ անցքը կոչվում է ջրագող: Քարէ սանդուխքների եւրաքանչիւրի վրայ կանգնած է լինում մի-մի մարդ, վերջինը գտնուում էր գետի ափի մօտ. նա ընդունում էր իւր մօտ կանգնողից գատարկ ամանը և փոխարէն տալիս էր նրան ջրով լցրածը, և այսպէս ամանները ձեռքից ձեռք անցնելով, վերեկից ստացւում էր գատարկը, իսկ ներքելոց արևում էր լիքը, և մի քանի բոպէի մէջ լցւում էր ջրի ահագին աւազանը, որ գտնուում էր բերդի մէջ, անցքի մուտքի մօտ:

Մի այդպիսի գաղտնի անցք ևս բերդից տաճում էր
դեպի ցամաքը և ծայրը կորչում էր անտառի մէջ։ Դա
փախուստի ճանապարհն էր։

Արեգակը սկսել էր թեքուել դեպի իւր զիշերային
կայարանը։ Իմ առաջնորդը շտապեցնում էր շուտով ցած
իջնել։ Ես տիսուր մտածութիւններով հեռացայ այդ սքան-
չելի աւերակներից, որոնք կործանման մէջ ևս դեռ պահ-
պանել էին իրանց վաղեմի մեծութիւնը։

42. Ե Բ Գ Զ Ի Ա Ն Է Ծ Ք Ը

Դարեր առաջ կար բարձրաբերձ պարիսպներով մի դղեակ,
Հոյակապ էր, փառքն հասել էր մինչ ովկիան կապուտակ.
Շուրջը փոռուած ծաղկեպասակ անուշաբոյը պարտէցներ.
Թարմ, զովաշունչ շաղրուաններ ցայտում էին վառ շիմեր։

Եւ բաղմայաղթ այնտեղ նստող զոռող արքան հողաշատ
Բազմած էր իւր զահի վըրայ մոայլ դէմքով ու զունատ.
Ամեն խորհուրդն արհաւերը էր, կատաղութիւն աչքերում,
Նորա ամեն խօսքը՝ կորուստ, արիւն էր նա միշտ զրում։

Այս ամրոցը երկու ազնիւ երգիչ գնացին միանգամ
Մէկն ալեգարդ, մինն պատանի ոսկեգանգուր ու փարթամ.
Տաւիդն ուսին, մի զեղեցիկ նժոյդ հեծած ծերունին,
Նորա կողքին լնթանում էր ծաղկահաստակ պատանին։

Ծերուկն ասաց իւր ընկերին. «Պատրաստ եղիր, իմ որդեակ,
Մեր սբառուչ տաղերն յիշիր, երգիր աղատ, համարձակ.
Երգիր և վիշտ, և խնդութիւն մատաղ ձայնով զու հզօր.
Գոռ արքայի քարէ սիրու պիտի շարժենք մենք այսօր»։

Արդէն շքեղ և սիւնազարդ նրանք սրահում են կանգնած.
Գահի վըրայ թագաւորը և թագուհին են բազմած.
Նա սիգապանձ ինչպէս փայլը արիւնավառ հիւսիսի,
Իսկ թագուհին քնքոյշ նման արուսեակին յուսալի։

Զարկեց ծերուկն ողերուած նուրբ լարերին մատներով,
Ճոխ արձագանք տուին նորա լիահնչիւն ձայներով.
Եւ զեղեցիկ տաղ երկնարժան չքնաղտատես պատանին,
Ինչպէս համերգ ողիների, և խաձայն ծերունին։

Նոցա երդն է զարուն և սէր, երանաւէտ ոսկեղար,
Աղատութիւն, խօսք ձշմարիտ, արիութեան գործ արդար,
Եւ հեղատութեան ամեն վայելք, որ յուզում է սիրտ մարդկան,
Եւ այն ամենն, որ կարող է մարդուն տալ տիպ վեհութեան։

Պալատական ասպետները ծաղու խօսքեր մոռացան
Եւ անվեհեր զինուորները հզօր երգիցն յաղթուեցան.
Իսկ թագուհին, սիրալ շարժուած, աշքին արցունք բերկրալից,
Ահա հանեց, ձգեց երգչին չքնաղ մի վարդ իւր կուրծքից։

«Գայթակղեցիք զուր իմ ազգը, կամիք իւլել և իմ կին», —
Ահեղ զուեց, զողաց մարմնով թագմաւորը մոլեզին.
Զեկեց սուսերն, օդում ցոլաց, մատաղ կուրծքը պատառեց,
Ոսկեհնչիւն երգերի տեղ կուրծքիցն արիւն դուրս ցայտեց։

Ասես մրրիկ խկոյն ցըրեց այն ունկնդիր ամրուխին.
Իւր վարպետի գրկումն հոգին վչեց անբազդ պատանին.
Ծածկեց մարմինն նա թիկնոցով, նըստացըրեց երիվար,
Ամուր կապեց և ամրոցից նա հեռացաւ վշտանար։

Եւ զուրս եկաւ, կանգնեց բարձր զարբասի դէմ ծերունին,
Եւ ձեռքն առաւ տաւիդն, ամեն տաւիդներից մեծազին.
Զարկեց նըրան կճեայ սեանը, փշուր փշուր խորտակեց.
Դէպի ամրոց ու պարտէզներ սոսկալի ձայն արձակեց։

«Վայ քեզ, խրնիստ դու ապարանք, թնդ ոչ մի ձայն քաղց-
ըութեան,
Լարի հնչիւն, երգ չըլսուի քո յարկի տակ յաւիտեան,
Այլ ստրուկի երկչոստ քայլեր և հառաչանք, հեծութիւն,
Մինչ չար ողին վրէժիլընդրութեան քեզ դարձընէ սև աճիւն։

«Վայ ձեզ և դուք անուշաբոյր, գարնանագեղ պարտէզներ,
Տեսէք ահա մանուկ երգչի դէմքին վառած տանջանքներ.
Թող սորա տեղ դուք թառամիք, աղբիւրներդ ցամաքեն,
Գալ օրերին թող քար կտրած և ամայի ձեզ տեսնեն:

«Վայ քեզ, նզովքդ երգիչների, վայ քեզ, անարդ մարդասպան,
Արիւնապսակ փառքի համար մարտը լինի թող ունայն.
Թող մոռացուի քո անունը մշտագիշեր խաւարում,
Ինչպէս մահուան վերջին հառաջք, սին ձայն, ցնդի թող օդում»:

Ծերուկն ասաց, և երկինքը լսեց նորա պաղատանք.
Պարիսպները փոշի գարձած, կործանուած է ապարանք.
Բարձր մի սիւն դեռ վկայ է անցեալ աւուրց փառաւոր,
Այն էլ շուտով պիտի լինի մի փլատակ սրգաւոր:

Զըկայ բուրմունքն այդիների, շուրջը միայն անապատ,
Զըկայ վտակ, սաղարթախիտ չկայ մի ծառ ստուերաշատ,
Եւ չէ յիշում մի տարեգիր կամ երդ անունն արքայի.
Այսպէս ահա կատարուեցաւ անէծքն ահեղ ծեր երգչի:

43. Մ Ա Ս Ի Ս

Այս լերան բնիկ անունը, որ բոլոր Հայոց մէջ յիշա-
տակւում է, Մասիք և կամ Լերինք Մասեաց և առհասա-
րակ Մասիս է: Կոչւում է նաև զանազան անուամբ՝
Աւագ, Թուխ, Մթին, Սեաւ-Լեամն, և ուամկօրէն Մութ-
Աշխարհ, պարսկերէն՝ Նոյի լեռ և թուրքերէն՝ Աղըր դադ:

Սկզբից մինչև այժմ աւանդուում է Նոյի տապանի
սոյն լերան վրայ հանդչիլը և մարդկութեան խանճարուր
լինելը: Հետեւաբար մի սրբազն ուխտատեղի է համա-
րուած թէ կուպաշութեան և թէ քրիստոնէութեան դա-
րերում: Նշանաւոր է իւր բարձրութիւնով, որովհետեւ կով-
կասի էլքը սարագագաթից յետոյ բարձրութեամբ առա-

ջինն է Ասիայի մէջ. Սկ-ծովի եղերքից 16,334 ոտք
բարձրութիւն ունի:

Նշանաւոր է իւր կազմութեամբը. պօրփիւր քար է,
կարծես, միակտուր երկրիս երեսից ցցուած. ունի հրա-
բուխներ, որոնք դարերից ի վեր մարած են, բայց բոլո-
րովին չեն դաղբած: Լերան հիւսիսային ստորոտը տա-
րածւում է դէպի երասիս դաշտի արևելեան կողմը, իսկ
հարաւային կողմից մի նեղ լեռնադաշտով կցուած է մի
ուրիշ լերան, որ Փոքր-Մասիս է կոչւում: Լերան ստորոտը
աւագուտ է, միջավայրը բուսաբեր և քարուտ. շատ տեղեր
էլ անհեթեթ կազմուածքով լաւայ, որից երկում է, որ մի
սաստիկ ու զօրաւոր ցնցումից տակն ու վրայ է եղած.
Իսկ 12,000 ոտքից վեր համակ ձիւնապատ է: Հիւսիսային
կողմը 6,000 ոտք խորութեամբ մի գահավէժ պատուածք
կայ, որ կոչւում է Վիհ-Մասեաց: Սոյն վիի մի կողմը շի-
նուած է Ս. Յակոբայ վանքը, որ ս. Հայրապետի համե-
լու տեղն է: Պատմում է աւանդութեամբ, թէ Ս. Յակո-
բը, ուղելով Նոյի տապանի մի կտորից առնել, բարձրացել
է Մասիսը և այդտեղից աւելի չէ կարողացել բարձրանալ:
Այնտեղ մի փոքրիկ մենաստան կայ, որ մի լուսաղբիւր
պարտէզ ունի: Այդտեղից մի փոքր ցած գտնուում է Ակոսի
կամ Արկուուի գիւղը 4,982 ոտք բարձրութեան վրայ: Այս
գիւղում բնակւում էին 300 տուն հայեր և ունէին մի հին
եկեղեցի ու գերեզմանատուն հաղարամեայ տապանաքա-
րերով:

1840 թ. յունիսի 20-ին մի մեծ երկրաշարժ եղաւ
և անեց երկու ամիս: Բարձր Մասիսը ահեղ որոտմամբ
սկսեց ծուխ արձակել և ամենաբուռն դղրդմամբ բոլոր
լեան ու դաշտը սկսեց սասանուիլ. շատ շինուածքներ
կործանուեցան և երասի գետը, ալէկոծուելով, շատ տե-
ղերում իւր ընթացքը փոխեց: Մի կարմրագոյն ահեղ ժայռ,

լերան բարձրութիւնից փրթելով, Ա. Յակոբայ մենաստանի մէկ մասը և ամբողջ Ակոռի գիւղը կործանելով, գնաց այն մեծ վիճն ընկաւ: Մինչև այսօր երեսում են այն ողորմելի գիւղի և մենաստանի աւերակները, որի տեղը մի նոր գիւղ կառուցին նոր Ակոռի անունով: Այդաեղ 180 տուն հայ կայ:

44. Ա. Բ. Յ. Ք. Ս

Հին Արաքսը... զարմանալի քմահաճութիւններ ուներ: Անյիշելի ժամանակներից յամառութեամբ կռւում էր իր անհաւասար եզերքի հետ և, կարծես, դժգոհ էր այն նեղ շաւղից, որ գծել էր նրա ընթացքի համար նոյնքան քմահաճ բնութիւնը: Նա սիրում էր աղաստութիւն: Նեղ շաւղը վրդովում էր նրան:

Երբեմն լեռնային երկու զուգահեռու գոտիներ միաբանում էին և սեղմում էին նրան իրանց անձուկ և խորին ձորակի մէջ: Այդ միջոցին նրա կատաղութիւնը չափ չունէր: Ահաելի յորձանկներով զարկուում էր իր ապաւաժոտ ափերին, գոռում էր, գոչում էր, փրփրում էր, և կարծես, լսում էր նրա սոսկալի որոսմունքի մէջ այս ձակատագրական խօսքերը. «Նեղ է... խեղդւնւմ եմ»...

Երբեմն լեռնային գոտիների միաբանութիւնը խախտում էր, բաժանուում էին միմեանցից, հեռանում էին միմեանցից և բաց էին անում նրա առջև լայն, ընդարձակ տարածութիւն:

Այդ միջոցին նրա կամայականութիւնը չափ չունէր: Ազատուելով իր նեղ կիրճից մի չար վիշտի նման, անխնայ ողողում էր, յեղյեղում էր հարթ, կանաչազարդ ափերը, – և կամ, մի արբած հոկայի նման, երբեմն դէպի աջ էր թեքւում, երբեմն դէպի ահեակ էր խոտորւում, և երբէք ուզիղ ճանապարհով չէր գնում:

Նա աղաստութիւնը խելացի կերպով վայելել չգիտէր: Յանկարծ վիթխարի թևերը բաց էր անում, խլում էր ցամաքից մի կտոր հող և ճնշելով իր գով գրկի մէջ, կղզիացրնում էր նրան: Առժամանակ երեխայական սիրելութեամբ՝ սկսում էր փայփայել և խնամել իր խաղալիքը: Կղզին աճում էր, կանաչազարդուում էր, աճում էին թուփերը, վառում էին ծաղիկները: Երկնքի թռչունը հիւսում էր այնտեղ իր բոյնը, վայրի անսասունը սնուցանում էր այնտեղ իր ձագուկներին: Կղզին ներկայացնում էր մի գեղեցիկ փունջ, որով գուարձանում էր նա և, պմնասէր երիտասարդի նման, զարդարում էր իր հպարտ կուրծքը: Բայց յանկարծ, կարծես ձանձրանում էր նա. ալիքները փրփրալով բարձրանում էին, կոհակները կատաղաբար մոնչում էին և միքանի բոպէի մէջ կլանում, ոչնչացնում էին գեղեցիկ զարդը և նրա հետքն անդամ չէր երևում:

45. Թ. Ս. Բ. Թ. Ա. Բ

Մռայլ, ահաւոր ձորի անդընդում
Թարթարը անվերջ գոչում է, թնդում.
Հսկայ վիշտապի նըման կատաղած՝
Առաջ է վազում յուզուած, փրփրած.
Առաջ է վազում նա գալարուելով՝
Գետնի ապաւած կուրծքը ճեղքելով,
Բարձր մոնչում, գոչում է ուժզին,
Իր ահեղ ձայնով տատանում չորս դին.
Շարժում է տեղից լեռնոտ գետափը,
Ծեծում ու քերում ժեռ ու քարափը:

Նեղուած ափերից դաժան, անողոք՝
Գետը զայրացած բառնում է բողոք.

Բայց այնտեղ ահա ծառերը դալար
երկու ափերից կազմել են կամար
եւ խոնարհուելով՝ կարգում են յորդոր,
Որ հանգստանայ գետը ահաւոր.
Արևն էլ շողքը կապոյտ երկնքից
Գցել է ներքեւ ճիւղի արանքից,
Զուրը փայփայում, հետը խաղ անում...
Սակայն նա դարձեալ աղմուկ է հանում:

Եւ անդնդախոր ձորի եզերքին,
Ուր ամբանում են ծառերը երկին,
Նեղ, օձապտոյտ շաւղի վըրայով,
Տես, կարաւան է ընթանում ահով:
Զորը բաց արած ահեղ բերանը՝
Ուզում է կուլ տալ ողջ կարաւանը.
Մի թեթև շարժում, անզգոյշ մի քայլ—
Նա կըզլորուի անզունդը մոայլ.
Զայրագին, յուզուած թարթարը այնտեղ
Խեղդաման կանի իր զոհին անմեղ...

46. Ա. Ր Ա. Գ Ա. Ծ

Արագածը Հայոց միւս լեռներից զրեթէ բոլորովին
զատուած և ինքնազոււխ լեռանց մի խումբ է. չորս զըլ-
խաւոր կոնաձեկ կատար ունի, և զրանց ամենքի վրայ էլ
շքեղ լեռնադաշտեր կան: Այստեղ երկերը աւելի բուսաւէտ
ու արգաւանդ է, քան թէ Արարատի վրայ: Արա պատճա-
ռը աղբիւրների, դարաստափերի ու լեռնահովիտների առա-
տութիւնն է: Որչափ Մասիսի երկու լեռները աղքատ են
աղբիւրների կողմից, այնչափ Արագածը հարուստ է, թէ-
պէտ որա աղբիւրների մեծ մասը ցերեկուայ դարձիւներ

են, որոնք միայն հալուած ձիւնից են սնունդ առնում,
բայց ջուրը լերան ծակոտ քարերի միջից վայր է իշնում,
զտուում, ժողովում և դարատափերի վրայով ցայտելով,
դուրս է բղխում:

Արագածի կողերը ծածկող սկ ու ջրարբի հողի վրայ
ամառ ժամանակ սքանչելի գեղեցկութեամբ ծաղիկներ են
բուսնում: Արանց մէջ գեղին դոյնը, ինչպէս հրանունկն է,
խիստ շատ է. տեղ-տեղ կան նաև լեռնային պերճ ու շքեղ
կակաչներ, զանգակիկ և լուրջ-շուշան (իր) կերպ կերպ
կապոյտ երանդներով: Արագածի վրայ այս ալպեան բոյ-
սերը մայիսի վերջերն են սկսում ծաղկիլ, իսկ սեպտեմ-
բերի վերջերը ձիւնով ծածկուած են լինում:

* *

Արագածի զլիխին է մեր սուրբ Լուսաւորչի աղօթա-
տեղին, որտեղ, ասում են, մինչև հիմա էլ մի կանթեղ
անպարան կախուած է մշտավառ ու անտեսանելի և յի-
շեցնում է հայասէր Միածնին իւր սիրելի Գրիգորի ձեռ-
նամած այս կանթեղի տակից Հայոց համար օրերով թա-
փած արտասունքները: Այս սարն է, որ մեր թագաւոր-
ներն ու հայրապեաններն իրանց համար ամարանոց էին
ընարել:

Արագած սարի բարձրաւանդակներն են ահա, որ հիմա
էլ ամեն մէկը իրանց զլիխն հապարտ-հպարտ մի-մի հնու-
թիւն զրած՝ կարծես ուզում են միմեանց գէմ իրանց գե-
րազանցութիւնը ցոյց տալ:

Մի կողմից Ամբերդայ վանքն է մի քարի վրայ՝ մի
անդնդախոր ձորի զլիխն ուռած բազմել, մի երկար ու
ձիգ պարիսպ էլ մինչև Արագածի ծայրը տարածել, որ
իւր մէջ ամարանոց եկող թագաւորներին ապահով պահի,
միւս կողմից Տեղերու վանքն է զլուխը ցցել և յիշեցնում
մեզ, որ ինքը մի ժամանակ արժանի է եղել հովերի

մէջ էջմիածնի շոքից ազատելու մեր սուրբ հայրապետներին: Աջ կողմից Բիւրականը, Կոշը, Ազարակը, մեր միտքն են բերում մեր նախնի իշխանների վերունիստը, նրանց ամառն անցկացնելու տեղերը. ձախ կողմից Փարքինու Լազրվանն են մեր գրականութիւնը ծաղկեցնող Ղազար Փարքեցուն յիշեցնում: Յօշականը, Արագած սարի ստորոտի սրբազն աւանդապահ գիւղերից մէկը, իւր մէջ ամփոփում է մեր տառերը գտնող Սուրբ Մեսրոպի խնկելի նշանները:

47. Ծ Ա Ղ Կ Ա Զ Ո Ր

(Աւանդութիւն)

Գարուն էր. ձիւնը, սառուցը հալուած,
Ամեն տան դրուներ, երթիկներ բացուած.
Արև վերէն վայր նայում էր հաշտ.
Ծիծաղում էին ձոր, հովիտ ու դաշտ:
Հայոց աշխարհը սիրուն է գարնան,
Նա եղեմական դրախտի է նման.
Սոխակ ու արտուտ թրփի, արտի մէջ
Օրնիբուն սաղմոս կարդում են անվերջ:
«Քնյըրեր, խաղալու ձորն ի վայր երթանք»,
Ասացին իրար անմեղ հայ կուսանք.
Պահծու, երփններանգ հազան նոքա շոր,
Պըճնազարդ գնացին ուղիղ դէպի ձոր:
Գոյն-գոյն հալաւով ձորը գոռուեցան,
Խաղով, պարերով կուշտ զուարձացան.
Պանիր, կաթ ու հաց հետերն ունէին,
Խորտիկի նըստան ժամ միջօրէին:
Ինչպէս չար բաղէն անմեղ թրոչնակին,
Այնպէս դարանած գունդ չարսիրտ պարսկին

Ական թօթափել աղջըկանց վըբան
Սուր ու զէնքերով արագ թափեցան:
Հայ պարկեշտ կուսանք՝ խոստման մըտերիմ,
Որ տուել էին հայ փեսաներին,
Մահաբեր սըրէն չի սարսափեցան,
Արիւնաթաթախ դետին գլորուեցան:
Արև իջաւ սարերի թիկունք:
Մայրերը ասին. «Ո՞ւր են մեր աղջկունք»:
Այսպէս հոգետանջ ու մըտամոլոր
Շուտ-շուտ վազեցին նոքա դէպի ձոր:
Ամեն մի բլուր, ամեն մի առուակ
Ծածկել էր աղջկանց զարդարուն դիակ:
Ամեն մի տերե, ծառի ամեն ծիլ
Ներկել էր աղջկանց արեան ջինջ կաթիլ:
Ծնողք շատ լացին ու չըսփոփեցան,
Հնկան գետնի վրայ ու խոր քընեցան.
Միւս առաւօտը աչքերն որ բացին,
Տրտմել դադրեցան ու էլ չի լացին.
Ամեն մի բլուր, ամեն մի առուակ
Ծածկել էր վարդը, շուշան, մանուշակ:
Ամեն մի տերե, ծիլ, բանջար ու խոտ
Բուրկենի նըման էին խընկահոտ:
Ու այնուհետև ամեն նոր գարուն
Չորն այն ծաղկունքով է միշտ զարդարուն.
Եւ այդ չարաշուք օրից մինչ այսօր
Չորի անունը մնաց ԾԱՂԿԱԶՈՐ:

48. Խ Ա Զ Ո Ր Զ Ա Ն Ն Ե Ր

Հայոց աշխարհի նշանաւոր գիւղերը կամ աւանները
եթէ պատմութիւնն էլ մոռացած լինի իւր էջերի մէջ տե-

դաւորելու, բանասէրն ինքը կարող է նորանց պատմութիւնն իմանալ, եթէ սկսի ման գալ և քրքրել այդ գիւղերի հնութիւնները:

Ոչ միայն ներկայ՝ աչքի առաջ եղած տեղերն ունին իրանց անմեռ պատմութիւնը վանքերի, աշտարակների ու աւերակների վրայ փորագրուած, այլև շատ ամայի գաշտեր մի տեսակ յիշատակարան ունին: Մի քար, մի բլուր, մի այր գոնէ կըգտնուի, որտեղից մի նորութիւն լոյս կըտեսնի. քարը շրջիր, վրան մի արձանագրութիւն կըգտնես. այրը մտիր, մի հնութիւն դուրս կըբերես. բլուրը քանդիր, մի նշանաւոր բան կըհանես: Շատ ժամանակ չէ անցկացել, որ Բիւրակնայ մօտ, ամայի գաշտում, դուրս եկաւ Արտաշէս թագուարի սահման դրած քարերից մէկը և հիմա տնկած է Բիւրակնայ եկեղեցու մօտ: Եթէ այս վերոյիշեալ հնութիւններն էլ շարժելու չլինիք, բաւական են մեզ գերեզմաններն ու խաչարձանները: Շատ սակաւ գիւղ կըլինի, որտեղ մի տապանագիր, մի հնութիւն չքարողէ, իսկ խաչարձանները պարզ ցոյց են տալիս, որ այստեղ, իրանց տակին, թաղուած են այս աւերակի, երբեմն գուցէ շէն քաղաքի, իշխաններն ու պատուաւոր անձինքը:

Ի՞նչ է եղուարդը... մի փոքր գիւղ, մի քանի տուն հայերից կազմուած: Բայց մօտեցիր եկեղեցուն, մօտեցիր այստեղի հարիւրաւոր խաչքարերին և ինքդ կըպնդես, թէ այստեղ մի ժամանակ նշանաւոր տեղ է եղել: Դեռ գիւղը չմտած, հեռուից աչքիդ են ընկնում պատերազմի պատրաստուած, կարգով կանգնած զինուորների նման, բազմաթիւ խաչարձաններ: Պարզ լուսաւոր գիշերը իրանց հրաշալի տեսքով հիացնում են նայողին: Օտարականը առաջուց կըսարսափի էլ, կըկարծէ թէ արդարե պատերազմի դուրս եկած բանակ է սա, որ սպասում է թշնա-

մու հետ ճակատամարտելու: Սովոր մարդն անգամ մի փոքր ժամանակ իւր աչքի տեսածի վրայ կըկասկածի. այնքան բնական են այդ արձանները:

49. Ա հ ե ր Ա կ

Որպէս վաղեմի մի աւանդութիւն, կամ շքեղ երազ անմեղ մանկութեան, կենդանանում է այսօր իմ մտքում Խրոխտ աւերակը նախնեաց մեծութեան.

Այստեղ բեկորներ վսեմ արուեստի, Այստեղ յիշատակն արքունի փառաց, Ե՛ւ վկայարան սրբազն ուխտի, Ե՛ւ տխուր հետքը մեծաշուք կենաց... Ո՞հ, այսպէս ողջ մեր կեանքն է վաղանցիկ, Ողջը լոկ ծաղը է անսիրտ բնութեան. Ե՛ւ ոէր, և հրճուանք, համայն գեղեցիկ Զոհ է արեի և մոռացութեան...

50. Փ Ո Թ Ո Ր Ի Կ

Ծովը հանդարտ էր: Նաւակը լողում էր առանց օրօրուելու: Առաջին անգամն էր, որ ես ծովային ճանապարհորդութիւն էի անում, և իմ ուրախութեանը չափ չկար: Ապանը նոյնպէս լաւ տրամադրութեան մէջ էր երկում: Բայց խաղաղութիւնը երկար չտեսեց: Հարաւային քամին, որ սկսեց փշել արել ծագելուց յետոյ, սկզբումը մեղմ էր, հետզհետէ սաստկացաւ: Ծովի հանդարտ մակերեսոյթը սկսեց յուզուիլ: Նաւաստին նիրհում էր: Ապանը առաւթիւկը նրանից և հմուտ ձեռքով սկսեց ինքը թիավարել: Նաւաստին ոչինչ չղգաց: Ալիքներն այն աստիճան

բարձրացան, որ ջուրն այժմ սկսել էր ցայտել նաւակիր մէջ: Նաւաստին դարթնեց: Նա յօրանջելով գլուխը վեր բարձրացրեց, ձեռքով շինեց ճակատը, կարծես աշխատում էր բոնի կերպով քունը փարատել իւր աչքերից: Նա զարմացած նայեց իւր շուրջը: Ներբովթ և Գրգուռ լեռների գագաթների վրայ երեսում էին մոխրագոյն ամպեր: Մշուշը պատել էր այն կողմը, որ հետզիտէ մոայլուելով թանձր մառախուղի կերպարանք էր ստանում: Այդ տեսնելով, նաւաստիի հաստ, շագանակի գոյնով շրթունքները հեղնաբար յետ քաշուեցան և երեան հանեցին նրա խոռը, սպիտակ աստամները:

— Օ՛հօ, — բացականչեց նա, — շուտով մի լաւ փոթորիկ կ'ունենանք...

Մառախուղը հարաւային կողմից սկսեց աւելի և աւելի տարածուել և բոնեց հորիզոնի մեծ մասը: Բայց աղօթարանի կողմից նոր ծագող արեգակը ծիծաղում էր: Երբեմն կաթեկաթում էին անձրեկի խոշոր կաթիլներ, թէ և մեր վրայի երկինքը դեռ պարզ էր. ջերմ և հեղձուցիչ գիշերից յետոյ այդ երեսյթը այդ կողմերում անսովոր բան չէր:

Ասլանը դեռ ուժեղ կերպով թիավարում էր: Նաւաստին կանգնած նայում էր նրան և, կարծես չէր ուզում զրկել նրան այդ փոքրիկ զուարձութիւնից:

— Շնոր տուր դէպի աջ, նկատեց նա. աշխատիր մօտենալ եզերին, եթէ ոչ՝ յորձանքների մէջ կ'ընկնենք: Յետոյ դառնալով ինձ հարցըրեց.

— Դու լողալ իմաննում ես:

— Ոչ, պատասխանեցի ես:

— Երբ մի քանի բոպէից յետոյ այս նաւը ջրի տակը կը գնայ, դու բոնիր այստեղից: — Նա սառնարտութեամբ ցոյց տուեց իւր գօտին:

Ես սոսկացի:

Նաւաստին անվրդով կանգնած էր և ոտքը գրել էր նաւակի կողքի վրայ, կարծես նրա գօրաւոր ճնշումով աշխատում էր պահպանել նաւակի հաւասարակշութիւնը, որ այդ միջոցին, մի փայտեայ կոտրած շերեփի նման ծփում էր զայրացած կոհակների մէջ: Հարաւային տաք քամին, որ անցնելով Միջագետքի արևակէղ անապատներից և փոքր ինչ զովանալով Տաւրոսի լեռների վրայ, հասնում էր մինչև այստեղ, — այդ բօթաբեր քամին, աւելի և աւելի սաստկանալով, փոքր էր մնում որ փշրէր բարակ ձողը, որի գլխին, աղմուկ բարձրացնելով, ծածանուում էր Բերգէն-Օղու կարմիր և սե գոյնով դրօշակը:

— Տներ ինձ թիակը, զու յոզնեցար, ասաց նա Ասլանին, տոնելով նրա ձեռքից թիակը: — Իսկ զու, իմ զառնուկ, անզործ մի՛ մնար, վեր առ այդ գօտը և ջուրը դուրս ածա:

Ես վեր առայ փայտեայ գօտը և սկսեցի դուրս ածել ջուրը, որ այդ ժամանակ աւելի առատութեամբ թափւում էր նաւակի մէջ:

Արեգակն այժմ բոլորովին ծածկուեցաւ: Մառախուղը, հետզիտէ աճելով և ընդարձակուելով, բոնել էր ամբողջ հորիզոնը: Մի քանի քայլ հեռու ոչինչ չէր երեսում. կղզին անհետացաւ մեր աչքերից: Անձրեն սկսեց սաստկանալ: Վերեկից հեղեղ, ներքեկից ալէկոծութիւն:

Երբեմն լուռում էր զանգականարութեան մեղմ ձայն, որ խլանում էր քամու կատաղի մոնչիւնի մէջ: Զանգակի այդ ախուր հնչիւնները լսելի են լինում միայն հանդիսաւոր թաղումների ժամանակ: Այդ ձայնն ինձ վրայ խիստ սոսկալի աղղեցութիւն գործեց: Միթէ շուտով պիտի կատարուէր մեր թաղումը. միթէ շուտով պիտի պատառուէր ջրային անդունդը և մեզ տանէր սառն գերեզմանի մէջ:

Ասլանը մտայոյդ էր: Նաւաստին եռանդով մաքառում
էր փրփրած ալիքների հետ: Իմ մէջ սիրտ չէր մնացել:
— Եյդ ի՞նչ զանգակի ձայն է, հարցընց Ասլանը:
— Այնտեղ, կղզու վերայ, աղօթում են, պատասխա-
նեց նաւաստին: Արեղաները սովորութիւն ունին, սաստիկ
ալէկոծութիւնների ժամանակ, մօտենալ ափերին և խմբով
թափօր կատարել:

— Ուրեմն մօտ ենք կղզուն:

— Շատ հեռու չենք:

Ես փոքր ինչ հանգստացայ:

Պէտք էր նաւակի մէջ գտնուած բոլոր ծանրութիւն-
ները ածել ծովը: Նաւաստին նետեց կղզովը, որի մէջ
զանազան մրգեր էր տանում աթեղաներին: Տանձերը,
խնձորները մի քանի վայրկեան ծփացին կոհակների վրայ,
յետոյ անհետացան: Նետեց հացի պաշարը, որ Ծովիկը
դըել էր մեղ համար: Ասլանը նետեց նորին Սրբազնու-
թիւնից իբրև յիշատակ ստացած փողոսկրեայ «Տիրուհին»:
Ես էլ յիմարացայ, նետեցի ձեռքիս փայտեայ գոտը:

— Խելացի բան տեսար, նկատեց ինձ նաւաստին
ժպտալով:

Ամեն ըոպէ սպասում էինք խորասոյզ լինելուն: Երբ
մօտեցանք մի կողմից կղզուն, միւս կողմից ծովափին,
նաւաստին ասաց. «Վատանզը անցած պէտք է համարել»:
— «Բնդիակառակն հէնց այժմ է գլխաւոր տագնապը»
նկատեց Ասլանը:

— Ի՞նչն:

— Եյժմ քամին փչում է արևմուտքից և ալիքները
մղում են դէպի արեկը, այսինքն դէպի մերձակայ ծովեղ-
ը: շուտով մեզ կը հեռացնեն կղզուց և, նաւակը զարկե-
լով ցամաքի ժայռերին, կը փշըն:

— Ես պիտի թողնեմ, որ տանեն և փշըն:

Նա առաջարկեց թողնել նաւակը և լողալով անցնել
կղզին, որ աւելի մօտ էր, քան թէ ցամաքը:

— Ես նպատակ չունիմ թրջուած կատուի նման վան-
քը մտնել, պատասխանեց Ասլանը:

— Ուրիշ հնար չկայ:

— Կայ:

— Նաւակը շուտով մեղ հետ կը փշրուի ժայռերի վրայ:

— Եթէ այս ուղղութեամբ տանենք, չի փշրուիլ:

— Այստեղ ուժգին յորձանք կայ:

— Հէնց այդ յորձանքը կ'ազատէ մեզ:

— Գուշ համոզուած էք:

— Ինչպէս երկու անգամ երկու...

— Տեսնենք...

Թիառութիւնը և փորձը վիճում էին միմեանց հետ:
Ասլանը, նայելով ալիքների ուղղութեանը, քամու ընթաց-
քին, այդ համոզմունքն էր կազմել: Իսկ նաւաստին հիմ-
նուելով իւր փորձերի վրայ, բոլորովին հակառակ կար-
ծիք էր յայտնում: Նա դարձեալ առաջարկում էր թողնել
նաւակը և լողալով ընկնել կղզին: Թէ այսպէս և թէ այն-
պէս, տագնապը մեծ էր:

Նաւաստին դադարեց վիճելուց: Նա թէօրիայի մարդ
չէր: Յանկարծ այն տեսանք, որ նա, նաւակից կապած
եր՝ կայն պարանի ծարը ձեռին բռնած, նետուեցաւ ջրի
մէջ: Սկզբումը բոլորովին խորասոյզ եղաւ նա մի ծանր
խարիսխի նման, որ դէպի յատակը գնալով, կամնդնեցնում
է մըրկածուփը: Ես սաստիկ վախեցայ. կարծում էի՝ կո-
լաւ նա: Բայց մի քանի ըոպէից յետոյ՝ կրկն յայտնուե-
ցաւ նա և սկսեց լողալ դէպի կղզին, իւր յետերից քաշ
տալով նաւակը:

Ասլանը շուարած մնաց:

Կղզին այժմ պարզ երկում էր: Մառախուղի միջից

Ես նշմարում էի արեղաների մոայլ կերպարանքները,
որոնք, ափի մօտ կանգնած, իրանց ջերմնուանդ աղերսա-
ւոր ձեռքերը տարածել էին դէպի երկինք:

Բերգէն-օզու ջանքերն իզուր անցան, ասաց Աս-
լանը, և մի անսովոր անհանգստութիւն երկաց նրա դէմ-
քի վրայ. — պարանը կարուեցաւ...

Այնուհետեւ ինչ պատահեց, ինչ կատարուեցաւ մեզ
հետ, ես մինչեւ այսօր էլ չեմ կարողացել ճիշտ կերպով
պատկերացնել իմ մտքում: Այսքանը միայն ազօտ կերպով
յիշում եմ, որ կոհակները կրկին բարձրացան և ես, ինչ-
պէս երազի մէջ, զգացի, որ նաւակը այլ ևս իմ ուսների
տակին չէր. ես ընկղմուած էի ջրի մէջ. մրրկածուփ ալիք-
ները խաղացնում էին ինձ, երբեմն դէպի յատակը տա-
նելով, երբեմն դէպի վեր բարձրացնելով. այդ ժամանա-
կը, մի աներևոյթ զօրութիւն, կարծես, ինձ պինդ բռնած
ունէր: Երկար մենք տարութերւում էինք ջրային տարերքի-
մէջ, բայց զօրութիւնը ինձանից չէր բաժանւում:
Այդ զօրութիւնն ինձ դուրս հանեց կղզին, բոլորո-
վին անզգայացած և կիսաշունչ զրութեան մէջ: Եւ դա
ուրիշ ոչ ոք չէր, բայց միայն իմ բարեկամը, Ալանը:
Երբ աչքերս բաց արի, երբ փոքր ինչ ուշքի եկայ, ինձ
մի խումբ աբեղաներից շրջապատուած դասյ: Նրանք ան-
դադար փառք էին տալիս Աստուծուն, որ ազատուեցանք:

51. Ա. Մ Ի Ր Ա Ն

1.

Մեզնից ոչ հեռու, Վըրաց աշխարհում,
Կովկաս լեռների լանջերից մէկում,
Ուր Լեախալայ գետն է հոսում փրփրած,
Քարափի գլխին հովիւ էր նստած:

Նա նըւագում էր իր սալամուրին *)
Ու հանգիստ տալիս իր ոչխարներին:
Քաղցր հնչիւնը սալամուրիի
Եւ կարկաջիւնը արծաթ ջրերի,
Իրար խառնուելով ընութեան ծոցում,
Մի կախարդական երգ էին կազմում:
Անուշ գեղգեղից ձորեր, սար ու քար
Ըզմայլում էին, ձայն տալիս իրար:
Զահէլ վրացին երգից տաքացաւ
Ու իր խաչներին խապառ մոռացաւ:
Հօտի առաջնորդ երկու այծերը
Քաշուեցին հեռու, դէպի լեռները,
Ոչխարներին էլ իրանց հետ տարան,
Հովիւի աչքից հեռացան, կորան:

2.

Եւ հրապուրուած հովիւն ըսթափուեց,
Թողեց սրինզը, իր շուրջը նայեց.
Բայց հօտը չկար... Իսկոյն նա իջաւ
Քարափի գլխից, մահակը առաւ,
Դէպի լեռները գնաց վագէվազ,
Ցիրուցան հօտը ժողվեց հազիւհազ:
Բայց չարաճը երկու այծերը,
Տըմբալմբացնելով ձիգ մօրուքները,
Երկայն պոզերը օդում շարժեցին,
Կամակոր ձայնով պինդ մըկը կացին:
Ապա թոչելով քարափից-քարափի,
Վազեցին, հասան Լեախալայի գետափ:
Յովիւը յոգնած՝ վազում էր, վազում,—
Ճարպիկ այծերին հասնել չէր կարում:

*) Սրինզ:

Գետի եզերքից այծերը փախան,
Վաղեցին ձորը ու աչքից կորան,
Հովիւր քրտնած՝ վազում էր, վազում, —
Բմբոստ այծերին գտնել չէր կարում:

3.

Եւ մեր հովիւր յոդնած, շնչառպառ,
Ահա բարձրացաւ մի սարի կատար.
Երկար աչք ածեց, նայեց իր չորսդին,
Փախած այծերը դարձեալ չըկային...
Եւ անդնդախոր ձորերից յանկարծ
Մի ահեղագոչ գոռիւն որոտաց.
Ահ ու սարսափից հովիւր ցնցուեց
Եւ արձան կտրած, ականջը լարեց:
Այդ գարհուրելի ձայնիցը դաժան,
(Որ ոչ որոտ էր և ոչ էլ գազան),
Լեռներ ու ձորեր էին դզրդում,
Եւ դզրդոցը երկինք հասցընում:
Իրան սիրտ տալով՝ հովիւր ջահէլ
Դէպի այդ ձայնը ըսկըսեց քայլել:
Քանի հովիւր առաջ էր գնում,
Այնքան այդ ձայնը հուժկու էր դառնում:

4.

Եւ նա պատեանից դաշոյնը հանեց,
Մի մեծ քարայրի առջեռում կանգնեց.
Ալա երեսը խաչակընքելով՝
Ներս մտաւ այրը ահ ու սարսափով:
Եւ ի՞նչ է աեսնում: — Յատակի վըրայ
Պառկած՝ գոչում է մի մեծ աժդահայ...
Հովուի ծնկները ահից դողացին,
Դիմի մազերը բիդ-բիդ ցցուեցին...

Հաստ շղթաներով կապուած, կաշկանդուած,
Հսկան վոռուած էր, գետնին ամրացած:
Նա մոնչում էր, ուժգին հառաշում,
Ահարկու ձայնով այրը տառանում:
Ճղնում էր փշրել շղթան ամրակուռ,
Բայց նըրա ջանքը անցնում էր իզուր:
Նըրա մի կողքին մի թուր էր ընկած,
Իսկ միւս կողքին էլ դրած էր չոր հաց:
Շղթայած ձեռքը թըրին էր մեկնում,
Բայց նա հեռու էր, ձեռքը չէր հասնում,
Ամուր կապանքը ձգում էր կրկին,
Յուսահատ գոչում, հառաշում ուժգին:

5.

Հովիւր դարձաւ և ուզեց փախչել,
Բայց հսկան յետքից ըսկըսեց կանչել.
«Մի վախիր ինձնից, դու, ով բարի մարդ.
Ե'կ, ինձ մօտեցիր անվախ ու հանդարտ»:
— «Ասա ինձ, ով ես, վիթիսարի հսկայ,
Զար ոգի՛ ես գու, թէ մի քրիստոնեայ»:
«Ես նա եմ, որը ձեղքեց ամպերը,
Սլացաւ վերև դէպի աստղերը.
Ես նա եմ, որը երկինք վերացաւ,
Եւ աստղերի մէջ փառքով բազմեցաւ.
Ես նա եմ, որը չըհընազանդուեց,
Տիրոջ պատուերը ոտնատակ տըւեց.
Ես նա եմ, որը երկնքից խլեց,
Անշէջ կրակը ու աշխարհ բերեց. —
Ինձ արգելուած էր, բայց ես գողացայ,
Այդ պատճառով էլ այս օրին հասայ.

Ես նա եմ, որին ամբողջ Վըրաստան
Վաղուց յիշում է, կոչում Ամիրան»...»

6.

Հենց Ամիրանի անունը լսեց,
Հովհանն իսկոյն երկիւղից ցնցուեց.
Երա աչքերը յանկարծ մթնեցին,
Նա տատանուեցաւ ու փոռեց զետին:
Իսկ Ամիրանը առաջուայ նման,
Ուժգին գոչում էր, ձրդըզում շղթան:
Երկար դարերով հսկան բանտարկուած,
Իր մթին այրում շղթայով կապուած,
Արցունք էր թափում, դառըն հեկեկում,
Աստուծոյ արւած պատիմքը կրում:
Եւ հըրեշտակը երկնից ամեն օր
Բերում էր այրը մի հացի կտոր.
Իսկ եօթը տարին հազիւ մի անգամ
Քարայրի պատը բացւում էր առժամ,
Արևի շողքը քիչ ներս էր մտնում
Ու դարձեալ փախչում, բանտը մթնանում...»
Այսպէս Ամիրան իր մեղքի համար
Գետնին շղթայուած՝ տանչում էր երկար:

7.

Երբ-որ հովիւը քիչ ուշքի եկաւ,
Հսկան խրախուսեց, նրան սիրտ արւաւ:
Տեսնելով նրա դառը տանջանքը,
Հովիւը յայտնեց իր համակրանքը.
«Թէ ես կարենամ, թէ ձեռքովս դայ,
Անշուշտ քեզ կօդնեմ, տառապեալ հակայ».

«Սուրբս մօտեցրու... Սուրբս թէ ինձ տաս
Ես կըխորտակեմ այս ծանր զղթաս»:
Բարի հովիւը երկար չարչարուեց:
Բայց սուրբ ծանր էր, տեղից չըշարժուեց:
— «Օ՛, աղաչում եմ, շուտով տուն վազիր,
Պարան կամ շղթայ բեր, որրիս կապիր.
Ես այն պարանով սուրբս կըքաշեմ,
Կըմօտեցնեմ ինձ, շղթաս կըփշրեմ.
Եւ երբ ազատուեմ իմ կապանքներից,
Թանկագին փրկանք կըստանաս ինձնից.
Սակայն զգոյշ կաց, որ վերագարձին
Զըխոսես բնաւ, չըխօսես ճամպին...»:

8.

Հովիւը իսկոյն ճանապարհ ընկաւ,
Վազէվազ գնաց, իրանց տուն հասաւ:
Նա առաւ իր հետ հաստ-հաստ պարաններ
Ու մի քանի հատ ամուր շղթաներ.
Անխօս, լուռ ու մունջ գուրս ելաւ տանից,
Դէպի քարայրը ըշտապեց նորից:
Նա գեռ չէր հասել հսկայի բանտին,
Երբ որսորդները նրան բռնեցին.
«Է՞յ, ուր ես տանում շղթան, պարանը,
Շուտ ասա, թէ չէ բնըրդ է քո բանը»:
Հովիւը լուռ էր, ոչինչ չէր խօսում:
Բայց որսորդները նրան չարչարում,
Քաշքշում էին, ծեծում անխնայ,
Որ հարց ու փորձին նա պատասխան տայ:
Համբերութիւնից հովիւը ելած,
Դաշոյնը հանեց, գոչեց կատաղած.

«Փուճ սրիկաներ, ինձ հանգիստ թողէք,
Թէ չէ բոլորիդ կըմորթեմ մէկ-մէկ...»

9.

Յանկարծ երկինքը ուժգին որոտաց,
Ամբողջ աշխարհը թնդաց, դղրդաց.
Լեռան գագաթից պոկուեց մեծ ժայռը,
Գըլորուեց ներքեւ, դէպի քարայրը.
Եւ որսորդները երկիւղից փախան,
Նապաստակի պէս ձորում կուչ եկան:
Վազեց հովիւը, վազեց շնչառպառ,
Հասաւ այրի մօտ... բայց ճանպայ չըկար.—
Վիթխարի ժայռը անյողողող կուրծքը
Թէքել էր այրին ու փակել մուտքը:
Եւ յուսահատուած հովիւը լացեց,
Երկար հեկեկաց, հսկային կանչեց,
Բայց ժայռի տակից պատասխան չըկար,
Լեռներն էին լոկ ձայն տափս իրար,
Միանում հովուի որտառուչ ողբին,
Անդրադարձնում նոյն ողբը կրկն...

10.

Եւ Ամիրանի տխուր վախճանը
Այժմ էլ յիշում է ողջ Վրաստանը.
Մինչև հիմա էլ կովկաս լեռներում,
Որտեղ կազբեկն է երկինք բարձրանում,
Մեր հովուի տարած պարանն ու շղթան,
Գետնին թափթրփած կան ու կըման:



ՀԱՏՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ

Հայի կեանից ու պատմոքիւնից:

Ա

52. ՄԱՐԴՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

Գեղեցիկ էր նախաստեղծ աշխարհը, երբ դեռ նոր
էր գոյացել Աստուծոյ խօսքով. բայց նորա վրայ գեռաս
մարդ չկար և ոչ-ոք էր, որ նորա գեղեցկութիւններով
Պուարձանար: Յերեկը սկայծառ արել բարձրանում էր եր-
կինքը և թափում էր երկրի վրայ լոյս ու ջերմութիւն.
Կիշերը երկում էր համեստ լուսինը և փայլում էին ան-
համար աստղեր: Երկնքի կապոյտ կամարը, զարդարուած
ոսկիխափայլ և արծաթանման ամպերով, բարձր տարածում
էր իւր հրաշալի և անսահման վրանը: Ալեկոծւում և վրդով-
ւում էր անեղը ծովը: Բարձրագոյն լեռները իրանց ձիւ-
նափայլ գագաթներն ամպերից վեր էին բարձրացնում:
Ամենայն կողմ հոսում էին յորդառատ գետեր և եռում,
ցանում էին իրանց ցոլմունքները՝ ջրվէժներ կազմելով.
Փրփրալից առուները խոխոջում էին, հոսելով անուշահոտ
և հիւթալի խոտերի վրայով. բարձր արմաւենիները շար-
ժում էին իրանց հպարտ կատարները. ստուերաշատ ան-
տառները խօսակցում էին թեթև զովաբեր զեփիւոի հետ.
Կանաչ դաշտը, լցուած փարթամ ծաղիկներով, անուշա-

հոտութիւն էր բուրում։ Սիրունիկ կենդանիները ցատքուում էին և զուարձանում։ խայտապիսակ թռչունները և փայլուն միջատները, աղամանդի նման ցողալով, սլանում էին օդի մէջ. սոխակը հնչեցնում էր իւր բաձրահնչիւն երդը...բայց դեռ չէր ստեղծուած մարդը և ոչ-ոք էր, որ վայելէր աշխարհիս բոլոր ճոխութիւնները։

Արեգակը, լուսինը և աստղերը ընթանում էին իրանց համար սահմանած ճանապարհով, ոչինչ չնկատելով և ոչինչ չզգալով, մինչև անդամ իրանց սեպհական հրաշալիքներին անտեղեակ։ Վարդը պճնուում էր և բուրում, առանց իմանալ կարողանալու, թէ որքան գեղանի է ինքը. սոխակի երգը չէր քաղցրացնում ոչ-ոքի լսելիքը։ Կենդանիք թէ ամենայն ինչ տեսնում էին ու լսում, բայց չէին հասկանում ոչ բնութեան գեղեցկութիւնը և ոչ այն ամենիմաստ օրէնսդրութիւնը, որով նա ստեղծուած էր. նոցանից ոչ մէկը չէր կարողանում մինչև անդամ գիուլը գէպի երկինք բարձրացնել և երախտազիտութեամբ ասել։ «Ստեղծող, որքան մեծ ու ողորմած ես Դու, ինչքան սիրում եմ ես Քեզ»։

Տեսնելով՝ թէ որքան գեղեցիկ է աշխարհս, Աստուած, ի անսպառ սիրով, կամեցաւ ստեղծել մի էակ, որ իւր անման հոգով նմանուէր տիեզերքի Արարչին և կատարէր նորա օրէնքները ոչ թէ կարիքից ստիպուած, որպէս միւս անբան արարածները, այլ հասկանալով այդ օրէնքի զգութիւնը և քաղցրութիւնը,—որ ձգտէր գէպի ճշմարիտ բարին ու գեղեցիկը և գիտակցօրէն ու կամաւ հրաժարուէր չարից ու յանցանքից։

«Ստեղծենք մարդ մեր պատկերի և նմանութեան պէս», ասաց Տէրը, և ստեղծելով հողից անշափ գեղեցիկ մարդին, ներշնչեց նորա մէջ իւր Աստուածային բերանից բանից հոգի։ Մարդը բացաւ աչքերը, զարմացած և հիացած նայեց աշխարհին և նորա հոգին, զգալով իւր Աստուած-

ծային ծագումը, լցուեցաւ երջանկութեամբ, երախտապարաութեամբ և սիրով գէպի իւր Ստեղծողը։

«Զնայելով որ այսքան գեղեցիկ է երկիրը, բայց մարդս միայնակ տխուր կ'ապրի նորա վրայ», մտածեց Աստուած և, կամենալով կատարեալ կացուցանել մարդու բաղդաւորութիւնը, ստեղծեց նորա համար մի գեղեցիկ կողակից։ Ստեղծագործութիւնը վերջացնելով՝ Աստուած ասաց առաջին մարդկանց. «Սիրեցէք միմեանց, աճեցէք և բազմացէք, լցրէք երկիրը, տիրեցէք նորան. ամենայն՝ ինչ որ նորա վրայ կայ, ձեզ եմ շնորհում»։

53. ՄԵՐ ՆԱԽԱՀԱՅՐԵՐԸ

I

Հզօր, հսկայակազմ և երկայնակեաց էին նախաստեղծ մարդիկ. նոքա ապրում էին հարիւր, երկու հարիւր, երեք հարիւր և աւելի տարիներ։ Դարերի ընթացքում մի նախահօրից առաջանում էր մի բազմանդամ ընտանիք, բաղկացած հայրերից, որդիներից, թոռներից, ծուռներից... կազմակերպում էր մի ամբողջ համայնք։ Համայնքը կառավարում էր ընտանիքի հայրը, որ նահապետ էր կոչւում։ Նահապետը համայնքի համար և՛ գատաւոր էր և քահանայ, և՛ խնամակալ էր և իշխանաւոր. նա էր, որ ըերանացի աւանդում էր զերգաստանի անդամներին Աստուածային պատուիրանները. նա էր որոշում իւրաքանչիւրի գերը համայնքի առօրեայ կենցաղավարութեան մէջ. նա էր պատժում և վարձատրում։

Երբ-որ համայնքի անդամները չափազանց բազմանում էին և նախահայրը տեսնում էր, որ նոքա անկարող են երանց բնակութեան շրջանում անկարօտ ապրել. նա ացդ տեղը տալիս էր իւր որդիներից մինին, իսկ ինքը միա-

ցածների հետ անցնում էր մի ուրիշ տեղ: Այդաեղից նոյն կարգով նահապետները անցնում էին մի երրորդ, չորրորդ հինգերորդ տեղ... Այսպիսով կազմակերպում էին նոր գերդաստաններ, նոր համայնքներ: Այս տեղափոխութիւնները առանց դժուարութիւնների չէին կատարուում. նախական դարերում ոչ գիտութիւն կար, ոչ արհեստ. չկային ոչ գործիքներ, ոչ զենքեր. իսկ կուսական բնութիւնը ամենայն քայլափոխում նորանոր խոչընդուներ էր յարուցանում մարդու առաջ: Ովոր կարողանում էր աւելի յաջողութեամբ կռուել այդ խոչընդուների դէմ, ովոր գերազանցում էր իւր նմաններին ֆիզիքական ուժով, արտաքին տեսքով և անխորտակելի բնաւորութեամբ, նա, բնականաբար, իւր իրաւունքները տարածում էր ոչ միայն իւր գերդաստանի, իւր համայնքի, այլև բոլոր հարեան համայնքների վրայ: Այսպէս կամաց-կամաց նահապետները դառնում էին բռնապետներ՝ հպատակեցնում, ստրկացնում էին միւս ցեղերի, միւս համայնքների նահապետներին: Առաջ տանելով իրանց կամայականութիւնները, այդ բըռնապետները ստրկական հնագանդութեան հետ պահանջում էին իրանց հպատակներից աստուածային պատիւ և երկրպագութիւն: Այս է ահա պատճառը, որ նախնի նահապետները, որոնք սկզբում մի-մի խնամակալ հայրեր էին իրանց շրջապատղների համար, վերջ-իվերջոյ աստուածների շարքը մտան և կոչում էին դիցազուններ:

II

Այժմ ես կը պատմեմ մի քանի անցքեր մեր աշխարհի, մեր նահապետների, մեր գիւցազունների կեանքից՝ այն աշխարհի, որի մէջ ապրել, մեծացել են մեր պապերը, որի պահպանութեան համար նոքա արիւն են թափել, որի

քաղցր օդով նոքա շնչել են: Հայաստանն է այդ աշխարհը: Սրբազն պատմութիւնը սովորելիս, դուք յաճախ կրկնում էք, որ Աղամը և Եւան ապրում էին դրախտում, որ դրախտը ոռոգում էր Եփրատ և Տիգրիս գետերով. իսկ Տիգրիսն ու Եփրատը բղիսում են Հայաստանից և անհերքելի կերպով վկայում են, որ մեր Երկիրն է եղել մարդկութեան նախնական օրբանը: Մասիս սարը, որի վրայ հանդըստացաւ Նոյեան տապանը, հսկայած բարձրացնում է իւր ձիւնազարդ գագաթը Հայաստանի կեդրոնից և անբարբառ վկայում է աշխարհին, որ այդտեղից է բազմացել Երկրորդ անգամ մարդկային ազգը: Այս սրբազն սարի ստորոտումն էր, որ Նոյը առաջին անգամ սեղան կազմեց և գոհացողական գոհ մատուց Աստուծուն. այստեղ, ըստ աւանդութեան, նա առաջին անգամ ուռ տնկեց (Ակուռի կամ Արկուռի աւանի մօտ) և նրա հիւթով գինովցաւ իւր նախնական խնձորքի ժամանակ: Երեանը և Նախիջևանը ամենահին վայրերն են, ուր Նոյի սերունդը բնակութիւն հաստատեց:

Նոյի երեք որդիքը, Սէմ, Քամ և Հաբէթ, իրանց համար, հաւանականաբար, տեղ պիտի ընտրէին Արարատի (Մասիսի) շրջակայքում: Տարիներ ու դարեր անցնելուց յետոյ՝ այդ երեք որդիներից առաջացած սերունդները, անկարող լինելով տեղաւորուիլ իրանց նեղ շրջանում, պէտք է առաջ խաղային դէպի երկրի այլ և այլ կողմերը: Այսպէս էլ եղաւ. Հաբէթի սերունդը մնացին Արարատի շրջակայքում, իսկ Սէմի ու Քամի սերունդները ցըռուեցան դէպի այլ և այլ երկիրներ: Բայց ուր էլ զնում էին մարդկի, ջրհեղեղի սոսկալի յիշատակը տանում էին իրանց հետ... Այդ մտատանջութիւնից ազատուելու համար՝ այն ժամանակուայ ցեղապետները, զարեր անցնելուց յետոյ, հաւաքուեցան Բաբելոն քաղաքում և վճռեցին մի այնպիսի

աշտարակ շինել, որի գագաթը երկնքին հասնէր: «Երբ երկրորդ անգամ ջրհեղեղ կը լինի, մենք կը պատսպարուխնք այդ աշտարակի վերայ, իսկ եթէ ջրհեղեղ չի լինիլ, դա ազգից ազգ կը մնայ որպէս յիշտառակ մեր մեծագործութեան», մտածում էին նոքա: Բայց Աստուծուն հաճելի չժուեցաւ այս անբարտաւան ձեռնակութիւնը. նա խառնակեց նոցա լեզուն և սարսափելի փոթորկով արգելք եղաւ շինութեանը:

III

Լեզուների ու ցեղերի այս ընդհանուր խառնակութեան միջոցին, ժողովրդապետներից աւելի հզօրները աշխատեցին իշխել թոյլերին և իրանց իրաւասութեան տակ առնել Բարելոնում հաւաքուած բոլոր ցեղապեաններին: Ամենից աւելի հզօրը ժամանակի հսկաներից՝ Բարելոնի ժողովրդապետն էր, Բէլ անունով: Այս վիթխարի բոնակալը հնազանդեցրեց իրան միւս ցեղերի համարեա բոլոր նահապետներին: Մեր ազգի նահապետն էր այդ ժամանակ Հայկը, որ Նոյի Հաբէթ որդու թուն էր: Հայկը չկամեցաւ ենթարկուել Բէլի բոնութեանը և իւր որդիների, թուների ու մերձաւոր ազգականների հետ, որոնք թւով երեք հարիւր հոգի էին, բացի հպատակներից ու ծառաներից, վերապարձաւ դէպի Արարատեան Աշխարհը: Մօտենալով մեր հայրենիքի սահմանին, նա կանդ առաւ մի լեռան ստորոտում (Կորդուաց և Մոկաց լեռները), բնակութիւն հաստատեց այլտեղ և, հնազանդեցնելով տեղական բնիկներին, կառավարիչ նշանակեց կաղմոսին, որ իւր թուն էր, իսկ ինքը առաջ գնաց դէպի Բզնունեաց ծովի արևմտահիւսիսի կողմերը ու բնակուեցաւ մի բարձրաւանդակ լեռնադաշտում: Այդտեղ Հայկը մի աւան շինեց և անուանեց

Հայկաշէն, իսկ երկիրը կոչեց Հարք: Լեռնադաշտը անմարդաբնակ չէր. այնտեղ կային բնիկներ Սէմի ցեղից, որոնք ինքնայօժար կամքով մտան Հայկի իշխանութեան տակ և այսպիսով նրա հպատակների թիւը աւելացրին:

IV

Ուշիմ, խոհեմ, քաջագանգուր և հաստաբազուկ էր զիւցազն Հայկը. սակաւ անուանի և քաջակազմ չէր և ախտանեան Բէլը: Հայկի արարմունքը դուր չեկաւ Բէլին. Նա իւր որդիներից մինին ընտիր մարդկանց հետ ուղարկեց Հայկի մօտ և ապսպրեց.— գնացիր, բնակուեցար սառնամանիքների ու ցրտութեան մէջ, մեղմիր քո հպարտացած բարքի ցրտութիւնը, արի, հնազանդուիր ինձ և ապրիր իմ երկրի մէջ, ուր որ կամենաս: Հայկը խստութեամբ յետ դարձրեց Բէլի պատգամաբերներին: Բարելոնեան բոնապետի զայրոյթը աւելի ևս սաստկացաւ: Նա ահազին զօրք ժողովեց իւր հպատակներից և դիմեց դէպի մեր հայրենիքը: Երբ-որ Բէլի խառնիճաղանձ ամբոխի ծայրը մօտեցաւ կաղմոսի իշխանութեան սահմանին, վերջինս սուրհանդակ ուղարկեց իւր պապի մօտ և ապսպրեց. գիտացիր, ով քաջդ զիւցագունների մէջ, որ Բէլը բարձրահասակ հսկաների և քաջ պատերազմողների հետ գալիս է քեզ վրայ. ես, իմանալով նրա մօտաւորութիւնը, իմաց եմ տալիս քեզ. մտածիր և ինչ-որ անելու ես, արա շուտով. ահա ես էլ իմ բոլոր մարդիկներով գալիս եմ քեզ մօտ:

Հայկը ժողովեց իւր տոհմի քաջերին և աներկիւղելաւ թշնամու դէմ: Երբ հասաւ բզնունեաց ծովի հարաւային լեռներին, կանգ առաւ մի հովտի մէջ, խրախուսեց իւր մարդկանց և սասց. ով քաջ զաւակներ, թշնամին կամենում է ոտի տակ տալ մեր երկիրը, մեզ էլ իւր ստրուկ-

Ները դարձնել. նա զիտէ, որ մենք սակաւաթիւ ենք, և այդ պատճառով իւր համարձակութիւնը յանդգնութեան է հասցըել: Զվախենանք նրա զօրքերի առաւելութիւնից. երբ հանդիպենք Բէլի բանակին, աշխատենք ճեղքել և մտնել այն զօրախմբի մէջ, ուր պատսպարուած կըլինի նա. կամ պատռով մեռնենք և յետոյ մեր տունն ու ընտանիքը սորուկ դառնայ թշնամուն և կամ յաղթենք ու քաջութեան օրինակ տանք մեր ապագայ սերունդներին:

Մի փոքր էլ առաջ գնալով, Հայկը ամրացաւ գետի եզերքին, որ հոսում էր հովտի միջով: Այդ տեղից նկատեց նա, որ դիմացի լեառը բունուած է թշնամու զօրքերի բազմութեամբ, իսկոյն կազմակերպեց իւր սակաւաթիւ բանակը, եռանկիւնի ձև տալով նրան: Եռանկիւնու ճակատը ինքը բռնեց իւր թիկնապահներով, աջ կողմը կանգնացըեց իւր Արմենակ որդուն նրա զինակիցներով, իսկ ձախ կողմը Կաղմոսին իրան զինուորներով:

Տիտանեան Բէլլ սարի բարձունքից նայեց— տեսաւ Հայկի մի բուռը զինուորներին, տեսաւ ու արհամարհեց նրանց: Իւր խմբի միջից ջոկեց նա ընակը քաջեր և, նրանց գլուխն անցած, արշաւեց Հայկի վրայ, հեռու թողելով իւր զօրքի մեծագոյն մասը: Բէլի անզգոյշ յանդգնութիւնը շատ ձեռնտու էր Հայկին. սա իւր կողմից առաջ խաղաց Բէլի դէմ և փակեց նրան իւր եռանկիւնու մէջ: Կատաղի կուիւն սկսուեցաւ: Քաջ քաջի հանդիպեցան: Սակաւ հսկաներ չընկան երկու կողմից էլ և մարտնչողների համար յաղթութիւնը տարակուսելի էր: Բէլլ այս անակնկալ դիմադրութիւնից զարհուրած, կամեցաւ յետ քաշուել և խառնուիլ իւր զօրքի մնացորդների հետ, բայց խելացին Հայկ առաջ անցաւ և իւր երեքթեան նետը հզօր բազուկներով ուղղեց դէպի Բէլի կուրծքը: Նետը շեշտակի անցաւ բըռ նակալի վիթխարի մարմնով և թիկունքից դուրս եկաւ:

Տիտանը վայր ընկաւ և շունչը փչեց: Տեսնելով իրանց անպարտելի հրամանատարի կործանումը, Բէլի ամրոխը իրար խառնուեցան և յետ փախան դէպի Բարելոն: Պատերազմի տեղը Հայկ դաստակերտ շինեց և անուանեց Հայք, որից ամբողջ հովիար կոչուեցաւ Հայոց Զոր: Այս բլուրը, որի վրայ կործանուեցաւ Բէլլ իւր քաջերով, կոչուեցաւ գերեզմանք: Սրանից յետոյ Հայկ իւր մարդիկներով վերադարձաւ Հարք և Բէլի մարմինը մի բարձր տեղ թաղել տուաւ, որ ապագայ սերունդը միշտ աչքի առաջ ունենայ նրա քաջութեան յիշատակը:

Ահա այս կերպով սկիզբն առաւ մեր ազգութիւնը. մեր քաջ նահապետի անունով մենք կոչուեցանք Հայք, իսկ մեր երկիրը — Հայաստան:

V

Հայկի յաջորդները երկար ժամանակ անխոռվ կառավարում էին իրանց երկիրը: Նրանց զլսաւոր հոգան էր պատերազմել բնութեան գժուարութիւնների դէմ և ընդակել իրանց հայրենիքի սահմանները: Սահմանների ընդադակումն էլ կատարւում էր որոշ կարգով, արդէն պատրաստի բնակավայրը թողելով իւր որդիններից մինին, նահապետը մնացած տնայիններով անցնում էր մի ուրիշ երկիր, նրան նորից շէն անելու նպատակով: Հասկանալի է, որ նահապետները, իրանց աշխարհաշինութեան ժամանակ, պէտք է ընտրէին այնպիսի վայրեր, որոնք յարմարութիւն ունենային անասնապահութեան և երկրագործութեան, որովհետեւ սոքա էին նրանց զլսաւոր պարապլմունքները:

Ինչ որ անում էին մեր երկրում, նոյնը, անկասկած, կատարւում էր և հարևան երկիրներում: Այսպէս աստիճան-առաստիճան ընդլայնելով իրանց բնակութեան սահ-

մանները, ժողովրդի ցեղապետները, բնականաբար, պիտի
մօտենային իրար. Նրանց շահերը պիտի ընդհարուէին: Դա-
հերն ընդհարուելու դէպքում նրանց մէջ պէտք է թշնա-
մական յարաբերութիւններ առաջ գային, և ուժեղը պէտք
է ջանար իշխել տկարին:

Հայկի յաջորդների ժամանակ մեր երկիրը բաւական ընդարձակուել էր, բայց բաւական էլ կտոր-կտոր էր եղել։ Յարմարուելով երկրի աշխարհագրական դիրքին, ամեն մի նահապետ, կ'ասես, անկախօրէն կառավարում էր իւր փոքրիկ հողաբաժինը և շատ թոյլ կապ էր պահպանում գլխաւոր նահապետի հետ։ Այսպիսով բացակայում էր մի հզօր դեկավարող ձեռք։ Այս հանգամանքից օգուտ էին քաղում հարեան ազգերի ցեղապետները և արշաւում ու ասպատակում էին մեր երկրի սահմանները։ Բարեխախտաբար Արամ նահապետը, Հայկի յաջորդներից մինը, հասկանում է իւր երկրի թուլութեան բուն պատճառը, ձեռքի տակ է առնում բոլոր նահապետներին և կառավարում է նրանց իրեն միահեծան տէր։ Մի խոշոր ուազմիկ ոյժ կազմակերպելով ամբողջ ազգաբնակութիւնից, նախ և առաջ նա 50,000 զօրքով գնում է Մարաց (Մեղացոց) Նիւքեար իշխանի դէմ, որ երկու տարի շարունակ ասպատակում էր Հայաստանի արևելեան սահմանները։

Արամը յարձակում է նրա վրայ։ Կոփուք շարունակում է առաւօտից մինչև երեկոյ։ Թշնամու զօրքը յաղթում է, իսկ Նիւքեարը գերի է ընկնում։ Արամը բերուի է նրան Արմաւիր, իր գլխաւոր քաղաքը, և պարսպի բուլքի վրայ գամել է տայիս...

Արևելեան կողմից ապահովելով իւր երկիրը, Արամի
դիմում է դէպի Ասորեստանի սահմանները, ուր Բարշամ
անունով մէկը 40 հազար հետևակ և 5 հազար ծիւռով
զօրքով ասպատակում էր Հայաստանի արևմուտքը։ Արամի

յաղթում է սրան։ Բարչամը փախուստի ժամանակ սպան-
ուում է Արամի դինակիցների ձեռքով։

իւր ընկճած երկիրներում Արամը Հայելի սերունդից իշխաններ է նշանակում, որոշ յարաբերութիւններ հաստատելով նրանց ու իւր իրաւունքների մէջ և որոշ տուրքեր սահմաննելով յօդուտ կեղրոնական իշխանութեան: Այնուաեւ մեր հերոսը պատրաստութիւն է տեսնում յարձակուելու իւր ամենախոշոր թշնամու դէմ: Պայապիս Քաղիայ անունով բռնակալը այդ ժամանակ իշխում էր Պոնտոսի (Աև ծովի) և Միջերկրական ծովի մէջ եղած երկիրներին և իւր ասպատակութիւններով սաստիկ անհանգիստ էր անում հայերին: Դորա դէմ կոռուելու համար Արամը վերակազմում է իւր զօրքը, նախկին զօրախմբի վերայ աւելացնում է տասնեակ հազար թարմ ուժեր և զնում է թշնամու դէմ: Կոիւր արդարե կատաղի է լինում... Վերջ-իվերջոյ յրամը յաղթող է հանդիսանում: Պայապիս Քաղիայ ալիս: Պատմութիւնը յիշում է, որ բռնակալին յաջողում ծովափ հասնել և մի նաւակի մէջ գցելով իրան, անցնել ի կզի: Այնուհետեւ նրա մասին ոչինչ յիշատակութիւն և լինում:

Արամը միացնում է այդ բռնակալի երկիրները Հայաստանի հետ, կառավարիչ է նշանակում այդ տեղ իւր ազգականներից մէկին, Մշակ անունով, և բաւական զօրք թողելով նրա տրամադրութեան ներքոյ, ինքը վերադառնում է Արմաւիր: Մշակիլ իշխանութեան տակ եղած երկիրը կոչում : Էռաջին Հայք: Այդտեղից մինչև բուն Հայաստան, Արամը բոլոր անմարդաբնակ տարածութիւնները լցնում է ժողովրդով, որոնք յետոյ կոչում են Երկրորդ և Երրորդ Հայք:

Արամի ճշմարտապէս պահծալի քաջագործութիւնները,
ու մենք շատ համառօտ կերպով յիշատակեցինք, այնպիսի

հոչակ են ստանում ժամանակակից ազգերի մէջ, որ նրանք մեր ազգը դրա անունով կոչում են Արմեն, իսկ մեր հայրենիքը Արմենիայ:

VI

Մեր նահապետների մեծութիւնը նորանց պարզ կենցաղավարութեան և անձնազո՞ն քաջարտութեան մէջ էր: Ժողովրդի բարօրութիւնից ու անկախութիւնից դուրս՝ նոքա ուրիշ փառասիրական ձգտումներ չունէին: Աշխարհային վայելքներ, պալատական ճոխութիւններ, զեխութիւն, շռայլութիւն և սրանց հետ ընտանեկան կեանքի ապականութիւն գեռ ևս մուտք չէին գտել Հայաստանի ղեցաղունների պարզ կենցաղի մէջ: Հայաստանի իշխանական դաստակերտները մի-մի շէներ էին, որոնք շատ քիչ էին զանազանում սովորական գիւղերից: Նինուէի ճոխութիւնը, իրանց բոլոր դրական և բացասական կողմերով, բացակայում էր մեզ մօտ: Եւ այս հանդամանքը մեր նահապետներն անպատճութիւն չէին համարում. ընդհակառակը նոքա պարծենում էին դրանով: Արայի օրինակը ամենապերճախօս ապացոյցն է դրան: Մենք այդ գաղափարական իշխանի պատմութիւնը համառօտ կերպով յառաջ կը բերենք:

Արամի մահից յետոյ նրան յաջորդում է իւր որդին: Արայ անունով: Ասորեստանում այդ ժամանակ թագաւորում էր Նինոսը: Հին աշխարհի ամենախոշոր աշխարհական էր սա, որ տիրում էր բազմաթիւ երկիրների ու լեզուների: Նինոսը Արային էլ նոյն իշխանական պատիւը տուեց, ինչ որ ունէր Արամը, այսինքն ընդունեց նրան երկրորդ գաւհական բոլոր վեհապետների մէջ՝ իրանից յետոյ:

Բայց Արան, որ գահով ու իշխանութեամբ երկրորդն էր ժամանակակից իշխանների մէջ, զեղեցկութեան ու

առաքինութեան կողմից, անկասկած, առաջինն էր: Երկրի բոլոր գուսանները նորա աննման զեղեցկութիւնը երգի առարկայ էին շինել և գովաբանում էին բոլոր ազգերի առաջ:

Կար և մի ուրիշ զեղեցիկ անձն ժամանակակից հզօրների շարքում. դա Ասորեստանի փարթամ թագուհին էր, Շամիրամը, Նինոս թագաւորի կինը: Սորա ճոխ զեղեցկութիւնն էլ գովաբանութեան առարկայ էր Ասորեստանի երգիչների բերանում: Սակայն Շամիրամը կրքոտ էր և անբարոյական մինչ այն աստիճան, որ ձեռք բարձրացրեց իւր ամուսնու դէմ, սպանել տուեց նրան, կամ, ինչպէս աւանդութիւնն ասում է, փախցրեց կրեաէ կղզին, ուր նա վախճանուեցաւ: Նինոսի որդիքն անչափահաս մնացին: Շամիրամը միահեծան տէր գառաւ Ասորեստանին: Այդ բոպէից նա տենչում է իրագործել իւր փայփայած մտադրութիւնը. աշխարհի ամենագեղցիկ տղամարդուն ուզում է իրան ամուսին ունենալ: Եւ ահա Շամիրամը դեսպաններ ուղարկում Սրայի մօտ հարուստ ընծաներով և խնդրում է գալ, ամուսնանալ իրան հետ, թագաւորել Ասորեստանի վերայ և վայելել աշխարհային վայելչութիւններն ու զեխութիւնները: «Երկրի թագաւորներն ու իշխանները, հզօրներն ու մեծամեծները քո ոտների փոշին կը համբուրեն», ապրում է նա: Արան ականջ չի անում Շամիրամի աղաչանքին—մերժում է նրա առաջարկութիւնը: Երկու լուրջ պատճառներ զեկափարում են Արային այս դէպքում. նա մտածում է, որ Շամիրամի առաջարկութիւնն ընդունելով, նա իւր փոքրիկ հայրենիքը պիտի խառնի Ասորեստանի վիթխարի պետութեան հետ և Հայաստանը, միւս բազմաթիւ ազգութիւնների նման, պիտի լուծուի նրա մէջ. Երկրորդ՝ նա զգում է, որ նրան առաջարկում են փոխել իւր առաքինի կեանքը, իւր մաքուր ընտանեկան սէրը, իւր պաշտելի

Նուարդ տիկինը բարելոնեան հերոսուհու աշխարհահռչակ զեխութեան ու անըարոյականութեան հետ... Եւ նա մերժում է գիտակցօրէն ու կտրական:

Բայց երկրի հզօրները սովորութիւն չունեն սահման դնել իրանց ցանկութիւններին. Ինչ որ անհնարին է ձեռք բերել խնդրելով, նրանք ձեռք են բերում զէնքի ուժով: Շամիրամը իւր բազմացեղ ու բազմալեզու հպատակներից անհամար զօրք է ժողովում և դիմում է դէպի Հայտատան: Այրարատեան գաշտը համնելով, ուր Արայի փոքրիկ բանակը սպասում էր նորան, Շամիրամը խիստ պատուէր է տալիս իւր զօրապետներին, խնայել Արայի կեանքը և կենդանի բերել նրան իւր մօտ: Բայց Արային հաճելի չէր գերի ընկնել անբարոյական կնոջ ձեռքը. ինչից որ նա հրաժարուել էր իշխանաբար, այն չէր կարող ընդունել իրքեւ ստրուկ: Նա մղում է կոխւը ամենայն կատաղութեամբ, միշտ նետելով իրան ամենավտանգաւոր տեղերը և, վերջ-իվերջոյ, սպանում է: Շամիրամին բերում են միայն Արայի դիմակը: Անմիթար տրամութեան մէջ է ընկնում հզօր թուգուհին, արտասում ու փետում է իւր մազերը... Յետոյ հրամայում է, որ Արայի դիմակը դնեն իւր ապարանքի վերնատանը և ազօթքով դիմում է յարալէղ աստուածներին, որ դան, լիզեն Արայի վէրքերը և կենդանութիւն տան նրան իւր համար:

Երբ Արայի զօրականները ստուգում են, որ իրանց առաջնորդն սպանուած է, երբ իմանում են, թէ նրա դիմակը գտնուում է թշնամի թագուհու վերնատանը, միահամուռ ոտքի են կանգնում և պահանջում են իրանց պաշտելի իշխանի դիմակը: Շամիրամը իւր պալատականներից մինին հապցնում է Արայի զգեստը, հեռուից ցոյց է տալիս Հայոց զօրքին և հրամայում է յայտնել, որ իւր պաշտանքներին անսալով, աստուածները կենդանացրել են

Նորան: Ժողովուրդը հաւատում է և վերադառնում է իւր առօրեայ պարապմունքներին:

Բզնունեաց ծովի եզերքին Շամիրամը իրան համար մի հոյակապ քաղաք է կառուցանում, որպէս ամարանոց, որ կոչւում է Շամիրամակերտ: Քաղաքը իսկապէս մի հրաշակերտ է լինում. նրա վրայ բանում էին միայն Ասոքեստանից բերած տասներկու հազար հասարակ բանուրներ և վեց հազար հմուտ արհեստաւորներ: Շամիրամը քաղաքի շրջակայ ժայռերի վրայ սեպաձև տառերով արձանագրել է տալիս իւր աշխարհակալութեան պատմութիւնները: Այդ սեպաձև գրութիւնները մինչև այսօր էլ կան և գժուար վերձանութեան առարկայ են: Շամիրամակերտը այժմ կոչւում է Վան: Հին քաղաքի մնացորդները այսօր էլ զարմանք են պատճառում այցելուներին:

50. ՈՒՍԻՐ ՍՐԾՉ ՔՈ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒՆ

Ծառայել հայրենիքին և օդտակար լինել նորան կարելի է միայն այն ժամանակ, երբ քեզ յայտնի են նորակարիքները. իսկ կարիքներին ծանօթանալ կարելի է, երբ Դու գիտես քո մայրենի լեզուն: Մայրենի լեզուն է, որ բաց է անում քո առաջ ազգային կեանքի չարն ու բարին, որ հնարաւորութիւն է տալիս քեզ մանել նորա բուլը խաւերի մէջ, ուսումնասիրել, ծանօթանալ արիւնակից եղբայրներիդ նիստ ու կացին...

Ամենայն ուսման հիմքը և գիտութիւն ստանալու հեշտ ձանապարհը լեզուագիտութիւնն է: Եւ եթէ դու կամենում ես հիմնաւոր կերպով և հեշտութեամբ սովորել օտար լեզուներ, պէտք է նախ և առաջ քո մայրենի լեզուն սովորեն և գիտենաս: Լեզուն է ազգայնութեան առաջին և գլխաւոր նշանը. նա է այն միակ կապը, որ ազգի ան-

դամներին համախմբում, շաղկապում է միմեանց հետ, որովհետև ով անծանօթ է իւր ազգային լեզուին, նա անշատուած, օտարացած պիտի համարուի իւր ազգութիւնից:

Մայրենի լեզուի ուսումը մի պարտականութիւն է, որ ինքը ընութիւնը դնում է մարդու վրայ. մանուկը աշխարհի է գալիս՝ օժտուած իւր մայրենի լեզուն սովորելու ունակութիւններով. Խորշելով մայրենի լեզուից, մենք դաւաճանում ենք մեր ընդածիր հակումներին, մենք վարում ենք աւելի վատ, քան վայրենիները: Եթէ մենք ուշադրութեան առնելու լինենք ոչ միայն լուսաւորեալ, այլ մինչեանդամ կիսակուլտուրական ազգերի վերաբերմունքը դէպի իրանց մայրենի լեզուն, կըտեսնենք, որ նաև այն ազգերը, որոնց լեզուն, մերի համեմատութեամբ, աւելի աղքատ է, աւելի անմշակ,—նոքա ևս աւելի սէր, աւելի յարգանք ունին դէպի իրանց լեզուն, աւելի պարտաճանաչ են քան մենք: Իսկ մեր լեզուն ճոխ է, ճկուն, հարուստ ու կազմակերպուած. մենք ունենք մի լեզու, որով պարձենալ կարող էին մեզանից շատ ու շատ առաջաւոր ազգեր:

Ամեն ազգի մէջ ամօթ է համարում իւր մայրենի լեզուն չիմանալը. բարեպատշաճ ընկերութիւնների, պատուաւոր ընտանիքների մէջ մուտք չէ ունենում այն անհատը, որ իւր մայրենի լեզուին ծանօթ չէ. մարդիկ խորշում, երես են դարձնում նրանից: Մենք էլ կուլտուրական ազգ ենք. մենք էլ զիտենք պարձենալ մեր ընդունակութիւններով, մեր լուսաւոր գաղափարներով, մեր ուսումնասիրութեամբ, յառաջադիմութեամբ, խելքով. ուրեմն մեզ համար ևս մայրենի լեզուի ուսումը նոյն առաջնակարգ նշանակութիւնը պիտի ունենայ, ինչ որ ունի ուրիշ ազգերի համար... Մտաբերենք մեր պաշտելի վիպասանի խօսքերը՝ «Ձեզ եմ ասում, ձեզ, Հայոց նորահաս երիտասարդ՝ ներ, ձեր հոգուն մատաղ, ձեր արևին դուրբան. տասը

լեզու սովորեցէք, ձեր լեզուն, ձեր հաւամալ պինդ պահպանեցէք»: Մտաբերենք և կատարենք մեր սրբագան պարտականութիւնը մայրենի լեզուի վերաբերութեամբ:

51. ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

Մայրենի լեզու, մայրենի բարբառ, Ախորժ, ընտանի իմ հոգու համար. Առաջին դու խօսք ականջիս հասած, Դու սիրոյ քաղցրիկ առաջին յօդուած. Մանկական լեզուիս թոթովանք տկար, Հնչում ես իմ մէջ դու միշտ անդադար:

Գեղեցիկ լեզու, հրաշալի լեզու, Այդ ինչպէս քաղցր հընչում ես ինձ դու. Կամիմ աւելի քաջ ծանօթանալ Քո ճոխ գանձերին, հոգով հայանալ. Ասես թէ ահա կանչում էին ինձ Պապեր ու հայրեր խոր գերեզմանից:

Հնչիր դու, հնչիր այժմ և յաւիտեան, Մայրենի լեզու, բարբառ սիրական. Արի, բարձրացիր հնութեան փոշուց, Դու իմ հայ լեզու, մոռացուած վազուց, Զգեցիր նոր կեանք սուրբ գրուածներով, Որ ամենայն սիրտ վառուի քո սիրով:

52. ՍԻՐԵՐ ՔՈ ՀԱՅՐԵՆԻՔԴ ԵՒ ՔՈ ԱԶԳԴ

«Սիրելի Արամ—ասում էր միշտ հայրը իւր որդուն— ճնողներիցդ յետոյ քեզ ամենից մերձաւորը և ամենից սի-

ըելին քո աղջն է. այս պատճառով ինչպէս որ պարտաշկան ես ծնողներիդ սիրել, մեծարել և նոցա ծառայել, նոյնպէս էլ պարտական ես աղջդ և հայրենակիցներդ սիրել և քո կարողութեանդ համեմատ նրանց օգնել: Այս պարտքը քեզ սովորեցնում է հայրենասիրութիւնը, որ, կարծես, նոյն խակ բնութեան մէջ տնկուած է, որովհետեւ վայրենի աղջերի և մինչև անգամ անբան անասունների մէջ էլ երկում է այդ ձգտումը: Այժմ լաւ մտածիր, սիրելիդ իմ, թէ որչափ մեծ ամօթ և նախատինք կը լինէր քեզ, եթէ այսպիսի մեծակշիռ յատակութեան կողմից աւելի պակասաւոր լինէիր, քան վայրենիները, կամ քո հայրենասիրութիւնդ նոցա հայրենասիրութիւնից աւելի մեծ և ազնիւ չինէր: Հայրենասիրութիւնը կը թուած մարդկանց վրայ աւելի մեծ պարտականութիւններ է դնում, և որչափ տարիքդ աւելանում են, այնքան էլ պարտականութիւններդ դէպի քո աղջի օգուտները շատանում և բազմապատկում են: Սիրել բարին, սիրելի զաւակս, վախեցիր և փախիր չարութիւնից, մտքումդ պահիր քո պատերի, քո արժանաւոր նախանայրերի արարքը, որոնք իրանց անձը չեն խնայել հայրենիքի համար: Ինչպէս որ բարի զաւակը պատիւ է համարում իւր ծնողացը, նոյնպէս էլ բարի մարդը պարծանք և պատիւ է իւր աղջին: Եւ ինչպէս որ հայրը իւր անպիտան որդուց իրաւունք ունի տրտնջալու, այնպէս էլ աղջը իրաւունք ունի իւր անպիտան անդամների վրայ գանգատուելու: Ուրեմն աղջիդ պատիւ ու պարծանք լինելու համար հետեւիր միշտ առաքինութիւն գործել և չարութիւնից հեռանալու»:

53. ՎԵՐՋԻՆ ՀՐԱԺԵՇ

Մնամ բարեաւ, իմ Հայրենիք,
իմ մանկութեան օրօրան,

Քեզ պաշտել եմ ես վառ սրտով,
Եւ կը պաշտեմ յաւիտեան:
Թէպէտ բախտը խլում է ինձ
Նուիրական քո գրկից,
Բայց երբէք նա կարէ ջընջել
Սուրբ անունդ իմ սրտից,
Ուր էլ լինիմ, ուր էլ ապրեմ,
Թէկուզ օտար երկրի մէջ,
Սիրել եմ քեզ և այդ սէրը
Կը մնայ անխախտ ու անչէջ:
Մնամ բարեաւ, իմ հայրենիք,
Ինձ կեանք, արե պարգևող.
Մնամ բարեաւ... վերջին անգամ
Համբուրում եմ քո սուրբ հող:

54. ԱՆ ԱՌ ԱԿ ՈՐ ԴԻՆ

Ի ծննդենէ եւեթ մոլութեամբ լեալ,
մինչ նովիմբ և վախճանեցաւ
Խորենացի.

Ա

Արշալոյսը ոսկեզօծեց Մասիսի ձիւնապատ գագաթները: Աշխարհն արթնացաւ հայր Արամազդի հետ:
Աղատ Մասիսը կեանք առաւ: Արամազդն աչքերը բացաւ, նստեց իւր քարեայ գահի վրայ, աչքը յածեց քարեայ քնարանի չորս կողմը: Յաւերժմական ծաղիկները շարիշար բարձրացրին իրանց չքնաղ գլուխները և ժողովածական ու ողջունեցին. «Բարի լոյս, մեծդ Արամազդ»: Գեղամայ ծովակի ալիքները խնդալով, խոխոջելով, միմեանց հրհելով՝ ծառացան, գլուխ իջեցրին արի Արամազդին ու

գոչեցին. «Քունդ անոյշ, աստուածների հայր»։ Բացօթեայ թռչնակները հանեցին իրանց փոքրիկ նախշուն զլուխները թևերի տակից, քնաթաթախու աչքների մէկը բաց, մէկը փակ, բաց արին փոքրիկ մաքուր կտուցներն ու գեղգեղեցին բիւրաւոր դայլայլիկներ. «Բարի օր, բարի տեսութիւն, հայր, ասացին ամենքը»

Աստուածների հայրը զուարթ դէմքով ողջունեց բովանդակ աշխարհին՝ շոյելով իր սպիտակափառ երկայն միւրուքը, աւետեց ուրախ օր։ Փափուկ մամուռը, որ թաւիշի պէս բռնել էր գահը, աւելի ևս բարձրացաւ, խտացաւ, փափկացաւ. կաթնորակ աղբիւրը, որ նազով, շնորհքով ծորում էր այրի աջ կողմից, նոր-նոր անուշիկ ձայներ հանեց. նրա մաքուր ակունքից դուրս եկաւ մի յաւերժահարս ու, լցնելով իւեցեղին փոքրիկ դոյլը արշալոյսի կարմրացած ջրով, մօտեցաւ Արամազդի սպասին։ Հայոց աշխարհի պաշտպանը լուացուեցաւ, սրբուեցաւ յաւերժահարսի մազերով ու նստեց։

Մինչ այս, մինչ այն, աղօթարանը բոյավառուեցաւ։ Երկինք և երկիր բռնուեցան ծննդական ցաւերով։ Գեղամայ ծիրանի ծովն էլ տանջւում էր երկնքի և երկրի ցաւերով՝ նոյնպէս երկնում էր։ Սար ու ձոր, հովիտ ու անտառ պլշած նայում էին ահեղ ծննդականներին։ Բայց երկար չէին նորանց ցաւերը։ Գեղամայ ծովի վրայ կարմրիկ եղէդնիկն սկսեց ծխախառն բոց ծխել. բոցի միջից վազեց մի խարտեաշ պատանեկիկ։ Նրա մազերը հրեղէն էին, միրուքը բոյավառ, երկու աչքը երկու արեգակ։

«Երկնէր երկին և երկիր
երկնէր և ծիրանի ծով.
երկն ի ծովուն ունէր
Զկարմրիկ եղէդնիկն.

Հնդ եղէգան փող՝ ծուխ ելանէր,
Հնդ եղէգան փող՝ բոց ելանէր,
Եւ ի բոցոյն պատանեկիկ վազէր.
Նա հուր հեր ունէր,
Ապա թէ՝ բոց ունէր մօրուս,
Եւ աչկունքն էին արեգակունք»։

Այսպէս էին երգում գուսանները այս տարօրինակ մանկան ծնունդը

Վահագն էր դա, հայր Արամազդի սիրելի որդեակը։ Նա զինավառ և խրոխտապանծ կտրեց—անցաւ օդի տարածութիւնը, մտաւ հայրենական այրը։

Հայր ու որդի փաղաքանքով գրկախառնուեցան։ Եւ աստուածների օրինակով Մասիսի լանջերում և ստորոտներում որքան եղնիկներ ու տատրակներ կային, բերան քերանի դրին, միմեանց համբուրեցին։

Բ

Անմահների ընտանիքը հետզհետէ ժողովուեցաւ գեղազարդ այրի մէջ։

Եկաւ Աստղիկ դիցուհին։ Անմահական շուշանները, անթառամ վարդերը շարիշար թագ կապած—նստած էին նրա հրաշագեղ գլխի վրայ։ Հայոց աշխարհի լուսինն էր դիցուհին։ ամառնային լուսնի պէս նազելի, հեղահամբոյր, գեղեցիկ։ Նա մի գեղեցիկ եղնիկ էր հեծած և երկու յաւերժահարս, բամբիոնները ձեռներին, երգում էին նրա առաջ աստուածային երգեր։ Եկաւ, գուրգուրալով փաթաթուեց Արամազդ հօր և Վահագն ամուսնու վզով։

Ապա Եկաւ ոսկեմայր Անահիտը։ Թէև նրան ոսկի արձան էին կանգնեցրել Աշտիշատում, բայց նա պարզ, անպաճոյճ կերպարանք ունէր. նման էր մի աշխատասէր և

Ժրագլուխ գեղջկուհու, որ աշխատելիս, քրտինք ու վաստակ անտես է անում: Իմաստութիւնը և զգաստութիւնը, որի հեղինակն էր դիցուհին, այն ժամանկները շրջում էին գծուծ հագուստների մէջ: Այսպէս և աստուածուհին: Բայց նրան որդիական յարդանքով գլուխ էին տալիս Մամիսի քաջերը և բոլոր անմահների սպասաւորները:

Միմեանց յետելից հասան նաև դիցուհին և Միհր աստուածը Բագայառինձ աւանից: Ամենից յետոյ եկաւ Ամանոր աստուածը, բերելով իւր հետ հայ երկրագործի աշխատութեան պտուղներից պարզե անմահներին: Այդ տարին երկրագործ թէ այդեպան շատ գոհ էին նրանից և նա ուրախ էր: Նոր էին վերջացել նաւասարդի տօները, որ Հայոց աշխարհը յատկացրել էր իւր առատաձեռն աստուծուն: Ուրախ-ուրախ տօնում էր, զոհ և երկրագործին էր անում: Այդպիսի պատիւ ունէր նա, որ երկիրը դառն քրտինքով հերկել էր տալիս և փշի ու մացառի տեղ սովորեն էր բուսցնում:

9

Տրտունջ բարձրացաւ անմահների շրջանում առ հայրն Արամազդ, տրտունջ Արշակունի Արտաւազդ թագաւորի դէմ: Քաջ և աշխարհաշէն հօր այդ չար զաւակը ընդհանուր զայրոյթ էր պատճառել:

Այսպէս տրտնջաց Վահագն.

«Արտաշէս մեռաւ և դեռ գերեզմանի մէջ հանդիսա չառած, որդին նախանձելով նրան արած պատուին և համայնական սուզին, չարախօսեց անմահների վրայ, որոնց սիրելի էր թագաւորը, դառնութեան լեզի թափելով՝ ասաց, թէ հայրը բոլոր աշխարհը իւր հետ տարաւ և այժմ ինչի վրայ պիտի թագաւորէ ինքը: «Մինչ դու զնացեր և զեր-

կիբս ամենայն ընդ քեզ տարալը. Ես աւերակացս ո՞րպէս թագաւորեմ»: Սրտաշէսը պատահն ուսին եկաւ ինձ մօտ, դառնապէս անիծում էր որդուն և ասում. «Եթէ դու յորս հեծցիս ազատն ի վեր ի Մասիս, զքեզ կալցին քաջք, տարցին յագատն ի վեր ի Մասիս, անդ կացցես և զոյս մի՛ տեսցես»: Յետոյ յիշեցրեց՝ թէ ինչեր էր արել Արտաւազդը, քանի ինքը կենդանի էր: Ի՞նչ կըլինէր մանուկ Արտաշէսը, եթէ Սմբատ Բագրատունին չխնայէր նրան, վարանդի լինելով նրա հետ Պարսից երկիրը: Սմբատը պահեց, մեծացրեց նրան, մացրեց Հայաստան, տարաւ նրան հօր զահի մօտ, Բայց անարժան արքայորդին կամենում էր իրանց բարերարին սպանել: Բաւական չէր այդ, մեր Մուրացան ցեղին վերջին պատուհասը հասցրեց. արքայապատիւ Արգաւանի ապարանքը կործանեց, պատճառ դառաւ նրա և նրա որդու մանուան: Սակայն Արգաւանը Արտաշէսի սիրելին էր: Արգաւանն էր, որ թողելով իւր բարձն ու պատիւը երուանդի մօտ, զնաց—միացաւ մանուկ Արտաշէսի զօրքին, երբ սա զալիս էր Պարսկաստանից՝ վրէժ լուծելու և իւր գահն առնելու: Բարերար էր Արգաւանը, վառաւոր. բայց Արտաւազդ նախանձեց և, ապերախտութիւնից կուրացած, կարձեց նրա կեանքը»:

Զօրաւոր էր սոկեմայր Անահիտի տրտունջը.

— Երէկ, ասաց նա թախծալի ձայնով, ես տեսայ այն սուզն ու վայնասունը, որ ընկել էր Արտաշէս թագաւորի ընտանիքի մէջ: Արտաւազդը քշել էր տալիս նըրանց, ուղարկում էր հեռու աշխարհը, որպէս զի Արարատեան երկիրը իրան մնայ: Արքայազուն մանուկները լավս էին անպաշտպան. կանայք ամօթահար ծածկում էին իրանց դէմքերը, խոնուած ամբոխի մէջ. վայրագ զինուորները քշում էին... նրանց հեռացրին և Արտաւազդ հանզիստ նստեց իւր սովորական մոլութիւնների մէջ: Օրեր

է անցկացնում մոլի թագաւորը. երկիրն անտէր է մնացել. մարդկանց դատը չեն լսում. հզօրն անզօրի ուսերին է նստած: Դեռ պատանի էր Արտաւազդը, երբ սկսեց անպատիւ անել իւր հարազատ մօրը, չարախօսելով նրա մասին: Արդաւան Մուղացանին Արտաշէսի աչքում վատաքանելու և նրա պատիւը խլելու համար, անսպատկառ որդին խօսք բարձրացրեց Սաթենիկ տիկնոջ մասին, իբրև թէ Արդաւանին պատում է իւր ամուսնուց շատ:

Աստղիկ դիցուին էլ իւր գանգատն արաւ, ասելով՝ որ Արտաւազդը սպանել է իւր քրմապետին, որ նորա հարազատ եղբայրն էր, որպէս զի մենակ մնայ: Խօսեցին և միւս աստուածները: Ամենից յետոյ խօսեց առատաձեռն Ամանորը.

— Անմահների հրամանով Արտաշէսը մտաւ մահուան անկողինը: Ես թագաւորի մօտն էի, երբ նա, տանջուած ու յուսակտուր, յիշեց Նաւասարդի տօները: Գլուխը բարձրացրեց, անձկութեամբ աչքերը դէս ու դէն դարձրեց, թառանչ քաշեց: «Ո՞վ, ասաց, կըտար ինձ ծխանի ծուխը և Նաւասարդի առաւօտը, եզնիկների վազելը և եղջերուների վագելը. մենք փող էինք ածում և թմփուկ էինք զարնում»^{*)}: Արտաւազդը լսում էր այդ խօսքերը, տրախնջում, որ հայրը չի մեռնում, որպէս զի ինքը թագաւորէ: Աստուածների դէմ գանգատում էր, որ այդքան սիրում են նրան և քառասուն տարի նորա արած թագաւորութիւնը բաւական չեն համարում:

Տիրեց լուսթիւն: Այրի աղբիւրը սկսեց իւր բարակ ու անոյշ կարկաչիւնը. հողմերը դադարեցին. աստուածները լուս սպասում էին:

^{*)} «Ո՞ տայր ինձ զծուխ ծխանի և զառաւօտն Նաւասարդի, զվազեն եղանց և զվազելն եղջերուաց. մեք փողս հարուաք և թմբկի հարկանէաք»:

Հայր Արամազդը լսեց այդ բոլորը, լսեց լուս կերպով: Յօնքերը կիտեց, աչքերից բարկութեան շանթեր համեց: Գաւազանը խփեց քարին և Մասիսի հիմունքները որոտացին: Ապա ասաց բարկացած.

— Կարձուի Արտաւազդի թագաւորութիւնը. անիծուի նա և նորա պէս զաւակը: Նա որսի գայ Մասիսի ստորոտները, Մասիսի քաջերը բռնեն, ձգեն նորան խոր վիճի մէջ. այդտեղ չմեռնի նա, լոյս չտեսնէ: Շղթայակապ տանջուի, միշտ տապակուի լոյս աշխարհ տեսնելու տենչանքով: Դժուքից երկու շուն սպասաւորեն նրան, օր ու գիշեր լիզեն, կրծեն շղթաները. նա կարծէ, թէ իւր շղթաները ահա կըկտրատուին, բայց դարբինները մուրճով ծեծեն իրանց սալերը, շղթաներն ամրապնդուին: Յաւիտեան ազատութիւն չտեսնէ Արտաւազդը. իւր ականջներով լսի դարբնոցների ձայնը, զայրանայ, բայց իզնւր...

Աստուածները այս հրամանը հասցըին իրանց քուրմերին:

Անցան դարեր: Հայր Արամազդը իւր փառաւոր ընտանիքի հետ հալածուեցաւ Մասիսի այրից՝ Հայաստանից: Ազատ Մասիսը, ձիւնով և սառնամանիքով շղթայուած, մնաց անբնակ, մենակ: Միայն ալեոր արծիւը պտոյտներ էր անում նրա կողերով:

Մոռացուեցան հեթանոսական աստուածները... բայց Հայ դարբինը, ուշադիր մնալով պապենական խրատին, չմոռացաւ իւր գործը. ամեն կիրակի օր ձեռքն է առնում ծանր մուրճը, երկու-երեք անգամ ծեծում է սալը: Արտաւազդի շղթաները հաստանում են, պնդանում...

Մոռթ աշխարհումն է մնում հօրից անիծուած անառակ որդին...

55. ԱՐՏԱՀԱՅԴԻ

Զարկեցէք, դարբիններ, կըռանը սալին,
Զարկեցէք կըռանը, շղթայքն ամրանան,
Անիծեալ արքայի կապանքն ամրանան,
Զարկեցէք, դարբիններ, կըռանը սալին:
Ահարկու ամպերը եկան ժողվուեցան,
Ծեր Մասեաց ճակատին սև քօղ փաթթեցին.
Գոռում է փոթորիկ գազանի նըման,
Հառաչում, սուլում է կատաղած քամին:
Զարկեցէք կըռանը: — Խորունկ քարայրից
Ահա չար հողմի հետ համոււմ են ձայներ...
Յոլացաւ փայլակը, — արքայի աշքից
Դէպի վեր թոշում են բարկութեան կայծեր:
Կամի նա ելանել վրէժխընդիր հոգով՝
Իւր անվերջ տանջանքի թոյնը մահաբեր
Աշխարհի չորս կողմը շաղ տալու մըտքով.
Բայց ամուր են նորա ծանը շղթաներ:
Մտերիմ գամփոններ կրծում են կապանք,
Կրծում են անդաղար կապանքն արքայի...
ԱՌտաւազդ, վերջ չունի հոգուդ տառապանք,
Եւ դեռ շատ հեռու է վախճանն աշխարհի:
Եւ անգօր չարութեան քո կուռ հարուածներ
Դեռ պիտի փշրուին մեր մուրճի տակին.
Կ'ունենանք մենք դեռ ևս գեղեցիկ օրեր,
Դեռ հաշտ է երկինքը մեղսոտ աշխարհին:
Բայց եթէ՝ քարացած, մենք չենք լսելու
Բարբաւը սուրբ սիրոյ, և վերածնութեան,
Նոր կեանքի աւազան մեզ չէ փրկելու, —
ԱՌտաւազդ, փշրուի թող մեր կուռ կըռան:

Մենք այլևս չենք զարկիլ երկաթի սալին.
Թող կրծեն գամփոններդ ոտքիդ շղթաներ,
Արձակուին բազուկներդ, և դու աշխարհին
Դուրս արի բերելու կոտորած, աւեր...
Բայց ոչ, մենք փրկութեան դեռ հաւատում ենք.

Մեզ մի նոր երկնքից նոր լոյս կըբացուի.
Եւ ահա ծխածանն արդէն տեսնում ենք
Մենք ազատ, լուսաւոր մի նոր վիճակի...

Զարկեցէք, դարբիններ, կըռանը սալին,
Զարկեցէք կըռանը, շղթայքն ամրանան,
Անիծեալ արքայի կապանքն ամրանան.
Զարկեցէք, դարբիններ, կըռանը սալին:

56. ՆԱԽԱՎԱՐԴԻ ՏՕՆԵՐԸ

Հայերն ունեցել են երկու տարեգլուխ՝ սրբազն և քա-
ղաքական: Մըբազան տարեգլխին բնութիւնը ծաղկափթիթ
ծիծաղով կենդանացնում էր մարդկանց. իսկ քաղաքական
տարեգլխին, որ նաւասարդն (օգստոս) է, կիսով չափ
այրուած բնութիւնը ինքը կենդանանում էր մարդկանց
հաստատած տօներով ու հանդէսներով: Տարուայ ամենատաք
ամիսը՝ Հայոց բարեկենդանն էր, կազանդն էր. կրօնական,
վինուրական և աշխարհախումբ հանդէսներով՝ Հայոց աշ-
խարհը գարնանանման գեղեցկանում էր: Նաւասարդի տօ-
ները պահապան աստուածների տօներ էին, նախնեաց
քաջերի յիշատակներ էին, կտրիճների մրցանք էին, հա-
սարակ ժողովրեան խաղեր և վայելքներ էին, որ 3,000
տարուայ չափ մեր երջանիկ նախնիքը կատարեցին, թըն-
կացին, գոփեցին Բագրեանդայ տափերի և բլուրների վը-
րաց, մինչև նոցա տակ ծածկուեցան: Այդ հանդէսները
կատարում էին քրմապետները, նոցա փոխանակեցին խա-

չապսակ քահանայապետները, որոնք մեհեանների տեղ եկեղեցիներ շինեցին։ Բայց դուրսը բնութիւնը իր կերպարանքը չփոխեց, ազգը իր հանդէսները չփոխեց, այլ տօնները սըրբեց, և աստուածներին նույիրելու փոխանակ՝ ճշմարիտ Աստուծուն և Նորա նահատակներին նույիրեց։ Գրեթէ անկարելի էր՝ որ Ս. Գրիգորը Հայերին հեթանոսութիւնից քրիստոնէութեան դարձնելով, այն հին մեծահանդէս աշխարհաժողով գրօսանքի օրերը անհանդէս, անյիշատակ թողնէր։

Նաւասարդից մի քանի օր առաջ կատարւում էր Վարդապի Վարդանման Աստղիկ գիցուհու տօնը, որի փոխանակ Հայոց առաջին հայրապետը կարգեց Վարդավառ, Քրիստոսի պայծառապէս տօնում են։ Իսկ Նաւասարդի առաջին օրը (օգոստոսի 11.), որ Հայոց տարեվլուխն է, ազգային ամենից մեծ, պանծալի, սրբազն օրն էր, և հանդէսները շատ օրեր տեսում էին՝ զանազան յիշատակներով, որոնք մի անունով Ամանորայ էին ասւում, կամ աշխարհաժողով։ Այս վերջին անունը ցոյց է տալիս, թէ այդ տօնին Բագրեանդայ բարձրաւանդակների հանդիսականները միշտ մեծ բազմութեամբ էին ժողովւում։ Թագաւորն իր Այրարատեան չորս քիւր գնդովը, նախարարները ութ քիւր գումարտակներով, 600 գաւառատեարք և 400 գահակալ իշխաններ, բազմաթիւ քրմեր իրանց պաշտօնեաններով և ուրիշ հազարաւոր հանդիսականներ այս տօնը զարդարում էին։

Ի՞նչ էր այս Հայոց համաշխարհական տօնի պատճառը։ Նախ՝ ինչպէս գիտենք, հին տարեմուտն էր, որովհետեւ Նաւասարդ նշանակում է նոր տարի։ Երկրորդ՝ Նաւասարդը ջրհեղեղի յիշատակն էր, ուստի և այդ օրերը զանազան ջրախաղեր էին կատարում՝ տապանով Արարատ սարի վրայ մարդկանց փրկութեան տօնը յիշատակելու

համար։ Իսկ մենք հիմա, ինչպէս յայտնի է, ջրի այս համակարգավառի օրն ենք կատարում։ Երրորդ՝ տօն էր Ամանորայ ամենաբերից, ինչպէս առաջ յիշեցինք, որը երկի բերքի և առատութեան չաստուած էր համարում։ Ուրիշ շատ պատճառների հետ մէկն էլ այն էր, իբրև թէ Մասիսի վճի մէջ Արտաւազդի շղթաների կրծելուց տարուայ վերջին օրը մազի բարակութեան և կոտրելու է հասնում, և հազիւ թէ Արտաւազդ սպառնում է տարուայ հետ բոլոր աշխարհախումբ տօնը համաշխարհական սուդ դարձնել՝ Նաւասարդի օրը դարբինաները իրանց սալը ծեծում են, և այդ ձայնից աշխարհքը Արտաւազդի աւերմունքից ազատում է։ Այժմ ոչ միայն Նաւասարդի օրը, այլ և ուրիշ օրերին դարբինաները սուվորութեամբ սալը ծեծում են, զոր օր. ամենայն կիրակի օրերը կամ չարչարանքի ուրբաթ օրը։ Այս ամենայն յիշատակներից վերագոյն և հնագոյն և տօնելի յիշատակ այս օրուանս էր՝ ՀԱՅԿԻ, մեր ազգի նախահայրը, և նորանով մեր ազգի ձեանալը, որ մեծ յաղթութեամբ ազատեց Բէլի բանութիւնից։ Այս տօնի սկզբնաւորութիւնը համարում է 2492 տարի Քրիստոսի թուականից առաջ, օգոստոսի 11-ին, կամ Արարամից մօտ 500 տարի առաջ։ Այս տօնը բուն Օր հայկական և Տօն ազգային է։ Հայկայ մեծ քաջութեան և անուան համար էր, որ նորա յաջորդները Նաւասարդի օրերում իրանց ազգի ոյժը ներկայացնող կտրիճ զօրքերի աշխարհագումար հանդէսներ էին անում, և այն մեծ անձի անունը աւելի անմոռանալի արեցին երկնքի համաստեղութեանց մէջ գրոշմելով, որովհետեւ այն համաստեղութիւնը, որ ուրիշ ազգերը Որիոն են կոչում, մենք անուանում ենք Հայկ։ Եւ այսպէս ահա 44 զար է, որ Հայկայ աստղի բարձրանալու օրերը՝ անխափան յիշեցնում են մեր ազգային և հայկական օրը, որ և մենք՝ ինչ վի-

ճակի մէջ որ լինենք, պէտք է նորա անունը յիշենք, ուօնենք և անմոռաց հանդիսացնենք, քանի որ Հայ ազգի անունն ու լեզուն պահում ենք: Այս տօնն էլ՝ քրիստոնեայ Հայերի մէջ անմահացնելու համար, մեր հայր Լուսաւորիչը այս օրը նուիրեց Ս. Կարապետ Յովհաննուն, որ մեր աշուղներին յայտնի մուրապատու Մշու սուլթանի տօնն է:

Նաւասարդից երկու շաբաթ յետոյ Հայերը մէկ աշխարհախումբ տօն էլ ունէին՝ Հայաստանի ամենից սիրելի և ամենից մեծ խնամակալ պահապանի անունը յարգելու համար, որ է Անահիտ դիցուհին, որին Հայերը շատ պատում և պաշտում էին և ոսկի արձաններ էին կանգնեցնում: Մեր Տրդատ թագաւորի թղթից իմանում ենք, որ այդ Անահիտն է մեր ազգի փառքն ու կեցուցիչը, որին ամենայն թագաւորները պատում էին. նա է մայր ամենայն գրաստութեանց, բարերար ամենայն մարդկային բնութեան. նորանով կայ և կենդանութիւն է կրում Հայոց երկիրը, Հայերի խնամական է: Ս. Գրիգոր Լուսաւորիչը Անահիտին իջեցրեց Հայոց տիկնութիւնից և տեղը բարձրացրեց Ս. Կոյս Աստուածածնին:

Այս բոլոր եկեղեցական տօները այժմ շարժական տօներ են, ուստի և ճշառութեամբ նոյն օրերին չեն կատարւում, բայց և այնպէս յիշեցնում են հին Նաւասարդի տօները:

Հայոց այս «համաշխարհական» տօնի պատճառը երեք բան էր. առաջին՝ հին տարեմուտն էր, որովհետեւ «Նաւասարդ» նշանակում է «Նոր տարի». Երկրորդ՝ Նաւասարդը ջրհեղեղի յիշատակն էր, ուստի և այդ օրերը զանազան ջրախաղեր էին կատարւում՝ տապանով Արարատ սարի վրայ մարդկանց փրկութեան տօնը յիշատակելու համար. իսկ մենք հիմա ջրի այս հանդէսը Վարդավառի օրն ենք կատարում. Երրորդ՝ «Ամանորայ ամենաբեր» դից տօնն էր, որ բերքի և առատութեան աստուածն էր համարւում:

57. Մ Ե Ծ.

«Գընա, իմ որդեակ, աշխարքը անցիր,
Պանծալի անուն Մեծի դու ստացիր»:

Ու գընաց որդին, շատ քըրտինք թափեց,
Մեծ հարլատութիւն, մեծ գանձ ժողովեց.

Ու դարձաւ հօրը, ասաց պարծանքով.

— Հայր իմ, այժմ Մեծ չեմ քու կարծիքով:

«Զէ, չէ, թէկ դու բօրսայի ես զարդ,
Բայց քեզ չեմ ասիլ տակաւին մեծ մարդ»:

Նա գընաց, մըտաւ իմաստնոց տաճար,

Եղաւ խորիմաստ գիտուն ու հանճար.

Ու դարձաւ հօրը, ասաց պարծանքով.

— Հայր իմ, այժմ Մեծ չեմ քու կարծիքով:

«Զէ, չէ. թէկ դու գիտութեանց ես զարդ,
Բայց քեզ տակաւին չեմ ասիլ մեծ մարդ»:

Պահով, աղօթքով մըտաւ անապատ,

Քուրձ հագաւ մարմնուն, հրաշքներ գործեց շատ.

Ու դարձաւ հօրը, ասաց պարծանքով.

— Հայր իմ, այժմ Մեծ չեմ քու կարծիքով:

«Եղեմայ դրախտին էլ լինիս դու զարդ,
Ես քեզ տակաւին չեմ ասիլ մեծ մարդ»:

Ու գընաց որդին, դարձաւ զօրավար,

Խելքով, քաջութեամբ տիրեց շատ աշխարհ.

Ու դարձաւ հօրը, ասաց պարծանքով.

— Հայր իմ, այժմ Մեծ չեմ քու կարծիքով:

«Զէ, չէ. թէկ դու գոռ դաշտին ես զարդ,
Բայց քեզ տակաւին չեմ ասիլ մեծ մարդ»:

Ու գընաց որդին մի երկիր օտար,

Հրէշք ու ցաւերէ մաքրեց այն աշխարհ.

Ու դարձաւ հօրը ասաց պարծանքով.

«Հայր իմ, այժմ մեծ չեմ քու կարծիքով:

«Օտար աշխարհի թէւ եղար զարդ,

Բայց քեզ տակալին չեմ ասիլ մեծ մարդ»:

Ու գընաց որդին... Հա, սարն էր զլորման...

Դէմ տըւեց ուսը, չըթողեց անկման...

Ու դարձաւ հօրը, ասաց պարծանքով.

—Հայր իմ, այժմ Մեծ չեմ քու կարծիքով:

«Դիւցազների մէջն էլ լինիս դու զարդ,

Բայց քան ինձ ասել քեզ համար մեծ մարդ»:

Ու գընաց որդին գըլխակոր, տըրտում,

Հոգին վըրդոված, ցաւ ու դարդ սըրտում.

Մաշւում էր խեղճը, զօր տալով խելքին —

Հէր չարժանացաւ հօր գովասանքին...

Նորա եղբայրը գերի էր տարած,

Թընամու ձեռքով տունը աւերած.

Ճիգ արաւ, զլուխը վըտանգի ձրգեց,

Ազատեց եղբօրն ու տունը կանգնեց...

Ցանկած... սար ու ձոր, ձով դըղըրդեցան,

Բիւրք բիւրուց բերնով գոչեց ազգ մարդկան.

«Մեծ մարդու անուն դու այժմ սասացար —

Եղբօրդ յիշեցիր ու քեզ մուացար»:

58. ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ ՍԿԻԶԲԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայոց Աբգար թագաւորի ժամանակն էր, որ մեր Փրկիչ Յիսուսը երուսաղէմում հրաշքներ և բժշկութիւններ էր անում և խրայելացոց ազգին քարոզում էր դէպի ապաշխարութիւն։ Աբգարը՝ լսելով նորա հրաշքործու-

թիւնների մասին և ինքն էլ հիւանդու ու մարդկային բժշկութիւնից յոյսը կարած լինելով, դեսպաններ է ուղարկում Յիսուսի մօտ և ինդրում է նորան գալ, բժշկել իրան հիւանդութիւնից։ Թագաւորը իւր նամակի մէջ յիշում է այն հրաշագործութիւնների մասին, որ նա գործել է Հրէաստանում և խոստովանուում է, որ նա Աստուած է և Աստուծոյ Որդի, ուստի առաջարկում է նորան գալ և քնակուիլ իւր քաղաքում, ասելով՝ «որ ես ունիմ մի փոքրիկ քաղաք, եղեսիայ անունով, որ ինձ և Քեզ բաւական է. այստեղ Դու կարող ես հանգիստ լինել և ազատուիլ հրէանների ամբաստանութիւններից և հալածանքներից։ Յիսուսը, ստանալով Աբգարի նամակը, ասում է. «Երանի նորան, որ գեռ չտեսած՝ հաւատում է ինձ, որովհետեւ որոնք տեսնում են ինձ, չեն հաւատում, իսկ որոնք չեն տեսնում, հաւատում են և կ'ապրեն»։ Յետոյ աւելացնում է, որ ինքը չէ կարող գալ և նորան բժշկել, որովհետեւ պէտք է կատարէ այն ամենը, ինչի համար որ աշխարհ է եկել. բայց խոստանում է իւր մահից յետոյ իւր առաքեալներից մէկին ուղարկել, որ նորան բժշկէ։ Յիսուսը իւր նամակի հետ, որ զբում է թովմայ առաքեալը, ուղարկում է և իւր անձեռագործ պատկերը — Դաստառակը, «որ երկար ժամանակ պահում էր եղեսիայում։

Յիսուսի յարութիւնից յետոյ, ինչպէս որ Տէրը հրամայել էր, թովմայ առաքեալը ուղարկեց Թաղէսս առաքեալին, որ Քրիստոսի եօթանասուն աշակերտներից մինն էր, Աբգարին բժշկելու։ Թաղէսս առաքեալն եկաւ, բժշկեց թագաւորին և մկրտեց թէ թագաւորի տունը և թէ պալատականներից շատերին։ Աբգար թագաւորը, ուրիշ վեհապետների նման, չկամեցաւ ուժով տարածել քրիստոնէական հաւատը, այլ տուեց իւր հպատակներին խղճմընանքի և կամքի ազատութիւն՝ ընդունելու նոր կրօնի

վարդապետութիւնը. իսկ ինքը միայն բարոյապէս էր նպաստում նորա ընդհանրանալուն: Այդ նպատակով նա երկու անգամ նամակ գրեց Հռովմայեցոց կայսր Տիրերիունին, յայտնելով այն սքանչելիքների մասին, որ գործել էր Յիսուսը և գործում էին նորա աշակերտները նորա անունով: Կայսրը իւր կողմից Արքարին խոստացաւ, որ ազատութիւն կրտայ իւր հաղատակներին դաւանաբանական գործերում և խիստ կերպով կրպատժէ նոցա, որոնք կը հալածեն քրիստոնեաներին: Արքարը նամակ գրեց նաև իւր ցեղակից և դաշնակից թագաւորներին՝ Պարսից Արտաշէսին և Բաբելացւոց Ներսէին նոյն բովանդակութեամբ, ինչպէս էր կայսրինը: Բայց առաջին քրիստոնեայ թագաւորը, գեռ չստացած իւր վերջին երկու նամակների պատասխանը, մեռնում է 32 թուականին Ք. Յ.

59. * *

Երբ-որ տեսնում եմ, որ մոլեգնաբար Եղբայր Եղբօր դէմ դարան է գործում, Եւ մարդիկ չնչին շահերի համար Մատնում են իրար ու դաւաճանում. Երբ ես տեսնում եմ՝ սիրոյ դիմակով Ծածկուած անսահման ինքնամիրութիւն, Իդէ իդէալների շողողուն փայլով Քօղարկուած կոպիտ նիւթապաշտութիւն, Այն-ժամ ակամայ ինձ այցելում է Յուետեսութեան մոլեգին ողին, Եւ լոյս աշխարհը աչքից ընկնում է Այդ չարաբաստիկ մուայլ բոպէին... Բայց յանկարծ անհ սըրտիս խորքերից Լսում եմ ազնիւ բարկութեան գոչիւն.

— «Միթէ մոռացար Քրիստոսի ճակտից Առուակի նըման կարկաչող արիւն. Միթէ մոռացար Այն հազարաւոր մարտիրոսներին, Որ սուրբ արիւնով, մահով չարաչար Նորա կտակը մեզ աւանդեցին...» Իսկոյն ինձ համար բացւում է արագ Ահա վարագոյլն հետու անցեալի, Եւ աչքիս առաջ ներկայանում է Միթէ սուրբ բազմութիւն նահատակների... 60. ԳՐԻԳՈՐ ՀՈՒՍԱԿՈՐԻՉ

Խոսրով առաջին հայոց թագաւորը՝ յաջորդելով իւր հայր Վաղարշակին (213 թ.), ստիպուած է լինում բուռն ու երկարատես պատերազմներ մղել Պարսից Արտաշիր թագաւորի դէմ: Վերջինս անկարող լինելով շարունակել կը-սիւ, կաշառում է Անակ իշխանին, որ հայոց իշխաններից ոմանց պէս, Պահլաւոնի տոհմից է լինում, խոստանալով տալ նրան Քուշանաց թագաւորութիւնը, եթէ Խոսրովին սպանի: Անակը իւր բոլոր ցեղով դիմում է Հայաստան, իբր թէ փախչելով Արտաշիր ձեռքից. Պարսից զօրքն էլ, աչքակապութեան համար, մինչև սահմանագլուխը հալածում է նորան: Խոսրովը սիրով ընդունում է փախստական Անակին... Մի քանի ժամանակից յետոյ՝ ապերախտ հիւրը, որսի ժամանակ, մահացու հարուած է տալիս իւր բարերարին և ինքն աշխատում է փախչել, բայց որսակից նախարարները հասնում են յետեկից, բռնում են ու գցում Երասի գետը: Մենոնդ թագաւորի հրամանով Անակի բռնը սերունդը սրի են քաշում. ազատում է միայն մի արու մանուկ Անակի որդիներից. Եւթաղ անունով մի

մարդ երեք տարեկան տղային փախցնում է կեսարիայ՝ Սովիայ անունով ծծմօր հետ։ Այնտեղ մանկանը մկրտում են և անուանում են Գրիգոր (ծնունդը 257 թուին)։

Գրիգորը կրթուեցաւ քրիստոնէական ուսման մէջ, անաւ առաքինութեամբ և ուսաւ հելենական և ասորական դըպ-քութիւնները։ Յետոյ նա ամուսնացաւ մի Մարիամ անու-նով քրիստոնեայ աղջկայ հետ և նորանից ունեցաւ երկու զաւակ՝ Արիստակէս և Վրթանէս։ Երեք տարուց յետոյ երկու ամուսնակիցները միահաւան քակեցին իրանց ամուս-նական կապը։ Մարիամը՝ փոքր որդին վեր առաւ, վանք քաշուեցաւ, իսկ Գրիգորը, մեծ որդին թողեց դայեակի մօտ, գնաց Հռոմ։ Գրիգորը լսել էր, որ իւր հայր Անակը սպանել է Տրդատի հօրը, ուստի մտքումը դրեց հաւատա-րիմ ծառայութեամբ քաւել հօր յանցանքը։ Գրիգորը Տըր-դատի հետ եկաւ Հայաստան։ Երիգայ քաղաքում, երբ Տրդատ իւր յաղթութիւնների համար զոհ էր մատուցանում Անահիտ աստուծուն, հրամայեց Գրիգորին, որ նա էլ Երկրպագէ միւսների նման։ Գրիգորն առաջին անգամն էր, որ ընդդիմացաւ իւր տիրոջ հրամանին։ Թագաւորը բար-կացաւ և հրամայեց սարսափելի չարչարանքների ենթար-կել նորան, մանաւանդ երբ տեղեկացաւ, թէ նա Անակի որդին է. բայց Սուրբը անտրասունջ տանում էր ամեն չարչարանք... Աստուծոյ զօրութեան ապաւինուած՝ Սուրբ Գրիգորը դիմացաւ տասնեչորս անտանելի պատիժների։ Այդ պատիժներից յետոյ Տրդատը հրամայեց ձգել նորան մահապարտների խոր վիրապը, որ գանուում էր Մասիսի ստորոտում։ Այս անցքը պատահեցաւ 287 թուին։ Այնու-հետև զայրացած թագաւորը միմեանց յետելից երկու հրո-վարտակ հանեց, որոնցով խստօրէն արգելում էր քրիստո-նէութիւնը և հրամայում էր ջերմեռանդութեամբ պաշտօն մատուցանել անկենդան կուռքերին։ Գրիգորը տասն և

հինգ տարի մնաց Խոր-Վիրապում, որ լի էր թունաւոր օձերով, և Աստուածային հրամանով բոլորովին անվաս մնաց այդ սողունների մէջ։ Աւանդութիւնն ասում է, որ մի պառաւ կին այդ ժամանակամիջոցում կերակրում էր նորան օրական մի կտոր ցամաք հացով։

Այդ ժամանակներն էր (301 թ.), որ Հռոմայեցոց կայսր Դիոկղետիանոսի ձեռքից փախան Հայաստան հա-ւատացեալ կոյսերի մի խումբ, որոնց առաջնորդներն էին Հռիփսիմէ և Գայլիանէ, որովհետեւ կայսրն ուզում էր Հռիփ-սիմէին կին առնել, իսկ սա չէր կամենում։ Սոքա եկան և բնակուեցան Վաղարշապատ քաղաքում մէկ հնձանի մէջ։ Տրդատը Դիոկղետիանոսի նամակից իմացաւ այդ մասին և, տեսնելով Հռիփսիմէի գեղեցկութիւնը, ինքը կամեցաւ ամուսնանալ նորա հետ։ Կոյսն ընդդիմացաւ և թագաւորը կոտորել տուեց բոլոր խումբը, որոնք 35 հոգի էին։ Այս անի-քաւ արիւնհեղութեան համար Աստուծոյ պատուհասը հասաւ թագաւորի և նորա պալատականների վրայ։ Նոքա կորցրին իրանց խոհականութիւնը և անսամսական բնաւորութիւն ստացան։ Յետոյ, Տրդատի քոյր Խորովիդուխտի կրկնակի տեսիլքներից դրդուած, հանեցին Ս. Գրիգորին Խոր-Վիրա-պից, թէ և սկզբում նորան արդէն մեռած էին համարում։ Ս. Ծերունին նախ թաղեց կոյսերի մարմինները և շինեց նոցա վրայ վկայարաններ, որին ամենայն եռանդով և իբրև հասարակ մշակներ մասնակցում էին թագաւորը, նախա-րարները և Խոսրովիդուխտը, ապա 65 օր թագաւորին, պալատականներին և հասարակութեանը քարոզելուց յետոյ, բժշկեց նոցա։ Այսպէս ահա 302 թ. Հայաստանում նորո-գուեցաւ քրիստոնէական հաւատը, որ Արգարի ժամանակ մասնաւորապէս ընդունուել էր և նորա յաջորդների ժա-

մանակ, հալածանքների ենթարկուելով, մոռացուել, թէև, չէ կարելի ուրանալ, կային ծածուկ երկրպագողներ ճշմարիտ Աստուծուն:

Այսուհետև Ս. Գրիգորը թագաւորի և նախարարների հետ պարտեցին Հայաստանի զանազան կողմերը, ամենայն տեղ կոաստունները քանդեցին և նորանց տեղը Քրիստոսի խաչը կանգնեցրին: Այսպէս՝ այն մարդու որդին, որ սպանելով մեր արժանաւոր թագաւորին, գցել էր մեզ տառապանքների գիրկը, հանեց մեր աշխարհը և մեր ազգը հեթանոսական խաւարից և տարածեց նորանում քրիստոնէական հաւատի փրկարար. և կենդանաբեր լոյսը: Թագաւորը՝ նախարարների և իշխանների միաձայն հաւանութեամբ, Ս. Լուսաւորչին ընդհանուր քահանայապետ ընտրեց և ուղարկեց կեսարիայ Ղւոնդիէս պատրիարքի մօտ, որ Թագէսս առաքեալի յաջորդն էր, որպէսպի ձեռնադրէ նորան քահանայապետ Հայոց աշխարհին: Ղւոնդիէսը մեծ ուրախութեամբ կատարեց Տրդատի խնդիրը: Կեսարիայից վերադառնալով Հայաստան՝ Ս. Գրիգորը քանդել է տալիս մեհեանները և նորանց տեղը եկեղեցիք է կառուցանում: Մուշ քաղաքի մօտ շինում է, ի միջի այլոց, Ս. Կարապետի վանքը, զետեղելով Մուրբի նշխարների մի մասը, որ մինչև այսօր հոչակաւոր ուխտատեղի է Հայաստանում: Ճանապարհին ընդ առաջ են գնում նրան թագաւորը և նախարարները իրանց զօրքերով: Բագրեանդի Բազաւան քաղաքում Լուսաւորիչը նախապատրաստում է ժողովրդին և, մի ամիս ուսուցանելուց յետոյ, մկրտում է Տրդատ թագաւորին իւր ընտանիքով, բոլոր նախարարներին և զօրքին: Այսուհետև Լուսաւորիչը թագաւորի հետ շրջում է Հայաստանի ամեն կողմերը, մկրտում է ամենքին, շատ տեղերում ուսումնարաններ է բաց անում, ժողովում է քուրմերի որդիներին և նորանց ուսուցիչ է նշանակում նորա-

բաց ուսումնարաններում յոյն և ասորի լեզուների, որովհետեւ այն ժամանակ հայերը դեռ այբուբէն չունէին և բոլոր զրագրութիւնները օտար լեզուներով էին կատարում: Քուրմերի որդիներից արժանաւորներին կուսաւորիչը եպիսկոպոս է ձեռնադրում և գաւանների ու քաղաքների վրայ տեսուչներ է կարգում: Նոյնպէս կարգադրում և բազմացնում է քահանաների և ստորին պաշտօնակալների թիւը, շինում է շատ եկեղեցիներ, վանքեր, կուսանոցներ և հեթանոսական տօների փոխանակ սահմանում է քրիստոնէական տօներ: Եւ այսպէս ամբողջ Հայաստանը յեղաշրջում է կոապաշտութեան խաւարից դէպի քրիստոնէութեան լոյսը:

Եկեղեցին այսպէս կարգաւորելուց յետոյ, Ս. Գրիգորը իւր պաշտօնը յանձնում է Սրբատակէս որդուն և ինքն առանձնանում է Սեպուհ սարը և Մանիայ այրի մէջ իւր վերջին օրերն անց է կացնում մենական ճգնութեամբ (331 թ.): Տրդատ թագաւորն էլ, Լուսաւորչի մահից յետոյ, անբաւական իւր նախարարներից, առանձնանում է նոյն այրի մէջ և, չնայելով նախարարների խնդրանքին, այլևս յանձն չէ առնում թագաւորել նոցա վրայ: Նախարարները՝ տեսնելով որ Տրդատը հրաժարում է նոցա առաջարկութիւնն ընդունելուց, աիրանենգալքար թունաւորում են նորան և այդպիսի դառն վախճան են տալիս մեծ և բարեպաշտ թագաւորի արդիւնաւոր կեանքին: Մուրբ թագաւորը մեռնում է 36 տարի թագաւորելուց յետոյ:

61. Ժ Ա Յ Ռ

Որպէս յաղթանդամ մի ծերուկ հսկայ կախուած է ժայռը ջրերի վրայ:

Ալիքը կայտառ գնում են, գալիս
Եւ ժայռին սիրոյ համբոյը են տալիս:

Խաղում են անհոգ ալիքը գետի,
Յուցնում են գրկած պատկերն արևի,
Եւ որպէս մանուկ՝ ժպիտն երեսին,
Մեղմիկ շշունջով ասում են ժայռին.

«Լոիր, ծերունի, ինչու ճակատիդ
Սև կընճիռները չեն տալիս դէմքիդ
Մի օր խընդութեան շողով ցոլանալ.
Ողջը փոխում է, դու նոյնն ես դարձեալ.

«Ազատ լեռների ազատ զաւակներ,
Մենք քեզ բերել ենք անթիւ գոհարներ,
Երկնքի դստեր-վարդի լեռնասուն
Կըցօղենք կըրծքիդ անուշ'հոտութիւն:

«Մենք երանաւէտ քնքուշ նուազով
Կը կոչենք խորքից ձըկներն երամով,
Եւ ոսկեզօծուած գարնան արևից
Մեր զուարթ պարին կ'անենք խնդակից:

«Եւ քո ականջին միշտ սիրոյ երգեր
Մենք արշալոյսից կ'ասենք մինչ գիշեր.
Եւ քեզ կը փարենք և քո կըրծքին ծեր
Կըտանք որ հանգչին մեր քաղցր կըքեր»:

Ալիքը կայտառ գնում են, գալիս
Սև ժայռը նախկին իւր վիշտն է լալիս...
Խաղում են ալիքը, ուրախ կարկաջում
Նա կըկին անշարժ, նա կըկին տրտում...

62. Ն Ե Ր Ս Է Մ Ե Ծ Հ

Ներսէս Ա. կաթուղիկոսը Գրիգոր Լուսաւորչի թուան
թուան էր: Նա իւր ամբողջ կեանքի ընթացքում ջանք էր
անում, որ քրիստոնէութիւնը և քրիստոնէական առաքինու-
թիւնները ամենայն տեղ տարածուին ու հիմնաւորապէս
հաստատուին Հայաստանում:

Նա, շատ գժուարութիւնների յաղթելով, կուռեց կը-
ռապաշտական մնացորդների դէմ և քրիստոնէութիւնը գոր-
ծով սկսեց արդիւնաւոր կացուցանել ժողովրդի համար:
Ընդհանուր ժողով կազմելով աշխարհականներից և հոգևորա-
կաններից, կուապաշտական խիստ սովորութիւնների տեղ
ողորմածութիւն հաստատեց. հեթանոսական օրէնքներով
բորոտներին, իւրեւ պիղծ մարդկանց, հալածում էին, և նրանք
անապատներում էին իրանց համար բնակութիւն հաստա-
տում և ոչ ոք չկար, որ միխթարէր նոցա իրանց թշուառ
պիճակում. անդամալոյցներին չէին խնամում և անծանօթ
հիւրերին ու օտարականներին չէին ընդունում: Այս բոլոր
բաները ցոյց էին տալիս նախ՝ որ կուապաշտական սովորու-
թիւններն տակաւին չէին կորցրել իրանց ազգեցութիւնը
և երկրորդ՝ որ քրիստոնէական մարդասէր սկզբունքները տա-
կաւին չէին տարածուել ժողովրդական խաւերի մէջ: Ներսէս
Մեծը այս կուապաշտական սովորութիւնների դէմ պա-
տերազմելով՝ կարողացաւ նորանցից շատերը ջնջել և հայ-
կական կոշտ կենցաղի մէջ մտցնել աւելի մարդասէր
սկզբունքների դործաղրութիւն: Նա հրամայեց իւրաքան-
չւոր գաւառում օտարականների, որբերի, չքաւորների և
ծերերի համար ճաշարաններ պատրաստել. անապատներում
շինել տուեց եղբայրանոցներ և մենաստաններ:

Արշակ Բ-րդի թոյլ թագաւորութեան ժամանակ Մեծն

Ներսէսի կեանքը զլիսաւորապէս անցնում էր հաշտութիւն ձգելով նախարարների և թագաւորի մէջ։ Նա մինչև անգամ իբրև խաղաղութեան դեսպան ուղարկուեցաւ յունաց Վաղէս կայսեր մօտ, բայց նորանից աքսորուեցաւ և, նաւաբեկութեամբ ընկնելով մի անմարդաբնակ կղզի, ութ ամիս ապրեցաւ նորա վրայ իւր սպասաւորների հետ։

Թէոդոս կայսեր ժամանակ Մեծն Ներսէս աքսորանքից վերադառնալով և Արշակի որդի Պապին կայսրի օգնութեամբ թագաւորեցնելով՝ եկաւ Հայաստան և, որքան հնար էր, բարեկարգեց նորա վիճակը, որ իւր բացակայութեան միջոցին բաւականին աւերուել էր։ Սակայն Հայաստանի այս լուսատու ճրագը Պապ թագաւորի զազրագործ կրքերին զոհ եղաւ և թունալից բաժակը նորա փառաւոր կեանքին վախճան դրեց։

63. ՄԵՆԱՍՏԱՆ

Որպէս մի ամուր բարձր պատուանդան,
Որպէս մի հզօր և անյաղթ պաշտպան,
Մերկ քարաժայոր իւր կուրծքի վըրայ
Հանգըստացնում է մի սուրբ մենաստան։
Անձուկ աշխարհի ազատ հոգսերից,
Ազատ և ունախ վայելչութիւնից,
Հեռու ամենից, այնտեղ փակուած են
Մատաղ կուսանքը մաքուր և անբիծ։

Իզուր է զուարթ գարունը ծաղկում,
Պայծառ արել իզուր է փայլում.
Խարուսիկ բնութեան խարուսիկ գեղը
Զուարճատեաց կուսանց չնչին է թըլում։
Ո՞չ մեղկ ոտները սրբապիղների
Եւ ոչ նենդ միտքը չար ողիների,

Երբէք վրդովել չեն կարողանում
Սնդորը լուութիւնն այն սրբավայրի։
Այնտեղ հանապաղ ծխւում են խունկեր,
Հանապաղ առկայծ վառում են մոմեր,
Եւ մաղթանքները, որպէս խորտակուած
Սրտի հառաչներ, առաքւում են վեր։

64. ՄԵԾՆ ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒ

Ներսէս Մեծի մահից փոքր ինչ յետոյ բացւում է այն լայն մտաւոր ասպարէզը, որտեղ, իբրև պարագլուխ հայկական լուսաւորութեան, հանդէս են դուրս գալիս նուրա որդի և ձեռնասուն աշակերտ Սահակ Մեծը և իւր լծակից Մեսրոպ Մաշտոցը, որ նոյնպէս Ներսէս Մեծի աշակերտն էր։ Այս երկու անձանց բարոյական բարձրութիւնը և հայրենասիրական ոյժը գնում են Հայաստանի մէջ այն կենդանական սերմերը, որոնք ծելով ու վեր աճելով մտաւորական և բարոյական կենդանութիւն են տալիս հայկական սերնդին։

Սահակ վերջին Պարթև կաթողիկոսը, Գրիգոր Լուսաւորչի վեցերորդ սերունդը, 390 թուականին նստելով կաթողիկոսական աթոռի վրայ, իսկոյն քննեց ժողովրդի դրութիւնը, տեսաւ ու լաւ նկատեց նորա բարոյական ցաւերը և հմուտ բժշկի պէս վերահասու եղաւ և իմացաւ, որ ազգի տարտամ զբութիւնն ամրացնող և զուարթացնող միակ միջոցը ուսումն ու դաստիարակութիւնն է։ Նա լաւ էր ճանաչում, որ մի ազգի բարոյական և մտաւոր զօրութիւն տալու համար՝ պէտք է ներգործել սրտի և հոգու վրայ, որ ֆիզիքական կոշտ զօրութիւնը, առանց ներքին համոզման, շատ գիւրաբեկ է։ ներքին համոզմունքն է, որ կենդանութիւն և ամրութիւն է տալիս ֆի-

զիքական զօրութեանը: Սահակ Մեծը, ազգին բարոյական զօրութիւն տալու համար, միակ միջոցը ուսումն ընտրեց:

Հայոց զբերը գտնելուց յետոյ Սահակ Մեծը ջանք է անում Մեսրոպ վարդապետի հետ Ս. Գիրքը թարգմանել, բանալ ուսումնարաններ և դաստիարակել ազգի մատաղ սերունդը Հայոց զբով և լեզուով և ընդ նմին տնկել ու հաստատել նոցա սրտի մէջ քրիստոնէական և ազգասիրական վսեմ պարագանութիւններն ու առաքինութիւնները: Տեսնելով, որ Հայաստանում չի կարելի աւանդել աշակերտներին այն ուսմունքն ու զիտութիւնները, որ աւանդում էին աւելի լուսաւորեալ քաղաքներում, որպիսիք էին Բիւզանդիայ, Աթէնք, Աղէքսանդրիայ, Եղեսիայ, և այլն, Սահակ Մեծը և Մեսրոպը, վաթունի չափ ընդունակ և ուսմանը բաւականին ծանօթացած երիտասարդներ ուղարկեցին վերոյիշեալ քաղաքները՝ զիտութեանց այլեայլ բաժինները սովորելու և կատարելագործուելու:

Այսպէս՝ Հայաստանի մեղուները, իրանց վարդապետի հոգովը թեաւորուած, դիմում էին դէպի զիտութեան ծաղիկները: Բիւզանդիայի Մաքսիմիլիանոս եպիսկոպոսը, այնտեղ գտնուող հայ երիտասարդների վրայ մեծ խնամք և սէր ցոյց տալով, նոցա հետ ուղարկեց Հայաստան Աստուածաշնչի ստոյգ և հարազատ օրինակը Յունաց լեզուով: Սահակ հայրապետը և Մեսրոպը իրանց աշակերտների հետ նորից թարգմանեցին Ս. Գիրքը այն ստոյգ օրինակից:

Սահակ Մեծը, որ ազգի բարօրութեան և լուսաւորութեան համար նուիրել էր իւր անձը, որ իբրև արթուն և անխոնջ հոգիւ աւետարանական քարոզութիւնը տարածել էր Հայաստանի ամենայն կողմերը, Արշակունեաց Արտաշէս վերջին թագաւորի հետ իւր ծերութեան օրերն անց կացը Պարսկաստանում, բանտի մէջ, Հայոց նախարարների ամբաստանութեան զոհ լինելով: Թէպէտ նախարար-

ները, վերջապէս հասկանալով իրանց սխալանքը, միաբան աղաչեցին ծերունի Ս. Սահակին, երբոր նա ազատուել էր բանտից ու վերադարձել Հայաստան, որ յանձն առնէ կաթողիկոսական իշխանութիւնը, սակայն Ս. Հայրապետը, մարգարէական նախագուշակութեամբ լցուած, հրաժարուեցաւ այդ առաջարկութիւնից և, փոքր ժամանակից յետոյ, կնքեց իւր բազմաչարչար և օքնաբեր կեանքը 441 թուին: Սյս մեծ մարդն էր, որ լուսաւորութեան սերմերը խոր արմատացրեց Հայաստանի պտղաբեր մատաղ սրտերի մէջ, որոնցից գուլս աճեցին հինգերորդ գարի հայկական զրականութեան ծաղիկները: Նա իւր հզօր հոգովը կառավարեց կաթողիկոսութեան աթոռը 51 երկար և արկածալի տարիներ: Նորա մարմինը իւր հարսը, Վարդան Մամիկոնեանի կին Դստերիկը, աարաւ Տալօնի գաւառը և իրանց Աշտիշատ զիւղում հողին յանձնեց: Հայոց եկեղեցին, ի շաբանը դասելով Սահակ Պարմեկին, տօնում է նորա անմուանալի յիշատակը ամենայն տարի:

65. Հ Ր Ա Շ Ք

(ՊԱՏՄՈՒԱԾ ԱԽԱՆԳԱՅԻԹԻՒՆ)

Կըսոսկար ահէն Հայը անպաշտպան,
Երբ Մոհմադ ուսքը զըրաւ Հայաստան.
Փըրկութեան, զիաէր, ոչինչ յոյս չիկար:
Թէ որ իւկերուստ մէկ հըրտշք չիզար:
Արաբը ուկու, արեան ծարաւին,
«Օրհասը մօտ է, կասէր, պիղծ Հային».
Հըրով ու սըրով ահեղ կըսպառնար
Քանդել, կործանել Հայաստան իսպառ:
Արիւն կըծորար առած վէրքերէն,
Սըմբատ ու Ներսէս զօրավարներէն,

Կուզէր նա անմեղ արիւնով Հային
Սըրբէլ սև ամօթ պարտըւած զօրքին:
Թագաւոր, պաշտպան, գէնք ու զօրական
Թըշուառ Հայերին չէին օգնական.
Յոյսը երկրնքէն վաղուց հատել էր:
Երկինք Հայերէն ձեռք վեր առել էր:
Ո՞ւմ յուսան Հայերն, դէպ որին դիմեն,
Պաշտպան, ապաստան ո՞րտեղ թող զըտնեն.
Դըրացիք՝ խարդախ Յոյնք ու գոռ Պարսիկք,—
Ինքներն են Հայի արեան ծարաւիք:
Ազգի այսպիսի թըշուառ ժամանակ
Յիշեց իւր հօտը հայրապետ Սահակ.
«Ես կ'երթամ, ասաց, Մոհմադի գուոք՝
Հեռացնել Հայէն մահաբեր սուրը»:
Ասաց և իսկոյն ճանապարհ ընկաւ.
Բայց ճամփու վըրայ նա արկարացաւ.
Մահուան մահճի մէջ գըրեց մէկ նամակ,
«Թէ մեռնիմ, ասաց, Մոհմադին կուտաք»:
Շատ չի ապրեցաւ արդար ծերունին,
Խոր աղէտքի մէջ թողնելով Հային.
Օրեր, ամիսներ դին անթաղ մընաց,
Եւ այն նամակը աջի մէջ սեղմած:
Երբ Մոհմադ կատղած Հայաստան մըտաւ,
Սուրբի մարմինը տեսնել ցանկացաւ.
Հաղիւ հազ ոտքը դըրել էր շէմքին՝—
«Ողջին քեզ, Սահակ», ասաց դիակին:
Ո՞վ հըրաշք... դին իւր ձեռքը կարկառեց,
Իրը կուզէր ասել, երբ թուղթը տըւեց.
«Ինչ իւրնդիր ունէր քեզմէն Սահակը,
Տեղով կըպատմէ քեզ այս նամակը»:

Լուռ էին ամէնք, լուռ որք շուրջ էին...
Ահու սարսափը պատեց Մոհմադին.
Կարդաց նամակը, խոր ոգոց հանեց,
Ու կատղած զօրքը Հայ երկրէն հանեց*):

66. ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏԸ ԵՒ ՀԱՅՈՅ ՏԱՌԵՐԻ ԳԻՒՏԸ

Սուրբ Մեսրոպը, մականուանեալ Մաշտոց, Տարօն գաւափի Հացեկաց գիւղից, Ներսէս Մեծի աշակերտը և հայ թագաւորների ատենագլիքն էր: Նա անդադար կարդում էր Սուրբ Գիրքը և այնչափ վարժուեցաւ ու վառուեցաւ հոգևոր կըթութեան մէջ, որ թողեց աշխարհը, աբեղայ ձեռնադրուեց ու վանք մտաւ: Յետոյ սա միայնակեաց կեանք վարեց Գողթան գաւառում: Բայց Մեսրոպը, որ լոկ կրօնական անձն չէր, այլ ունէր քաղաքագիւտական և ազգամիրական բարձր յատկութիւններ, միայնակեցական կեանքն անձուկ համարելով, ձեռք առաւ ազգային լուսաւորութեան գործը. նա ժողովեց շատ աշակերտներ, կըթեց նոցա և իւր հետ առած՝ քարոզութիւններ էր անում զանազան տեղերում, ջնջում էր մնացած աղանդները և աւելորդ մնապաշտութիւնները Գողթան գաւառից և Սիւնեաց նահանգից: Այս քարոզութիւնների ժամանակ սկզբում նա մեծ նեղութիւն էր կրում, որովհետեւ ինքը պէտք է Աստուածաշունչ գիրքը և կարդար, և թարգմանէր հայերէն: Այս գժուարութիւնները ստիպեցին Մեծ Մարդուն մտածել Հայկական տառեր գտնելու մասին: Այս նպատակով նա շատ փորձեր արաւ, բայց սկզբում բոլոր փորձերն անօգուտ

*.) Այս աւանդութեան մէջ յիշատակուած Սահակ կաթուղիկոսը առլրում էր Ծ դարում, երբ Հայաստանը գտընուում էր Արարական ամիրապետների իշխանութեան ներքոյ:

անցան։ Ապա իմանալով Ս. Սահակ հայրապետի բարելաւութեան համբաւը, եկաւ նորա մօտ, յայտնեց իւր մտադրութիւնը և տեսաւ, որ այդ մինոյն խնդրով նա ևս զրաւուած է։ Ս. Սահակը ժողով գումարեց վաղարշապատ քաղաքում, ուր մեր վռամշապուհ թագաւորը յայտնեց, թէ ինքը երբեմն Միջագետք լինելով, մէկ Յարէլ երէց ասել է իրան, թէ Դանիէլ եպիսկոպոսի մօտ կան Հայոց նշանագրեր։ Այս նշանագրերը բերել տուին և, թէև երկու տարի շարունակ սկսան փորձեր անել և նորանցով ուսուցանել, բայց աշխատանքներն իզուր անցան, որովհետեւ ձայնաւոր տառերը պակաս էին։ Ս. Մեսրոպը կամեցաւ աւարտել սկսած աշխատութիւնը, ուստի մի քանի աշակերտներով գնաց Դանիէլ եպիսկոպոսի մօտ, որ միասին խորհեն և, եթէ հնարէ, լրացնեն տառերի պակասորդը. բայց այս ևս զուր անցաւ։ Մեսրոպը՝ աշակերտներից մի քանիսին Դանիէլի մօտ թողնելով, երկուսի հետ գնաց Եղեսիա, Պղատոն անունով ճարտասան հեթանոսի մօտ։ Այս ևս անօգուտ անցաւ։ Վերջապէս նա գնաց Սամոսատ, Հռոփանոս փիլիսոփայի մօտ, բայց իզուր։ Եւ այսպէս՝ օտարների օժմնդակութիւնից և մարդկային հնարներից ձեռնունայն մնալով, ապաւինեցաւ Աստուծուն և, անձնատուր լինելով իւր մտածութեանը, վերջապէս գտաւ ցանկացած տառերը 406 թուին։

Գլխաւոր դժուարութիւնը վերցրած էր մէջտեղից։ Երանելի վարդապետը Սամոսատում ուսումնաբան բաց արաւ և իւր աշակերտ Յովհան Եկեղեցականի և Յովսէփ Պաղնացու օգնականութեամբ Սողոմոնի Առակաց գիրքը և նոր կտակարանը թարգմանեց. իսկ երբ վերադարձաւ վաղարշապատ, թագաւորը, հայրապետը և բոլոր բազմութիւնը մեծ ուրախութեամբ ընդունեցին նորան նորագիւտ նշանագրերի և նորաթարգման մատեամների հետ և այն օրը ուրախութեան տօն կատարեցին։ Բացուցան ուսում-

նարաններ, ծաղկեցաւ հայերէն գպրութիւնը զարմանալի յառաջադիմութեամբ։ Այնուհետև Մեծ Մարդը հնարեց Վրաց և Աղուանից գրելը։ Յետոյ Ս. Սահակի հետ գնաց Հայաստանի արևմտեան մասը, որ Յունաց բաժնումն էր։ Այնտեղից Մեսրոպը Ս. Հայրապետից դեսպան ուղարկուեցաւ Թէոդոս կայսեր մօտ և իւր մեծ գիտութեան համար պատուեցաւ «Եկլէսիաստիկոս» կոչմամբ։ Նա, Սուրբ Սահակից յետոյ, վեց ամիս կառավարեց հայրապետական աթոռը և կնքեց իւր արդիւնաւէտ և յաւիտեան անմոռաց կեանքը։ Հայաստանը դեռ այն ժամանակ ցոյց տուեց նորան իւր երախտագիտութիւնը և Վահան Ամատունի իշխանը մեծ յուղարկաւորութեամբ նորա սուրբ մարմինը հանգստացրեց Օշական գիւղում և նորա վրայ շինեց Եկեղեցի։

Հայրենեաց բարերարների յիշատակը օրհնութեամբ և երախտագիտութեամբ յիշուի...

67. ԱՌ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

Ո՞վ մեծաքանչ գու լեզու,
Ո՞վ հեշտ բարբառ մայրական,
Փափկահնչիւն բառերուդ
Նըման արդեօք այլ տեղ կմն։
Դու որ նախ ինձ հնչեցիր
Նախ սիրոյ, ոհ, հեշտ խօսքեր,
Այն նախ ըզքեղ թոթովելա
Դեռ իմ մտքէն չէ ելեր։

Իմ մայրենի քաղցր լեզու,
Կեաց անսասան, կեաց յաւէտ,
Կեաց միշտ, լեզուդ Հայկարժան,
Կեաց ծաղկալից-ծաղկաւէտ։

Լեզու համակ սիրաշարժ,
Քանի ճոխ, պերճ ու պայծառ
Մինչ կը հնչես՝ դու քեզի
Սրտերն ամեն գողացար.
Հընչէ, հընչէ յաւիտեան,
Վեհ դիւցազանց պերճ երգ դու,
Թօթվէ փոշիդ խոր մութէն,
Ել երևան, պերճ երգ դու:
Իմ մայրենի քաղցր լեզու,
Կեաց անսասան, կեաց յաւէտ,
Կեաց միշտ, լեզուդ չայկարժան,
Կեաց ծաղկալից-ծաղկաւէտ:

68. ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՐԻ ՀԱՅԵՐԸ

Անբարեյաջող պայմաններ.—Առովմեանց նահատակութիւնը.—Վարդանանց պատերազմը.—Վասակ իշխանի վերջին օրերը.—Հայ կանայք:

I

Մարդուս վիճակը, նորա լաւ կամ վատ կենցաղավարութեան չափը անմիջական կապ ունի այն հանգամանքների հետ, որոնք նրան ըրջապատում են: Եթէ հանգամանքները նպաստաւոր են, պատահարները բարեյաջող, սովորական խելքի տէր մարդն էլ կարգադրում է իւր գործերն այնպէս, որ նորա առօրեայ կեանքը սահում է անշեղ կանոնաւորութեամբ. իսկ եթէ հանգամանքները աննպաստ են, պատահարներն անբարեյաջող, ապա մարդս, եթէ մինչեւ անգամ արտաքոյ կարգի խելքի և ընդունակութիւնների տէր է, ձնշում է այդ հանգամանքների ներքոյ, նորա կեանքը շեղում է սովորական ընթացքից և ներկայացնում է անակնկալ պատահարների մի անհաճոյ կուտակութիւն:

Ում որ յայտնի չեն այդ ձախորդութիւնների պատճառները, նա, ամկասկած, այդ անձնաւորութեան բոլոր անյաշողութիւնները վերագրում է նորա անշնորքութեանը, ծուլութեանը և անհեռատեսութեանը:

Մարդը մի անհատ է, ազգը—անհատների մի համախմբութիւն. ազգի վիճակը շատ մեծ նմանութիւն ունի մարդու վիճակին. ինչ հանգամանքներ որ ծառայում են մասնաւոր անձին որպէս անյաշողութեան աղբիւրներ, նմանօրինակ հանգամանքներ, խոշոր չափերով վերցրած, թշուառութեան ու կորստեան պատճառ են լինում մի ազգի համար:

Հայոց ազգը իւր պատմական կեանքի ընթացքում, որ, համեմատաբար, շատ երկարատև է եղած, ունեցել է, ուրիշ ազգերի նման, իւր կառավարիչների, իշխանների, թագաւորների շարքում՝ խելացի, հեռատես, անվեհներ անձնաւորութիւններ. նա ունեցել է նմանապէս դաւաճաններ, ազգանենպներ, բժամիտ զեկավարներ... Բայց այդ ազգի ընդունակ ներկայացուցիչները չեն կարողացել իրանց խընացքին յանձնուած ժողովրդի վիճակը հասցնել այն քաղաքական հասունութեան, որին հասել են դրացի ազգերը նուազ ընդունակ զեկավարների առաջնորդութեամբ: Միւս կողմից մեր ազգի անարժան ներկայացուցիչների պատճառած չարիքները, ըրջապատող հանգամանքների շնորհիւ, աւելի խոշոր, երբեմն մինչև անգամ անբուժելի են եղած: Ինչու:

Ուսումնասիրեցէք Հայոց պատմութիւնը, սիրելի փոքրիկներս, երբ-որ կրմեծանաք. ուսումնասիրեցէք Հայոց ազգի պատմութիւնը՝ զուգընթաց այն ազգերի պատմութեան հետ, որոնք նորա հարեւաններն են եղած և որոնցից շատերը արդէն իջել են պատմութեան շարքից. ուսումնասիրեցէք՝ և դուք մանրամասն կը ծանօթանաք այդ պատ-

ճառների հետ, իսկ այժմ բաւականացէք այն համառօտ տեղեկութիւններով, որ այսաւեղ առաջ եմ բերում:

Նայելով Հին-Հայաստանի աշխարհազբական քարտէզին, մենք տեսնում ենք, որ նա բռնում է Փոքր-Ասիայի կեղծնական մասը։ Պատմութեան սկզբնական շրջաններում, երբ տիրող ազգերի համար գոյութիւն ունէր միմիայն ցամաքային հաղորդակցութիւն, մեր աշխարհը, ինչպէս կ'ասեն, կամուրջի գեր էր կատարում. բոլոր աշխարհականները իրանց արշաւանքների ժամանակ մեր երկրով պէտք է առաջ խաղային։ Հայաստանը կամայ-ուկամայ ուստատկ լինելու շատ դէպքեր պէտք է ունենար...

Նայեցէք Հայաստանի քարտէզին... Դուք տեսնում էք, որ մեր երկիրը կտրատուած է բազմաթիւ լեռնաշղթաններով, որոնք կազմակերպում են անձուկ դաշտեր, նեղ հովիտներ, ձորեր, ձորակներ։ Այդ լեռնային ցանցի շնորհիւ մեր երկիրը բաժանուում էր շատ մանր գաւառամասերի, որոնց թիւը պատմութեան ընթացքում հասել է մինչև 900 ի։ Այդ գաւառամասելից իւրաքանչիւրը հին ժամանակ յանձնուած է եղել առանձին իշխողների, առանձին տէրերի, որոնցից խոշորները կոչւում էին նախարարներ։ Նախարարները աւատական տէր են եղած իրանց հողաբաժիններին։ Նոցա յարաբերութիւնները երկրի թագաւորների հետ միշտ պայմանական է եղած։ Արտաքին ընդհարումների ժամանակ այս հանդամանքը շատ պիտի թուլացնէր ազգի ընդդիմադրական կարողութիւնը։ Եւ այդպէս էլ եղել է։

Հայաստանը շրջապատուած է եղել ուժեղ ազգերով, որոնց ներքին կազմակերպութիւնը մերի կազմակերպութեան նման չէ եղած։ Մեր ակնարկած շրջանում հայոց ազդեցիկ հարկաններն եղել են պարսիկներն ու յոյները։ Անկասկած այդ երկու ազգերի համար առաջնակարգ նշանա-

կութիւն պիտի ունենար՝ եթէ ոչ տէր լինել, դոնէ զգալի մասնակցութիւն ունենալ Հայոց ներքին գործերի մէջ։ Այս հանգամանքը, նախընթաց պատճառներին զուգընթաց, մեծ չարիքների աղբիւր է եղած մեզ համար։

Կրօնն էլ ճակատագրական գեր է խաղացել մեր ազգի համար։ Քրիստոնէութիւնը, մուտք գործելով Հայաստան, պէտք է վերջնականապէս հեռացնէր մեզ Պարսիկներից, որոնք որպէս տոհմակից ազգ, մինչև այդ միենոյն դաւանութիւնն ունէին, ինչպէս և Հայերը։ Պարսիկներից հեռացնելով, քրիստոնէութիւնը, որ մուտք էր գործել նաև Յունաստանում, չկարողացաւ մօտեցնել մեզ այդ ազգի հետ այն չափով, որ Պարսիկների բարեկամութեան կորուստը փոխարինէր։ Չափազանց եսասէր էր Հին-Յունաստանը և չափազանց կրօնամոլ, որպէսզի կարողանար քրիստոնէական եղբայրսիրութեամբ վերաբերուել դէպի իւր կրօնակից հարեանը։

Վերոյիշեալ պատճառներին զուգընթաց, երբ ազգի զեկը անցնում էր այնպիսի թագաւորների ձեռքը, որոնք իրանց անձնական հաճոյքները ժողովրդի շահերից բարձր էին դասում, ինչպէս էին վերջին Արշակունի թագաւորները, այն ժամանակ, ի հարկէ, ազգի վիճակն էլ աւելի ծանրանում էր, ժողովրդի բարօրութիւնը քայլայւում, ներքին բարգութիւններ առաջ բերում, որից յետոյ, բնականաբար, ազգը կորցնում էր իւր անկախութիւնը։

Բայց որպէսզի դուք գիտենաք, թէ որքան տոկունութիւն, կենսունակութիւն, որքան կորով ու քաջազըրտութիւն կայ այն ազգի մէջ, որին մենք պատկանում ենք, ևս ձեր առաջ պիտի բանամ այդ ազգի անցեալից մի էջ, ազգի, որ տառապանքների մէջ անդամ հրապարակ է հանում իւր անբոնաբարելի վեհութիւնը։

Արշակունեաց թագաւորութիւնը վերջանում է: Պարսիկներն ու յոյները գլուխ են բարձրացնում: Մրանցից իւրաքանչիւրը ուզում է իւր գերիշխանութեան տակ առնել Հայաստանը: Բայց մեր երկրին տիրելու համար այս երկու ազգերից մինը պէտք է միւսին նուազեցնէր: Այդպէս էլ լինում է: Յունաստանի և Պարսկաստանի մէջ պատերազմ է ծագում: Յոյները յաղթւում են և պատերազմական մեծ տուգանք են տալիս՝ հաշտութիւն վաստակելու համար: Հրապարակը մնում է Պարսկաստանին: Պարսից Յազկերտ թագաւորը հաստատապէս վճռում է իւր ծրագիրներն ի կատար ածել. իսկ ծրագիրների էութիւնը նա էր, որ բոլոր հարևան ազգերին կրօնափոխութեամբ ձուլի Պարսկաստանի հետ. այդպիսով քրիստոնեայ ազգերը երբեցէ յոյների օգնութեանը չէին դիմիլ. Յունաստանն էլ այդ ազգերի աջակցութեամբ վտանգաւոր լինել չէր կարող Պարսկաստանի համար: Քրիստոնեայ ազգերի մէջ, որոնց վերաբերութեամբ Պարսկաստանը ծրագրում էր իւր անելիքները, նշանաւոր էին՝ Հայերը, Վրացիք և Աղուանները: Պարսիկը միշտ խորամանկ է եղած. Նրա քաղաքականութիւնը միշտ նուրբ ու զգուշաւոր: Վերոյիշեալ ազգերին անպայման սորկացնելու համար, նախ և առաջ պէտք էր ուժասպառ անել նրանց՝ պէտք էր կազմալուծել այդ ազգերի զինուորական ոյժը: Նպատակին հասնելու համար Պարսից կառավարութիւնը իւր հարևան մի ուրիշ ազգի, Հոների դէմ պատերազմ է հրատարակում և, իւր զինուորական ուժերն աւելացնելու համար, հրամայում է վերոյիշեալ քրիստոնեայ ազգերին օժանդակ զօրք ուղարկել իրան: Հրամանը կատարում է: Հայաստանից էլ

առանձին հեծելախումբ է գնում մի քանի նախարարների առաջնորդութեամբ: Պատերազմը շարունակում է եօթը տարի: Պարսից միացեալ զօրքը վերջ-իվերջոյ յաղթում է: Յազկերտը մեծ տօն է կատարում. յաղթութիւնը վերագրում է աստուածներին, և այդ աստուածներին հաճելի վինելու համար, թագաւորը հրամայում է իւր բանակի մէջ գտնուած բոլոր քրիստոնեայ իշխաններին իրանց զօրքերով մոգական կրօնն ընդունել: Թագաւորի հրամանը արհամար-հողը մահուան պատիժ պիտի ստանար: Հայոց նախարարներից երկուաը, Ատովմ Գնունին և Մանաճին Խշտունին, ծածուկ շտապում են դէպի հայրենիք: Բայց Յազկերտի զօրքերը կարում են նրանց ճանապարհը և ամենքին նա-հատակում:

Ատովմեանց զօրավարների փախուստը դէպի Հայաստան աւելի է գրգռում պարսից արքունիքը: Թագաւորի հրամանով Միհրներսին մեծ զօրապետը ժողովում է պարսիկ մոգերին ու մոգպետներին, մի թուղթ է զրել տալիս և նրա մէջ մանրամասն բացատրում է զրադաշտական կրօնի կարծեցեալ առաւելութիւնները քրիստոնէական կրօնի դէմ: Այդ թուղթը ուղարկում է Հայաստան և մնացած քրիստոնեայ երկիրները: Յազկերտը պահանջում է՝ կամ պատասխանել թղթին բառ առ բառ և կամ գնալ-ներկայանալ արքունի դուռը:

Այս հրովարտակը ահագին շարժումն է առաջ բերում ամբողջ երկրի մէջ. ժողովրդի բոլոր խաւերը մեծ մտաւանջութեան մէջ են ընկնում. թագաւորական գահը թափուր, ազգեցիկ նախարարներից մի քանիսը իրանց զօրքերով դեռ ևս Պարսկաստանում... ի՞նչ պէտք էր արած.

ով պէտք է առնէր վերահաս վտանգի առաջը... Թէև հրովարտակի մէջ կար մի կէտ, որ ելք էր ցոյց տալիս այս դժուարին դրութիւնից, թէև այնտեղ ասուած էր, որ հայերը կարող են հերքել հրովարտակի բովանդակութիւնը կէտ առ կէտ, բայց պարզ էր ամենքի համար, որ դուրս նով ճնշաժամբ չի վերջանալու: Այսու-ամենայնիւ Հայոց Յովսէփ կաթուղիկոսը բոլոր հոգեսր առաջնորդների, նախարարների և ժամանակակից նշանաւոր անձանց ներկայութեամբ համազգային ժողով է գումարում Արտաշատ քաղաքում (450 թ.) և այդ ժողովում խմբազգուում է հրովարտակի պատասխանը, ստորագրուում է նախագահի ու բոլոր ժողովակից հոգեսրականների կողմից և ուղարկուում է Պարսից դուռը: Նամակի մէջ կէտ առ կէտ հերքուում է Միհներսէնից ուղարկուած թղթի բովանդակութիւնը և բացարձակ կերպով առաջ են բերւում քրիստոնէական դաւանութեան անսուտ հիմունքները: Պատասխանը վերջանում է հետևեալ վճռական յայտարարութեամբ: «Այս հաւատից մեզ ոչոք չի կարող խախտել՝ ոչ հրեշտակները և ոչ մարդիկ, ոչ սուրբ և ոչ հուրը և ոչ էլ աշխարհային ամենադառն հարուածներ...»

Յազկերս թագաւորը, այս պատասխանն ստանալով, աւելի ևս զայրանում է, նա մի նոր հրովարտակ է ուղարկում և պահանջում է, որ անմիջապէս ներկայանան իրան երկրի մարզպանը և սպարապետը, Վասակ Սիւնին և Վարդան Մամիկոննեանը, իրանց հետ տանելով ուրիշ նշանաւոր տոհմերի ցեղապետներին, որոնց անունները յիշատակում է թղթի մէջ: Միաժամանակ թղթեր են ուղարկուում նաև Վրացիներին ու Աղուաններին նոյն բովանդակութեամբ: Այս երեք ազգերի ներկայացուցիչները համախըմբւում են միատեղ, դաշն են կապում, որ հաւատարիմ մնան քրիստոնէական սուրբ կրօնին և ուղեսրուում են դէպի Պարս-

կաստան: Յովսէփ կաթուղիկոսը օրհնուում է գնացողների ճանապարհը: Նախարարները տեղ են հասնում: Նրանց առաջարկում են առանց այլեայլութեան հրաժարուիլ քրիստոնէական կրօնից և երկրպագութիւն տալ արեգակին ու կրակին: Առաջարկութիւնը մերժուում է: Նախարարները բանան են նետուում: Այնուհետև թագաւորի անձնական խորհրդանուում վճիռ է կայանում, որ բոլոր նախարարներին շղթայակապ ուղարկեն շատ հեռու տեղեր, որից յետոյ մեծ զօրքով մտնեն Հայաստան և հաւատափոխ անեն ժողովրդին: Խորհրդականներից մինը, որ ծածուկ քրիստոնեայ էր, գիշերով մտնում է բանտը և յայտնում է նախարարներին արքունիքի վճիռը. միենոյն ժամանակ նրան յաջողուում է համոզել նախարարներին, որ առերես ուրանան քրիստոնէութիւնը, վերադառնան հայրենիք և միաբան ուժով պաշտպանեն իրանց երկիրն ու կրօնը:

Երբ Յազկերտին տեղեկութիւն են տալիս, թէ քրիստոնեայ նախարարները պատրաստ են կրակապաշտութիւն ընդունել, անչափ ուրախանում է. առատապէս պարզեաւելով բոլոր նախարարներին, նա պատուիրում է նոցա անմիջապէս վերադառնալ հայրենիք՝ իւր կողմից նշանակուած մոզպետի և եօթը հարիւր մոգերի հետ, որոնց ձեռքով պէտք է քարոզուէր պարսկական կրօնը Հայերին, Վրացիներին և Աղուաններին:

IV

Նախարարներն առերես ուրանում են քրիստոնէական կրօնը. սակայն ազգին այդ հանգամանքը յայտնի չի լինում: Ուրացութեան լուրը կայծակի արագութեամբ հասնում է հայրենիք և տարածում է ժողովրդի բոլոր խաւերի մէջ: Ամբողջ ազգը ոտքի է կանգնում: Ժողովուրդը, ունկնդիրը

իւր հոգեորականների կոչին, ուխտ են անում՝ մեռնել,
բայց իրանց ազգային ինքնուրոյնութիւնը, իրանց հաւատն
ու լեզուն բաց չըթողնել:

Մինչ այս—մինչ այն՝ Հայ նախարարները մոգպետի ու
մոգերի հետ մտնում են Հայաստան և բանակ են դնում
Ծաղկուն գաւառի Անդղ անունով գիւղաքաղաքում: Բա-
նակը կարգաւորելուց քսանեհինդ օր անցած, մի կիւրակի,
մոգպետը իւր մոգերի հետ եկեղեցի է մտնում և կամենում
է նրան գրաւել: Դւոնդ երէցը միաբանակիցների ու ժո-
ղովրդականների հետ այնտեղ պատրաստ սպասում էր:
Սկսում է առաջին ընդհարումը. հոգեորականներն ու ժո-
ղովրդը բրերով ու մահակներով ծեծում, դուրս են մղում
ամենքին եկեղեցուց: Այս տագնապալի դէպքից յետոյ ամե-
նայն կողմից գալիս-ժողովւում են այնտեղ մարդիկ, կա-
նայք, ծերեր, պատանիներ... և ընդհանուր հալածանք են
սկսում մոգպետի ու մոգերի դէմ: Մոգպետը, որպէս խե-
լացի մարդ, հասկանում է, որ խնդիրը ծանր կերպարանք
է ստանում. նա ուզում է ամեն բան զբել և հասկացնել
թագաւորին, նաև խորհուրդ տալ, որ հրաժարուի այդ վը-
տանգաւոր ձեռնարկութիւնից: Բայց Վասակ Սիւնին թոյլ
չի տալիս: Վասակը երկրի մարզպանն էր, այսինքն գլխա-
ւոր կառավարիչը. պարսկական կրօնը նա ընդունել էր
ամենայն սրտով և իւր գործողութիւններով կամենում էր
անպատճառ հաճելի երեալ Պարսից արքունիքին: Վասակը
խոստանում է ամենայն միջոց գործ դնել՝ թագաւորի կամ-
քըն ընդունել տալու համար: «Դու միայն մի փոքը երկայ-
նամիտ եղիր, մինչև որ ես իմ ուժերս հաւաքեմ, ասում
է նա. գուցէ յաջողցնեմ եկեղեցական ուխտն անդամ երկ-
փեղկել: Եթէ ինձ այդ յաջողուի, գիտեմ, որ թագաւորի
կամքն էլ կարող եմ կատարել»:

Եւ արդարեւ Վասակը աշխատում է իւր կողմնակից-

ների թիւն աւելացնել. գրաւում է թուղամիտ ու կասկածաւոր
մարդկանց փողով, պարգևներով, խոստումներով և սպառ-
նալիքներով... Օրէց-օր իրանց յանդգնութիւնն աւելացնե-
լով, Վասակեան կուսակցութիւնը մոգպետի ու մոգերի
հետ լայնացնում են իրանց գործունէութեան շրջանը: Ազ-
գի հաւատարիմները, հոգեորական դասի հետ միացած, մեծ
անհանգստութեան մէջ են ընկնում: Վերջապէս նոքա դի-
մում են երկրի սպարապետին, որ Վարդան Մամիկոնեանն
էր, և նրա հետ եկած նախարարներին, ու վճռական պատաս-
խան են պահանջում, թէ արդեօք իրանց համաձայնու-
թեամբ է կատարում վասակը այդ չարիքները, թէ ինք-
նապլուս: Նախարարները բաց են անում նրանց առաջ
իրանց գաղանիքները և պարզում են կեղծ ուրացութեան
պատճառները: Ամենքը սիրտ են առնում: Քահանայապետը
միաբանակիցների ու նախարարների մասնակցութեամբ
նոր ժողով են կազմում և խաչի ու աւետարանի վերայ
ուխտում են՝ հաւատարիմ մնալ ազգային անկախութեան: Ապա
յարձակում են Պարսից բանակի վերայ, մեծ ջարդ
են տալիս նոցա և կալանաւորում են Վասակ մարզպա-
նին: Բայց քրիստոնէական ներողամտութիւնը մի անգամ
էլ գալիս է մեծ չարիք պատճառելու ազգին. ուրացողը
ներումն է ստանում. նա զղում է, հաւատացնում է, որ
ձախորդ հանգամանքների զոհ է եղած և խոստանում է
թէ ու թիկունք լինել միւս նախարարներին, եթէ իրան
ներումն շնորհեն: Նորան հաւատում են, ներում են, իսկ
այդ քրիստոնէական առաքինութիւնը անուղղելի փորձու-
թիւնների մէջ է զցում ազգը:

V

Ի՞նչ էր անում այդ ժամանակ աղքի մեծամասնու-
թիւնը՝ ժողովուրդը. ի՞նչ էր անում հայ կինը. արդեօք

միայն հոգևորականներն ու աւագանին էին այն բացառիկ ողբերգութեան գերակատարները, թէ նրա մէջ մասնակցութիւն ունէին ազգի բոլոր գասակարգերը: Բանանք Եղիշէի ոսկեղինիկ գրբոյկը և տեսնենք, թէ ինչ է վկայում նա այդ մասին: Նկարագրելով ընդհանուրի տրամադրութիւնը, հաւատացեալների առաջին յարձակումից և մարզպանին գերի անելուց յետոյ, Եղիշէն շարունակում է. «Այնունետեւ տէրը չէր զանազանում ծառայից և ոչ փափկացեալ աղատանին՝ վշտացած գիւղացուց. քաջութեան կողմից էլ մինը միւսից յետ չէր մնում: Տղամարդիկ ու կանայք, ծերեր ու տղաներ՝ ամենքն էլ յօժար սրտով նուիրուած էին միւնոյն զինուորութեան. ամենքն էլ միւնոյն ճշմարտութեան գոտիով պնդացրած ունէին իրանց մէջքը... Ոսկին ու արծաթը մի կողմը ձգուած, ազանութիւնն արհամարուած, մեծարանքների համար կարուած զարդերն անարդուած... Ստացուածքը ստացողի աչքում կորցրել էր իւր արժեքը... Ամենքը շուտ-շուտ այս էին ասում. քաջութեամբ մեռնենք, միայն թէ անուն ու ոգի ժառանգենք»... Իսկ Հայոց փափկասուն տիկնայքը...

Բայց գեռևս շարունակենք մեր պատմութեան ընթացքը: Երբ-որ Հայ նախարարները յարձակում են Պարսից բանակի վերայ, յետ են խլում բոլոր ամրութիւնները և մարզպանին էլ գերի են անում, և երբ Հայոց սպարապետը ուխտապահ նախարարների հետ մտածում էին՝ թէ ինչպէս ազատեն հայրենիքը վտանգից, ահա Աղուանից աշխարհից գուժգան է գալիս: Պարսիկները, ասում է նա, այնուեղ մեծ բռնութիւններ են գործ դնում և, եթէ օդնութեան չհամնէք, բոլոր ժողովուրդը բռնի կրօնափոխութեան կրտանեն: Այդ տեղեկութիւնների ազգեցութեան տակ նախարարները խորհըրդի են նստում և միաժամանակ երկու որոշում են կայացնում. նախ առանձին պատգա-

մաւորութեան ձեռքով դիմում են Յունաց կայսրին և նրանից պաշտպանութիւն են խնդրում (թէև, իհարկէ, ապարդիւն). Երկրորդ՝ իրանց զինուորական ոյժը երեք գնդի են բաժանում: Առաջին գունդը տալիս են Ներշապուհ Ռըմբոսեանին, յանձնելով նրան պահպանել Ատրպատականի սահմանները. Երկրորդ գունդը տալիս են Վարդան Մամիկոնեանին և յանձնում են՝ շուտափոյթ անցնել Վրաստանի սահմանները և Աղուաններին օգնութեան հասնել. Երրորդ գունդը տալիս են Վասակ Սիւնեաց իշխանին, պարտաւորացնելով նրան հսկել ներքին խաղաղութեանը և կազմ ու պատրաստ լինել օգնութեան գնալու այնտեղ, ուր հանգամանքները կըկանչեն նրան:

Վարդան Մամիկոնեանը արագապէս հասնում է Աղուանից աշխարհը, մի երկու ընդհարումն է ունենում Պարսիկների հետ և վերջնականապէս մաքրում է Երկիրը նրանց ներկայութիւնից: Նոյն յաջողութեամբ կատարում է իւր գերը ներշապուհ Ռըմբոսեանը: Բայց Վասակ Սիւնին, որի յուսով էր թողած ամբողջ Հայաստանը, նորոգում է իւր գաղտնի յարաբերութիւնները Պարսից բանակի հետ և, օգուտ քաղելով մնացած զօրաբաժինների բացակայութիւնից, հալածում ու աւերում է այն գաւառները, որնք հաւատարիմ էին մնում իրանց կրօնին: Վարդանին լուր է հասնում: Նա անմիջապէս վերադառնում է հայրենիք: Վասակն ամբանում է Սիւնեաց աշխարհում: Զմեռն է: Ուխտապահների զօրքը, զանազան մասերի բաժանած, տեղաւորուում են ձմերանոցներում: Գարնանը Պարսից մեծ բանակը նոր արշաւանք է սկսում դէպի Հայաստան: Դաւաճանը միանում է նրանց հետ: Վարդանն էլ կազմակերպում է իւր զօրքը: Թշնամի բանակները հանչիպում են միմեանց Արարատեան գաշտում, Տղմուտ գետի մօտ: Հայերի կողմից պատերազմին մասնակցում են

վաթսունևլեց հազար հոգի: Պարսից գօրքի թիւը դրանից լինում է եռապատիկ աւելի: Հայերը, անցնելով Տղմուտ գետը, սաստիկ թափով յարձակում են Պարսիկների վերայ, ճեղում են նոցա ուժը, բայց և կորցնում են իրանց անվեհեր հրամանատարին. Վարդան Մամիկոնեանը, քաջութեան հրաշքներ գործելուց յետոյ, մահացու վէրք է ստանում: Պարսիկները այդ կուռում կորցնում են 3544 մարդ. Հայ նահատակների թիւը լինում է 1036 մարդ:

Հայերը կորցնում են իրանց սպարապետը, բայց այդ կուռով համոզում են Պարսիկներին, որ իրանց ազդի ու կրօնի անկախութիւնը ճեղքից չեն թողնիլ ոչ մի ուժի առաջ:

Ամենայն տարի, բուն բարեկենդանի հինգշաբթի օրը, Հայոց եկեղեցին տօնում է իւր անմահ զաւակների յիշատակը, «Վարդանանց գօրավարների» անունով: Բայց թէ ինչ է վաստակում Վասակը, նորա պատմութիւնն էլ դնում ենք այստեղ, առնելով Եղիշէի ականատես պատմուածքից:

VI

«Մի հանդիսաւոր օր Պարսից թագաւորը հրամայեց ճաշի հրաւիրել բոլոր մեծամեծներին: Հրաւիրուած էր և Վասակը: Նա հագաւ իւր պատուական վերնազգեստը, նորա վրայ դրեց ոսկեայ խոյրը, մէջքին կապեց մարգարիաներով և պատուական ակներով զարդարուած ոսկէ գօտին, հագաւ ականջի զինտերը, մանեակը կախեց զգիցը, սամոյըը ձգեց թիկունքին և բոլոր պատուանշանները հագած, գնաց պալատ: Թագաւորի արտաքին սրահում շղթայակապ կային մի քանի Հայ նախարարներ և սուրբ քահանաներ: Երբ Վասակն անցաւ սոցա առաջով, ցաւակցական հայեացք

ձգեցին այդ անխելք վաճառականի վրայ, որ անսպառելի և անփոխարինելի առաքինութիւնը վաճառել էր մի քանի կանացի զարդարանքների: Դոցա առաջից անցնելով՝ Վասակը մտաւ ներսի գահին թագաւորական սենեկապետը դուրս եկաւ թագաւորի մօտից, մերձեցաւ նորան և ասաց. «Թագաւորը, որից դու ստացել ես այս պատուական նուէրները, ինձ ուղարկեց, որ հարցնեմ քեզանից, թէ որ արդար աշխատութեանդ համար ես ստացել դորանք»: Այնուհետև պատմեց բոլոր ամբաստանութիւնները, որով նորան դատապարտել էին, նմանապէս աւելացրեց և այնպիսի բաններ, որ չէին խօսել ատեանի մէջ: Ասաց, որ նա ապօբինի կերպով տիրեց Սիւնեաց աշխարհին՝ խորամանկութեամբ և ստութեամբ սպանել տուեց իւր եղբայր Վաղենակին և ինքն ստացաւ նորա իշխանութիւնը: Դատապարտեց նորան և այլ շատ բանների մէջ, որոնց բոլոր մեծամեծները վկայ էին: Վասակը պապանձուեցաւ և ոչ մի ճշմարիտ բան չգտնուեցաւ նորա բերանում: Այնուհետև մահի վճիռ կարգացին նորա գլխին: Դահճապեան եկաւ, հանեց նորանից այն պատուանշանները, որ ստացել էր թագաւորից և հագցրեց մահապարտի զգեստ: Նորա ոտներն ու ձեռները կապեցին և, իբրև անառակ կին, նստեցը էգ ձիռ վրայ ու տարան ձգեցին այն բանտը, ուր բանտարկում էին բոլոր մահապարտներին: Ամենայն օր դուրս էին բերում նորան, իբրև անշունչ մարմին ձգում էին հրապարակի մէջ, ցոյց էին տալիս բոլոր զօրքին, ծաղր էին անում և ծիծաղում էին վրան: Կողոպտեցին և հանեցին նորանից ամենայն բան, ինչ որ ունէր իւր հետ և այնպիսի ծաղրալի աղքատութեան մէջ ձգեցին, որ իւր ծառաները հաց էին հաւաքում՝ նորան տալիս: Նորա բոլոր կալուածները, մինչև անդամ կա-

նանց զարդերը, արքունական պարագի փոխարէն վերցրին։
«Երբ Վասակն այսպէս ամենայն կողմից անարգուեցաւ, բանտումը կապանքների մէջ դժնդակ ցաւի մէջ ընկաւ. նորա փորը տաքութիւնից տապակուեցաւ, նորա գողը տրորուեցաւ, մաշուեցաւ և քամուելով՝ մաղուեցաւ նորա թանձրամսութիւնը։ Որդեր եռացին նորա աչքերի վրայ և ներքե սողացին նորա քթածակերից. խլացան նորա ականջները և չարաչար ծակոտուեցան նորա պոօջները. հոտեցին նորա կոների ջլերը և դէպի յետ կուացան նորա ոտների կրունկները։ Մահուան հոտ փչեց նորանից. փախան, հեռացան իւր հաւատարիմ ծառաները. միայն լեզուն էր կենդանի նորա բերանում, բայց խոստովանութիւն չէր դուրս գալիս նորա շրթունքներից։ Ճաշակեց խեղդամահի բաժակը և իջաւ դժոխքը անպատմելի դառնութեամբ։ Ուի տակ տուին նորան իւր բոլոր սիրելիքը և չկշտացան սաստիկ հարուածներով իւր բոլոր թշնամիները։ Զերեցաւ այն մարդու գերեզմանի տեղը, որ կամենում էր մեղքով թագաւորել Հայոց աշխարհի վրայ, որովհետեւ շան պէս սատկեցաւ և էշի պէս քարշուեցաւ։ Զիշուեցաւ նորա անունը սուրբերի մէջ և չմերձեցաւ նորա յիշատակը եկեղեցու սուրբ սեղանին։ Նա իւր կեանքումը ոչ մի չարութիւն չթողեց, որ չգործէր, և ոչ մի չարչարանք էլ չմնաց, որ հասնէր նորան իւր մահուան ժամանակ։

72. ՅՈՒԻ Ա.3

Ա.

Տէրն աղօթում էր... Արիւնի քրտինք
Կաթ-կաթ հոսում էր նորա ճակատից.
Աղաչում էր Նա, որ ներէ երկինք
Մարդկային ցեղին, ցեղին մեղսալից։

Ոգեորութեան սրբազան կըրակ
Փայլում էր նորա պայծառ երեսին
Եւ Նա տանում էր իւր վերջին տանջանք՝
Փըշեայ պսակի ցաւը դժնդակ,
Խոր կարեկցութեան ժպիտ շրթունքին։

Նորա խաչի շուրջ կանգնած խուժանում
Երբեմն ծիծաղ հնչւում էր կոպիտ.
Ամբոխն կուրացած չէր էլ հասկանում,
Թէ ում է արդեօք ինք թշնամանում
իւր անդօր ոխի ցոյցերով անմիտ։

Նա ի՞նչ է արել. ի՞նչու տանջանքի
Է դատապարտուած որպէս գող, ծառայ.
Եւ ով յանդկնեց առանց արգելքի
Զեռք բարձրացընել իւր Աստծու վըրայ։

Նա աշխարհ մտաւ սուրբ սիրոյ ուսմամբ,
Ուսուցանում էր, աղօթում, տանջւում,
Եւ պիղծ աշխարհը նորա սուրբ արեամբ
իւր վըրայ անջինջ մի բիծ է դնում։
Արդէն կատարուեց...

Բ.

Այն ով է գաղտնի հեծկլտում, սըգում
Միջին խաչի մօտ՝ մազերը փետում.
Ո՞վ է այդ մարդը։ Տանջանք անփարատ
Դրոշմած է նորա գունատուած դէմքին։
Գուցէ հեռաւոր երկրից ըշտապով
Եկել է այդտեղ Նա հիւանդ, անյոյս,
Որ ամենազօր սրբազան խօսքով
Տայ բժշկութիւն ախտերին Ցիսուս։

Գուցէ աղերսով պատրաստ էր արդէն
Յիսուսի ոտներն ընկնել, բայց ահա
Նա ամենուրեք լըսում է հիմա,
Թէ Նա՝ որին որ ամբոխ համօրէն
Քիչ առաջ որպէս արքայ ընդունեց,
Որ լոյս համասփիւռ բերեց աշխարհին,
Որ չըխնկարկեց երկրիս կուռքերին,
Եւ չարը արձակ միշտ յանդիմանեց,—
Այժմ արհամարհուած իբրև մի ստրուկ,
Դառըն տանջանքով մեռնում է անշուք:

Կամ գուցէ ծածուկ աշակերտ Փրկչին,
Սրտում խորին վիշտ և աղերս պահած,
Եկել է փարուիլ նա Փրկչի խաչին,
Խոնջած գըլուխը հեղիկ խոնարհած:
Գուցէ թողութիւն չստացած մի ոք,
Յանցաւոր, մաշուած դիմել է այդտեղ
Եւ խաչի առաջ մենակ, ծընկաչոք
Զղջումն է թափում, որպէս բազմամեղ:

Ո՛չ, այդ Յուղան է. ոչ թէ աղօթքով
Եկել է այդտեղ: Նա չէ յանդգնել
Աղօթելու պիղծ, չարանենգ հոգով.
Ոչ Տիրոջ մարմնին երկրպագանել
Կամնցել է նա: —Ի՞նչպէս կամ թէ է՞ր
Ընկել էր այդտեղ, ինքն էլ չդիտէր...

Գ.

Երբ չարչարանքի նա դատապարտուած,
Խուռն բազմութեամբ հոծ շըրջապատուած,
Դէպ՝ պատժավայրն էր Յիսուս բարձրանում,
Եւ ծանըր խաչը անտրտունջ տանում,

Յուղան, թագկացած, տեսաւ տանջանքը
Եւ խղճահարուած ըզզաց յանցանքը՝
Ում անմտութեամբ ինքն այնպէս ատեց,
Անարդ արծաթով ում կեանքը ծախեց...

— «Հեռնւ, անարատ տեսիլ ահաւոր,
Ո՞հ, հերիք, տանջանք, թող դոնէ մի ժամ,
Գոնէ մի վայրկեան՝ կրծքով վիրաւոր
Չապրեմ, չըյլշեմ, թող հանդստանամ...
Մի տես, մատնիչդ է աւասիկ լալիս

Ոտներիդ առաջ... Ո՞հ, Դու խնայիր.
Պատառում է Քո հայեացքը հոգիս,
Գնա, չըքացիր, տեսիլ, մի նայիր...

Տեսնում ես, ահա արտասուքներով
Պատրաստ եմ իմ նենդ համբոյր լուանալ.
Ո՞հ, տուր ինձ անցեալն խսպառ մոռանալ,
Տուր հոգւոյս հանգչիլ ջերմ աղօթքներով.
Դու՝ Աստուած, ներում կարող ես միշտ տալ. . .

Դ.

Փախիր դու, մատնիչ, մարդկանց երեսից,
Եւ լաւ իմացիր, հոգիդ մեղսալից
Երբէք ոչ մի տեղ հանգիստ չի գանիլ.
Որտեղ էլ լինիս, քեզ հետ անբաժան
Կըգայ ամեն տեղ ահալի տեսիլ,
Իբրև գրաւական խիստ մեղագրութեան:
Փախիր, անարժան, այդ խաչափայտից,
Մի պղծիր նորան ողջագուրանքով.
Նա՝ վըրան խաչուած Փրկչի տանջանքով
Սըրագործուած է. հեռնւ նրանից:

Եւ նա փախչում էր
· · · · · ե.

Կէս հորիզոնը

Ալ բոցը գրկեց. լեռնոտ կեղբոնը
Փայլի ալիքով շառագունեցաւ:
Բլուրների յետև ահա բարձրացաւ
Ոսկէ պսակով արել պայծառ.
Ամեն ինչ զարթնեց... անտառը դալար,
Դաշտերի զոռոզ այդ հսկան հպարտ,
Շարժում է ճիւղերն, խշում անընդհատ:
Անտառի խորքում առուն է հոսում,
Արծաթ-ջրերով, անվերջ կարկաջում...
Եւ այնտեղ, ուր միշտ մշուշ է, խաւար,
Ուր չի թափանցում արել պայծառ,
Մոայլ դիակ է օրօրւում կախուած.
Իսկ կաղամախը վերեկց սրփուած
Իւր կենդանարար զմրուխտ հովանին,
Բարեկամի պէս գրկել է այդ դին:

Մեռաւ նենդ Յուղան... նա չղիմացաւ
Խուլ տանջանքների կըրակին. մեռաւ
Առանց հաշտութեան արտասուքների,
Առանց զղջումի, առանց իղձերի:
Բայց մինչ վերջին ժամ, մինչ վերջին վայրկեան
Միշտ նոյն պատկերը տրտում, ահալի,
Կենդանի պատիժ չարագործութեան,
Գիշերուայ մոայլում առաջն էր դալի:
Միշտ նոյն զայրագին պատուէր դըմընդակ
Կարծես հընչում էր նորա բերանից,
Եւ զլխին ծանր տանջանքի պսակ
Դրած ունէր նա, պսակ փշալից...

73. Հինգերորդ դԱՐԻ ՀԱՅ ԿԱՆԱՅՔԸ

Հինգերորդ դարի հայկական կեանքը ճշշդրիտ պատկերացնելու համար՝ կարևոր է առաջ բերել այն տեղեկութիւնները, որ պառաւութիւնը տալիս է ժամանակակից Հայ կողջ վերաբերութեամբ: Մեր ընդհանուր տեսութեան մէջ համառօտ ակնարկներ կային այդ մասին. այժմ քաղուածքորէն կըտանը եղիշելի պառաւուածքը Հայ կողջ ճգնութիւնների վերաբերութեամբ V դարի այդ շրջանում:

«Ամբողջ Հայոց աշխարհի երանելի առաքինիների, կապուածների և պատերազմի մէջ սպանուածների կանանցը մի առ մի հաշուել չեմ կարող, որովհետև ինձ անծանօթներն աւելի շատ են, քան թէ ծանօթները: Հինգհարիւրի չափ անուն-անուն հանաչում եմ ոչ միայն աւագագոյններից, այլև շառերին աւելի կըրտսերներից: Նոքա ամենքը, երկնաւոր նախանձով վառուած, ոչնչով պակաս չմնացին այն անձինքներից, որոնք աշխարհ չեին մտել (որոնք իրանց անձը նուիրել էին կուսակրօնութեան), որովհետև թէ աւագագոյները և թէ կըրտսերները միատեսակ առաքինութիւն էին ընդունել: Իրանց մայրենական փափկութիւնը նոքա ամենակին չյիշեցին, այլ այնպէս էին պահում իրանց, որպէս թէ հէնց փոքր հասակից շինական կեանքի չարչարանքների ու տանջանքների մէջ էին մեծացել:

Ոչ միայն հոգեպէս միհիթարւում էին դրանք, յաւետենական աներևոյթ յուսով զօրացած, այլև մարմինները նեղութեան ենթարկելով աւելի ծանրաբեռնում էին իրանց, որովհետև նրանցից իրաքանչիւրը թէկ ունէր ձեռնասուն սպասաւոր, բայց բոլորովին չէր կարելի նշանարել, թէ որն է տիկինը և որը աղախինը՝ թէ զգեստներն էին միատեսակ և թէ պառկելու անկողինը, որ չոր խոտից էր: Ոչ-

մէկը միւսի համար անկողին չէր պատրաստում, որովհետեւ
կարեռութիւն չկար խոտերը միմեանցից զանազանելու.
բոլոր խսիրները միատեսակ թխագոյն էին, իսկ զիխատակի
բարձերը միատեսակ սե:

Անուշ կերակուրներ պատրաստելու համար նոքա ա-
ռանձին խոհարարներ չունէին և ոչ էլ աղատների կարգին
համեմատ—որոշուած հաջթուխներ, որովհետեւ ամենքի ու-
տեմիքը միւնոյնն էր: Ոչ-մէկը միւսի ձեռին ջուր չէր
ածում և փոքրերը մեծերին երեսորբիչ չէին մատուցա-
նում: Սապոն չղիպաւ փափկասուն կանանց ձեռներին և
հոտաւէտ իւղ չզործ ածուեց նրանց զուարթութեան հա-
մար: Մաքուր ամաններ չզրուեցան նրանց առջև և ոչ էլ
բաժակալաներ—նրանց ուրախութեան համար: Նրանցից
ոչ-մէկի դուն առաջ նուիրակ չկանգնեց և ոչ էլ պա-
տուական հիւրեր ներս հրաւիրուեցան նրանց դահլիճները.
յիշողութիւն չեղաւ՝ թէ նրանցից ովսիցէ ունեցել է մի
ժամանակ փափկասունդ դայեակներ և սիրելի հալազատներ:

Փոշուեցան ու ծխոտուեցան նորահարսների սրա-
հակները և սարդի ոստայն ձզուեցաւ նրանց առազատ-
ների համար յատկացրած սենեակներում. նոցա դահլիճները
զարդարող բարձրագին կարասիքը կործանուեցան և սե-
ղանները զարդարող անօթները, փչացան, ընկան-կործա-
նուեցան նրանց ապարանքները. փուլ եկան-աւերուեցան
ապահովութեան ամրութիւնները. չորացան-աղանձուեցան
ծաղկեայ բուրաստանները և արմատից խլուեցան այզինե-
րի զիներեր փազները: Իրանց աչքով տեսան իւրեանց
կայքի յափշտակութիւնը և ականջով լսեցին սիրելիների
վշտալի հառաչանքները: Նոցա գանձերը թագաւորական
արին և գլխի զարդերն անգամ յափշտակեցին:

Հայոց աշխարհի փափկասուն տիկիններ, որ փայ-
փայուած ու գզուած էին սեպհական բաստեռների և գա-

հաւորակների մէջ, միշտ բորիկ ոտով էին աղօթատուն
զնում, և նոցա խնդրուածքը միայն մի բան էր, որ կա-
րողանան այդ խոշոր նեղութիւնները տանել: Նոքա՝ որոնք
մանկութիւնից մնուած էին հորթի ուղեղով և էրէների
փափուկ մսով, վայրենու նման մեծ ուրախութեամբ ու-
տում էին խոտեղին կերակուրներ, սմենեին չյիշելով ի-
րանց սովորական փափկութիւնը: Սեով ներկուեցաւ նրանց
մարմի մորթը, որովհետեւ ցելեկը արեւսիորով էին լինում,
իսկ զիշերներ ամբողջ՝ զետնի վրայ պառկում:

Նրանց բերանի մըմունչները մշտական սաղմոսներն
էին, նրանց կատարեալ միթթարութիւնը—մարգարէների
ընթերցուածքը: Երկու-երկու միաբանուեցան, ուղիս միա-
հաւան և միահաւասար լծակիցներ, ուղիղ տանելով ար-
քայութեան ճանապարհը, ուղիս անվեհպ հասնեն խա-
ղաղութեան նաւահանգիստը:

Կանացի տկարութիւնը մրուացան և դարձան առաքինի
տղամարդիք՝ այդ հոգեոր պատերազմի մէջ. սաստկութեամբ
կոււեցին մեղքի դէմ և կարեցին-դէն ձզեցին նորա մա-
հարեր արմատները: Խորամանկութեանը յարթեցին միա-
մտութեամբ և նախանձի կերտերը լուացին սուրբ սիրով.
ազահութեան արմատը կարեցին, որով նրա ոստերի մա-
հարեր պտուղները չորացան: Խոնարհութեամբ չարդեցին
ամբարտաւանութեանը և հէնց այդ խոնսրիութեամբ էլ
հասան երկնաւոր բարձրութեան:

Նոցա մէջ եղած այրի կանայք վերստին առաքինու-
թեան հարսներ դարձան, բառնալով իրանցից այրիութեան
նախատինքը. իսկ կապեալների կանայքը ինքնակամ հրա-
ժարուեցին աշխարհային վայելքներից և իրանց մատների
աշխատանքով կերակրուեցին, որպէսզի արքունիքից նրանց
համար նշանակուած թոշակները ամբողջապէս ուղարկել
կարողանան իրանց կապեալ ամուսիններին:

Շատ ձմեռների սառնամանիքներ հալուեցան. դարունը հասաւ. նորեկ ծիծեռնակներն եկան. կենցաղասէր մարդիք տեսան և խնդացին. իսկ չայ կանայք չկարողացան տեսնել իրանց անձկալիներին. Գարնանային ծաղիկները մտաբերեցին նոցա իրանց պսակասէր ամուսիններին, բայց նոցա աչքերը կարօտ մնացին տեսնելու այդ ամուսինների ցանկալի գեղեցկութիւնը. Սպառուեցան-կորան որսի բարակները և դադարեցան-չքացան որսորդների արշաւանքները. Նոցա ամուսինների յիշատակը բնագիրներով միայն յիշատակուեցան և տարուայ տօներից ոչմինը չբերեց նրանց հեռաստանից. նրանց ճաշատեղերի վերայ նայեցին և արտասուեցին և ամեն ատենական օրեր յիշեցին նրանց անունները. Շատ արձաններ կային կանգնացրած նրանց անունով և իւրաքանչիւրի անունը գրած կար իւր արձանի վերայ:

Եւ երբ այսպէս ամենայն կողմից ալէկոծւում էին նրանց մտքերը, նրանք, այնու ամենայնիւ, իրանց առաքինութիւնների մէջ թուլութեան ոչ մի նշան չէին ցոյց տալիս. որսի մարդկանց երկում էին որպէս սպաւորներ, բայց իրանց հոգու խորքում միշտ միխթարուած էին երկնային սիրով: Էլ այնուհետև դադարեցին հարցնել հեռուից եկողներին, թէ երբ պիտի արժանանանք մեր սիրելիների տեսութեանը. այլ մի բան էին միայն խնդրում Աստուածանից՝ թէ ինչպէս սկսել են քաջութեամբ, կարողանան վերջացնել նոյնը լի երկնային սիրով»:

74. ՄՊԻԾԱԿ ԶԳԵՍ :

Անարդ, խայտառակ մահուան մատնըւած,
Հունգարացի կոմսն շըզթայակապ էր.
Նա օդնել ուզեց իւր խեղճ հայրենեաց.
Հպարտութիւնը խիստ վրդովուած էր:

Նա ըստրուկներին՝ հոգով ստորացած,
Վաղուց անողորմ թշնամի դարձաւ,
Եւ միշտ կոռւելով ընդդէմ այդ չարեաց,
Կոմսը կախուելով դատապարտուեցաւ:
Հազիւ նա եղաւ քըսան տարեկան,
Բայց պիտի մեռնէր: Մահը չարիք չէ,
Այլ ըստոփիչ է վշտին հոգեկան:
Բայց մեռնել անարդ, խայտառակ մահով,
Կախաղան ելած, ծաղր ու ծանակով,
Դառնալ կերակուր սև ագռաւների՝
Ահա նախատինք, չարիք սոսկալի:

Առաւոտը նա մօրը գըրկելով,
Ասում էր արտում. «Մայր, մնան բարով,
Ահաւասիկ ես միակ որդիդ եմ,
Մատաղ հասակիս դատապարտուած եմ
Կարծօրեայ կեանքիցս ես անջատուելուն.
Ահանետ պիտ՝ կորչին ինձ հետ իմ անուն
Եւ իմ պատիւս: Խընդրում է որդիդ,
Մայր, որ դու փրկես քո խեղճ դաւակիդ:
Ո՞չ, պատերազմի փոթորիկներում
Ահ չեմ զգացել, ոչ ծըխում, հըրում.
Բայց վաղուան օրը, ելած կախաղան,
Ես պիտի դողամ տերնի նըման»:

Մայրը ասում էր, միխթարելով՝
«Իէն չըվախենաս, սիրած զաւակս,
Ես պալատ կ'երթամ և, աղերսելով,
Արցունք կը թափեմ. ես իմ լացովը
Արքայի սիրտը, գութը կը շարժեմ.
Եւ առաւոտը, երբ կը տանեն քեզ

Դէպի կախաղան, պատշգամբի վըրան
թէ ու զգեստով կանգնած լինիմ ես,
Դիտցիր, զաւակս, անխուսափելի
Քեզ մահ կըլինիւ
Ոչ ապաքէն դու, հըսկայի նըման,
Յառաջ պիտ' գընաս մահիդ յանդիման.
Հօ քո արիւնը հունգարական է:
Իսկ թէ ըսպիտակ շոր վըրաս տեսնես,
Գիտցիր, որ մայրդ իւր արցունքներով
Զաւակի կեանքը դարձեց ապահով:
Թող դահիճներից դու բռնուած լինիս,
Բայց երբէք, որդեակ, չըդողաս—սարսիս:

Կոմսը այն օրը հանգիստ է լինում,
Եւ ամբողջ գիշեր մընում է քընած.
Իւր երագներում նա մօրն է տեսնում,
Պատշգամբի վրայ՝ սպիտակ շոր հագած:
Գուժկան զանգակի ձայնն է զօղանջում.
Վագում են մարդիկ... հանդարտ քայլերով
Եւ շրջապատուած պահապաններով,
Շըղթայած կոմսը առաջ է գընում:
Քանի՞քանի աչք պատուհաններից
Արցունք են թափում կոմսի յետելից.
Ի՞նչքան ձըգում են կանացի ձեռքեր
Վերջին բարեի նորան ծաղիկներ.
Բայց կոմսը ոչինչ բան չէ նըկատում,
Դէպի հրապարակ է միայն նայում.
Այնտեղ պատշգամբում մայրըն է կանգնած,
Հանգիստ, անվրդով, սպիտակ շոր հագած:
Ո՞հ, կոմսի սիրտը թընդաց խիստ ուժգին.
Դէպի հրապարակ համարձակ քայլով

Հնթացաւ կոմսը, ժպիտն երեսին,
Անտրտում վերև բարձրացաւ փուլթով,
Զուարթ և ուրախ դահճի մօտ գընաց
Ու մինչև անգամ կախուելիս ժըպտաց:
Բայց ինչու մայրը սպիտակ էր հագել:
Ո՞հ, խարէութիւն: Այդպէս կարող էր
Սուտ խօսել մի մայր, սոսկ բեկուած ահից,
Որ իւր զաւակը չըսարսէ մահից:

75. ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՅԻ ՏՈՒՆԸ

I. Տանուտէր Խաչոյի բնակարանը այն տներից մէկն
էր, որ թէ իրանց մեծութեամբ և թէ հարստութեամբ
որոշում էին միւսներից: Այս տնից ամեն առաւօտ քշում
էին դէպի նախիրը հարիւրի չափ անասուններ: Նրա կո-
վերը, գոմէշները, եղները և ձիաներն ամենալընտիրն էին
ամբողջ գիւղի մէջ:

Այս տանն էին պատկանում հազարի չափ ոչխարներ,
որոնք սեփական հովիւների հսկողութեան ներքոյ արածում
էին մերձակայ լեռների վրայ: Այս տանն էր պատկանում
այն ահագին ձիթահանը—ձէթ հանելու գործարանը,—որ
գտնուում էր գիւղի մէջ: Այս տանն էր պատկանում այն
գեղեցիկ ջրաղացը, որ գտնուում էր գիւղից դուրս, որի
անիւնները տարուայ բոլոր եղանակներում անդադար բա-
նում էին:

Բայց այն, որ աւելի նշանաւոր էին Խաչոյի հարը-
տութեան մէջ,—դրանք էին նրա եօթը որդիքը, որոնք

մինը միւսի յետևից հասած՝ ներկայացնում էին նրա տաճ հարստութեան սիւները։ Որդիքը բոլորն ամուսնացած էին և տունը լցուած էր ամեն հասակի երեխաներով։ Ամուսնացած էին և նրա թոռներից մի քանիսը. նրանք նոյնպէս զաւակներ ունէին։ Եւ ծերունի Խաչոն իր առաջ տեսնում էր մի քանի սերունդ, որ ապրում և գործում էին միասին։ Առակի ձև էր ստացել այն խօսքը, թէ՝ «Խաչոն այնքան զաւակ ունի, որքան և անասուն»։

II. Ծերունի Խաչոյի տունը հեռուից բոլորովին հին ու նախնական ամրոցի տպաւորութիւն էր գործում։ Նա գործնում էր մի բարձրաւանդակի վրայ և թէ իր շինուածքով, թէ դիրքով ունէր այն բոլոր յարմարութիւնները, որոնք պէտք էին մի բնակութիւն ազատ պահելու համար արտաքին թշնամիներից։ Այդ ամրոցը պատած էր չորս ահազին պատերով, որոնք քառակուսի ձևով միմեանց հետ միանալով թողնում էին իրանց միջնավայրում մի բաւական ընդարձակ տարածութիւն, որի վրայ կառուցուած էին զանազան շինութիւններ։ Դրաից ոչինչ չէր կարելի տեսնել, բացի չորս բարձր աշտարակից, որոնք միացնում էին պարիսպների չորս անկիւնները։ Ամրոցի շրջապատի մէջ գետեղուած էին բոլոր բնակութիւնները, բոլոր ծածկոցները, որ պէտք էին մի կանոնաւոր տնտեսութեան համար։ Այստեղ էր ոչխարների գետնափոր գոմը. այստեղ էր ձիանների, կովերի և գոմեշների փարախը, որ անասունների տեսակի համեմատ՝ առանձին-առանձին բաժանմունքներ ունէր։ Այստեղ էր սրահը՝ երկրագործական անօթները պահելու համար. այստեղ էին մարագը, յարդանոցը, խոտանոցը, որոնց մէջ պահուում էր անասունները դարմանելու պաշարը. այստեղ կային զանազան ամբարներ մշակութեան բերքերի համար։ Այստեղ կային և մի քանի խուղեր, որոնց մէջ բնակութիւն էին ծերունի Խաչոյի նովիւններն ու

ծառաները իրանց ընտանիքներով. նրանք բոլորը ազգով քուրդ էին. կանայք ծառայում էին որպէս աղախիխներ, իսկ տղամարդիկ որպէս նախրապաններ, հովիւներ կամ երկրագործական մշակներ։ Մի խօսքով՝ այդ ամրոցի մէջ բովանդակուում էր մի փոքրիկ գեւդ, որի միակ տէրը և պետը ծերունի Խաչոն էր։

III. Նրա գերգաստանի համար որոշուած բնակարանները իրանց շինուածքով դեռ ևս պահպանել էին այն ժամանակուայ նախնական պարզութիւնը և ձեր, երբ մի ամբողջ բնտանիք ապրում էին մի վրանի տակ, այն զանազանութեամբ միայն, որ այժմ այդ վրանին փոխարինում էր քարեղին շինուածքը։ Նորա բագմաթիւ որդիկերանց համար, որոնց իւրաքանչիւրը իր զաւակներով մեծ ընտանիք կարող էր կազմել՝ առանձին սենեակներ չկային, այլ բոլորը ապրում էին միենոյն յարկի տակ, միենոյն սենեակում, որ ոչ այլ ինչ էր՝ բայց եթէ չորս պատ, ծածկած ահազին գերաններով։ Այստեղ վառում էին, այստեղ թխում էին, այստեղ կերակուր էին պատրաստում, այստեղ բոլորը միասին պառկում էին։ Այստեղ կարելի էր տեսնել նորածին հորթեր, փոքրիկ ուլեր, որոնք երեխանների հետ խառնուած՝ վազվում, ցատքուում, աղաղակում էին և տունը լցնում կենդանի աղմուկով։ Մի խօսքով՝ գա նոյի տապանն էր, որտեղ զետեղուած էին ամեն տեսակ կենդանիներ։ Այս բնակարանին կից էր մի երկրորդը։ Դա առաջուանից զանազանուում էր նրանով միայն, որ առջեկի ճակատը բոլորովին բաց էր և նայում էր բակին։ Դրան ևս կոչում էին սրահ, թէև գա ծառայում էր որպէս ամառուայ բնակարան։ Սրահի միջից մի դռւոն էր բացւում դէպի զլիսաւոր սենեակը, և այսպիսով նա ներկայացնում էր բուն բնակարանի նախագաւիթը։ Նրա կողքին կար մի առանձին փոքրիկ սենեակ, որ կոչում էր օդայ. Նրա դըռ-

Ները միայն այն ժամանակ էին բացւում, երբ տունը հիւր
էր գալիս: Սա միշտ պահուում էր մաքուր ու զարդարուած:

76. ԱՆՁՐԵՒԻ ԿԱԹԻԼ

Փայլուն կաթիլը գարնան անձրեի
Մի օր հարց տրւաւ իր ընկերներին.
«Ի՞նչո՞ւ մենք այս հին, աղքատ խըրճըթի
Լուսամուտն այսպէս բախում ենք ուժգին»:

Կաթիլներն իսկոյն տըւին պատասխան,
— Այստեղ երկրագործ մըշակն է ապրում.

Ուրախ աւետիք տալիս ենք նորան,
Որ նորա արտը ծլում է, ծաղկում:

77. ՀԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ

«Այս լաւ բան միտքս եկաւ, այ, հոգուս էլ վարձք է,
ասաց մէկ օր Աշտարակեցի Տէր-Յարութիւնը. աշակերտ-
ները մեր տանու գործին էլ պէտք կըդան, պարապ ժա-
մանակ է, աշխարհն էլ հանդարտութիւն, բեր մեր գոմի
օդայումը մի քանի երեխայք հաւաքեմ, կարդացնեմ,
որ ոչինչ չինի, գոնէ եկեղեցում փոխ կ'ասեն, մոմ կը-
բռնեն, քան թէ մինչև երեկոյ կալերումն ու փողոցներումը
իրար միա են կոծոտում»:

Տէր-Յարութիւնն էլ շատ չմտածեց. մի քանի օրումը
նորա տունը մի ուսումնարան դարձաւ: Մանուկներից որի
ձեռքը մի տախտակի կտոր տուեց, վրան մի քանի տա-
ռեր զբեց փայտէ զրշով, որին մի եզան կամ կովի թիակի
(ոսկրի) վրայ մի տկճորի բերանից յետ արած պարան կա-
պեց, պարանոցը զցեց, մի երկու տառ էլ նշանակեց, որին

Էլ մի հին, պապենական ժամանակից մնացած, միի մէջ
կորած, մկան կոծուած քերական, որ է այբ են ար անտ
տուեց: Մի քանիսին էլ, որոնք չորս-հինգ տէրտէր վար-
ժապետ էին փոխել, մի քանի տարի մի ութ կանոն քըր-
քրուած, կազմահան եղած սաղմոս էին կոանտակներին
տարել ու բերել, ամառը գնացել՝ իրանց հորթերը հանդումն
արածացրել, կամ գութանաւորին հաց տարել, ձմեռն էլ
յետ եկել, տէրտէրանց տունը ձանձրացրել—այդպիսիներին
էլ Տէր-Յարութիւնը էլի այն միւնոյն գզզուած սաղմոսը
տուեց ձեռքները և հրամայեց նորինորոյ գլխից սկսեն
իրանց «Ե-րա-նեալ-է-այր» սաղմոսը:

— Էլ այսուհետև թող մեր գոմի օդէն ձմեռները մարդ
թէ կին չգան, չհաւաքուին. դորա համար Գէորգ Խալֆենց
օդէն բաւական է. հիմա ես պէտք է աշակերտներ կար-
դացնեմ: — Աղջի, Սուսամբար, խորհուրդ արեց տէրտէրը
իւր տիրուհու հետ. արի մեր աղջիկներին էլ կարդացնենք.
Մանուշակն էլ թող երեխանց հետ խառնուի:

Ժողովուրդից ոմանք ուրախութեամբ բերին իրանց
աղջիկներին Տէր-Յարութիւնի մօտ կարգալ սովորելու: Ամեն
մի մանուկ բերում էր իրան համար մի ոչխարի խուզած
մորթի կամ մի կտոր թաղիք կամ մի հին, մաշուած, քըր-
քրուած, տասը տեղից կարկատած փալաս, զցում էր տակը
և գոմի օդումը կարգով շարւում: Գիւղի միւս ծայրիցը
կարելի էր լսել մանուկների ձայնը, որոնք բարձր-բարձր
իրանց գասերը սերտում էին. «Բեն—այբ=բա. բեն—եչ
=բէ. բեն—է=բէ. բէն—եթ=բը. բէն—ինի=բի. բեն—
վո=բօ. բեն—օ=բօ»: Միւսը զոռում էր՝ այբ—շա=աշ,
խէ—այբ=խա=աշխա, տիւն—վո=տո=աշխատո, դադ—
այբ=դա=աշխատողա, կեն—այբ=կա=աշխատողակա, նու—
այբ=ցո=նաց=աշխատողականաց:

Տէրտէրն էլ ծանրագործ, մի հաստ մորթի իւր տակը

ձգած, վերին անկիւնումը հանել է իւր պարսկական լայնաբերան ոտնամանները, բազմել ծալապատիկ ու մի կակուղ սերկնիլի ճիպոտ ձեռքին բռնած, դաս է տալիս: Այս ըռպէիս նա իւր վարժապետական վեհ պաշտօնի մէջն է:

Չոքում է ութինն տարեկան տղայ կամ աղջիկ աշակերտ մեր վարժապետի առաջին և, բռնելով տէրտէրի իրան ձգած ճիպոտի ծայրը, պատասխան է տալիս հետևալ հարցերին:

Տէրտէր. «Այս որտեղից է եկել»:

Աշակերտ. «Դրախտիցը»:

— Ի՞նչ է բերել:

— Խելք ու խրատ:

— Դէ ծայրը պաշիր:

Դողդողալով համբուրում է հլու աշակերտ ճիպոտի ծայրը ու կուչ դալիս: Նա սպասում է տէրտէրի սովորական խօսքերը լսելու: «Օքննեալ է փայտն, որով լինի արդարութիւն», ասում է տէր հայրը և, մի թեթև հարուած էլ մէջքին իջեցնելով, աւելացնում է՝ «որ ոչ լուիցէ ունկամբ, լուիցէ թիկամբ»:

Այս ամենօրեայ բնաբանն է դաս սկսելու, որից յետոյ երեխան կարդում է իւր դասը:

Վայ էր նորան, ով իւր համարը անգիր չգիտէր. յանկարծ կըկըպչէր նորա մէջքին սերկնիլի ճկուն ճիպոտը և դիպած տեղը կըկապտացնէր: Այսպէս հետզհետէ միմեանց քամակից կըփշրուէին մահակները աշակերտի բորիկ ոտքերի վրայ, մինչեւ որ տէր հօր կամքը կըլրանար. մի երկու խրատական, բայց կոպիտ, խօսքեր էլ կ'ասէր ու կ'արձակէր. «Գնա, կորիր, տեղդ նստիր, էլ յետ այսօրուան դասն եմ թողում. թէ որ վաղը ջրի նման չես կլլացրել, մեծ պատառդ ականջդ կը թողեմ»:

Կարդով անուշ կ'անէին ամենքը միւնոյն կերակուրը

և կ'սպասէին միւս օրուայ սպառնալիքին: Բայց եթէ մէկը սաստիկ շարժէր տէր հօր բարկութիւնը՝ բացի ճիպոտելուց, Տէր-Յարութիւնը բաց ծընկներով կըչոքացնէր նորան խոշոր աւազի վրայ, փէշերին հող կըլցնէր և կըկնքէր: Թոնդ արիւնն աչքի առաջն առնի այն աշակերտը, որի փէշերի կնիքը քանդուել է. որքան էլ ծունկը ցաւելիս լինի, պէտք է համբերի, տեղիցը չշարժուի:

Այսպէս էր հին ժամանակուայ ուսումնարանական կարգ ու կանոնը:

78. Հ Ա Տ Ի Կ

Լոյսը բացւում է, շուտ արտը գընամ,
Պատում սուր խոփով ես կուրծը հողի,
Իմ սիրուն հատիկ, քեզ նորան պահ տամ
Մինչև օրերը ամրան արկի:

Թաղեմ քեզ, հատիկ, և դարդս քեզ հետ.
Թէ Ասաուած ուզեց, դու կանաչեցիր,
Թոնդ դարդս մենի գետնի տակ անհետ.
Դու ինձ միիթար, կրկին տուն դարձիր:

Եւ ջերմ աղօթքով Տիրամօր առջե
Ես մոմ կը վառեմ, ես խունկ կը ծխեմ,
Որ քեզ պարգևէ մի առատ անձրե,
Որ քեզ միշտ սիրով նայէ խընդադէմ:

Բայց թէ այդ չնորհին մեղքերիս համար
Արժան չըլինիմ, ծով կը դարձրնեմ
Ես տաք քրտինքը ճակտիս արևառ,
Որ քեզ, իմ հատիկ, ծարաւ չժողնեմ:

Ծիր, կանաչիր, ոսկէ սաւանով
Ծածկիր իմ արտը ողջ ալեծածան.

Նոր այն ժամանակ անուշ շշիւնով
Տնւր ջարդուած սրտիս մի քուն հանգստեան:

79. Ա Շ Ա Ս Ի

Աղասու անուշ բնաւորութիւնը, բարի սիրտն ու հոգին քիչ մարդ կ'ունենար: Այն հասակը հասել էր, քսան տարին անց կացել, նա գեռ հօրն ու մօր առջևն այնպէս էր, ինչպէս մէկ անմեղ գառը: Մէկ օր նրանց անհնազանդ չէր գտնուել, մի օր նրա բերանից մի թթու խօսք չէր լսուած. աչքը նրանց աչքին հանդիպելիս՝ նա նրանց միտքն իսկոյն հասկանում ու ամեն կերպ աշխատում էր, որ նրանց կամքը կատարէ: Գիւղացիք բոլորը նրանով էին ուրախանում, նրա անունով երգում: Ամենքի աչքը նրա վրայ էր, նրան էր գովում, նրան էր օրհնում: Մէկին մի փորձանք պատահելիս կամ մի հոգս ունեցած ժամանակ նա անձնութեռութեամբ նրա ցանկութիւնը կատարում, իւր փափագին էր հասցնում: Բերանի պատառը հանում էր՝ ուրիշին ուտեցնում: Այնքան իւր ապրանքին, իւր հանդին, տաւարին չէր զգուշանում, որքան իւր դրացիների: Տասուտէրի որդին էր, աղքատի ու ողորմելիի ընկերը: Ո՛ք էր գնում նրա գուռը, սփոռցն էր բաց անում կամ քսակը. ով գութան չունէր, նրան իրանցն էր բան տալիս. ով եղ ու հօտաղ չունէր, նրան իրանցն էր ուղարկում. ով փող չունէր, որ մշակ վարձէ, այգիումը բանեցնէ, ինքն էր առաջ ընկնում, գիւղի տղայքը հաւաքում ու գնում՝ առանց կանչելու ու խնդրելու, նրա գործը կատարում, այնպէս որ՝ երբ այգու տէրը ներս էր մտնում այգին՝ աչքը սառած էր մնում և նրան կեանք ու արև էր մաղ-

թում: Շատ ծնողներ երանի էին տալիս նրա ծնողներին, որ այդպիսի բարի զաւակ ունին: Ո՛րտեղ հրաւէրը ու խնջոյք էր լինում, նա էր հիւրերի գլուխն անցնում, նրանց կառավարում և ուրախացնում:

Նրա երկայն հասակը, նրա թուխ-թուխ աչքերը, նրա զալամով քաշած յօնքերը, նրա աննման գեղեցիկ դէմքը նրա անուշ լեզուն, քաղցր ձայնը, նրա լայն թիկունքն ու բարձր ձակատը մարդու խելքն էին տանում: տեսնողը երեսին նայելուց չէր կշտանում: Սազը ձեռքն առնելուն պէս, քարին, փայտին շունչ, հոգի, լեզու էր տալիս: Ուղիղ է՝ արևը երեսն այրել, գոյնը փախցրել էր, բայց ծիծաղեւիս՝ երբ աչք ու յօնքը բայց էր անում, կարծես վարդ էր բացում, երեսիցը լոյս թափում: Նրա հրացանի գնդակը ապարգիւն չէր անցնում: Սիրտը այնքան բարի էր, որ զուր տեղը թուչուն էլ չէր սպանում, մրջիւնը չէր կոխում: բայց երբ թուրքերը գնում, այդին լցուում էին, կամ երան էին ուզում սպանել կամ գրացուն, այն ժամանակ՝ եթէ երկնքունն էլ լինէր, ցած էր իշնում: գիւղի ծայրիցը ձայն տային, իսկոյն, մի ակնթարթում, պատրաստ էր, և եթէ բանը խօսքով չէր վերջանում, այն ժամանակ նա իւր սրի, հրացանի ու բազկի շնորհքն այնպէս էր ցոյց տալիս, որ թշնամին մնում էր կատու դարձած, կամ նրա ձեռքին զոհ էր գնում:

Այնչափ ուժեղ էր, որ ձեռքը տղամարդու գոտիկը ձգելիս՝ հաւի ձադի պէս բարձրացնում, իւր գլխի ծայրին էր հասցնում, պտոյտ տալիս և կրկին ցած բերում: Զի հեծնելիս՝ հէնց որ ձեռքը բարձրացնում էր, առիւծ ձին խոնարհում էր ու մէջքը գէմ անում: Գոմշի կամ եղան պարանոցին մէկ սուր խփելով՝ այնպէս էր գուրս կըտնում, որ սրի ծայրը գետինն էր խրւում: Շատ անդամ քսան աւազակ իւր սրի կոթովս էր փախցնում: Թուրքերը նրա

անունը լսելիս, լեղապատառ էին լինում: Յաճախ, կոռովի ժամանակ, հէնց որ նրա ձայնը լսում էին, ճանձի պէս ցըւում, ցիր ու ցան էին լինում, կորչում: Մականունը Ասլան-Բալասի^{*)} էին դրել:

Բայց այսքան զարմանալի յատկութիւններն ունենալով՝ դարձեալ երեխայի հետ երեխայ էր, մեծի հետ՝ մեծ: Խանի, շահի առաջեն այնպէս էր կանգնում, պատասխան տալիս, որ կարծես թագաւորի որդի լինէր: Ծիծաղն ու խնդութիւնը նրա երեսից պակաս չէր երբէք. այնքան պարզ էր նրա սիրու, այնքան հանգիստ նրա խղճմտանքը, այնքան արդար նրա հոգին: Նրա ամեն մի խօսքը անգին գոհար էր:

80. ԱՂԱՍՈՒ ՄՈՐ ԵՐԳԸ

Զարթիր, մանուկ իմ նագելի, բաց այդ պայծառ աչերըդ, թերթերունքէդ քունը թօթուէ, գիրկը հանգիր քո մօրըդ. Բաւ քեզ՝ որքան բարի հրեշտակը հէքիաթ ասին երազում, Այժմ արի քեզ այն պատմեմ, ինչ պիտ' տեսնես աշխարհում:

Զարթիր, որդեակ, քանի՞ քընես,
Բաց աչերդ այդ նախշուն,
Ուր որ մայրդ իւր բաղդ, փառքը,
Կեանք ու արեն է տեսնում:

Դու կըմեծնաս, բոյ կըքաշես, չինար բոյիդ ես դուրբան, Քեզ ոյժ կըտան Մասսի քաջեր, որ դու լինիս քաջ վարդան: Իմ մատներով մի ոսկեթել մէջքիդ գոտի եմ կարել, Գոտիիցդ թուր կըկապեմ, այն էլ ինքըս եմ սըրել:

*) Առիւծի-Կորիւն:

Զարթիր, որդեակ, քանի՞ քընես,
Բաց աչերդ այդ նախշուն,
Ուր որ մայրդ իւր բաղդ, փառքը,
Կեանք ու արեն է տեսնում:

81. ԶԻՐԻԴ ԽԱՂԱՑՈՂՆԵՐ

Արեգակն եկել, երկնքի մէջտեղը բռնել էր. օրուան փուշը մի քիչ կոտրուել, տաքացել էր: Սար ու ձոր արծաթի պէս պապղում, պլազլում էին: Այս միջոցին ով որ Քանաքեռ մտնէր, հէնց կ'իմանար, թէ երկնքիցը մէկ աւետեաց ձայն է եկել, աշխարհա արքայութիւն է դարձել: Այստեղ զուռնէն էր փչում, այնտեղ ճղլախտի էին խաղում, միւս տեղը գոտեմարտներ էին կոխ անում: Աղասին էլ, քէֆն արել, պլծել՝ իւր խումբը յետեկց գցած՝ եկաւ մէկ տասը ձիաւորի հետ գիւղի միջովն անցկացաւ, որ գնայ, կալերի դգումը (տափարակումը) իւր շնորհքը ցոյց տայ՝ ջիրիդ խաղայ, որովհետեւ գիւղամիջին այդպիսի տափարակ տեղ չկար: Հէնց իմանաս մէկ թագաւորի որդի է գալիս: Զէնք ու զրահը կապած, հրացանն ուսին, թուրը կողքիցը կախ, ջուխտ փշտովն ու դաշոյնը կողքումը, կանաչ մովի շալվարը, զառ կաբէն հագին, մետաքսէ աղլուիը վզին փաթաթած, բուխարայ թուխ գդակը կիսով չափ կոտրած՝ թեք զլխին դրած, բեխերն էլ աբրեշումի պէս ոլորել՝ այնպէս էր թշի վրայովը գուրս տարել: Մտիկ անողի խելքը գնում էր:

Հեռուից երևում էր, թէ ինչ կրակ էր անում կարիչը: Զիու ականջը մտած՝ այնպէս էր քշում, կրակին տաշիս, որ հէնց իմանաս թևաւոր թռչուն լինէր: Շատ անգամ ջիրիդը հեռու տեղից շպրտում, ձին չափ էր գցում ու գետնիցը վեր ցատկելիս, ձիու վրայից բռնում, նորից

գցում։ Շատ անգամ հէնց այնպէս ուղիղ շպրտում էր ու կրակի պէս յետելց հասնում, բռնում, էլ յետ ծուլ անում։ Գետնին վայր ընկած տեղիցն էլ այնպէս էր թամքի միջիցը կռանում, բարձրանում, որ ջիրիդն առաջին դողում էր։ Ընկերների վրայ էլ եթէ երեմն-երբեմն ջիրիդ էր զցում, այնպէս էր նշանում, որ գլխարկների ծայրին էր դիպչում, կամ գլխարկը հետը տանում, որ իմանան, թէ նա նրանց խնայում է։ Շատ անգամ թամքի միջին ջուխտ ոտի վրայ կանգնում, այնպէս էր ձին չափ-զցում։ Աչք պէտք է լինէր, որ նրա կտրիչութիւնը, տղամարդութիւնը, շնորհքը տեսնէր ու զարմանար։

82. ՎԱՆԵՑԻ ԿՏՐԻՉՔ

Հազիւ լըրացաւ քըսանմէկ տարիս,
Աղուամազ բըսաւ երես ու ծնօտիս,
Թըշերէս կարմիր վարդեր կըկաթի
Զիլերըս ամուր՝ ասես երկաթի։

Տըւէք ինձ սարեր՝ սարեր կործանեմ,
Ծառը արմատով գետինէն հանեմ,
Սուր ակուներովս երկաթ կըծամեմ,
Մէջըս այդքան ոյժ, ասէք, ինչ անեմ։
Առջերս դրէք մարդ հարիւր—հազար,
Զարդեմ-տըրորեմ զերդ բողի ու գազար.
Ինչ այլք շաբթու մէջ՝ այն ես օր կ'անեմ...

Մէջըս այդքան ոյժ, ասէք, ինչ անեմ։
Իմ պէս բիւրերով լի է Հայաստան,
— Նըրա սուրբ հողին ըլեմ ես զուրբան—
Մարմինը ուժեղ՝ առոյդ է Հային,
Այլ, ափառս, թըմրած է նորա հոգին։

83. ԱՂԱՍՈՒ ՎԻՃԱԿՆ ՈՒ ՀՈԳՄԵՐԸ

Աղասին՝ երբ Քանաքեռ սարդարի Փառաշներին սպանեց, ինքն էլ այնպէս մնաց ազիզ թագուհու և իւր արածի վրայ սառած՝ կանգնած։ Ընկերներն էլ ժամանակ չկորցրին. գիտէին որ բոլորի վերջը ման է. էլ ոչ հօրմտիկ արին, ոչ մօր, Աղասուն կապեցին ձիու վրայ ու ընկան Աբարանի սարը, որ կամ Քամբակ փախչեն, կամ Ղարս, կամ Ախալցխայ, որ իրանց գլուխն ազատեն։ Բայց ինչ Աղասու հալն էր, Աստուած ոչ շնանց տայ. Ճեռն ու ոտը կապած, դժոխքը փորումը, սադայէլեան չար հրեշտակները գիխին պատյտ տալով՝ Զանգուի վրայով անցկացրին ու հէնց բռնես՝ սար ու ձոր բերանները բաց, կամենում էին նրանց կուլ տալ. Շատ տեղ իրանից գլունում փոքր էր մնում ձիուցը վայր ընկնի, դարձեալ ընկերները հասնում, երեսին ջուր էին ածում, ականջները տրորում, ուշքի բերում. կրկին սիրտը գնում՝ ձիու գըլխովն էր ընկնում. Երբեմն էլ որ յանկարծ՝ «Թագուհի, հայրիկ, մայրիկ, Նազու» չէր ձայն տալիս, քար ու հող կամենում էին կրակուիլ. Հէնց մութը գետինն առաւ, նրանք ներս մտան Աբարանի քանդուած եկեղեցին։ Զիանքը որ շունչ չէին քաշում, աշքներից կարծես արին էր կաթում, քթներից ու բերաններից՝ կրակ. Վաթոն սկսեց ձիանը ման ածել, կարոն՝ սար ու ձոր աշքի տակն առնել, հսկողութիւն անել. Մուսէն, Աղասուն ուսին դրած, մտաւ եկեղեցու աւերակը, գլուխը դրեց գոզը, ճեռը երեսին ու աշքը երկինքը զցեց, որ իմանայ թէ աստղերն ինչ են ասում. Միւսները այս կողմ-այն կողմն ընկան, որ ձիանոնց համար մի փոքր ուտելիք ճարեն. Բայց այն ժամանակ հանդումն ինչ կրկինէր, իստի չոփերն էին մնացել

տեղ-տեղ ցից կանգնած։ Երկինքն աչք ու յօնքը կիտած՝ իւր անխւը պտըտում էր հանդարս։ լուսինն ամպերի տակիցը մէկ երեսը հանում՝ ցոյց էր տալիս, մէկ էլ ծածկում, կորչում էր։ Գերեզմանատունն այնքան սարսափելի չէր լինիլ, ինչպէս այս ամայի հանդը։ Ամեն մէկ սարի չէր լինիլ, ինչպէս այս ամայի հանդը։ Ամեն մէկ սարի արանքից կամ քարի տակից դժոխքի ձայն էր գալիս։ Գայլ, չաղալ, արջ՝ մէկ կողմից, գառնաշունչ բուքը միւս կողմից, սանդարձմետը բաց էին արել, սար ու ձոր իրար գլխով տալիս։ Ամեն մէկ քար, ամեն մէկ թուփ նրանց աչքին դև էր դառել ու, ձին ոտը փոխելիս, կամ փորնչալիս, քարերը կամենում էին ձաքիլ, ձորերը տրաքիլ։ Աղասին՝ շունչը փորն ընկած, երբեմն որ ախ չէր քաշում, գետինն ուղղում էր պատուի, ընկերներին ներս տանի։ Նրա հաւատարիմ շունը գլուխը նրա ոտի տակն էր դըել՝ մնացել փէտացած։ Զին էլ բերին, գլխավերել կապեցին, որ գուցէ նրա շունչը Աղասուն մի ճար անի։ «Զանիդ մատաղ, Աղասի, այս ինչ օրն ես ընկել, մեր աչքը պէտք է դուրս գար, որ քեզ այսպէս չտեսնէինք. այս ինչ է քո դուրս թիւնը», ասում էր երիտասարդ Մուսէն ու գլխին տալիս, երեսը երեսին դնում, ձեռը կրծքին։ Երակի զարկն ու զերմի սաստկութիւնն էլ որ չէր տեսնում, գլխին կրակ էր վառւում։

Միւս ընկերներն էլ, ձիանոնցը ջուր տուեցին, ձեռն երը քամակներին քսեցին և նորից թամքեցին, սանձը բերանները զցեցին, հրացանների, ատրճանակների ոտներն էլ քաշեցին, նորոգեցին և ամեն մարդ իւր ձիու սանձը ձեռին՝ եկան, Աղասու չորս կողմը կտրեցին։ Աչքներից արտասուքը գետի պէս էր վէր թափւում։ Ծնողաց հոգու մէկ կողմից, իրանց սև օրը միւս կողմից, իրանց սիրելի ընկերին էլ այն դրութեանը տեսնելիս՝ ուզում էին քար ընկերին էլ այն դրութեանը տեսնելիս՝ ուզում էին քար թուփ ալոկին, գլխներին տան։ «Փառքիդ մատաղ, Ասու թուփ ալոկին, գլխներին տան։

տուած, հէնց այս առաւօտ ամեն աչք մեզ էր երանի տաշն, ինչ արինք, որ մեզ այս պատժին հասցրիր, Աղասի մատաղ լինէինք, եղբայր ջան, մեր հոգի, մեր աչքի լոյս։ Մէկ ճանճ անգամ իզուր տեղը չես սպանել, մէկ սառը խօսք քո բերնիցը չի դուրս եկել, այ Աստուծու գառը. ուրեմն ինչու պէտք է Աստուած քեզ էլ, մեզ էլ այստեղը հասցնէր։ Տօ մէկ բերանդ գոնէ բաց արա, քո ջանին մեռնիմ. ինչի՞ ես այստեղ մեզ այրում, փոթումում. ինչ կըլինի, որ այդ սիրուն աչքերդ բաց անես, մենքս էլ քո առաջ մեր արիւնը վէր կ'ածենք։ Կաթն ու ծիծ մէկտեղ նրա համար ենք կերել, որ քեզանից ձեռը լել, որ քեզ նեղ օրը բաց թողենք։ Որիս ուզում ես, վեր կաց, քո ձեռքով մատաղ արա, ով երեսը յետ թեքի, պարանոցը կտրիր. քո ձէնին մատաղ, ախր մէկ խօսես՝ ինչ կըլինի։

Այս խօսքին յանկարծ մէկ ձիու ոտի շվլթոց եկաւ։ Երկինք, գետինք գլխներին սևացաւ. հէնց իմացան մէկ ամպ տրաքեց, մէկ սար գոռաց՝ փուլ եկաւ։ Զէնք ու զրահ առան ուսները, ամեն մէկը մէկ բուռը հող սրբութիւնի տեղակ բերանը զցեց, մէկ քարի առաջի չոքեց, իւր մեղքը խոստովանուեց, մէկ քանի ծունդ դրեց, երեսին խաչ հանեց, ժամի քարերը պաշելով՝ տեղիցը վեր կացաւ, ձիու աչքերը ձըմբուց, սղալեց, որ ականջները սրել, խլացրել՝ այն կողմն էին մտիկ անում, որտեղից ձայնը գալիս էր։ Շունը մի կողմ քաշեցին, մատով ձեռով արեցին, որ ձայն չանի ու իրանք թուր ու հրացան պատրաստած, ձիու սանձը զցած՝ սկսեցին պատի ճեղքից անձայն ականջ գնել, որ տեսնեն՝ եկողներն ովքեր են։

Այսպէս կէս ժամաշափ մնացին փէտացած, էլ չէին ուղում ծպտան. շատ մտիկ արին, ձայն չեկաւ. հէնց այն է՝ կամենում էին տեղները նստել, որ մէկն այն կողմից սկսեց բերանը բաց անիլ. «Տղէրք, ինչ կըլինի, թող լինի. տղամարդութիւնն այն է, որ մարդ իւր գլուխը թշնամու ձեռքը չտայ: Դուք լաւ գիտէք, որ մեր մէկ հայը տասը թիւրքի հաւասար է: Երկում է հետեներից մարդ են գցել. թող դան, դրանց փիլին իրանց խոռվ կենայ: Բոլորին կամ կըջարդենք, կամ կըջարդուենք: Մէջք մէջքի տանք, տմարդին մուհդաշ (ակնկալու) չլինինք:

Հէնց այս խօսքն էր Կարոյի բերանում, որ յանկարծ երկու գաղ ծուլ էլաւ, թուրք գուրս քաշեց և կամենում էր որ գուրս պրծնի. բայց ընկերները փէշիցը քաշեցին, ձեռքերը բերանին դրին, որ սուս տեղը նստի, որովհետեւ ձիանոնց ոտի թրըխկոցն ու փորնչոցը այնպէս մօտեցաւ, որ կ'ասես թէ ալկանջների տակին իինէր: Բայց նրանք լաւ գիտէին, որ գիշերը ձայնը շատ շուտ տեղ կըհանի, այդ պատճառով էլ չուզեցան, որ իրանց տեղն խմաց անեն ու նրանք հազրուած դան: Քիչ-քիչ եկողների խօսակցութիւնն էլ էին ջոկում, որովհետեւ պարզըկայ գիշեր էր, քարերն էլ էին համբաւ բերում:

«Լաւ ուժ են տուել», ասաց թուրքերից մինը. «Կեցցին. անիծած բուքն էլ հետքերը կորցրել է. գիշեր էլ է, որ գոնէ մարդ տեսնի. բայց ուր կըկորչեն. երկնքումն էլ լինին, վեր կըբերենք. գեռ քշենք. այս ամայի տեղը նրանք չէին մնալ»: — Թուր, հրացան պատրաստի պահեցէք, ասաց թուրքերից միւսը. մի գուցէ հէնց այս թփերի աւակ թագ կացած լինին, ասածներս լսեն ու յանկարծ այնպէս վրայ թափուին, որ էլ չկարողանանք ձեռքներս գլուխներս տանել: Սրան Աբարան կ'ասեն. Աղասու պէս առիւծը այսպէս տեղը մեսակ քսան ձիաւորի չի ասիլ, թէ Աստուած է

ստեղծել: — «Տօ, քիչ գովիր այդ պիղծ, անհաւատ հային. չէ, չէ, մեզ ողջ-ողջ կ'ուտի, հայն ինչ է, որ ինչ ջան ունենայ: Զմեռնիմ, մինչև աչքս նրան հասնի. կըտեսնէք, թէ ինչպէս ճուտ կըդառնայ առաջիս»: — «Այ տղայ, ասաց այն կողմից թուրքերից մինը. այս եկեղեցուց հեռու կենանք. սրա միջումն, ասում են, սուրբ Մողնու մասունք. կայ թաղած ու գուք լաւ գիտէք, որ այդ գիծ սրբի հետ գլուխ գլխի տալ չի լինիլ. մարդի պարանոցը ծուռում, երեսն յետևն է ընկնում... հազար այսպիսի բան իմ աչքովս եմ տեսել. հայ, թուրք, ամենն էլ նրա ծառան են»: — «Բերանիցդ հայի հոտ է գալիս, մաշաղի, ասաց մի ուրիշ թուրք. տօ, հայն ինչ է որ իր սուրբն ինչ լինի: Ես քո ջրգրու այս գիշեր մինչև սրա միջումը խորոված չանեմ, չուտեմ, ձիս միջին չկապեմ, բաս ես մարդ չեմ»...

Դեռ խօսքի կէսը թուրքի բերանումն էր, որ «ով Սուրբ Սարգիս», ձայն տախն ու թուանքների ճռոոցը մէկ եղաւ: «Տղէք, ձեր ջանին մեռնիմ, էլ մտիկ մի անէք, մեր թուրը նրանց գլուխը. էլ ո՞ր օրուան համար ենք կողքներից կախ անում», ձայն տուեց հսկայ Կարոն. «Երեքի գլուխը զնաց. սրանց փիլին անիծած»: — Երկումն էլ իմ թրիս մատաղ արի, քաջացէք, այն կողմիցը գոռաց վաթթոն: — Երկումն սպանել, մէկի գլուխն էլ ահա ոտքիս տակն է, ասաց վանին: — Տղէք, փախան, ձիանը հեծէք, սրանց եկած ճանապարհը քոռանայ. սովորել են՝ գեղերումը հաւի գլուխ թոցնելով ման դան, հայերի արիւնը խմեն, սրանց տունը քանդուի. տղէք, յետամուտ եղէք. Սուրբ Սարգսի ջանին մեռնիմ, հրապարակը մերն է. ասացին ու վիշապի պէս ընկան թշնամու քամակիցը, որին ինչ տեղ հասցըին, այն տեղ կտոր-կտոր արին, թար ու սար աչքներին լոյս էր տալիս, կոներին ոյժ:

Բայց ախ, արիւնն աչքները կոխած՝ հէնց քշեցին դնա-

ցին, էլ միտք չարին, թէ Աղասին ինչ նեղ դրութեան մէջ՝ ընկեր է ձայն տալիս, ընկեր չկայ, ախ է քաշում, ձայնը լսող, իմացող չկայ: Հրացանները որ միանգամից չճռուացին, հէնց իմանաս թէ հոգին յետ եկաւ տեղը. վրայ թռաւ տեղիցը, ընկաւ ձիու քամակն ու խելքը կորցրածի պէս՝ էլ չիմացաւ, թէ ուր է գնում: Թուրը որ մէկի գագաթին չհասցըց, գլխի հետ երկու կտոր եղաւ. մինչև դաշոյնը կլիանէր, պարանն ընկաւ ճտովն ու շատ էլ կամեցաւ որ ձին առաջ քշի, չեղաւ. ձին տակիցը դուրս թռաւ, ինքը գետնին դիսաւ ու չորս հսկայ տղամարդ վրան թափուեցին: Նրա շանը վաղուց էին ուզում սպանել, որ ձայն չհանի, բայց այս տիրասէր հաւատարիմ կենդանին՝ տեսնելով որ իւր տիրոջն էլ օգուտ չի անիւ, ընկաւ գնացածների յետեւիցը: Աղասու ձեռները կապեցին, բերանը բամբակով լցրին, աղլուխով պինդ հուպ տուին ու աչքդ բարին տեսնի, միւս օրը թնդանօթն էր ու Աղասու ջանը:

Շատն ու քիչն Աստուած գիտէ, թէ ուր հասան տղայքը, յանկարծ որ յետ դարձան, գըլխներին կրակ վառուեց, երբ Աղասու շունը տեսան ճանապարհին: «Վայ, մեր տունը քանդուեց, տղէք», ձայն տուին. «այս ինչ արինք. մեր ձեռովք մեր աչքը հանեցինք. հասնենք, գնանք, էլ ինչ ենք անում մեր գլուխը, երբ նրան կրտանեն»: Բայց ուր էր Աղասին... Լուսնեակ գիշերը շատ այս ու այն կողմն ընկան, բան չգտան. էլ յետ հաւաքուեցան ու միտք արին: «Տղէք, մնանք այստեղ. Աղասու շունը՝ տեսնում էք, անյայտացել է. նա իմաստուն կենդանի է. ինչպէս որ լինի՝ հետքի վրայ կարող է գտնել. թէ ճար կայ, նրանից կըլինի, այս գիշեր մենք ոչինչ չենք կարող անել»: Այսպէս բաւական ժամանակ տարակուսած միտք էին անում, երբ յանկարծ խելօք շունը, լեզուն հանած, հեթեթալով լոյս ընկաւ: Շունը վաղեց, նրանք յետեցից: Բաւական տեղ անց-

կենալուց յետոյ՝ շունը յետի ոտը վեր քաշեց՝ կանգնեց: Շատ էլ զօր արին, որ տեղիցը եռայ, — չեղաւ: Իսկոյն իմացան զգոյշ կենդանու միտքը, ձիաներից վեր եկան, մէկին յանձնեցին ու կարոն առաջներն ընկած՝ կամաց-կամաց ոտները փոխեցին... Մէկ բլրակի մօտեցան թէ չէ, էլի շունը կանգնեց, հոտոտեց: Հրացաններն առան ձեռները: Աստուծոյ ողորմութիւնը հասաւ. նրանք այն կողմիցը գնացին, որ բլրակի ստուերը մնաց առաջներին: Քարերի տակով փորսող անելով՝ այնքան գնացին, որ մտան մէկ քանդուած փոսի մէջ: Զուր չկար միջումը. անձրեկի ձղած էր: Բլրակի ստուերը մէկ հինգ գագ էլ այն կողմն էր ընկել նրանց զլսի վրայովը: Այս հեղեղատի միջովն այնքան այսպէս զգուշութեամբ գնացին կուացած, որ թշնամին մնաց դէմ ու դէմը: Լուսնեակը հէնց ընկաւ թուրքերի ճակատներին. տեսան որ Աղասին միջներումը չի, սիրտներն ընկաւ տեղը. մի փոքը էլ շունչ առան ու ամեն մէկը մէկի ճակատին նշանիլը, հրացանների տրաքիլն ու թշնամիների բանհոգի լինելը մէկ եղաւ: Հաւի պէս գեռ այնպէս թըրպը տուում էին, որ մեր տղայքը վրայ հասան: Ա՛խ, ով կարող է նրանց ուրախութիւնն ու արտասուքը պատմել. երկնքից հոգին յետ բերին. էլ նրանց բերանն ինչ խօսք կըդար: Որ էլ ժամանակ չկորցնեն, վեր առան իրանց կորցրած գանձը, հանեցին թշնամու զէնք ու զրահը և բարձեցին թուրքերի ձիանոնց վրայ ու ճանապարհ ընկան: Ո՞վ կըզարմանայ, որ լսի, թէ Աղասին ամեն անգամ իւր շանը տեսնելիս՝ ուզում էր կեանքը նրան տայ: Նշաններով մինչև տասնունինդ մարդ այն գիշերն սպանել էին: Երբոր կրկին եկեղեցու մօտ հասան, հանեցին մի քանի շահի փող, զրին սեղանի վրայ, չոքեցին, Աստուծուն փառաբանութիւն տուին ու ճանապարհ ընկան...:

84. ԱԼՊԵԱՆ ՈՐՍՈՐԴ

— Զես ուզիլ դու գառն արածես.

Գամնուկն է հեղ ու խոնարհ.

Առուի ափին սրինդ կ'ածես,

Նա կըխաղայ վեր ու վար:

«Մայրիկ, մայրիկ, թնդ ինձ երթամ,

Լեռան գլխին էրէ որսամ...»:

— Զես ուզիլ դու ոչխար տանես

Փողի ձայնով արօտը.

Կ'երգես անուշ, կըպահպանես

Կանաչ պըրակում քո հօտը:

«Մայրիկ, մայրիկ, թնդ ինձ երթամ

Վայրի լեռան գլխին ման գամ»:

— Զես ուզիլ դու ծաղիկ պահես,

Ծաղիկ-ծաղկունք մարգերում.

Դրսում չկայ սիրուն պարտէզ,

Վայրի է ողջ լեռներում:

«Թնդ դու ծաղկունք, թնդ որ ծաղկես,

Մայրիկ, թնդ ինձ ելնեմ բագէն»:

Ու քաջ որդին որսի գնաց.

Զգտում է նա հեռու-վեր,

Անդուլ հեռու, խիզախընթաց,

Դէպի լեռան խուլ տեղեր:

Նորա առաջ, քանց հողմ արագ,

Փախչում է մի այծեամ վայրագ.

Լերկ, ապառաժ սարաւանդից

Թեթև քայլով վազվըռում

Եւ ժայռերի պատառուածքից

Այծեամն անվախ է ցատքում:

Բայց յեսկից, աղեղ ձեռին,

Գալիս յանդուգն իւր թշնամին:

Նա լեփ վախքի վըրայ փախչում,

Կախուած մնում է ծայրին,

Ուր ժայռն ուղղորդ, —մէկէն կորչում,

Անհետանում է ուղին:

Ներքին ընկնում անդունդը խոր,

Ետև որսորդն աղեղնաւոր:

Նա սարսափած լուռ հայեացքով

Կեանք է հայցում բիրտ մարդէն.

Ի զուր, աղեղն անդութ ձեռով,

Լարել քաշել է արդէն:

Յանկարծ, տեսնես, ելնում է վեր

Մութ անդունդից լեռնոգին ծեր,

Եւ պաշտպանում հըզօր աչով

Իւր հալածուած կենդանուն.

«Ինձ մօտ էլ ես մահ ու վրդով՝

Կոչում է նա, բերում դուն.

«Տեղ ամենքին կայ աշխարհում.

«Ի՞նչ եմ իմ հօտը չարչարում»:

85. ԱՐԻԱՍԻՐՏ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՆԵՐԸ

I

Հանգստարանի ձայն էր գալիս, երբ մեր ճանապարհորդները, գիշերուայ կիսին, աւերակ քաղաքի պարիսպներին մօտեցան։ Լաւ կտրիճ մարդ պէտք է լինէր, որ այս ժամանակ այսպիսի վայրենի ամայի տեղ վստահանար մըտնել։ Գուցէ մեր յոգնած ճանապարհորդներն այստեղ չհասնէին, եթէ հեռուից լուսնեակի լուսով նոքա շխարուէին տաճարների ու բուրգերի գլուխները նշմարելով։ Նրանց խարող մանաւանդ իրանց տգիտութիւնն էր. Անի քաղաքի անունն էլ չէին լսել, ուր մնաց որ իմանային, թէ նորա աւերակները դեռ աշխարհում կան։ Ճշմարիտ է՝ հեռուից աքաղաղի ձայն չէր գալիս, բայց սարերի հովիւների ձայնը լսելով՝ էլ կասկած չունեցան, ուղղակի քշեցին ու մտան ամայի քաղաքի մէջ։ Մի բոպէական սարսափ կալաւ կտրիչ երիտասարդներին, հէնց իմացան՝ թէ մեռելատուն կամ գերեզմանատուն լնկան և ամեն մէկ ձիու ոտի շվելթոցը կամ իրանց քաշած շունչը սար ու ձոր կ'ասես թէ կատաղեցնում էր։

Ամենայն մարդ փորձած կըլինի, որ երբ մարդս մութը ժամանակին մէկ գերեզմանատան կամ քանդուած եկեղեցու մօտով անցնում է, սիրտը թուլանում է, մարմինը ցընցում, հազարաւոր ցնորքներն էլ դե ու վիշապ համարում, որ իրան կամենում են ուտել. շատ անգամ ուշագնաց էլ է լինում։ Սորա պատճառն այն է, որ մարդ սովոր է, ինչ տեղ տուն է տեսնում կամ շինութիւն, կարծում է թէ նորա մէջ մարդ կըլինի, բայց յետոյ որ ձայն չի լսում, այնպէս է ենթագրում, թէ անպատճառ չար ողիներն են այնտեղ բուն դրել։ Ապա թէ ոչ՝ մեռելի չոր մարմինը

կամ աւերակ պատերը ինչ զօրութիւն ունին, որ մեզ ինչ անեն։ Էլ ով սիրտ կ'անէր ապա մէկ եկեղեցու մօտենալ կամ մէկ բուրջ մտնել, այն էլ այնպիսի ժամանակ, երբ ամեն քարի տակի հարիւր գլուխ էր կտըրուում։ «Տղէք, չար սատանի թուրը գլխներիս խաղում է», ձայն տուեց քաջն Աղասի. «Տղամարդութիւնն այսպիսի տեղը յայտնի կըլինի. զէնք, զրահ պատրաստեցէք, ձիանոնցը հանգստացրէք, որ, եթէ Աստուած տայ, մինչև առաւօտ գլխներս վրաներս լինի, տեսնենք թէ այս ո՞ր տարտարոսն ենք ընկել։ Տմարդութիւնն էլ ձեռք չի տալ. ձիաները ջրեցէք, քաշեցէք մէկ պատի տակ, ես մէկ շունս առնեմ, կամաց-կամաց մէկ աչք ածեմ՝ տեսնեմ թէ տեղներս ապահով է, թէ էլի սրով ու արիւնով պէտք է կամ գլուխ պահենք կամ գլուխ կտըրենք»։ Ընկերները շատ խնդրեցին, որ չգնայ, ականջ չարեց. հրացանն ուսին դրեց, փշտովները (ատրճանակ) պատրաստեց, Սուրբ Սարգսի անունը տուեց ու ոտը փոխեց։ Գիծ կըլինի այն մարդը, որ իւր գլուխը մահու կըտայ, բայց Աղասին իւր գլխից վաղուց էր ձեռք վեր առել։ Հաւատարիմ շունը գլուխը նորա ոտիցը չէր հեռացնում. մէկ հոտ առնելիս՝ կամ շշուկ լսելիս՝ կանգնում էր, յետի ոտների մինն էլ ցցում, երկար ժամանակ ականջ դնում, յետոյ առաջ գնում։

Հէնց մի փոքր հեռացաւ թէ չէ՝ մէկ եկեղեցու դրունից կրակի լոյսն ընկաւ Աղասու աչերն առած, էլ չմտածեց՝ թէ այսպիսի տեղը գողից, թշնամուց աւելի ուրիշ ոքմին չի լինի. ուղիղ կրակի վրայ զնաց. Աստուած հեռու տանի, ինչ նա տեսաւ. տասը քուրդ եկեղեցու մէջտեղը կրակ էին վառել, չորս կողմը նստել՝ խորոված էին անում, շամփուրներով բերանները քաշում, ուտում, խնդում և աչքները զգաստ որսորդի շան պէս կամ դէպի դուռը գցում կամ դէպի պուճախը։ Թըշնամին որքան էլ գաղան լինի, շատ անգամ իւր ստուե-

ըիցն էլ կըվախենայ։ Մինչև որ նրանք կըակի մօտիցը ձեռքներն աչքներին կըդնէին ու դուն ուրուականը կըտեսնէին, Աղասին կամաց-կամաց ներս մտաւ, ծանր դէմքով, առանց բարե տալու, կըակին մօտեցաւ ու ձեռքը մեկնեց, որ մէկ խորոված շամփուր էլ ինքը քաշի։ Նրա դեղնած մեռելային պատկերը, նրա անահ շարժմունքն ու այնպէս անժամանակ և անակնկալ ներս գալը երբ տեսան քրդերը, հէնց իմացան, թէ նա այն աշխարհիցն է վէր եկել. լեզուները չորացան, ձեռքները թուլացան։ Ի՞նչպէս կարող էին կարծել, թէ այդ միջոցին ադամուդին մեն-մենակ սիրտ կ'անէր այն աւազականոցը մտնել, որի մօտիցն անցկենալիս ցերեկն էլ հարիւրաւոր մարդիկ սարսափում էին, որի մէջ հազար տարուց աւելի էր, ոչ ոք չէր վստահանում գալ և պատրաստի տներում բնակութիւն հաստատել։ Բայց Աղասին այնպէս էր ձեւացնում, իբր թէ իւր առաջինը մարդիկ չեն. աչքը խոժոռած՝ մէկ այս կողմը գցեց, մէկ այն կողմը, քրդերէն էլ չգիտէր, որ մէկ բառ անգամ խօսի. բայց այս էր, որ նրան ազատեց, որովհետև եթէ խօսեցել էր, կ'իմանային, որ մարդ է, դեչէ, իսկոյն պատառ-պատառ կ'անէին։ Մէկ շամփուր խորովածից որը կերաւ, որն էլ յետ կըակը գցեց, տաճարի հիանալի շինուածքին ու գեղեցկութեանը մտիկ արեց ու գլուխը շարժեց։ Քրդերը փէտացած՝ մնացել էին նստած, աչքը որ յանկարծ նրանց վրայ չխոժորեց, ամեն մէկը քիչ մնաց որ տեղն ու տեղը հալուի։ Այնքան այսպէս նրանց աչքը մոխիր ածեց, որ ընկերների ոտի շվլթունն իմացաւ և շունն ուրախ ներս ընկաւ, ոտներովը փաթաթուեցաւ։ Հէնց շունը տեսան թշնամիքը թէ չէ, աչքների փառը վայր ընկաւ, ամեն մարդ թրին վրայ վազեց, որ նրան կտոր-կտոր անի։ Առաջին թուրը վրայ բերողի գլուխը կէս եղաւ. փշտովսերի երկուսն էլ իրանց որսը ճարե-

ցին. յետոյ դաշոյնը հանեց և դոռաց. «Տղէք, ձեր արկին մատաղ, Աստուած մեր կողմն է. դուռը փակեցէք, որ սրանց մատաղն այս գիշեր անենք»։ Հայի խօսքեր որ շլուեցան, հէնց կարծես պատերը լեզու առան. «Աման, ձեր եկած հողին մատաղ, ճար ունիք՝ տեսէք, մեզ ազատեցէք», լսուեցաւ տաճարի խորքից։ Տար-տասնուհինգ քրդստանցի հայ էլ այս կողմից այն կողմից որ գլուխ չքարձրացրին ու քրդերի մնացած թրերն ու մզրախները ձեռք առան, թշնամու աստղը թեքուեցաւ, ութը կոտորուել էին, երկուսը մնացել վիրաւորուած, ընկած, սրանց էլ կապեցին մէկ ձիու բնիք (ցից) վրայ ու... աչքդ բարին տեսնի. երբէք մարդկային քաջութիւնը այն բարերարութիւնը չի արել, ինչպէս հիմակ։ Աղջիկ ասես, տղայ, հարսը, երեխայ, ծծկեր, հազարաւոր թոկերով կապած՝ տուն էին արել, Ղարսի գիւղերիցը գերի բերել, որ տառպէին մարդ կեանք տայ, որ նրա առաջին ծունը չդնեն, երկրպագութիւն չանեն։ Բայց հսկայն Աղասի ինքն էր ընկնում նրանց ճտովը, ինքը նրանց կապը յետ անում, ինքը երեխային ջոկ, մօրը ջոկ փայփայում, գուրգուրում, որ Աստուծուն փառք տան, Սուրբ Սարգսին խունկ ու մոմ վառեն, ապա թէ ոչ սա իւր շնորհը չէր։ Ոչ մի գիշեր այն լոյսը, այն կեանքը չի տեսել, ինչպէս այս գիշերը. ազատուողը թէ ազատողը իրար տեսնելիս՝ հէնց իմանում էին՝ թէ երկնքումն են և ոչ երկրումը։

Փոքը ինչ որ հանգստացան, աչքդ բարին տեսնի։ Քրդերի շորերը, զրահները, ձիու սարքը և խուրջինները որ բայց չարին, հազար արիւնի գին կար մէջներումը. ամեն

մէկի վրայ հարիւր թումանի զարդ, արծաթ ու սոկի կար, բացի պատրաստի փողից։ Աղասին ոչ մէկին մտիկ չարեց, ուղարկեց՝ ձիանքը բերել տուեց, ներս քաշեց և քրդստանցի հայերին հարցրեց, որ իրան միամտացնեն, թէ արդեօք այն գիշեր կարող են այնտեղ ապահով ու հանգիստ մնալ թէ ոչ։

— «Աղա, գլխուդ, արևուդ դուրբան, վալլախայ չընք գինայ, թէ էս շան լաճերիցն կան, թէ չէ, ամա օյաղութիւնն աղէկ է։ Սրանց ճանգիցը շունը չի խլսի, մարդն իմալ կըխլսի։ Մկայ Աստըծուն փառք. խազար էսպէս ջանավար մեր առաջը գան, գէնոնց խէրն անիծեմ, մէկ թուր տուր մեր ձեռը, մենք գինանք թէ իմալ քո ճակատը պարզ կ'էնենք. մեր ամեն մէկը, Սուրբ Կարապետ գինայ, էսոնց տամնին խաւի պէս կըծալի, տակը կըքաշի. գու դարդ մի՛ արա, ուահաթ պառկի, մեր երեսն ոտացդ հողն ըլի։ Էսոնց քօքը կարուի, քանց շուն շատ են, քանց գէլ առաւել։ Թէ մեզ կըխարցնես, մենք էմլայ խէյրաթ կըտեսնանք, որ մեր կէս պառկի, կէս դարաւուլ քաշի. էս ձորեր խանայ լիքն են»։

Հէնց այս զրոյցն էին անում, մէկ էլ այն տեսան, որ ձիւորի ոտի ձայն է գալիս։ Արիասիրան Աղասի միտք արեց, որ սրանք նրանց ընկերները պէտք է լինին. ական թօթափել մանուկներին ու կանանց մի կողմը քաշեց, հազար անգամ ձեռքը սրա ու նրա բերանին դրեց, որ ձայն չհանեն, երկու քրդերին էլ, որոնք կենդանի էին մնացել, բերան, ձեռք, ոտք աւելի պինդ կապեց ու մէկ քաջ քրդստանցու, թուրը հանած, վրաները կանգնացրեց, միւս քրդստանցոց կրակի չորս կողմը նստացրեց, որ կարծիք չընկնին, ու ինքը իւր քաջամիրտ տղերանցովը եկեղեցու դռան աջ ու ձախ կողմը կարեցին, թուրները հանած, պատն իվեր ցցուեցին ու թշնամուն ճանապարհ տուին։

Լօլօ ձայն տալով՝ քսանից աւելի ձիւոր ժամի դուանը վեր եկան, ձիանը տուին մէկ երկուսի ձեռքը, որ ման ածեն։ Նրանց բերած հայի երեխաների ու կանանց ողբի ու լացի ձայնը որ ժամը չէր ընկնում, պատերն էլ սուգ էին անում։ Բայց խեղճերը չէին իմանում, թէ Աստուած ինչ բարի հրեշտակ է ուղարկել իրանց համար։ Քրդերը հէնց խմբովին որ աղմուկ անելով ներս չընկան, էլ չիմացան թէ մարդ է, որ իրանց գլուխը կտրում է. դե կարծեցին կամ սուրբ. էլ թրի, տէգի կամ վահանի ժամանակ չէր։ Քրդստանցի հայերը էլ միջոց չտուին աջամկի հայերին. շատին հէնց կրակի շամփուրը կամ թուրն էին բերանը կոխում, գլխին, կրծքին քարով, փայտով ծեծում, որ շուտով չմեռնին ու տանջուին։ Էլի Աղասին էր, որ այս կատաղութեան չափ դրեց, սպանածներին դուրս ածել տուեց ու որը կենդանի էին կամ վիրաւորուած, ձեռն ու ոտքը կապել տուեց ու մի կողմ քաշել տուեց։ — «Աղա, մեր տունը քագող էսոնք են, էսոնց խօր տունը քանդուի, էսոնք մեր ճիժ ու մանչ խատացրին. թրկ, թորկ էսոնց սատանի կեր անենք, էսոնց խօր գաղար գեուբէգեօռ ըլի»։

Թող կարդացողն ինքը մտածի, թէ այդ գիշերն ինչ գիշեր կըլինէր այս ջրատար գերիների համար, թէ ինչ սրտով նրանք աղօթք կ'անէին, ինչ հոգով իրար կընայէին ու Աստուծուն փառք կըտային։ Զարմացած, մահի դուռը գնացած ու ետ եկած հայերը իրանց ազատողին որ չտեսան, կամենում էին ոտներն արտասուզով լուանան. բայց համեստ երիտասարդը հէնց այն էր ինդրում, որ Աստուծուն փառք տան, Սուրբ Սարգսի և Սուրբ Կարապետի անունը յիշեն։ Աղասու սիրով վկայում էր, թէ այն գիշեր այլևս փորձանք չկար։ Բոլորին էլ ինդրեց, որ չոքեն, աղօթք անեն։ Գերիների մէջ տէրտէր էլ կար, տիրացու էլ, որոնք սկսեցին առաւօտեան ժամերգութիւնը...

86. ՊԱՆԴԽԾԻ ԿԵԱՆՔԸ

Արխատակէս վ. Տէր-Մարզսանին.

Նժդեհ վարդապետ, դու ևս նժդեհ լինելով, նժդեհի ցաւերն ես զգում, տեսնելով նոցա տառապեալ կեանքն ու վիճակը։ Շրջում ես մայրաքաղաքում (Պօլիս) և մտնում ես պանդուխտների մէջ, աչքով դիտում, ձեռքով շօշափում ես նոցա ամենապառն կեանքի բոլոր հանգամանքները, յիշելով Աւետարանի բանը՝ պանդուխտ հիւանդին ի տես գնացէք։ Հովիւ ու հայր էք, մի գարշիք, գնացէք, մտէք մի ժահանոտ սենեակի մէջ։ կըտեսնէք այնտեղ՝ կտրիչ ու քաջանջ նորահասակ, նորապսակ մի երիտասարդ, մահճի մէջ հիւանդ ընկած կըհեծէ։ ընտանի հոգացող մտերիմներից ոչ ոք ունի շուրջը՝ ոչ գորովալի ծնողք, ոչ անձկալի ամուսին, ոչ քոյր, ոչ եղբայր, ոչ բարեկամ, ոչ ազգական։ Նա այնպէս իվերջոյ կըմեռնի անխնամ, անդեղ, անդարման։ Հոգեվարքի պահուն մարած աշերն այսր-ամնդր կըյածէ։ Երեակայիր գու, թէ ում տեսնել կ'ուզէ...։ Այնտեղ չեն զինքը լացող ընտանիքը, որ մի կաթ արտասուք թափեն մեռած պանդուխտի մահճի վրայ։ Ո՞հ, ով կըլինի պանդուխտին յուղարկաւոր։ Գնա, տես դու. դադաղի առաջից գնում է մի պանդուխտ քահանայ, իսկ յետեկց քանի մի պանդուխտ եղբայրներ զնում են լուռ։ իսկի չի լսում ողբ ու կոծ. պանդուխտները տանում են պանդուխտին. օտար երկրին ու հողին են աւանդում...։

կըտեսնես նաև հրապարակների անկիւններում կոյակոյտ նստած մեր բեռնակիր եղբայրները, որոնց բազմոցներն իրանց համեսներն են։ Միթէ դոքա վանայ դաշտերի այն խոնջեալ մշակներն են, որ բանթողի ժամանակ աղ-

բիւրների գլխին և ցորենի բրդաձև դէզերի հովանեաց տակ նստած կըհանգստանան և մանզաները կըսրեն. մերթ ևս իրանց գլուխը սոցա տակ դնելով, անուշ քուն կըքաշեն։ Վահ, հաղար վահ, այժմ ով կըվարէ դոցա տեղ, ով կըցանէ, ով կըհնձէ. դաշտերն ամայի են մնացած. նոցա հոգասէր վաստակաւոր մշակները, ինչպէս կըտեսնէք, օտարութեան մէջ մաշուելով, կըսպառուին և կըմեռնին ընտանեաց կարօտով։ Ո՞վ կըտանէ և կըպատմէ պանդուխտի մահուան լուրը. ով կըզբէ նոցա գուժալից սև գիրը։ Դու այդ սև թղթերի դպիրն ես, որ մի կողմից պանդուխտների մահը կըպատմես, միւս կողմից ընտանեաց ողբն ու կոծը, որդոց որբութիւնը, այրի մնացած ամուսնու սև բաղդը կ'ողբաս, կըզբես...։

87. ԳԱՂԹԱԿԱՆԻ ՊԱՏՄԱԾԻՑ

Պատրաստում էին մեր բոլոր գիւղեր՝ Չուելգաղթելու հեռաւոր տեղեր. Ես էլ ըզբաղուած միւսների նըման, Վերջացնում էի գործեր զանազան. Մեծ ճանապարհի համար հարկաւոր Հաւաքում էինք սարք ու կարգ բոլոր։

Բայց շատ էր ցաւում իմ սիրտ ու հոգին, եւ ուրախ չէի ես իմ արածին... Ի՞նչպէս ես թողնեմ իմ ապրած տեղեր, Ի՞նչպէս մոռանամ մեր ձոր ու սարեր. Տանջում էի խիստ ցերեկ ու գիշեր, Ողբում լալագին մեր բաղդ, մեր օրեր։ Զերմ համբոյր տալով երկրիս պապական, ես հարցնում էի ինքս ինձ շատ անզամ՝

Գաղթեմ հեռուներ, թէ նստած մնամ, ի՞նչ այս հայութիւնը կազմական նաև Տանեմ զրկանքներ իմ բնիկ երկում, ու ընալ թէ հանգիստ ապրեմ խաղաղ աշխարհում:

Վերջին օրն գնացի մեր հանգստարան, Ուր թաղուած էին՝ հայր, մայր, ազգական. Գերեզմանների առաջ չոքեցի Եւ արտասուրով նոցա կոչեցի. «Մի խելք ցոյց տուէք, ովք փորձուած ծերեր, Երազ—տեսիլքում տուէք խորհուրդներ»:

Եւ երազ եկաւ, երազ սարսեցնող, Որ միշտ յիշելիս ազդում է ինձ դող. Երևաց ծերուկ իմ հայր սըզաւոր Եւ ասաց ահեղ ձայնով զօրաւոր. «Մի թող դու, որդի, քո ծընած տեղեր, Որ կեանք են տուել մեզ ամբողջ դարեր. Ճաւ ու տառապանք մենք էլ ենք տեսել, Անգութ տանջանքից հալ ու մաշ եղել. Արդ՝ ովք է կարող համարձակ ասել, Թէ լաւ վախճանի կարող էք հասնել. Ո՞վ է մեր կեանքի գաղտնիքն իմանում, Հեռու ապագան ուղիղ գուշակում»...

88. Ա Յ Ղ Ր Լ Ի Ճ Ը

Ս. Էջմիածնից մօտ երեք ժամաշափ դէպի արևմտահիւսիս գտնուում է մի լիճ, որին ժողովուրդը Այդը անունն է տալիս:

Այդը լճից շատ մօտ, թաւ եղէ գնուտաների և ձահիձների միջից յառաջանում է այն պատմական գետը, որ հնումը կոչւում էր «Մեծամօրի», իսկ այժմ ասուում է Սև-ջուր: Այդը լիճը և այդ գետը միմեանցից բաժանողը մի երկու-երեք հարիւր քայլաշափ մերկ տափարակ է: Մերկ եմ ասում, որովհետև ինչպէս գետի, նոյնպէս և լճի եղերքը ծածկուած են խիտ եղէ գներով, որտեղից տարին մի անգամ մերձակայ գիւղացիները շինում են իրանց համար փսիաթ կամ խսիրներ. իսկ այդ տափարակի վրայ բացի սէզից ոչինչ չես դասիլ:

Թէ լիճը և թէ գետը ունին տեղացիների աչքում մեծ նշանակութիւն: Գետի եղերքի եղէ գնուտաները նուիրական են ամեն հայ քրիստոնէի համար, որովհետև այստեղ, ասում են, խոզացած արածում էր մեր քրիստոնէութեան հիմնաքարը, յուժկու Տրդատը. այստեղից նա մըրթմըրթալով վազեց, մեր կուսաւորիչ պապի առաջին գլուխը քարշ ձգած կանգնեց և նորա օրհնութեան շնորհիւ կրկին մարդկացին կերպարանք ստացաւ, մի ականջով միայն Սև-ջրի գլխին արածող կենդանու յիշատակը չմոռանալով: Մինչև այսօր էլ որսորդները, Սև-ջրի գլխին խոզ սպանելիս, միմեանց ասում են. «Ի՞նչ կըլինէր հայ քրիստոնէի գրութիւնը, թէ որ մեզ պէս մի որսորդ սպանած լինէր մեր խոզացած Տրդատ թագաւորին»: Միւսն էլ պատասխանում է. «Ասում են՝ ինքը Տրդատ թագաւորը զզուած է եղել խոզութիւնից, որսորդ տեսնելուն պէս դիտմամբ եկել՝ առաջներին ման է եկել, որ ինչ է՝ տան, սպանեն, վերջանայ իւր չարշարանքները, բայց Աստուծու հրամանովը նետ ու աղեղի լարը կտրուել է ու Տրդատը ողջ է մնացել»:

Այդը լճի մասին պատմած առասպելներն աւելի շատ են: Մինչև այսօր էլ ես անտարբերութեամբ չեմ կարողանում յիշել Այդը լճի անունը, որ անձս չքըսալինի:

Երբէք չեմ կարող մոռանալ, ինչպէս իմ հանգուցեալ հայրը վսեմ և ազդու բառերով պատմեց ինձ Այդր լճի բոլոր պատմութիւնները, երբ-որ ձիու վրայ, ինձ իւր թարքըն առած, գնում էինք Սև-ջրի գլուխը, մովրովից ինձ համար արձակման վկայական ստանալու, որ գնամ, ուսում առնեմ:

«Գիտես, որդի, որ մենք մօտենում ենք Այդր լճին տես, ահա այն քարափի տակին է, մի փոքր էլ ներքեա գնանք՝ կ'երևայ: Այդր լիճը հասարակ ջուր չէ, շարունակեց լուսահողին. նորա ջուրը չէ գնում, միշտ կանգնած է. նա անտակ է. մարդ չէ կարող նորա մէջ մտնել. իսկոյն կուլ կըտան հրեղէն կենդանիքը: Ռւրիշ ջրերի միջինը ձկներ ու գորտեր են, բայց Այդր լճի միջին սրանցից ոչ մինը չես գտնիլ. հրեղէն ձիանք, սպիտակ հրեղէն գոմէշներ, մարդածուկն ու շատ ուրիշ գազաններով է լիքը Այդր լիճը: Այդ հրեղէն ձիանոնց ցեղիցն է—շարունակեց հայրս—Քեօռ-օղլու դռաթը^{**}), որ թեաւոր է եղել: Այս բանը տեսել է խառաս Մուրադը: Մուրադը նշանաւոր վարպետ է եղել: Նա տասը-տասնուհինդ փայտէ ուղաբր շինած, իրար քամակից կապած, սանձը ձեռին քաշելով՝ կողքից աղ է եղել բերելիս. յանկարծ գիմացից տեսնում է Քեօռ-օղլուն իւր կտրիճներով և երկիւղից քանդում, վայր է թափում գետնին իւր ուղաբերն ու դարձնում մի կոյտ փայտ, իսկ ինքը մտնում է Այդր լճի եղէգների մէջը:

Քեօռ-օղլին, որ նկատած է լինում ուղտերի շարքը և հիմա գտնում է փայտ դառած, շատ զարմանում է այս համագէտ վարպետի վրայ. ուր որ լինի, հրամայում է իւր քաջերին, պալբրտել այն մարդուն և իւր առաջին կամդ-

*) Դոաթն էր այն առասպելական նժոյդ ձին, որի վրայ Քեօռ-օղլին քաջութեան անունն է տարել:

նացնել: Խուզաբկուները, քաջ գիտենալով, որ մարդը թագկացած կըլինի եղէգնուաների մէջ, իջնում են այնաեղ, ձիանքն արօտի թողում և սկսում որոնել: Ամբողջ օրը Քեօռ-օղլին գուր ժամանակ է կորցնում. վարպետը մի ասեղ է գառնում ու կորչում: Ճարը կտրուած՝ նա հրամայում է ձայն տալ, թէ ինքը երդւում է իւր սրովը, որ եթէ փայտէ ուղտերի տէրը դուրս գայ ինքնայօժար, նա նորան ոչ միայն չէ պատժիլ, այլ և կըվարձատրի. ապա թէ ոչ՝ երեք շաբաթ շրջապատելով Այդր լիճը՝ քաղցած պիտի սպանի նորան:

Եւ ահա դուրս է գալիս Մուրադը դողալով և գլուխ տալիս Քեօռ-օղլուն:

— Քո ձեռագործն են այդ ուղտերը, հարցնում է Քեօռ-օղլին:

— Հրամել էք, գլխիդ մատադ:

— Ինչի՞ թագ կացար:

— Քո անունից աշխարհն է սարսափում: Եւ, ուղիղն ասեմ, հիմա էլ չէի դուրս գալ, եթէ քեզ աւետիք տալու առիթը չունենայի:

Յետոյ Մուրադը պատմում է Քեօռ-օղլուն, որ նորա մատակ ձին լճի հրեղէն այդր (որձ) ձիուց յղացած է և մի տարուց յետոյ նա մի այնպիսի ձի է ունենալու, որի նմանը աշխարհի երեսին չի գտնուիլ:

— Ուրեմն դու ազատ ես. սարքիր ուղտերդ, բարձիր բեռներդ և ճանապարհ ընկիր:

Քեօռ-օղլու հրամանով՝ ի պատիւ այն Այդր ձիու, որ իւր սիրական Ղոաթի հայրն էր, այդ լիճը այն օրուանից կոչում է Այդր լիճ:

— Այդ Այդր լճի ջուրը որտեղից է գալիս և ուր է գնում, հարցը հօրա:

— Ասում են, որ ջուրը գալիս է Արագած սարի կա-

տարումն եղած լճից։ Այդ բանն իմացել է մի հովիւ։ նա այծի քամակից ձգում է իւր գաւազանը, որ ընկնում է Արագածի լճի մէջ։ Մինչև մօտ է գալիս հովիւը, տեսնում է, որ իւր գաւազանը ջրի երեսին չէ։ Այս երեսիցը նորան կարծիքի տակ է ձգում, մանաւանդ երբ նա Արագածի ստորոտումը՝ ոչխարներին արածացնելիս, գլուխը գետնին է դնում, որ մի փոքր հանգստանայ, միշտ ջրի քչքչոց է լուս։

Մի շաբաթից յետոյ գիպուածով նոյն հովիւը, իւր ոչխարները դաշտն իջեցնելիս, Այդը լճի մէջ տեսնում է իւր փայտը։ Հովուի կասկածն աւելի սաստկանում է։ նա մտածում է, որ Արագածի զլիսի լճի և Այդը լճի մէջ հաղորդակցութիւն կայ. անպատճառ ջուրը Արագածից գետնի տակով հոսում է ներքև և զոյացնում է Այդը լիճը։ Այդ բանն սառուգելու համար՝ հովիւը շալակում է մի ջուալ դարման, բարձրանում է Արագածի կատարը և լցնում է ջրի մէջ. երկու օրից յետոյ դարմանի հետքը Այդը լճումն է գտնում։

—Ապա այդ հնց է որ ջուրը միշտ կանգնած է մնում մի փոքրիկ լճի մէջ ու դուրս չի գնում, հարցը հօրս։

—Աստուծու կամքոմն է, պատասխանեց նա. Դպրացի օրովք վերջին չիւսէն խան սարդարն ուզեցաւ Այդը լճի ջուրը խառնի Սև-ջրի հետ, երեք անդամ իրան երազ եկաւ, որ այդ լճի ջուրն անիծուած է. դա գնացկան ջրի հետ չպիտի խառնուի, աղամորդին այդ ջրի համը չպիտի տեսնի։ Սարդարս ականջ չարեց և Այդը լճի ու Սև-ջրի մէջ տեղի թմբան վրայ մի առու փորեց։ Վերջին օրը, հէնց որ մի փոքրիկ թումբ էր մնացել, որ ջուրը գնար, մին էլ այն տեսան, որ լճի երեսը կրակ դառաւ, մէջիցը ահագին գազաններ կրակի հետ դուրս թռչկոտացին. Քիչ էր մնացել, որ ամենքին էլ կուլ էին տալիս՝ թէ որ գլուխ չառնէին,

չկորչէին։ Ինքը սարդարը, հեռուում կանգնած, այս բաները իւր աչքերովը տեսել է ու էլ յետ առուն լցնել տուել։ Եւ արդարիկ հետաքրքիր այցելուն այսօր էլ կընկատի լիճն ու Մեծամօրին բաժանող տափարակի մէջ տեղը մի հին առուի հետքերը։

Ահա այսպիսի առասպելների հետ է կապուած Այդը լճի պատմութիւնը։

89. ՀԱԽՈՒԻՆԻ ԹՈՒԻՐԸ *)

(ԱԽՈՒԻՐՈՒԹԻՒՆ)

Շատ ու շատ դարեր մեզանից առաջ մի թագաւոր կար. անունն էր Պոօշ, ինքը զօրաւոր, ազնիւ ու արդար։ Նստում էր նա իւր կաթար քաղաքում. նա չէր կոււասէր, թէպէտ կարող էր ամեն բան ուժով. եթէ ուզենար աշխարհը կըքանդէր չաւլունի թրով։

Չաւլունի թուրը, Չաւլունի թուրը,
Ամեն բան կանէ Չաւլունի թուրը.
Զի լինիլ նըրան աշխարհում նման,
Կանէ ամեն բան Չաւլունի թուրը:
Օ՛, նա չէ շինած հողեղէն ձեռքով,
Անձեռագործ է Չաւլունի թուրը.

*) Պահլաւունի Պոօշ իշխանի թուրը։ — Պոօշ Պահլաւունին, ըստ աւանդութեան, Գեղարքունի գաւառամասի տէլն է եղած։ Նրա թուրը շինած է եղել կայծակի կտորից (մէտէօրական երկաթից?)։ Նա սովորական երկաթը կտրում է եղել իրքև պանիր. բնական ամրութիւններն անգամ դիմանալիս չեն եղել այդ թրի հարուածին։ — Լիճը, որի մէջ զցեց Պոօշ իշխանի փոքր որդին իւր հօր թուրը, պէտք է լինէր Այդը-լիճը կամ, որ աւելի հաւանական է, Գեղամայ ծովը (Սևանայ լիճը)։ — Ամբողջ յօդուածը պէտք է կարդալ չափով, որպէս արձակ-ոտանաւոր։

Զէ նա Խորասան և ոչ ալմազից,
Ալմազ կը կտրէ Հաւլունի թուրը:
Կրակոտ ամպերում կայծակների հետ
Միտուել է, կոփուել Հաւլունի թուրը:
Կրակոտ ամպերում կայծակների հետ
Աշխարհ է իշել Հաւլունի թուրը:
Ով տիրէ նըրան, աշխարհ կը տիրէ,
Աշխարհ կը գերէ Հաւլունի թրով.
Դսերի մեծին գերի կը բերէ,
Ըստրուկ կը շինէ Հաւլունի թրով:
Արքայազնուհին Զինումաշինի
Իւր հարս կը բերէ Հաւլունի թրով,
Եալբուզ սարըն էլ որ առաջն ենի,
Երկու կէս կանէ Հաւլունի թրով.
Հաւլունի թրով, Հաւլունի թրով,
Ամեն բան կանէ Հաւլունի թրով.
Զի լինիլ նըրան աշխարհում նըրման,
Ինչ ուղես կանես Հաւլունի թրով:

Ահա թէ ինչու Պոօշ թագաւորից ամենքն՝ ին սար-
սում, թէպէտ նրա մտքով մի մարդու անգամ վսասել չէր
անցնում: Եւ ով չէր սարսիլ. մեծ էր Հաւլունի թըրի զօ-
րութիւն, բայց չէր ցանկանում Պոօշ թագաւորը փառք,
իշխանութիւն:

Ոչ-ոք չգիտէր, թէ քանի տարի Պոօշի պապերը կը ում
էին իբրև մի անգին աւանդ Հաւլունի թուրը, թէ ինչ
հրաշքով ընկել էր թուրը աշխարհի վըրայ, թէ ո՞րը Պոօշի
մեծ նախնիքներից ձեռք էր բերել այն. յայտնի չէր թըրի
սկզբնաւորութեան մութ պատմութիւնը. լուսմ է այդ մա-
սին աւանդութիւնը. գիտեն այս միայն, որ Պոօշի նախ-

նիք այնքան տարիներ իրանց զօրութիւնն ու ուժը երբէք
իշար չեն գործ դրել:

Պոօշն էլ հետևեց իւր նախնիքներին, ստացաւ թուրը
հօր մահուան ժամին, առաւ աւանդը, խոստացաւ հօրը.
— «Հայրիկ, երդւում եմ քո տըւած սըրով, որ քեզ հետեւիմ,
չարի կործանիչ, բարու հաստատիչ հանապազ լինիմ»:

Այսպէս էլ արաւ: Քառասուն տարի Պոօշի ձեռքում
Հաւլունի թուրը կայծակի նման փայլում էր, վառում,
բայց նորա ձեռքով անմեղի արիւն երբէք չըթափուեց, կայ-
քից ու կեանքից Հաւլունի թրով ոչ-ոք չըզրկուեց: Ոչ մի
թագաւոր կամ արդար իշխան ընկաւ իւր զահից. ոչ մի
ժողովուրդ չըզրկուեց իրան ազատութիւնից: Ինչ բան բարի
էր, նա զօրացնում էր իւր զօրեղ ձեռքով, ինչ բան որ
չար էր, ջընջում, կործանում Հաւլունի թըրով:

Եւ ինչ չէր անիլ. մեծ էր Հաւլունի թըրի զօրութիւն.
բայց Պոօշ թագաւորն այդ չէր ցանկանում, այլ ասում էր
միշտ. «Թող մարդիկ ապրին ազատ ու խաղաղ. Լաթար
քաղաքը լաւ կառավարեմ, այն էլ է հերիք»: Եւ լիանում
էր Լաթար քաղաքը ամեն բարիքով. ձգւում էր շէնցած
խաչըլուայ լըճի կանաչ ափերով:

Բայց ինչ կայ արդեօք յաւիտենական այս աշխարհի
մէջ. Պոօշ թագաւորի զլուկն էլ ծածկուեց սպիտակ մա-
զերով. այն զօրեղ անձը, որից զողում էր ամբողջ աշ-
խարհը, էլ չէր կարենում շարժել Հաւլունի յաղթական
թուրը:

Ծնկաւ Պոօշը, ուժահատ ընկաւ մահիճը մահուան:
«Ահա մօտեցաւ իմ վերջին օրը», ասաց ինքն իրան. «իմ
ժառանգն ով է, ում պիտի յանձնեմ Հաւլունի թուրը»:

Թագաւորն ունէր եօթը հատ որդի. իւրաքանչիւրը

մի սարի գլխի, ամեն մէկն ունէը սեպհական մի բերդ,
ամենքն էլ ծարաւ մէկ-մէկու արեան: Ո՞րին տար արդեօք
Հաւլունի թուրը, նրանցից ոչ-ոք թրին չէր արժան: վեց
անգէն եղաքը գլխները կտրած պիտի թըրպըրտան, Հաւ-
լունի թուրը պիտի գէնք դառնայ մարդասպանութեան:

«Ոչ, այս չի լինիլ», ասաց Պոօշը. կանչեց մեծ որ-
դուն Բէջանու բերդից: Եկաւ մեծ որդին, որ լոէ իւր
հօր կտակը վերջին:

«Ո՞րդի, մեռնում եմ», ասաց Պոօշը. «վերջին կտակս
յայտնում եմ ես քեզ, բայց մահիցս առաջ պիտի կատարես»:

— Հայրիկ, պատրաստ եմ, վերջին կտակը ես կըկա-
տարեմ. տուր ինձ, թէ կուզես, Հաւլունի թուրը, աշ-
խարհք կըքանդեմ:

«Այն, քեզ կըտամ Հաւլունի թուրը. բայց լսիր, որդիս,
աշխարհ մի՛ քանդիր, այլ տար Խաչլըւայ ծովակը ձգիր»:

Մեծ որդին տարաւ Հաւլունի թուրը, բայց հօրը խա-
բեց, ծովը չգեց, այլ հօրից ծածուկ մի տեղ թագցրեց:

«Ո՞րդի, ինչ արիր Հաւլունի թուրը, ձգեցիր ծովը,
հարցրեց հայրը:

— «Այն, այն, հայր. Հաւլունի թուրը տարայ, ձգեցիր
Խաչլըւայ ծովը»:

«Տեսար, ինչ եղաւ Խաչլըւայ ծովը, երբ-որ ձգեցիր
Հաւլունի թուրը»:

— Հայր, ոչինչ չեղաւ Խաչլըւայ ծովը, բայց ես ձգել
եմ Հաւլունի թուրը:

«Ո՞չ, սուտ ես խօսում, անարժան որդի, խաբում ես
հօրդ. գնա, բեր շուտով, թէ չէ՝ կանիծեմ, գլխիդ կըճաքի
Հաւլունի թուրը»:

Որդին դողալով գնաց, յետ բերեց Հաւլունի թուրը:
Միւս որդկերանցն էլ կանչեց Պոօշը, բայց նրանք
ամենքն էլ այնպէս վարուեցին, մինչ հերթը հասաւ ամե-
նից փոքրին:

մեռնում եմ. վերջին կտակս ես յանձնում եմ քեզ. բայց
մահիցս առաջ պիտի կատարես»:

— Պատրաստ եմ, հայրիկ. վերջին կտակդ ես կըկա-
տարեմ. տուր ինձ, թէ կուզես, Հաւլունի թուրը, աշխարհք
կըքանդեմ:

«Այն, քեզ կըտամ Հաւլունի թուրը, բայց լսիր, որ-
դիս, աշխարհ մի՛ քանդիր, այլ տար, Խաչլըւայ ծովակը
դգիր»:

Երկրորդն էլ տարաւ Հաւլունի թուրը, բայց հօրը
խաբեց, ծովը չգեց, այլ հօրից ծածուկ մի տեղ թագ-
ցրեց:

«Ո՞րդի, ինչ արիր Հաւլունի թուրը, ձգեցիր ծովը,
հարցրեց հայրը:

— Այն, այն, հայր. Հաւլունի թուրը տարայ, ձգեցիր
Խաչլըւայ ծովը:

«Տեսար, ինչ եղաւ Խաչլըւայ ծովը, երբ-որ ձգեցիր
Հաւլունի թուրը»:

— Հայր, ոչինչ չեղաւ Խաչլըւայ ծովը, բայց ես ձգել
եմ Հաւլունի թուրը:

«Ո՞չ, սուտ ես խօսում, անարժան որդի, խաբում ես
հօրդ. գնա, բեր շուտով, թէ չէ՝ կ'անիծեմ, գլխիդ կըճաքի
Հաւլունի թուրը»:

Որդին դողալով գնաց, յետ բերեց Հաւլունի թուրը:

Միւս որդկերանցն էլ կանչեց Պոօշը, բայց նրանք
ամենքն էլ այնպէս վարուեցին, մինչ հերթը հասաւ ամե-
նից փոքրին:

Եկաւ և փոքրը: Պոօշը ասաւ. «Գոնէ դու լսիր վեր-
ջին կտակս. Հաւլունի թուրը յանձնում եմ ես քեզ. կը-
տանես սորան, ծովը կըճգես»:

— Հայր, ես պատրաստ եմ. կ'ուզես ես ինքս էլ նորա
հետ ընկնեմ:

«Ինչու է պըղտոր ձեր ծովի ջուրը».
Կասէ. «Այսպէս է եղած այն օրից,
Երբ այստեղ ընկաւ հաւլունի թուրը»,
Նա քեզ կըպատմէ, թէ ամեն ուրբաթ
Խաչը ծովը փրփրում է, կատղում,
Իրարժեն զարկում ջրեր լեռնացած,
Ծովի յատակից ձայներ են լսում . . .

Երբոր Պոօշի փոքրահաս որդին,
Տանում էր ծովը հաւլունի թուրը,
Դեռ չէր մօտեցել նա ծովի ափին.
Երբ իրար անցած ծովի քաջերը,
Կոիւ, կոտորած ընկաւ նրանց մէջ,
Սուրն ընկղմուեցաւ Խաչը խորը.
Ահեղ կոտորած. բայց ոչ ոք յաղթեց,
Եւ անտէր մնաց հաւլունի թուրը:
Ահա այն օրից ամենայն ուրբաթ,
Խաչը ծովը փրփրում է, կատղում,
Իրար են զարկում ջրեր լեռնացած,
Ծովի յատակից ձայներ են լսում . . .
Այդ հին կոիւն է կրկին նորոգւում,
Կրկին ընկնում են իրար վրայ քաջեր.
Անցնում են դարեր, կուում են կուում,
Հաւլունի թըրին չեն կարում տիրել:
Բայց Պոօշ արքան սուրը կախարդեց.
Երբ-որ ցամաքի ծովակի ջուրը,
Աստուծու կամքով մի քաջ կըծընի,
Կըհանէ լճից հաւլունի թուրը:

90. ԱՐՁԱԳԱՆՔ

Խոր ձորի մէջ գնում եմ ես.
Պարզ գիշեր է աստեղազարդ.
Բընութիւնը քնած է կարծես,
Եւ չորս կողմս լուռ ու հանդարտ:

Ո՛չ սոխակի երգն է լսում,
Ո՛չ վայ տալիս իւր գլխին բուն,
Ծառերի մէջ հով է խաղում,
Զկայ մի ձայն, չկայ ծպտուն:

Ես ընկղմած մտքերիս մէջ
Առաջ եմ գնում և իմ հոգին
Մտածում է. — «Կըլինի՞ վերջ
Հայոց ազգի տառապանքին:

Յանկարծ կուրծքից դուրս թուաւ.
«Երնեկ մէկն ինձ տար պատասխան».—
Արձագանքը տարաւ, բերաւ
Եւ հնչեցրեց. — «Առ պատասխան»:

—Պատգամախօս անտես, անյայտ,
Մէկ հարցմունքիս լաւ ուշ գարձու:
Արձագանքը միայն կիսատ
Կրկնում է ինձ խօսքս. — (Հ)արցրու:
«Ի՞նչ է սպասում խեղճ հայ ազգին,
Միթէ կորուստ, ոչ փրկութիւն»:
Արձագանքը որոտագին
Պատասխանում է. — «Փղկութիւն»:

ՆԻՒԹԵՐԻ ՑԱՆԿԸ

Այն նիւթերը, որոնց հանդէպ հեղինակողի ազգանունը չի դրած, յօրինուած կամ փոխադրուած են աշխատասիրողի ձեռքով։ Արտատպողներին մի անգամ ևս ինդրում եմ այդ հանգամանքն աշքի առաջ ունենալ և իմ դասագրքերից վերցրած նիւթերի աղբիւրը ցոյց աալ։


I

1. Երկու խոփ՝ փոխադր.
2. Երկրագործի յոյսերը, Ք.
3. Երթասարդը կիր ստուերը (Կրիլովից)
4. Հովիւ և մոծակ (Կրիլ.)
5. Հարստութիւն, թ. Դուկ.
6. Բաժինք, Կրիլովից
7. Արդար զատաստան, նազ.
8. Գթասիրտ բռն, Փան.
9. Սովակ, Բազմավէպից
10. Գարուն, Յար. Թում.
11. Հայր և երեք որդի, Ք. Բարխուղարեան.
12. Միհաւատար, Մանուկի.
13. Սրցունք, թ. Ծատուրեանի
14. Կեանքի խորհուրդը, Մամիկոննեան
15. Հաւատարիմ շուն
16. Ջան գանգատը.
17. Արծիւն ու հաւը, թարդ. Ղուկասսեան
18. Արծիւն ու ճիճուն, Արծիւեան
19. Թոշունի երդը
20. Երդ՝ Վ. Հիւգօ (Բաֆֆի).
21. Ճնճղուկ՝ Տուրդ. (Բաֆֆի).
22. Արտուտ, Գ. Քաթիպայայ
23. Աղաւնիներ՝ Տուրդ. (Բաֆֆ.)
24. Բաղէն ու աղաւնին, Նժղեհ
25. Իւր վիճակից գոհ մանուկը (Քրաներէնից)
26. Կարդա, Ծատուրեան
27. Ռւսումնածարաւ մանուկը, Գեղամանեան
28. Բոլոր մարդիկ եղրայրներնեն, Ծատուրեան
29. Մի պատառ հաց, Ահար.
30. Աղորմած եղէք, Ծատ.
31. Բնութեան կենդանանալը, Պոշեան
32. Մշակներ և շուն, Գ. Ք.
33. Առաւօտ, Սրուանձտեան
34. Լուսադիմն, Զ.
35. Գարնան մեծ տօնները, Լէօ.
36. Տապանագիր, Գ. Քաթ.
37. Արագածոնի ջրվէժը, Պո.
38. Ջրվէժ և առուակ, Կրիլ.
39. Վարագ, Բաֆֆի
40. Առ վանահայրն Վարագայ, Արտուր
41. Ջրաբերդ, Բաֆֆի
42. Երզչի անէծքը, Յովհան.
43. Մասիս, Զ.

II

44. Արաքս, Բաֆֆի.
45. Թարթար, Յար. Թում.
46. Արագած, Զ.
47. Ծաղկաձոր, Գ. Քաթիպայայ
48. Խաչարձաններ, Պոչեան.
49. Աւերակ, Յովհաննիսեան
50. Փոթորիկ, Բաֆֆի.
51. Ամիրան, Յար. Թում.
52. Մարդու ստեղծագործութիւնը
53. Մեր նախահայրելը (Նահապետներ. I, Հայաստանը օրբան մարդկութեան. III, Հայկի դարձը աշտարակաշնութիւնից. IV, Հայկի պատերազմը Բէլի դէմ. V, Արամ. VI, Արայ գեղեցիկ
- 54* (50) Ուսիր առաջ քո մայրենի լեզուն
- 55 (51) Մայրենի լեզու, Մտնալցարեանց
- 56 (52) Միրիր քո հայրենիքդ «
57. Կերջին հրաժեշտ, Ծատ.
58. Անառակ որդի, Լէօ
59. Արտաւազդ, Յովհանն.
60. Նաւասարդի տօնները, Ալիշան
61. Միծ, Ա. Պատկանեան
62. Երբ-որ տիեսնում եմ, Մանուկեան
63. Գրիգոր Լուսաւորիչ
64. Ժայռ, Յովհաննիսեան
65. Ներսէս Միծը
66. Մենաստան, Նարդոս
67. Սահակ պարթեկ
68. Հայոց տառերի գիւտը
69. Առ մայրենի լսզու, Քնար-Հայկականից
70. Առ մայրենի լսզու, Քնար-Հայկականից
71. Հինգերորդ դարի հայերը (Անբարեյածող պայմաններ. Վարդանանց պատերազմը. Վասակ իշխանի վերջին օրերը)
72. Յուդայ՝ Նաղսօնից, Մաթեան և Յար. Թուման.
73. Հինգերորդ դարի հայ կանաք, Եղիշէից
74. Սպիտակ զգեստ, Յովհ.
75. Նահապետական հայի տունը, Բաֆֆի.
76. Ընձրկի կաթիլ, Զ.
77. Հին ուսումնարանը, Բաֆֆ.
78. Հատիկ, Յովհաննիսեան
79. Աղասի, Արովեան
80. Աղասու մօր երգը, Պատ.
81. Հիրիկ խաղացողներ, Արով.
82. Վանեցի կաթիշը
83. Աղասու վիճակն ու հոգսերը, Յար.
84. Ալպեան որսորդ, Արեղ.
85. Արիասիրտ ճանապարհորդներ, Արով.
86. Պանդիտի կեանքը, Խրիմեան
87. Գաղթականի պատմածից, Ալէքսանդր.
88. Այդը լիճը, Պոշեան
89. Հալունի թուրը, Աստ.
90. Արձագանք, Բարխուդ.

* Յօդուածների թուահամարներ-54-ից սկսած մինչև 71-ը—սիսլ-մամբ կրկնուել են. Յանկի մէջ դասաւորել ենք այսպէս, ինչպէս է լինել:





«Ազգային գրադարան»

NL0243450

9845